Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

82
U37
887

1875

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

2011

12003

00043

180

ԱՇՈՒՐԻՒ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

ԿԱՄ

ՍՐՏԻ ԳԻՐՔ ՄԸ

82-3
Մ-37

ՀԵՂԻՆԱԿ

ԻԲ. ՄԱՐՎԷԼ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՆԿԼԻԱԿԱՆԷՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1002/5953

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԶ

ՏԻԳՐԱՆ ԱԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1875

ԽՕՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Ամերիկացի անուանի Տօնալտ Ն. Միդչէլ գրագիտին Ամուրիկ մը եւ-թաղնէրը այս անգամ Թարգմանելու ձեռնարկեցինք ոչ միայն նիւթին կարեւորութեան, այլեւ Ամերիկեան գրականութեան դոյզն ճաշակ մը մեր ընթերցողաց տալու համար: Այս գործն, ինչպէս անունէն կ'երեւի, խիստ ծանրակշիռ խնդրոյ մը վրայ կ'ճառէ, խնդիր մ'որով մարդկային ազգի ապագայ մասին ուշը կ'գրաւէ, այս է ամուսնութիւնը: Մեր մէջ տակաւին շատեր չգիտեն այս բառին իմաստն եւ անով լոկ կեն մ'առնուլ կ'իմանան: Սակայն ի՞նչ ծանր խորհրդածութեանց, ի՞նչ հասուն նկատողութեան արժանի է խորհուրդ մ'որ երիտասարդի մ'ապագայ կենաց ընթացքն եւ թերեւս ճակատագիրը կ'վճռէ: Հեղինակն՝ որ ամուսնութեան ամէն կողմը կը նկատէ, մերթ նուրբ եւ ուշիմ, մերթ տխուր եւ հեգնալի, եւ մերթ զգայուն եւ իմաստասիրական ոճով ընտանեկան կենաց վրայ այլ եւ այլ պատկերներ կ'ընծայէ, ամուսնութեան առջեւ իր երկիւղներն ու վարանումները, անոր աղէտքն եւ ուրախութիւնները կ'ցուցընէ, կ'դատէ, կ'ննէ, եւ հուսկ ուրեմն՝ ճշմարիտ երջանկութիւնն՝ որու մարդս կրնայ հասնիլ այս աշխարհիս վրայ, երկու սիրայօր սրտերու, ամուսնական սուրբ միութեան մէջ կ'գտնէ: Այս գիրքն ոչ վէպ է եւ ոչ երեւակայական պատմութիւն, այլ պարզապէս երազի կամ տեսիլքի ձեւով խորհրդածութիւններ եւ տեսարաններ կ'պարունակէ, զորս մարդուս ընութենէ եւ ընկերական վիճակէն քաղելով այնպէս իմն կ'բերէ որ կարծես թէ ընթերցողին սրտին ու մտքին թարգմանն է: Դրօր նոյն ինք հեղինակն՝ որ Դր. Մարվէլ ստանունով հրատարակած է այս երկն, կ'ըսէ, իր յառաջաբանին մէջ.

«Ամեն ատեն զլխէս անցած ծփին տեսիլքի հաւարածոյ մ'է այս. դեռ եւս չտեսայ ամուրի մարդ մ'որ այսպիսի ծփին տեսիլներու բաժին մ'ունեցած չլինի, եւ ասոնց ու իմ մէջ գտնուած տարբերութիւնը սա է միայն որ նոյն տեսիլներուս գրքի ձեւ մը տուի: Եթէ այս տեսիլներս միակցութեամբ յօրինէի, կ'համարձակիմ ըսելու որ յարգի վէպ մը կ'լինէր: Բայց ես զանոնք բացատրելու համար պարկեշտ եղանակ մ'ընտրեցի՝ գրի առնելով բնապէս եւ անշպար, ինչպէս որ միտս եկան:»

Այսպիսի գործի մ'ընթերցումը կրնայ նաեւ ոչ միայն զուարճալի այլեւ օգտակար լինիլ այն հայ երիտասարդաց, որ ամուսնութեան խորհուրդը կ'ըս-

կսին տածել, խիստ անբնական պայմաններով անոր լուծը կրելու կ'զիջանին, եւ ապա իրենց անխոհեմութիւնն զանազան նեղութեամբ կ'տուժեն, կամ անոնց՝ որ ամուսնութեան տխուր կողմը միայն կ'նկատեն, անոր մէջ մնծութիւն եւ փառասիրութիւն կ'երազեն եւ ահաբեկ կ'կասին, անոր բուն նպատակն ըմբռնելու բարոյական արիութիւն եւ խմացողութիւն չունենալով, եւ լաւ եւս կ'համարին ամուրութեան եւ շատեր՝ ապօրէն եւ շուայտ յարաբերութեանց մէջ իրենց բարոյական եւ նիւթական էութիւնը խոնգարել:

Պարտ կ'համարինք յայտնել որ այս գործն ընագրին բան առ բան հետեւելով չթարգմանեցինք, այլ ազատ ընթացք մը բռնեցինք հեղինակին ոգին եւ միտքը պահելու ջանալով, եւ այն մասերն որ իսկական յարակցութիւն չունին բուն նիւթին հետ՝ տեղ տեղ յապաւել եւ երբեմն համառօտելու արժան դատեցինք:

Աւարտենք մեր խօսքը գործիս հեղինակին վրայ բանի մը կենսագրական տեղեկութիւններ տալով: Տօնալտ Ն. Միղէլ ծնաւ 1822ին Նոր Անկլիոյ այն ազարակներուն մէջ (Նորվիլ, Դոնէրտիգուղ) ուր որ սրտի մաքրութիւնն եւ հաւատոյ ուղղութիւնն ժառանգական դարձած է: Իր հայրն, որ ճշմարիտ երիցական կրօնաւոր մ'էր, ուզեց իր որդին նոյն կոչման նուիրել եւ Նոր Հաւնի վարժարանը դրկեց որ կրթութիւնն աւարտէ: Սակայն Տօնալտ անծանծիր աշխատութեան պատճառաւ առողջութեանը վնասեց եւ նոր ասպարէզ մ'ընտրելու ստիպուելով երկրագործութեան պարապեցաւ: Իր առաջին գրաւոր գործերն մշակային նիւթերու հետ յարաբերութիւն ունին:

1844ին՝ Նոր Անկլիոյ վայրի ազարակէն եկնելով Մեծն Բրիտանիա գնաց, եւ բանի մ'ամիս բոլոր Անկլիա հետիոտն շրջելով եւ նոյն երկրին մշակութեան կերպերն 'ի մօտուստ ընելով անցուց: Անկից Գերմանիա, Ֆրանսա, Հելվէտիա եւ Իտալիա դիմեց եւ երկու տարի մնաց: Ի դարձին Ամերիկա՝ Նոր Ծաղկաքաղ անուամբ գործ մը հրատարակեց որ ուշադրութիւն գրաւել սկսաւ: Ուղեւորութեան սիրահար, իր հայրենի երկրին այլ եւ այլ կողմերը դարձաւ եւ իր տպաւորութիւններն Ամերիկեան ընկերութեան վրայ Նիու—Եորքի օրագրի մը միջոցաւ հրատարակեց՝ Իր. Մարվէլի սուտ անուամբ: 1848ին վերստին Բարիզ եկաւ եւ 'ի դարձին բանի մը նոր գործեր հրատարակեց որոց գլխաւորներն են Ակնոցը (Lorgnette), Կենաց Երազը (Dream—Life) եւ Ամուրիի մ'Երազներն որ՝ իբրեւ իր հրաշակերտն, հեղինակութեան համբաւն աւելցուց եւ զինք Ամերիկայի հռչակաւոր գրագիտաց կարգն անցուց:

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

(Reveries of a Bachelor)

ԱՌԱՋԻՆ ԵՐԱՋ

ՄՈՒԽ, ԲՈՑ ԵՒ ՄՈԽԻՐ

ՓՈՔՑ ԿՐԱՊԻ ՄԸ ՎՐԱՑ

Գիւղն Հանդարտիկ ազարակի տուն մ'ունիմ, շատ անշուք վայր մը՝ որու վարձկալն է Նոր Անկլիոյ հին, պարզմիտ մարդ մը: Երբեմն՝ ձմեռն մէկ երկու օրուան համար անդ կ'երթամ, որպէս զի արտորէից հաշիւները քննեմ եւ բերքին վիճակը հասկընամ:

Տանս բակէն որ ներս մտնես, դրան մէկ կողմը՝ սրահիկ մը կ'տեսնես հաղիւ տասներկու ոտն երկայն եւ տասն լայն: Ունի կսկիկ կրակարան մը, հաստ կաղնի փայտէ յատակ մը, զոյկ մը թեւաթոռ եւ սեղան մ'սուիծու թեթերով քանդակեալ: Այս սրահիկն պատկից փոքրիկ ներհակ մը կրացուի, բաւական մեծակ է եւ կրնայ պարունակել ամուրիի մահճակալ մը՝ որու փետրալի անկողնի վրայ կը ննջեմ եւ երբ առտու արթննամ աչքս կ'դադարի քսանչին Եղեսբէրդի մը վիմատիպ տմայն նկարին վրայ:

Բաղդս այնպէս բերած է որ աշխարհիս երեսը միայն այս տան օրինաւոր տէրն եմ, եւ մեծ հաճոյք կ'զգամ անոր մէջ ըստ քմայս բնակելով: Ամէն անգամ որ այս բնակարանս այցի գընեմ՝ կամ մը կոտրելու կ'յաջողիմ, եւ երբ առտու գով օդ ծծելու համար անձրկիմ շուտ մը պատուհանը բանալու, ոտնովս մէկ երկու ապակի կ'խորտակեմ: Հին աթոռի մը վրայ նստած՝ պատին կ'յենուիմ եւ ստէպ ծեփուկին վրայ այնպէս ծակ մը կ'բանամ օրօրուելով՝ որ եթէ այս բանս քաղաքը պատահէր՝ իբրեւ զեան՝ մեծ տոյժ պիտի կրէի կամ նապլի տան տիկնոջ մը զայրոյթը պիտի դրդռէի: Իմ լայնշի թեւաթոռիս վրայ՝ առանձին քա-

քահ մը կ'ձգեմ, երբ կ'մտածեմ որ ոչ մէկէն և ոչ միւսէն վախի տեղ մը ունիմ։

Իսկ կրակարանս վառ կ'պահեմ այնչափ որ սրահիս կէսն և մօտակայ խուցը տաքնան սպիտակ բոցերով։ Իրաւի՝ պատուհաններս շատ ամրապինդ չեն, կոտրած ապակիներ և անշահ շրջանակներ ունին, ուստի թէև կրակն առատ՝ չափէն աւելի շուայլ չէ։

Գիշերը կ'մօտենայ, կրակարանիս մօտ թեղօշի և եղևնի փայտէ ստուար կոյտ մ'ունիմ. կ'մտրեմ անոր շրջանակին վրայ դրուած Ճրագս (տնային բաղմակալը գործածելով՝ որու մէկ ոտքը կոտրած է) ապա կ'քաշեմ ամթոռս բոցավառ փայտին դիմացը, և մէն մի ոտնս երկաթ կուռանքին (fire-dogs) վրայ դնելով (մինչև ստոտիկ տաքնալը) կը պատրաստուիմ այնպէս ժուժկալև խոհուն դիշեր մ'անցընելու, որու նմանը, հոգիս կրնայ վկայել, սակաւաթիւ մարդիկ վայելելու բաղդն ունին։

Նոյն միջոցին՝ մերթ ընդ մերթ կ'լսեմ սենեկէս, թէև միջևն քարաշէն հաստ վառարանը կայ, վարձկալիս ձայնն. բարի մարդն իր կնկան հետ ամէն Ճիգ կ'թափէ իր երկու մանկիկները քնացընելու համար։ Կրնամ ըսել թէ՝ սովորաբար այս գործովժամմը կ'զբաղին, թէև իմ ժամանակիս միակ չափն (վասն զի դիւղն երբէք իմ հետ ժամացոյց չեմ տանիր) իմ կրակիս բոցն է։ Ժամը տանին մօտ իմ փայտակոյտս գրեթէ կ'սպառի, մնացորդը վառ ածուխներու վրայ կ'դիտեմ և նստած տեղէս կ'դիտեմ թէ ինչպէս կ'բռնկին, կ'շողան և կ'մարին — Ճիշտ մեր բերկրութիւններու նման։ Ապա խարոյկին նշոյլովը կ'սահիմանկողնս կ'մտնեմ և այնպէս մուշտուշ քուն մը կ'քաշեմ որ միայն շառաչուկ փեղկեր և դիւղի օդը կրնայ հայթայթել։

Բայց բուն խնդրոյն դառնամ։ Անցեալ իրկուն — այս յետին այցելութիւնս պիտի լինէր իմ ազարակի տանս — երբ արտային խնդիրներու մասին մտածմունքս հատան, տարուան հոդաստոյթին վրայ այլ և այլ հաշիւներս աւարտեցի, երբ որոշեցի հոգի կառքի մը բոլորը նոր պատ մը քաշել, այժմ նոյեան ծառերով ծածկուած պուրակ մը հատանել, և կ'մտմտայի թէ այս իմ կիսկիսցուն տնակս կրնար արդեօք յարմար օթեակ մը լինիլ ինձ, որ անոր մէջ ապրիմ ու մեռնիմ — և ահա յանկարծ անսովոր մտմտուքի մէջ ընկայ, և այնպէս համակեց սիրտս, մինչև անգամ արտասուքս ատեն ատեն գրգռեց, որ 'ի մոի դրի հետեւեալ օրն նոյն մտմտուքս, յիշողութեանս ներածին չափ, դրի առնուլ։

Բան մը — կրնայ լինիլ տնաշէն բոցը (ամուրի մ'եմ, ըսէ քսանվեց տարեկան) կամ թերևս վարձկալիս տղեկին լալագին Ճիչն — ներշնչեց ինձ խորհուրդ մը — Ամուսնութեան։

Տաքուկ կռուանիս վրայ իմ վերջին բազկալիր փայտս շարեցի և աթոռիս երկու թևերուն մէջ դօտեպինդ լսրուելով ըսի — այժմ չպիտի կասիմ, այս խորհուրդն ուր որ տանի զիս պիտի երթամ, թէև սատանային դիրքն իսկ նետէ (բայց շատ կ'արտորամ) դոնէ, յարեցի աւելի հանդարտ ձայնով, մինչև որ կրակս վառի։

Փայտը թաց էր, և 'ի սկզբան բռնկելու երես մը չէր ցուցներ։ Սոսկալի կերպով կ'ծխար։ Մուխն, ըսի մտովին, միշտ բոցէն առաջ վեր կ'ելնէ, ինչպէս կասկածն որոշումէ առաջ, և իմ Անուրջս, այս կէտէն սկսելով, հետևեալ ձևն առաւ։

Ա.

ՄՈՒԽ — ՈՐ Կ'ԵՇԱՆԱԿԻ ԿԱՍԿԱԾ

Կի՞ն մը, ըսի մտովին. այո, կի՛ն մը։

Ինչպէս։

Ուրեմն խօսէ, խնդրեմ, սիրելի պարոն, ինչու՞ չառնումկին մը — ինչու՞. հապա չէ՞ս կասկածիր, չէ՞ս վարանիր, չէ՞ս դողար։

Միթէ մարդ մը, աղքատիկ մարդ մ'որ իր բոլոր վաստակը վիճակահանութեան տոմսակ մը դնելու համար կ'գործածէ, միթէ առանց դողի, առանց վարանման և առանց կասկածի կ'գնէ այդ տոմսակը։

Մարդ մը կրնա՞յ իր ամուրիի յարդը, հանգիստն ու անկախութիւնն վտանգի մասնել՝ բոլորագրաւ, անայլելի, անողջերի ամուսնութեան քուէին վրայ իր բաղդը դնելով։

Մարդ մ'որ անդուլ ու անարդել իր մտածին խորհուրդներն լայնատարը աշխարհի վրայ սփռելու աղատութիւնը կ'վայելէ, կրնա՞յ ինքզինք ամուսնութեան նաւուն մէջ փակել, Տուն կոչուած չորս պատի մէջ, որ այժմ և յաւիտեան իր անձն, իր ժամանակը, իր հոգն և իր արտասուքը պիտի պահանջեն, առանց տարակուսանայ՝ որ խիտ առ խիտ վեր կ'ելնեն մոի պէս։

Մարդ մ'որ մինչև այսօր ուրիշ մարդկան հոգերն ու գործերը միայն դիտեր է, սրտմաշուք ցաւերէ հեռու կենալով և ամէն ուրախալի

վայրեր փնտռելով, պարտաւոր է այժմ նոյն հողերն ու վիշտերն անվրդովիր վրայ բերել։ Այն որ բոլոր կենացը մէջ անհնարին նեղութիւններէ թեթեւոտն սահեր անցեր է, պէտք է որ հիմակ իր վիճակն ամուսնութեան լծին տակ դնէ, ուսկից՝ եթէ նեղութիւնը զինքը պաշարէ, աղաղակ չունի։ Ի՞նչպէս այս իմ հանգարտ, անփոյթ դլուխս՝ որդնորքով կ'մնանի, վեհ, հսկայաձև դղեակներ կ'շինէ, յարաժամ երանութիւններ կ'երազէ, խոնարհի վերջապէս տաղտուկ աշխատութեան մը, որ է կին և զաւակներ կերակրելու հոդը տածել։

Ո՞ւր պիտի դտնեմ այնուհետև այն լուսափայլ երազներն որով իմ միտքս ու սիրտս կ'վառէին և աչացս փայլ կ'տային։ Այն ամուսնութիւնն իսկ, որ վեհ երևակայութեան շնորհիւ մեղի լոյս և երանութիւն կը խոստանայ, մեր խորհրդոց թև ու ոգի տալու չպիտի յաջողի։ Բաբէ, ամէն բան պիտի բուսնի, և իրական տաղտուկ աշխարհը մեզ պիտի պաշարէ։ Երևակայութիւնն ճարակ չպիտի գտնէ արշաւելու անվեհեր, հոյակապ պալատները պիտի կործանին — ամէն ինչ աւեր ու քանդ պիտի լինի։

Ինչո՞ւ չէ, մտածեցի, շարունակէ երազդ։

Ո՞ր կինն կրնայ աւելի սիրուն լինիլ քան թէ այն զոր՝ ճաշէն ետք՝ երևակայութիւնդ, թէև անհոգ այլ աշխոյժ, կ'նկարէ քեզ։ Ո՞ր մանչիկներն կրնան նուաղշուկ հանել քան թէ այն կարմրայտ փոքրիկներն որ միայն քու ըղեղիդ մէջ դոյութիւն ունին։ Ո՞ր տան տիկինն կրնայ նախադաս լինիլ քան թէ այն որ քնքուշ մտատով կ'ցրուէ երազներդ հինող ոստայնները։ Ո՞ր մառանն աւելի լեցուն կրնայ լինիլ քան թէ դլխիդ մառանն որ թիկնաթոռիդ փափուկ բարձին վրայ կ'հանդչի թոյլօրէն։ Ո՞ր տնական քսակն կրնայ աւելի ծանր լինիլ քան թէ այն զոր քան զչափն աւելի կ'երազես Մունչօսէնի կամ Տիրէի զուարճալի դրեանը կարդալէն ետև։

Բայց եթէ վերջապէս պարարն է կամ ինչ որ կամիս մեղ ամուսնութեան յորդորողն — ի՞նչ ընելու է։ Եւ իմ ոսներս կուռանին զարկի ուժդին, կռնակս աթոռիս տուի և դէմքս ձեղունին դարձընելով ըսի. — Սակայն ինձի պէս թշուառ մարդ մը, աշխարհիս ո՞ր անկիւնը կին մը փնտռել պէտք է։

Մատենագիր մը կ'ըսէ, կարծեմ Լիդըլդօն կամ Շէ-Փդէսպրի, թէ «Ամուսնութիւններն տեսլի բարեբաստիկ կ'լինէին եթէ արքունի դատաւորատեսը տնօրինէր։» Գէշն այն է որ դատաւորատեսի մը չունինք որպէս զի այս հոդն անոր տնօրէնութեան յանձնէինք։

Ուրեմն պէտք է որ մարդ մը, բարեվիստ Ժիլ Պլասի նման, ջորիի մը կռնակը հեծնէ և ասդին անդին թափառի կին մը փնտռելու համար, կամ պէտք է որ՝ տիկին Ս. Մարդի նման՝ բարեխօս միջնորդուհոյն դիմի, որ՝ ինչպէս Մոմ-ին մէջ կ'կարդամ՝ այս տեսակ խնամութիւններ կ'կարդադրէ երդեր, հարս ու փեսայի հարստութեանց վրայ հարիւրին հինդ առնլով։

Զուկ բռնելու դայած եմ, վասին այնքան ցած և երկին այնքան տաք եղած տեսն՝ որ նոյնն էր եթէ կարթս աւազին վրայ նետէի. նոյնպէս կէսօրին ճաղար, և ձիւնոտ ժամանակ աքար որսալու ելած եմ — յոյսս բնաւ չկտրելով, հաղիւ կասկած ունենալով. բայց այս տեսակ ողորմելի որսորդի մը համար որ ոչ ուռկան ունի, ոչ վարմ, կամ որ և է օդնական կամ առաջնորդ, բոլոր աշխարհ պարտիզն, ուր չափաւոր հաշուով՝ երեք հարիւր միլիոն անայր կանայք կ'վխտան, միակ, անդարմանելի, անփոփոխելի որս մը բռնելու մտօք, շատ դժուարին է, այնպէս որ դերեվարը կրնայ դերի դառնալ և որսն որսորդ — և այս ամէնն, ճշմարիտը կ'ըսեմ, կարող է մարդուս միտքը կասկածներով պաշարել։

Միւս կողմէն՝ կնկան տաղտկալի ազգականները կան։ Ո՞ դիտէ՝ քանի՞ երրորդ, չորրորդ կամ հինդերորդ հօրեղբօր որդիներ անպատեհ շնորհաւորութեան ժամանակ պիտի երևան ելնեն, երբ դու վաղուց կարծէիր թէ ամէն շնորհաւորական այցելութիւններ աւարտած են։ Քանի՞ քանի հիւանեկ դլխով եղբայրներ իբրև բարեկամ Վարդուհոյն պիտի դան անոր խորհուրդ տալու։

Քանի՞ քանի աղջիկ մօրբոյրներ պիտի դան որ իրենց «էրպոհ-ոյն հետ ամիս մ'անցընեն, և պիտի փափաքին իմանալ՝ թէյ խմելու ատեն, եթէ իրօք «նա անուշիկ սիրուն կին մը դարձեր է»։ Նոյնպէս, սիրական աներդ պիտի պահանջէ (սիրական Վարդուհոյն ձեռքը բռնելով) օպտաւէտ խորհուրդ մը տալ անոր, և աներկիւղ եղիր որ անոր խրատն քու ըսածիդ բոլորովին ներհակը պիտի լինի։ Եւ սիրական կեսուրդ իր քիթը Վարդուհոյն մառանին մէջ պիտի դնէ, և պիտի սնդէ որ դդրոցիդ բանալին իր վրայ պահէ։

Թերևս աղտոտ քթով քեռորդիներու երամ մ'ալ դտնուի. տունդ կ'դան որ տոներն անցընեն և Հնդկաստանի անուշեղէնդ ուտեն, նոյնպէս անդադար դլխիդ վերևը վայնասուն և շփոթ հանեն երբ դու դործովդ զբաղած ես։ Ի վերջ, և այս ամենէն վատն է, անհանդարտ ծերուկ քեռի մ'ալ կայ, որ միշտ չափէն աւելի պաղ կամ տաք կ'երևի, որ

պաշտպանութեան հովեր առնելով քեզ կ'նեղէ, և իր փոքրիկ Վարդուհին անպատկառ կ'համբուրէ։

Սակայն կրնաս այս քեռին տանիլ. վասն զի կարելի է որ իր հարստութիւնը Վարդուհւոյն խոստացաւ։ Ուրեմն Վարդուհին պիտի հարուստ լինի (և այս դաղափարին վրայ՝ իմ սրունքս քերեցի, որ նոյնպէս հուն բաւական տարբեր էին կուռանին վրայ)։ Այնուհետև Վարդուհին էր հարստութեան վրայ պիտի խօսի անդուլ, և զուարճաբանութեամբ պիտի յիշեցնէ քեզ որ իրեն սիրուն բան մը գնես, վասն զի բարեբաղդ է որ ինչ դրամ ունի, և մինչդեռ մէկ կողմէ խնայութեան յորդորներ պիտի կարդայ, միւս կողմէ տարօրինակ ծախքեր պիտի ընէ։

Նախաճաշի ատեն՝ նա սրտիդ նեղութիւն պիտի տայ դրամագլխի ցանկն աչքէ անցընելով, և քու գնորդներուդ անհոգս պիտի յայտնէ թէ այս ինչկամ այն ինչ շահագիտական գործին մէջ բաժին ունի։

Զայրոյթդ գրգռելու չափ լուռ ու մունջ պիտի նստի երբոր խանութպանի մ'ակնարկես թէ քովդ դրամ չունիս անոր փոքրիկ հաշիւը վճարելու — մէկ խօսքով՝ տաղտուկ, վիշտ, սրտնեղութիւն պիտի պատճառէ քեզ, հոգիդ բերանդ պիտի բերէ, այնպէս որ հարուստ կէն տ'ուանլուդ ծայրագոյն յիմարութիւնդ տուժես։

Բայց եթէ ոչ հարուստ, դէթ աղքատ կին մ'առնում։ Վա՛չ, այս խորհրդով ելայ ածուխը խառնեցի. բայց դեռ ևս բոց չկար։ Այժմ՝ առուտուրիդ շնորհիւ և ճակտիդ քրտոնքը բրած դոյզն ինչ վաստակդ պիտի կազմէ բոլոր ծէր եկամուտը. մանր մունր ծախսեր պիտի տաղտնապէն քեզ, պիտի տաղտնապէն չքաւոր կնկանդ պարագաները։ Տարակոյս չկայ որ աղուոր աղուոր բաներ պիտի պահանջէ, ճաշակ ունի, և պիտի ըսէ որ այս ինչ բանը պիտի շահէր, միւսը զարդարէր, եթէ գոյն ստակ ունենար. բայց հաւատի է որ Պօղոս (համբոյր մ'այստեղ) չպիտի զլանայ իր փոքրիկ Վարդուհւոյն այսպէս ընչին դումար մ'որ նպատակ ունի ամենուն օգուտը։

Բայց նախ ինք չհաւանիր որ էր զաւակներն երթան լաթ մուրան — և ուրիշ մը քսակը պարպէ։ Ինչո՞ւ համար խեղճ մայր մ'իր զաւակներուն պերճ հագուստներ չշինէ։

Կարելի է որ Վարդուհին տգեղ է. 'ի սկզբան աչքի չէր զարներ. բայց քանի նա կ'մեծնայ, և որ վասն է, դու աւելի շուտ կ'մեծնաս, կ'զարմանաս թէ ինչպէս անոր դեռհիկ քիթը վաղուց չէիր դիտած. հապա իր շուրթն — զարմանք են, դու կարծեր էիր թէ միշտ սիրուն

պիտի գտնես։ Եւ ինչպէս սեղան կ'նստի իր այլակերպ մազերով, և դու չես յանդգնիր ըսելու «Վարդուհի, մազերդ հա՛ր է»։ Իր ոտքն ալ, որ այնչափ անշահ չէին երբ վայելչապէս ագուցած էր, հիմակ, կարգուելէն 'ի վեր, ինչպէս կ'հագնին այն դժոխային օղիկները։

Եւ սակայն այս ամէնը պէտք է տանիլ, և ժամու չափ քնքշալ՝ երբ իմ վաղեմի ընկերներէս զան ինձ սեղանակից լինելու։

«Փա՛ռք Աստուծոյ, սիրական ընկերներս» ըսի ես՝ ունելիքն ածուխներուն մէջ մղելով, և բարձրագոչ խօսելով, որպէս թէ ձայնս Վիրգինիայէն 'ի Բարիզ կրնայ հասնիլ, «տակաւին չեմ կարգուած։»

Թերևս Վարդուհին բաւական սիրուն է — այլ քիչ մը կուասէր։

— Ինչ փոյթ եթէ խահվէն պաղէ — պարտաւոր էիր տալի կանուխ արթննալ։

Ասոնք ինչողորմելի, բարակ, գէշ տապկած միսեր են, կրնան ուտուիլ գլաններովդ։

— Բայց Վարդուհին կարծէ թէ շատ աղուր են, և կ'զարմանայ որ ինչպէս տղայ վատ օրինակ կ'տամ իմ ընթացքովս։

Կարագը նողկալի է։

— Բայց Վարդուհին ուրիշ չունի, և կ'յուսայ որ կարագը քիչ մը թթուած լինելուն փոթորիկ մը չես հաներ։ Ինքզինքս սեղանի մ'առջև կ'տեսնեմ հեգիկ նստած, աչերս հաղիւ թէ վեր առնելու կ'ժտիմ, առջի օրուան կուռէ մը սրդոլած եմ, անշահ ու թթուաշ բլիթներ կ'ջարդեմ, թէև կինս շատ հաճելի կ'գտնէ զանոնք — պատառաքաղիս ծայրովը մէկդի կ'քշեմ երած երշիկի չոր կտորներ, կ'քշքշեմ աթոռս սեղանէն հեռու, փեղոյրս կամացուկ մը կ'տանում ծնկանցս վրայ, և դործ պատճառելով, կ'ելնեմ կ'սահիմ և խելքս գլուխս կ'գայ միայն երբ Վարդուհւոյն և իմ մէջ կաղնի դուռը կ'գոցուի։

— «Հա՛, հա՛ — ոչ, կարգուած չեմ» ըսի, և այնպէս ամուր ձայնով որ շունս ընդոստ ոտք ելաւ, աչքն իմ վրայ տնկեց որ լաւ մ'երեսս նայի — իմ յաղթական ժպիտս տեսաւ իր պոչը սիրասէս օրելով, և նորէն իր անկիւնը նստաւ ոլորած։

Դարձեալ՝ Վարդուհին բաւական հարուստ, բաւական լաւ, բաւական համբոյր է, միայն մազի չափ փոյթ չունի քու վրադ։ Քեզ իբրև ամուսին առաւ, որովհետև հայրն կամհատն այս միութիւնը յարմար դատեց, և որովհետև չուզեց անոնց սիրտը կոտրել։ Իրաւ է որ Վարդուհին քեզ չէր ատեր, և կ'մտածէր որ դու բաւականյարդելի մարդ մ'ես — ինչպէս որ ստէպ ճաշի ատեն կրկնած էր քեզի նոյն

բանը։ Կ'զարմանայ որ քերթուածներ կարդալ կ'սիրես, կ'խնդրէ որ իրեն լաւ խոհակերի գիրք մը գնես որ կերակուր եփել սորվի, և կը պնդէ որ առաջին զաւակդ ծնելուն կտակագիրդ շինես։ Կ'մտածէ Վարդուհին որ այս ինչ զօրապետն շատ գեղատեսիլ մարդ մ'է, և կը պատուիրէ քեզ որ դու ևս քիչ մը հագուիս կապուիս, գէթ 'ի ցոյց մարդկան։

Պէտք չունիս որ իրկունը գրատունէդ կանուխկեկ դառնալու շտապիս — Վարդուհին, այս անուշիկ հոգին, միսակ չմնար, չտաղտկանար։ Անոր սիրավէպ մը կ'կարդաս, և ահա ամենէն սրտաշարժ տեղն ընթերցումդ կ'ընդմիջէ նաժշտին հրահանգներ տալով։ Ամուսնական բաներ կ'կարդաս, Վարդուհին կ'հառաչէ, և կ'հարցնէ թէ արդեօք այս ինչ զօրապետը գիւղը գնա՞ց։ Բնաւ չսիրեր նա տնակի մը, կամ աղիւսակերտ պատերու մէջ փակուիլ. որչափ կ'սիրէ նա ջերմուխները։

Բայց՝ թերևս Վարդուհին կ'սիրէ քեզ — գէթ կ'երդնու որ կ'սիրէ, ձեռքը Վէրթիրէի վրայ դնելով։ Մանրուկ ստակ ունի, Գրիմոն ալիսրհ և Բաբէլմա՛ 'ի Խորհուրդ թերթերուն գրուած է։ Տգեղ չէ, միայն ճակատը քիչ մը լայն է, աղտոտ ալ չէ, միայն մինչև ժամն երեք կէս հագուած կ'նստի. և եթէ ցցամատին վրայ մեկնի արատ մը տեսնուի, աղտո՞տ է, մանաւանդ որ արատն ալ մութ կապոյտ է։

Մտածեցիր անշուշտ, երբ Վարդուհին եռահատոր վէպի մը մէջ թաղուած տեսար, թէ այս փափաքն մանկական վաղանցուկ անուրջ մի է. և երբ քեզի լատին մատենագիրներէ վկայութիւն մէջ բերաւ, անմեղօրէն մտածեցիր որ սքանչելի յիշողութիւն մ'ունի իր սիրական հեղինակներու խօսքը պահելու։

Բայց երբ երկնային Տանդէի և ծաղրարան Կոլտոնիի վրայ անդադար քեզ խօսի, համբերութիւնդ կ'հատնի։ Քու Դասոի գործոյ ձեռագիրդ, որ 1680ին գրուած գոհար մ'է, արդէն ծայրատեր, պատռեր և երեխային դեղջրով աղտոտեր է։ Նոյն իսկ Սենեկադ, էլզէվիր մը, կեղտոտ մատերու նշաններ ունի։ Կ'սպասէ նա Լա Ֆոնդէնը, Պալզադ կ'կարդայ դիտցողի մը խոժոռ դիմաք, և իր յունարէնն ալ չմոռնար։

Ընթրիքի առեն կ'ըսես որ շատ յոգներ ես և գլխի ցաւ ունիս, Վարդուհին անհոգ, քեզի ծաղրաբանական գրուած մը կ'նետէ, փոխանակ քափուրի շիշը տալու, կամ՝ այ, այ, կ'երգէ, եղերական եղանակի մը վրայ։

— Սանտուն ճաշը կ'պատրաստէ, երեխան դու բռներ ես, Վարդուհին լա Պրիյէր կ'կարդայ։

Պրակը կուպրի պէս կ'ծխար, և վառարանէն դուրս կ'վանէր մանր մունր ամպեր։ Վարդուհին, երեխան և լա Պրիյէր մտածելով կեց մը տուի առջևի փայտին։

Յանկարծ մուխին մէջէն բոցը վեր ելաւ կապտագոյն, ստորին ոստ մը հրահրեց, լուռուտ կաղնի փայտը բոլորեց, ճարճատուն փայտի բեկորներն ամփոփեց, բոլոր մթին ամպը վառեց, և սկսաւ բռնկիլ զուարթ և պայծառ։ Կասկածը Մխին հետ փարատեցաւ, և Ցոյնն սկսաւ Բոցին հետ։

Բ

ՐՈՑ — ՈՐ ԿԵՆՇԱՆԱԿԻՆ ԽՆԴՈՒԹԻՒՆ

Աթոռս ետև քաշեցի, ուրիշ մը մօտ բերի, ոտքս վրան տեղաւորեցի, ապա արմուկս աթոռիս թևերուն և գլուխս ձեռքիս յենլով՝ աչքս սևեռեցի շիտակ շողուն ու երերուն բոցին։

— Սէրը բոց մ'է, ըսի մտովին, և (սենեկիս չորս դին նայելով) ինչպէս աղոր կ'լուսաւորէ բոց մը մարդուս բնակարանը։

«Գարլօ» ըսի՝ շունս կոչելով՝ բարի՛ ընկերս Գարլօ» և զայն փայփայեցի. այն ալ պոչը շարժեց, ցուրկը ծնկացս մէջ դրաւ և երեսս նայելէն ետև անձկալի, իր տեղը դարձաւ որ քնանայ։

«Վա՛յ, անբա՛ն» ըսի. Ճշմարիտը՝ բաւական չէ միայն շուն մը սիրելը։

— Եթէ հիմակ սա վարի աթոռը, չէ թէ ոտքինդ, այլ միւսը, մօտ — կարի մօտ դանուած — անուշադէմ աղջիկ մը նստած լինէր. իր սիրուն մանր ոտքը կրակարանին վրայ դրած, և կլորիկ վզին բոլորը ժապաւէնի շերտ մը ծփար — եթէ ճակտին վրայ, որ երազդ տեսածիդ պէս շնորհապեղ է — իր մազերը շնորհալի կերպով տրհոած լինէր, և մէկ թեզ մինչև նոյն աթոռին կռնակը հասնելով՝ կարողլինէիր մատներովդ ուսէն վար ծածանող գանգուրներուն հետ սիրօրէն խաղալ, և եթէ միւս ձեռնովդ՝ անոր սպիտակ ու քնքուշ մատերը բռնէիր — և այսպէս անոր հետ անուշ և մեղմիկ խօսակցէիր կրակին առջև, մինչդեռ ժամերն անտես սահէին, ձմերուան հովերը՝ քեզ անս-

տարբեր գտնելով՝ սուլէին — մէկ խօսքով՝ եթէ ամուրի չլինէիր, այլ այսպիսի նկարի մ՚ամուսինը լինէիր, միթէ աւելի ախորժելի չպիտի լինէր քան թէ այս մենաւոր հսկումն, երբ փայտերը կ՚համրես, և բոլոր երկայնութիւնն ու ձիւնին թանձրութիւնը կ՚չափես:

Եւ եթէ նոյն ժամուն՝ երևակայութիւնդ պաշարող փայլուն տեսիլքդ անոր ականջին փսփսալու կարող լինէիր, վասն զի սիրատենչ ականջներ են — լսելու անձանձիր ականջներ, վասն զի դու կ՚փսփսաս — յաւէտ ներող ականջներ, վասն զի կարօտ են գովեստի — և եթէ միթին ցնորքդ բորբոքէին չէ թէ միայն փայտին պայծառ լուսովն, այլ սիրաւէտ յանդիմանութեամբ քեզ նայող անուշէակին դաշնաւոր ծիծաղովն — որքան լաւագոյն պիտի լինէր քան թէ սև, դառն խորհրդոց ճարակ մնալ — միայնակ, մինչդեռ շունդ անպամ կ՚նիրհէ:

Եւ երբ յանկարծ փայլուն խորհուրդ մը ծնէր գլխուդ մէջ, կարող պիտի լինէիր՝ իբրև քու սրտիդ հատորին՝ հաղորդելու զայն անուշիկ էակիդ, որ քեզմէ հեռի չէ, վասն զի քու քովդ նստիլ կ՚ախորժի, և եթէ գիտէիր թէ ինչպէս այդ խորհուրդդ իր անարատ միտքը կ՚պաշարէ, ինչպէս իր դեղանի ճատակը կ՚լուսաւորէ, ինչպէս աղոր ա-ջացը մէջ կ՚բեկբեկի — որչափ աւելի երջանկութիւն պիտի ղգայիր քան թէ երբ նոյն խորհուրդդ նիրհէր, և ապա անշունչ, անկենդան մարէր ինքնասէր երևակայութեանդ մէջ: Եւ եթէ վեհ և անմեկնելի այլայլութիւն մը քեզ համակէր, միթէ աւելի մեծ հրապոյր չպիտի ղգայիր երբ գգուանօք կամ սիրաբոյր խօսքով նոյնն ցանկալի սիրականիդ հաղորդէիր, քան թէ փայլաստեղ շունդ շոյէիր կամ մենակուկ քուն մտնէիր:

Այն ատեն՝ ինչպէս բարեսէր ղգայումներդ՝ այսպիսի խորհրդատուի մը ներդործութեամբ պիտի զարդանային, ինչպէս ինքնասիրութիւնդ՝ սիրականիդ շնորհիւ, պիտի թառամէր և նուաղէր, ինչպէս նենգն՝ այն կայտառ ճակտին և անմեղ նայուածքին առջև՝ պիտի դադարէր. ինչպէս անոր ներկայութեան՝ երիտասարդութեանդ անպին խանդը, վառ արիւնն ու կեանքը պիտի նորոգուէին:

Կրակին ջերմութիւնը քիչ քիչ կ՚աւելնար. աթոռս սենեկիս մէջ տեղը քշեցի. բոցերուն ստուերներն՝ մոգական տեսիլներու պէս՝ դեռնին, պատին և ձեղունին վրայ կ՚ոստոստէին:

Անտարակոյս՝ իմ երևակայութիւնս պիտի բորբոքէր, ըսի առանձին, եթէ այսպիսի էակ մը ներկայ գտնուէր. իրաւի՝ երևակայութիւնս աւելի պիտի զօրանար, աւելի պիտի սրբանար եթէ նորանշոյլ կնկան մը

հաճոյական ցնորքը վայելէր: Մոքիս բոլոր հոգն ու հնհնոտքը պիտի փարատէին, եթէ այս հոգւոյս մէջ ուրիշ սիրտ մը շարժէր, անոր այժ, հուր, խինդ և երանութիւն խոստանալով:

Իր դէմքն արփիափայլ բակ մը պիտի յօրինէր, ծիածանի պէս շքեղ, որու կատարը չպիտի հասնէին այն աղմկալի բաներն զոր մեղի պէս մենակեաց մարդիկ հոգ և վիշտ կ՚անտանեն: Իր ժպիտն դէզ-դէզսև ամպեր պիտի լուսաւորէր, և այն մայլն՝ որ շատ օրեր մենակ ու չոր գլխուդ վերևը կ՚սաւառնի, դառն խորհուրդներ, դառն երազներ բերելով՝ պիտի նրբանայ, սահի, յրուի այն սիրաբոյր ժպտին շնորհիւ:

Քու բարեկամդ, խեղճ մարդը, կ՚մոնի՛, հոգ մի ըներ՝ իր մատերուն դողտրիկ սեղմումն, երբ քու եանդ սահելով կ՚ըսէ քեզ որ չլաս, տաս բարեկամ կ՚արժէ:

Քոյրդ, անուշէակ մը, մեռած սև հողն է: Արդէն որդերն իր գեղանի մարմինը պատեր են: Ասոր վրայ խորհելով կ՚ըսես թէ երկիրը մի միայն գերեզմաններ փորելու յարմար վայր մ՚է:

Այս բաւական չէ. նէ, քու սիրականդ՝ կ՚ըսէ քեզ որ ինք քոյր մը պիտի լինի, և մինչդեռ քու ուսիդ վրայ կ՚կոթնի, իր գեղածուփ գանգուրներն այտերուդ կ՚դպին, և քու արտասուալի աչերդ կ՚գառնան իր աչաց կ՚հանդիպին: Անտարակոյս՝ Աստուած վերէն հրեշտակ մը զրկեր է քեզի:

Մայրդ, աւա՜ղ, հոգին կ՚փչէ. միթէ մենաւոր և անտուն երիտասարդի մը համար ասկից աւելի գառն աղէտ մը կա՞յ:

Բայց դու անտուն չես, դու միայնակ չես, նէ քովդ է, իր արտասուքը քուկդ կ՚ամոքեն, իր ժպիտը քուկդ կ՚շարժէ, իր վիշտը քուկդ կ՚վանէ, և դու վերստին կ՚ապրիս իր բարեմտին ցաւերը մեղմելու համար:

Հապա այն վարդագոյն, գեղահեր մանկտին. ո՜չ, այժմ չեն վրդովեր քեզ իրենց թրթռուկ լեզուով — քու զաւակներդ են: Մէկդի՛ ձգէ պարտէզդ, մոգնիր յակինթներդ, ձիւնածաղիկներդ, մանիշակներդ, եթէ մէկ քանին ծաղկոցդ կ՚գեղերին. տղայոցդ կենսաբոյր շրթերուն անուշ հոտն աշխարհիս բոլոր ծաղիկներէն գեր՝ ի վեր կ՚արժեն: Հիմակ պէտք չունիս վայրի փունջեր շինել, գգուել և սիրել, ծաղիկ, ծառ, հրացան քեզի համար մեռած բաներ են: Աւելի կենսատու իրեր հոգիդ կ՚գրաւեն,

Եւ ինք՝ մայրն՝ որ քան զամէն անուշ և գեղանի է, ինչպէս կ՚հսկէ,

կ'խնամէ, կ'շոյէ, կ'սիրէ զուակունքը, մինչև որ սիրոյ փափուկ նախանձով յուզի և սիրելով միայն բժշկուի։

Պէտք չունիս այժմ քարոզ մտիկ ընել շնորհապարտութիւն սորվելու համար. սիրոյ անուամբ է։ Ինչպէս երբեմն՝ հիմակ կարօտ չես նոր ածիլ բողբոջներ, դեռատիթիթ տերևներ և գալարաւէտ վայրեր տեսնել որպէս զի բարութեան և երախտապիտութեան խորհուրդներով զգածուիս, վասն զի քու քովդ կ'գտնուին ընդ միշտ բողբոջ, ընդ միշտ քու քովդ ունիս պտուղ, որոց համար աչքդ, սիրոյդ և հոգիդ լի են անծանօթ՝ և ըստ որում անպատում, անասելի, ըստ փառաբանութեամբ։

Եւ եթէ քեզ հիւանդութիւնը բռնէ, անկողին ձգէ, դանդաղաքայլ սպասուհիներու դէմ անվայել անէծք չպիտի կարդաս, մենաւոր հառաչներ չպիտի հանես։ Անոր քայլն անձայն է, բայց որոշ և քեզի մօտ. անոր հմայական ներկայութեամբ՝ անկողնիդ սպիտակ վարագոյրները պիտի քաշուին և գոյուին, և անոր փափուկ ու զով ձեռնը քու ճակտիդ վրայ պիտի հանդչի։

Չպիտի լսես բարեկամ լրտեսներու սփոփանքն, որոնք կամացուկ սենեակդ կ'սահին, բանաբերութեան նիւթ մը կ'փնտռեն և իսկոյն կը շտապին մեկնելու, այլ պիտի տեսնես յարաժամ այն սիրականիդ տրտում ճակատն, որու թեթևագոյն հոգն քու սիրոյդ համար ամենածանր վիշտ մ'է — եթէ մեծագոյն ուրախութիւն մը չլինէր։

Բոցը կ'ոստոստէր թեթև ու բարձր, ու փայտը հրավառ ջերմութենէ կ'քայքայէր։

Այսպէս ուրեմն, շարունակեցի խօսքս, այս իմ սիրոս 'ի վերջէ ինքզինքը պիտի գտնէ, միշտ բարձր բաներու պարապելով. իր զօրութիւնը՝ սիրոյ շնորհիս պիտի արդասաւորի, աշխարհիս հոգերն իրեն համար պիտի անհետին, ուրախութիւնները պիտի շատնան, զգայուններս պիտի ոգևորին, սէրն ինքնիշխան տէր պիտի դառնայ, և այս տիրապետութեան հասնելէն ետև՝ Անսահմանութեան պիտի վերադառնայ։

Եւ երբ վախճանն հասնի, և հիւանդութեան հետևի Մահն, որ ուշկանուխ պիտի հասնի անշուշտ, այն ատեն Սիրոյ սիրան ու ձեռքն՝ որ միշտ մօտդ են, ամէն ժամ, ամէն օր քու վշտահար հոգւոյդ պիտի հայթայթեն այնպիսի դասեր սիրոյ որ կ'սփոփէ, կ'յաղթանակէ, որ ամէն բան կ'պաշարէ և ամէն ինչ իր մէջ կ'ամփոփէ — Անհուն և Երկնային Սէր։

Իր — մի միայն իր բարեշնորհ ձեռքն — պիտի սրբէ մահուան պաղ քիրտն որ ճակտիդ վրայ կ'ծանրանայ. և իր — միայն իր մատերը պիտի սեղմեն քու մատերդ երբ սև հողին համար կ'կարկամին և կը կարծրանան։ Իր արտասուքն — ուրիշ արտասուք չես կարող զգալ եթէ հեղեղներ իսկ թափին — անգամ մ'ևս քայքայուն կերպարանքիդ ոգի պիտի աղէն, անգամ մ'ևս քու աչքդ խնդալին յաղթութեամբ կը փայլի, անոր ժպիտով կ'վառի, և ապա . . . :

Կրակն ընկաւ վառարանին յատակը. բոյն վերջին անգամ մ'ևս սլացաւ — կայծ մը — ապա ուրիշ մը մնացած փոքրիկ ոստ մը բռնկցուց — բոց հանեց — երերայ — մարեցաւ։

Վառարանին մէջ շղարշն հրատներու կոյտ մը մնաց միայն, որու վրայ մոխիրն սկսաւ շուտ մը բռնել։ Միայնակ էի, և իմ շունս ունէի միայն իբրև ընկեր։

Գ.

ՄՈԽԻՐ — ՈՐ ԿՆԾԱՆԱԿԻ ՏԱՌԱՊԱՆԸ

Այլ սակայն, ըսի մտովին, Մոխիրը կ'հետևի Բոցին, ինչպէս Մահն անվրէպ կ'հետևի Կենաց։ Թշուառութիւնն կ'քալէ ուրախութեան շաւղին վրայ, Անձկութիւնն արշաւասուր Զուարճութեան ետևէն կ'հասնի։

«Օ՜ն արի դարձեալ, Գարլօ» ըսի շունս. և նորէն շոյեցի զանի սիրովին, միայն այս անգամ կոյծերուն նշոյլովը։

Մարդ թեթև հաճոյք մը կ'զգայ իրաւ սիրուն կենդանիներ գգուելով, սակայն այս հաճոյքն երբ դադրի, ամայութիւն չթողուր։ Մենաւոր կենացդ սրտակցութեան մէջ դոյզն սփոփում մ'է այս, որ երբ կորսուի, ուրիշ մը կրնաս գտնել։

Բայց երբ սիրոյդ՝ մենաւոր չէ — երբ իր տաղտուկն որսորդութեան կամ իր շան սիրովը չէ կարող անդորրել, երբ տարուէ տարի լաւագոյն և հոգեկան բանի մը տենչալով՝ հուսկ ուրեմն կենաց սէս պինդ կապերով կ'կցորդի ուրիշ սրտի մը հետ, միթէ այն ատեն աղատումը դիւրին է։

Միթէ սրտի լիութեան ընդհատում մ'է այս զոր յաջորդ օրուան պայծառութիւնը կարենայ ընել։

Եւ ինչպէս իմ երեկայութիւնս մութին հետ կասկած, և բոցին ջերմութեան հետ խնդութիւն նկարագրեց, հիմակ ալ քայքայուն խորոյին լուսով սրտի տառապանքն սկսաւ նկարել։

— Ինչ անուշ, շնորհաւորական նամակներ — անհամար նամակներ — կ'հասնին քեզ, հին և կէս մոլորած բարեկամներու կողմէ, այժմ որ ամուսնական երջանկութիւնդ մէկ կամ երկու տարի կ'տևէ։ Մին կը գրէ,

«Գեղանի է նա։

Այո, արդարև գեղանի։

Ուրիշ մը կ'ըսէ,

«Հարուստ է։

Վա՜յ, նանրասէր մարդ, դու ինաւ չես իմանար թէ ի՞նչ է սրտի գանձն, որ հարստութեան վրայ կ'խօսիս իր կիրն ինչպէս որ պարոն է սիրող մարդու մը։

«Նորատի։

Իրօք՝ նորատի է, մանկութեան պէս անմեղ, առաւօտեան պէս հրճուագ։

Ա՜հ, այս նամակները խթան մ'ունին. նոր ու նոր թարմութեամբ յուշդ կ'ածեն, եթէ հնարին է, այն էակին արժանիքն, և կ'դողդողաս որ չիորուսնես։

Ինչպէս անձկանօք կ'դիտես իր քայլն թէ արդեօք իր թուիչքը կորուսաբ է, ինչպէս կ'քննես իր այտին գոյնն թէ արդեօք նուաղեր է, ինչպէս կ'դողաս աչայր փայլը տեսնելով որ մի գուցէ Մահուան փայլը լինի. ինչպէս կ'զգեցնես իր բեհեղեայ թեզանիքին ծանրութեան ներքև — անրջային ծանրութիւն։ Երբ տանդ շրջակայ բարձունքը կ'ելնես որ արևուն մուտքը նկատես և դաշտին պայծառութիւնը, ինչպէս՝ թէև կ'երկնչիս, այլ կ'փութաս ընդ առաջ որպէս զի դիտես թէ իր շունչը կ'ընդհատի։

Միթէ քունդ հանդարտ է, երբ մի անգամ ականջիդ կ'փսփսայ իր երկիւղները և նոյն շնչով — հառաչի պէս անուշ, նեսի պէս սուր — կ'սատուիրե քեզ որ արիաբար համբերես։

Թերևս — հիմակ հրատներն աւելի կ'փայլին, դոյն ինչ լոյս կը սփռեն, մոխրէն առաջ — հիւանդութեան վրայ յաղթանակ կ'տանի կինդ, և բոյժ կ'դանէ։

1002
5253

Բայց Աղքատութիւնն, աշխարհիս այս ողորմաբաշխն, եկաւ հատաւ քեզ շուտ ընդ փոյթ՝ դատարկ ձեռաք։

Միայնակ ես, շանդ հետ որ ոսկրներով կ'ապրի, և դուրսով. ամէն առտու բորբոքելով, ամէն գիշեր ծանր ծանր մաշելով. բայց այս վիճակը տանելի է։ Փիլիսոփայութիւնը կարող է միայնակեաց մարդուն իր պաշարը բերել։ Իր ձեռքը ստակ չունի, բայց Գիտութիւն ունի գլխուն մէջ, և այս գլխէն շուտ շուտ կ'քաղէ որչափ որ ծանր կ'քաղէ իր գրպանէն։ Կ'լիշէ նա, և օրեր ու շաբաթներ կրնայ ապրիլ յիշողութեամբ։ Ցարին, եթէ երբէք յարկի ներքև կ'բնակի, առատ է մոռածին խորհուրդներով։ Անձրևն, եթէ զարնէ, կ'զարնէ միայն գլխէն որ վարժած է անձրևի հարուածներուն։ Եւ իր շունն առահի չաբլիր ոտիցը մօտ, այլ իրրև ընկերակից։ Իր հացի կեղևէն անոր բաժին կ'հանէ, և կ'ծիծաղի։ Սէրվանդէսի փառաւոր յիշատակներովը գլխէն կ'պսակէ, թէև կ'մուրայ նա. եթէ աստեղազարդ երկնից ներքև գիշերն անցընէ, բանտարգել և անտուն Կալիլէի երկնատուր երազները կ'երազէ։

Հին նուագներ կ'մրմնջէ, և խեղճ Ճոնսընին թատերգութիւնները կ'կեղեքէ։ Տրայանի գեղջուները կ'երգէ, և Օդվէյի տաղերը կ'խծբծէ։ Կ'բանաքննէ նա Պօլինկրոքի կամ Տիոդինէսի հետ, երբ բանաքննելու եռանդը բռնէ, և աշխարհիս բոները կ'ծաղրէ, վասն զի, փառք Աստուծոյ, աշխարհը գլխէն միայնակ թողուց։

Ծերունի ժլատներ, պահեցէք ձեզի ձեր գրամը, և դուք ծերունի իշխաններ, ձեր պալատները, աշխարհն իմն է

Որոն փոյթ է, ո՛ բաղդ, ինչ բան որ զանաս ինձ —
Ձես կարող մերկել զիս ազատ բնութեան շորերից,
Ձես կարող դու զոցել վերին երկնից դրունքը.
Ձես կարող արգիլել որ շարունակ քալեմ
Ընդ անտառ եւ հովիտ վեհ առուց մօտեր։
Թող կեանքը կազդուրէ իմ ջիղ եւ ներդեր նուրբ,
Եւ ես, մեծ տոպրոց Ցողում իրենց խաղեր.
Թող իմ սիրտ, բան եւ խանդ ոչ որ կարէ կապտել։

Բայց եթէ միայնակ չես.

Հապա եթէ նէյարի քեզ, և օգնութիւն, սփոփանք, տուն, կեանք խնդրէ քեզնէ — եթէ նէ, թերևս Ճոխութեան մէջ սնած, հացի համար մաշի։

Այն ատեն հոգիդ սուրեր կ'մտնեն, այն ատեն գիշերը կ'մթանայ

որ և է լուսաւոր երկնից ներքև, այն ատեն օրերն կ'երկարին, նոյն իսկ ձմեռային արևադարձին։

Թերևս տրտունջ մը չհաներ նէ իր բերնէն, ապա։

Միթէ սիրտդ պիտի զօրանայ եթէ իր սիրոյ զօրութիւնն կարող լինի փակել արտասուաց աղբիւրները, և պրկեալ լեղուն բնաւ չխօսի չքաւորութեան վրայ։ Միթէ վիշտերդ պիտի ամոքին, եթէ նէ՝ մուրալով զողցած սին պարէնդ բաժնէր անսնունդ զաւակացը։

Բայց աղէտը, ուժեղ ձեռներ և երկնից օգնութիւնը կարող են ջնջել։ Վերստին Հարստութիւն, վերստին Ծաղիկներ, վերստին հայրենական արտեր, վերստին փայլ ու խնդութիւն կրնան դառնալ, բայց քու փոքրիկ Եղիսաբէթդ, քու սիրական զաւակդ կ'հալի ու կ'մաշի։

Երանի թէ կ'ըսես անձիութեամբ՝ որ Հարստութիւնն այն դուռնատ այտերուն աւոյգութիւն, կամ այն նուրբ շրթերուն կարմրութիւն տար, բայց ինչ օգուտ, չէ կարող։ Եւս քան զևս վատոյժ և վիտ կը դառնան, իր անոյշ ձայնն օր ըստ օրէ ողբագին հնչիւն մը կ'առնու։

«Հէք Եղիսաբէթ» և այս անունը տալու ատեն ձայնդ կ'դողդողայ. կ'զգաս որ դերեզմանին ծայրը հասած է։ Կարող ես զանի ետ դարձնել։ Կարող ես զգուանօք անոր կեանք ներշնչել։ Ծանր գործեր քեզ սիրականդ կ'հեռացրնեն, և երբ տուն կ'դառնաս որ զաւակդ փայփայես քանի որ ժամանակ ունիս, կ'տեսնես որ այն ժամանակն դու ուշ մնացեր ես։ Զաւակդ մաներ է։ Նա չէ կարող լսել ձայնդ, նա չէ կարող շնորհակալ լինիլ քեզի այն մանիշակներուն համար զորս իր կարկամ սպիտակ ձեռացը մէջ կ'դնես։

Եւ տպա — գալարաւէտ հողարլուրը — շիրմին պաղ ստուերը։

Հոգին՝ մթութեան հետ սաստկանալով՝ վեղերուն կ'զարնէ և զարհուրելի կերպով կ'սուլէ։ Արտասր մը կ'սրբեմ, և իմ երակիս մէջցին փառք կ'տամ Աստուծոյ որ ես այս սգաւորը չեմ։

Բայց զուարթութիւնն, յամրաքայլ, կ'սպրդի վերստին տան մէջ։ Նորէն ամէն բան պայծառ է. —

«Մանիշակեայ ածուն չէ այնքան անուշ որչափ է ամուսնութեան բուրած զմայլելի շունչը։»

Իր շուրթը կայտառ է և առլի. ծաղկի պէս փափուկ է իր այտը։ Իր տկարութիւնն քու սէրդ կ'կրկնապատկէ։

Հապա այն փոքրիկ տղէկը զոր կ'դրկէ նոյնպէս վատոյժ է — շատ վատոյժ. այս որդիդ որու վրայ դրած ես բոլոր յոյսդ ու սիրտդ։ Անոր մեծնալը գուրգուրալով դիտեցիր, օր ըստ օրէ սիրուն կ'դառնար, օր

ըստ օրէ հոգիդ կ'գրաւէր։ Երբ առաջին անգամ քու և անոր անունն արտասանեց՝ զգացած սէրդ զօրացաւ այժմ որ անմեղօրէն այլ և այլ հարցումներ կ'ընէ այն վառվռուն հետաքրքրութեամբն որ աչացը մէջ կ'փայլիլի, և իր առոյգ խմացականութեան նշանն է։

Եւ թերևս որդիդ քանի մ'անգամ ծռոլու կամ գետակի վտանգէ մազապուր ազատելուն սիրտդ արտասուօք փղձկեց, երբ կ'աղօթէիր Աստուծոյ որ զանի անփորձ պահէ — հաղարապատիկ աւելի թանկագին և սիրելի դարձաւ քու հոգւոյդ։

Եւ այժմ որ իր գունատ քոյրը սև հողն է, բոլոր այս սէրն թռաւ այն փոսէն ուր որդերը կ'ճարակին, և կեդրոնացաւ տղեկին վրայ։

Ինչպէս կ'դիտես փոթորիկներն առ ահի որ անոր վնաս մը չպատճառեն, ինչպէս ստէպ կ'սպրդիս գիշերային անոր անկողնոյն մօտ և ձեռօքդ մեղմիկ կ'գդուես անոր ճակատն, որու վրայ գանգուրները հաւաքուած են խիտ առ խիտ, և իր արոփող քունքին հետ կ'ելնեն և կ'ընկնին, և շատ վայրկեաններ կիսբաց փոքրիկ շրթունքը կ'դիտես, մտիկ կ'ընես — ականջդ մօտ տանելով — եթէ շնչառութիւնը կանոնաւոր և հանդարտ է։

Բայց օրը կ'ծագի — թերևս գիշերը կ'հասնի — երբ կ'նայիս որ բնաւ շունչ չունի։

Այո, մաղերդ հեռու տար — բոլոր ուշդ ամփոփէ — նորէն միտդիր։

Ո՛չ, կենդանութիւն չկայ։

Այժմ ձեռքդ անոր ճակտին վրայ դիր — նամէտ է արդարև ճակատն, բայց չէ թէ գիշերային առողջաբար քունով. ձեռքդ չէ, ո՛չ, մի խարուիր, քու սիրական տղուդ ճակատն է այդչափ պաղ, և այդ սիրական տղադ նորէն չպիտի խօսի քեզ բնաւին — բնաւ չպիտի խաղայ — մեռած է։

Ո՛հ, արտասրքն, արտասրքն, ինչ օրհնեալ բաներ են արտասրքը։ Այժմ մի երկնչիր թափելու արտասրքդ անոր ճակտին կամ շրթերու վրայ, մի երկնչիր, չպիտի արթընցնայ։ Գրկէ զանի — աւելի սերտ գրկէ, չես կարող վնասել, չես կարող զանի արթընցրնել։ Վար դիր զանի, մեղմիկ կամ ոչ, մի և նոյն բանն է. անոր մարմինը կարկամ, ցիր և պաղ է։

Բայց արիութիւն, համբերութիւն, հաւատ և յոյս իրենց սահմանն ունին։ Օրհնեալ լինի այն մարդն որ զերծ է փորձանքէ և իր սահմանը գիտէ։

Իսկ փորձանքն մենակեաց մարդուն անհպելի է, վասն զի փորձանքը չհասնիր այն տեղ ուր փորձելու բան չկայ։

Ցուղարկաւորութիւն մը թէ տեսնես, խնամտասիրի պէս կ'բանադատես։ Գերեզմանատուն մը թէ տեսնես, Հէրվէյ կ'կարդաս և պատին վրայ կ'խորհիս։ Բարեկամ մը կ'մեռնի. կ'հառաչես, շունդ կը գգուես, և ամէն ինչ կատարեալ է։ Կորուստ որ ընես, ծախքդ կը քիչցընես, ծխափայտդ կ'վառես և կ'մխիթարուիս։ Զրպարտութիւն որ լսես, կ'ծիծաղիս, կ'քնանաս։

Բայց այն անպաւակ կնկան համար որ սիրաղին ու տրտում քեզի կը դարի — ինչ կրնաս ընել։

Կարող ես այժմ Սէնէկան վար առնուլ և պաղարիւնով փոշին սրբելով թղթատել։ Կարող ես Վոլթէրի հետ քմծիծաղիլ։ Կարող ես գանդաղութեամբ ծխել, մինչդեռ ոտքդ բաղեղներ կ'կոխէ, մինչդեռ բոլոր մտքիդ խորհուրդները դերեզմանատան մը պատին վրայ կ'սաւառնին — պատ մ'որ զաւկիդ դամբանը կ'շրջապատէ։

Կարող ես զբօսնուլ կծու Մարսիալն ոտանաւորի վերածելով։ Կարող ես շունդ գգուել, և զայն արթուն և հեզ տեսնելով ըսել. «Բաւական է։» Կարող ես քամահել զրպարտութիւնն, և կրակիդ մօտ նստիլ նիրհելով։ Երանի՜ այն մարդուն, մտածելի վերատին, որ այս տեսակ փորձանքէ կ'աղատի և համբերութեան ու արիութեան չափը գիտէ։

Բայց փորձանքը կ'հասնի. խարոյկն երթալով կ'պաղի։

Այն կինն, որու սիրով կ'ճարակիս, կ'թողնի։ Թողմողը դեղեցկութիւնը չէ. այդ հանգամանքն, այժմ որ քու սիրդդ անոր էութեան հետ միացած է, առ ոչ ինչ կ'դրես։

Սուր աչօք կ'դիտէ նէ քու մօտալուտ երկիւղներդ, և ամէն ճիզը կ'թափէ որ իր քայլն դիւրաշարժ ընէ։

Ձեր յատուկ աղէտքն ու սէրը հարիւրապատիկ զօրացուցին ձեր յօժարութիւնները։ Ասոնք ցիր ու ցան և հարևանցի չեն, ինչպէս էին երբ դու մենակեաց մարդ մ'էիր։ Ընտանեկան սրտակցութեամբ աւելի նուրբ և զգայուն վիճակի մէջ մնան. չեն կարող ամուլ երկրի վրայ բողբոջներ արձակել և անկից կաղդուրիչ սնունդ ծծել։ Անոնք ընտանի յարկին ջերմութեան ներքև ծլած են, և այժմ չեն կրնար արտաքին օդ և ջուր ընդունիլ։

Դու այժմ մարդկան երեսը չես նայիր այնպէս որպէս թէ սրտի կապով մ'անոնց կապուած լինէիր — որպէս թէ մի և նոյն զգացումներու

միաբանութիւնն ձեր մէջ տիրէր։ Ուրիշ սրտի կապ մը կայ որ միսներն իր մէջ կ'ամփոփէ, ուրիշ միաբանութիւն մը կայ որ բոլոր զգացումներդ կ'դրաւէ։ Երբ սիրան լիովին բաց էր, երբ դեռ մանաւոր առարկաներու վրայ չէր դուրսուրար, կարող էր այժ և բերկրութիւն ստանալ հաղար տեսակ յարաբերութիւններով որ այժմ սառոյցէ աւելի սառ կ'երևին։

Եւ այժմ այս մանաւոր առարկաներն ալ, եղեկ քեզ, հեռզհետէ կ'նուազին։

Ինչ անձկութիւն կ'հալածէ ձեզ։ Ինչպէս դու կ'ձգնիս երևակայել որ բնաւ վատդ չկայ, ինչպէս նէ կ'ձգնի համոզել քեզ որ բնաւ վատդ չկայ։

Ինչպէս այժմ քաղքին աղմկալի գործունէութիւնն ու թնդիւնն անախորժ կ'հնչէ ականջիդ։ Երաժշտութիւն էր այն երբ միայնակ էիր, զուարճալի էր իսկ, երբ սիրական զաւակդդ համար կ'աշխատէիր այն որոտալի աշխարհը, երբ դիշերը վրայ հասնելով տուն կ'դառնայիր մտադիր։

Հիմակ կ'զայրանաս տեսնելով որ աշխարհ անզգայ է վշտացդ սրով կ'տառապիս։ Փողոցը քեզի կ'զարնուին մարդիկ, սեղանին վրայ քեզի կ'ժպտին, անհոգս ճամբուն միւս կողմը կ'անցնին, և չգիտեն թէ սրտիդ մէջ ինչ քաղցեղ կայ։

Մեռելթաղն իր հաշիւը կ'բերէ քեզ հանդուցեալ որդւոյդ յուղարկաւորութեան համար։ Դա գիտէ քու վիշտդ, ուստի ակնածու է։ Զինքը կ'օրհնես սրտովդ։ Կ'փափաքիս որ բոլոր ծիծաղիստ անցորդներն մեռելթաղ լինէին։

Երբ բժիշկը առնէդ դուրս կ'ելնէ աչօք անոր կ'հետևիս. նա խելօք մարդ է, կ'հարցնես իւրովի, խոհեմ է, լաւագոյն բժիշկն է։ Միթէ երբէք վրիպեցա՞, միթէ մոռացիստ չէ՞ բնաւ։

Եւ այժմ այն ձեռքն որ քոյդ կ'սեղմէ, միթէ երկիւանէ աւելի նիհար, աւելի սպիտակ չէ՞։ Արևային օրեր կ'դառնան երբ նէ կ'վերածնի, դոյն կ'առնու, աւելի աղատ կ'շնչէ. ծաղիկներ կ'քաղէ, քեզ կը դիմաւորէ ժպիտով մը. յոյսը նորէն կ'ծագի։

Բայց հետևեալ օրն վերատին հիւանդ կ'ընկնի նէ։ Եւ ոչ իսկ կարող է խօսիլ. նա ձեռքդ կ'սեղմէ։

Ծանանակէն առաջ շուկայէն տուն կ'փութաս։ Ինչ հոգդ են գնորդները — ոչ պիտի քաղէ վարձը։ Ինչ փոյթդ է անունն — որու աչքն անուպիտի փայլի. ինչ փոյթն է հարստութիւնն — ոչ պիտի ժառանգէ։

Ի դարձին կինդ կ'տեսնես բարձերու վրայ կռթնած. նէ կ'նայի փոքրիկ նկարուց տետրակի մ'որու մէջ իր կորուսած որդին գծագրած է: Կ'պահէ նէ բարձին ներքև, կ'գթայ քու վրադ:

Դարձեալ վերակենդանութեան օր մը կ'հասնի, երբ դարեան արևը կ'փայլի, և դուրսը ծաղիկները կ'բացուին. նէ թևիդ կ'յենու, և պարտէզը կ'ՃԵմ ուր առաջին թռչունները կ'երգեն: Անոնց մտիկ ըրէ կնկանդ հետ — ի՞նչ յիշատակներ կ'զրգռէ դայլայլիկը: Հարկ չկայ որ սարսուխս անոր արտասուքը տեսնելով, ասոնք գոհութեան արտասուք են: Սեղմէ թևիդ վրայ թոյլօրէն կեցող ձեռքը, և դու ևս գոհացիր Աստուծմէ, մինչդեռ կարող ես:

Շատ կանուխ տունն ես — միջօրէին: Քայլդ թեթև չէ, այլ ծանր, սոսկալի:

Քեզ կանչելու համար ետևէդ մարդ ղրկեցին:

Կինդ գետինը պառկած է. աչերը կէս դոց. իր շնչառութիւնն երկայն է և ընդհատ:

Նէ կ'լսէ ձայնդ. աչերը կ'բացուին. ձեռքդ անոր ձեռացը մէջ կը դնես, քունդ կ'դողդողայ — իսկ իրենն ոչ: Իր շուրթերը կ'շարժին, անունդ կ'արտասանեն:

«Քաջայիր» կ'ըսէ նէ «Աստուած քեզ պիտի օգնէ:»

Նէ ձեռքդ աւելի կ'սեղմէ. «Մնաս բարեաւ:»

Երկայն շունչ մը — ուրիշ մը — դարձեալ միայնակ մնացիր: Այլևս արտասուք չունիս, հէք մարդ: Չես կարող արտասուել:

— Վերստին տուն կ'դառնաս կանուխկէ: Տանդ մէջ չնարակի հոտ մը կայ: Դագաղ մը կայ մէջ սեղ, և մոռելթաղն ծածկոյթը կ'դամ, չորս դին մաղին վրայ սահելով: Միթէ կ'վախնայ որ զանի շարթի՞նդնէ:

Քեզի հարցումը կ'ուղղէ դագաղին թանաքին վրայ գրուելիք արձանագրին համար, զայն թևզանիքովը շփելով: Շիտակ անոր աչաց մէջ կ'նայիս, դէպ 'ի դուռը կ'շարժիս, չես համարձակիր խօսելու:

Նա փեղջերը կ'առնու և դուրս կ'սահի՝ կատուի պէս դաղտնագողի:

Սակայն մարդն իր գործը լաւ կատարեց: Սիրուն դագաղ մ'է — շատ սիրուն դագաղ մը: Ձեռքդ անոր վրայ դիր, որչափ փափուկ է: Ձաղախոտի քանի մ'ոստեր փոքրիկ ոսկեզօծ բերանով անօթի մը մէջ թոյլօրէն կ'երևին: Նէ ձաղախոտներ կ'սիրէր:

Ամուր սեղանի մը վրայ դրուած է դագաղը, այն քու սեղանդ է, դու տանտէր մ'ես — ընտանեաց մարդ մը:

Այո, ընտանեաց — աղաղակ մի՞ հաներ թէ ոչ ստնտուն ներս պիտի մնանէ: Նայէ մի անգամ անոր անձկալի դէմքին, միթէ անորմէ միայն ա՞յս մնաց: Եւ այժմ սիրտդ ո՞ւր է: Ո՛չ, ըղձնդդ ձեռացդ մէջ մի՞ մղեր, և շուրթդ մի սարսուեր, մի զարներ ակռաներդ իրարու: Գէթ լալկաբենայիր:

— Օր մ'ալ կ'անցնի: Դագաղը տունէն դուրս կ'հանեն: Ապուշ լալկաններն լսին — ի՞նչ անհնշան արտասուք: Նէ, քու խորտակեալ սրտովդ՝ դուրս ելաւ:

Այժմ զուարճալի դիշերներ պիտի անցընենս տանդ մէջ:

Սրահդ դնա, քու ամտեսուհիդ զայն սրբեր մաքրեր է քու հանդստութեանդ համար. կրակարանը մաքուր է և փայտերը կ'վառին:

Նստիր սեթոռիդ վրայ. ուրիշ մը կայ սնդուսէ բարձով քու դիմացդ — բայց պարապ է: Մատերդ կ'ՃՆշեն աչացդ բիրը, որպէս թէ ըղձիդ ինքսդ բան մը դուրս հանել կ'ուզես բայց չես կարող: Գլուխդ ձեռքիդ վրայ կ'կռթնի, աչքդ շողշողուն բոցին վրայ կ'դադարի:

Մոխիրը միշտ բոցէն ետքը կ'զայ:

Հիմակ ելիր և անոր հիւանդ պառկած սենեակը դնա — ուշիկ, որպէս զի Ճարտար ամտեսուհին քեզի չհեռանի:

Սեթոռիդ վրայ նոր կտաւ մը դրեր են. անկողնին վրայ նոր վարագոյրներ կախեր են. սեղանի վրայէն առեր տարեր են իր դեղի շիշերն և արծաթէ զանգակը. անոնց տեղ ծաղկաւոր աման մը դրեր են. այժմ անոր անուշ հոտն չպիտի ծանր զայ հիւանդին: Կէս մը բացեր են պատուհանն, որպէս զի այնչափ ասեն դոց մնացած սենեակը հովառնէ: Այնչափ պաղ չպիտի լինի:

Նէ նոյն վայրը չէ:

Ո՛վ Աստուած իմ, դու որ հովը կ'մեղմես խուզուած գառնուկին համար, բարեգութ եղիր: Հրատներն մթագոյն էին. զանոնք շարժեցի, կենդանութեան նշան մը չկար: Շունս 'ի՞ քուն էր: Իմ վարձկալիս սենեակը գտնուող ժամացոյցը մէկ զարկաւ:

Իմ աչքէս մէկ կամ երկու արտասր սրբեցի, ինչպէս եկան այն տեղ չգիտեմ: Կէս մը շնորհակալեաց աղօթք մ'ըրի որ այսպիսի աղէտք դեռ ևս զիս չեն պաշարած, և յուսոյ աղօթք մ'ըրի որ բնաւ չհասնի:

Կէս ժամ ևս անցնելէն ետև խորունկ կ'քնանայի: Իմ երազս աւարտած էր:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԱՋ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ՀԱՆԲԱՅԻՆ ԱԾՈՒԽ

Այլ ես գիւղը չեմ։ Դաշտեր, ծառեր, առուներ շատ հեռու կը դտնուին իրենք, և սակայն ներկայ են։ Վարձկալիս կողմէ նամակ մը — որչափ տարբեր միտներէն — սեղանիս վրայ կ'կենայ. կ'յայտնէ ինձ թէ-հերկելու համար ինչ դաշտեր պատրաստեր է, թէ քանի քանի եզինք կ'գիրցընէ, և թէ գետնախնձորներն ինչ վիճակի մէջ են։

Բայց ես քաղքի մը վերնայարկն եմ։ Պատուհանէս անթիւ տուներ, կատարները կ'տեսնեմ. այս տեսարանիս վրայ կ'խորհիմ, բայց այնպէս տխուր և երկայն կերպով հարկ չկայ գրի առնուլ։ Գիւղային լայն կրակարանիս և երկաթէ եռոտանիս տեղ, սենեկիս մէջ փոքրիկ վառարան մը կայ. սպասուհիս առտու կրակ կ'դնէ և կէսօրէն ետքը կ'վառէ վերստին։

Սովորաբար իմ ամառուս վրայ հանգիստ կ'նստիմ երեկոյեան ժամը հինգէն կամ վեցին։ Կրակը նոր, գրեթէ ժամ մ'առաջ վառած է. նախ՝ սպասուհին կրակարանին խորը քանի մը կտոր թուղթ կ'նետէ, ապա մէկ երկու փայտեր վրան կ'դնէ, և այնու հետև բահիկ (hod) մը Լիվերբուլի ածուխ կ'թափէ, այնպէս որ երբ իրկունն կ'նստիմ ծովու ածուխն բորբոքելու սկսած է։

Երբ այս կրակն վառարանին երկրորդ ձողին հատատար կ'ինկնէ, սպասուհին բահիկ մը հանքային ածուխ նետելով կ'արձարձէ. իսկ ես մտմտալով և կարդալով կ'անցընեմ ժամանակս երբ նոր ածուխը կ'տաքնայ և կ'բռնկի։ Ցեղ.ս չեմ ելներ կրակն վառարանին երրորդ ձողը չիջած, որ իմ անկողին մտնելու ժամն կ'ցուցընէ։

Ծամու այս պատահական չափերը կ'սիրեմ, որ քեզի և կենացդ յարակից են և ոչ թէ աշխարհի։ Ծամացոյց մ'ոչ քու ժամանակիդ չափն է և ոչ գրաստոյդ. եկեղեցւոյ ժամացոյց մը հասարակային է և գունեկի ժամկոչի մը պէս։ Ինձի համար թաղին ժամացոյցով ժամանակս կանոնաւորել՝ կ'նմանի թաղին եկեղեցականին ձեռքը անկողինս շտկելու։

Գորգիդ վրայ արևուն ճգած մէկ ստուերն, կամ լուսոյ շառաւիղ մը վարի տափարակ յարկին վրայ, կամ կրակիդ վառիլն ախորժելի ժամապահներ են, միշտ ներկայ, միշտ ընկերակից և միշտ սա ազգարարուն թիւնն ընող. — ժամանակը կ'անցնի։

Ամառնային եղանակի մէջ իմ ընթերցումս և գիշերային հսկումս նոյն իսկ վառ մոմի մը միջոցաւ չափած եմ, և իմ փոքրիկ պղնձէ աշտանակիս ճարմանդին վրայ Նոր Կտակարանին սա իմաստալից խօսքը փորագրած եմ. Գիշերը կ'հանի։

Բայց պէտք է իմ Երազիս դառնամ։ Անձրևային գիշեր մ'էր. ցերեկը շատ աշխատեր էի, կոշիկներս հաներ, ոտքս հոգեթափներ հագեր էի, վրաս տաճկի թոյլ զգեստ մը նետեր և գլուխս յունական գդակ մը դրեր էի — ուրիշ ժամանակի և տեղի յիշատակներ — և նստած կ'գիտէի կպրային բոցին վառվռուն, անորոշ և գեղնորակ ելևէջը։

Ա.

ԾՈՎՈՒ ԱԾՈՒԽ

Այս բոցը պէրոզի կ'նմանի, կ'ըսէի մտովին — որ կայտառ, երեսրուն, գունաւոր է, որ այսր անդր կ'ծածանի, որ ածուխն անկերպարան սև զանգուածով մը կ'ծածկէ, որ խոշ, աղտեղի մուխ մը կ'հանէ, և հոտ, անպէտ մրուր մը կ'ձգէ։ Բայց և այնպէս զուարթադին կ'շողայ, կ'խայտայ, սիրուն կ'ծփայ և այծեմնկի պէս մէկ տեղէն ուրիշ տեղ մը կ'ոստոստէ։

Ինչպէս պէրոզի նման։ Իսկ սակայն աղջկուքեան այս թռուցիկ հաճոյքն, որու կ'նմանցընեմ իմ ծովու ածուխս բոցը, միթէ կենաց ընթիկ մէկ խաղը չէ, և բնապէս կենաց մանկային ժամանակին յատուկ։ Միթէ աւելի ծանր և ճշմարիտ կրից էական մէկ կայծը չէ՞ այն, մանաւանդ որ սպասուհիս Անանն նախ կսկուղ ածուխը կ'դնէ որպէս զի հանքայինն լաւ ևս բռնկցընէ։ Միթէ նորածին շոգիներու կարևոր մէկ սպառումը չէ՞, շոգիներ որ հոգւոյ մէջ կ'ծփան և որ այնուհետև աւելի մաքուր կ'մնան։ Միթէ ամէն մարդու երիտասարդու-

թեան մէկ ժամանակն՝ այսպէս սրտի երերուն, թոյլ նշոյլը մը չ՚երևիր՝ որ նշանակութիւն չունի, այլ սակայն պէտք է որ պատահի։

Լամարտին աղօր կ՚ըսէ տեղը՝ թէ նորատունկ ծառի մը մէջ աւելի առոյգ հիւթ և ծփին ստուեր կայ, բայց աւելի հուր կայ հին և հուժկու կաղնիի մը մէջ։

Արդեօք Լամարտին բառերով կ՚ուզէ խաղալ, մինթէ իր քերթողական ոգւով կ՚ուզէ զինել և ամբաստան Կրաղիէլայի մը ուրուականին դէմ ինքզինքը պաշտպանել, կամ Ճշմարիտ է այս ըսածը։

Մարդ մ՚որ վաթսուն տարեկան է, թէ այրի լինի և թէ ամուրի, կարող է այսպիսի զգայուն մը դրի առնուլ, իր աւերուն սիրտն յուսով կ՚տածէ, երիտասարդութեան խանդը կ՚նորոգէ զուարճալի երկիմութեամբ և չքնաղ անձնապատանութեամբ։ Բայց վերջապէս, ստոյգ է։ Միթէ սիրտն նորաբողբոջ տունկ չէ՞, որու առաջին ծաղիկները կէս մը բուսած են, թերևս մնակողմանի են, բայց քիչ քիչ՝ երբ հասուննան, լիովին կ՚բացուին և իրենց թերթերն ընդ երկար կ՚պահեն արիութեամբ։

Պուլվր՝ Գաւոդէնէրու պատմութեան մէջ՝ սրտի առաջին թռիչքն իբրև լոկ մտածին խորհուրդներ նկատեց, սիրոյ հետ իբրև դդուանք սեպեց։ Շատ ընթերցողներ Դրէվանիօնի և Պիսիդրատոսի պատմութիւնը կարդացած են։ Բայց Պուլվր հիմակ հինցած է, իր սրտի կեանքն բոլորովին «պարապ» է։ Այսպիսի մարդ մը կարող է ապահովութեամբ ծաղրել ապագայ տարիներու ցուրտ դատաստանն։

Իսկ Շէքսբիր ուր կ՚դնէ տհաս սրտի ժամանակը. փառասիրութենէ առաջ, որ միայն գիւցազնի հոգի կ՚վերապահէ. Շէքսբիրի մարդն էբրնոց կ՚հասուէ, բոյսոյսաւոր համբաւը ստանալու համար՝ դեռ ևս թեւը չերկնցուցած։

Սակայն Շէքսբիր հասուն և հասած սիրոյ հոգի մը չափեց, առանց Տեզդէմոնայի և Օթէլլոի բոցավառ հառաչներ տալու։ Կորդէլիա, որ իր յօրինած թատերգութեանցը մէջ ամենէն անուշն է, կ՚սիրէ առանց ցոյց տալու այն փրփրուն ողին որ Ժուլիէտին տատրակի սէրը կ՚կաղմէ։

Եւ Գլօրիզէլ, Վինդրս գէլէն (Ամուսնան վէպ) մէջ Բէրդիդային կ՚ըսէ, զգայուն սրտի մը Ճշմարիտ շեշտով —

Իմ փափաքս
Պատուէս առաջ չեն վազեր եւ ոչ իղձս,
Աւելի սաստիկ չեն վառիր քան հաւատս;

Իսկ Հեկտորի և Անտրոմակի սէրն ի՞նչպէս է։ Ծովու ածուխի բոց չէ, այլ հաստատուն, համբերատար, անսպառ բոց մը. սրտի ամրոյք, յարգանօք և լուսազոյն սիրովի — բարեմոյն, ուղիղ և անթերի սէր մը։

Այժմ Ադամայ ու Եւայի դարձիր, որ Աստուծոյ առջև են, Միլտոն ալ իբրև հանդիսադիր։ Քաղենք այս վաւերուն բոցով, Կորոնէլ դրաֆոդէն գոհար մը։ Արի՛ առանձին մրմնջենք — ինչ որ Ռաֆայէլ Ադամայ կ՚երգէ — դասական երգ մը.

Ծառայէ՛ անոր եւ վախցի՛ր
Միւս արարածներն Այն ինչպէս որ կամի
Թող բնակեցնէ, բայց զոհացի՛ր
Քեզի տուած բաներէն, այսինքն այս դրախտն
Եւ բու գեղանի Եւադ։

Եւ դարձեալ.

Սէրը կ՚զտէ,
Խորհուրդներն եւ սիրտը կ՚ընդլայնէ, իր աթոռն
Բանականութեան մէջ ունի, եւ հնարագէտ է այն.
Սանդուղն ունի ոբով երկնային սիրոյ կրնաս հասնիլ։

Այս սիրոյ մէջ երերուն բոցը չկայ բնաւ, որ ծովու ածուխիս բոցին նմանի, որ այժմ կ՚խաղայ, ծղրդի պէս վառվռուն։ Բայց իմ վերնայարկիս սենեակը գիտելուս, չեմ տեսներ Ռաֆայէլ հրեշտակապետին նման բան մը, և ոչ քոռ ֆելանի Եաթ։

Ծովու ածուխին բոցին վրայ տեսակ մը տամկութիւն կայ զոր՝ թէև ամէն խելքս կ՚թափեմ, անկարելի կ՚գտնեմ յարմարցընելու երեսուն, շողուն սրտի մ՚որ կրակս ինձ կ՚ներշնչէ։ Տամուկ սիրտ մ՚անտարակոյս յիմար բան մը պիտի լինի։ Բայց ոմ լսած ունի այդպիսի բան մը։

Վ.օրթսվօրտ իր Աբշաան գրքին մէջ կ՚ըսէ.

Առաջ բարին կ՚մեռնի
Եւ անոնք որոց սիրտերն ամառուան փոշիին պէս չոր են՝
Մինչեւ փոդակը կ՚վառին։

Բայց ի՞նչ է չոր սիրտ մը։ Դիւրին է ըմբռնել թէ ի՞նչ է փոշոտ սիրտ մը. ամուրիի մը սիրտը հարկաւ քիչ մը փոշոտ պիտի լինի, երբ վաթսունը կ՚կոխէ, երբ չորս կողմէն ոստայներ կ՚կախուին, և Ագահութեան ու Ինքնասիրութեան անուամբ սպիտակ մամուկներ կ՚հսկեն և Հեշտամոլութեան նման կապոյտ Ճանճեր որսալու կ՚աշխատին։

Եմ աթոռիս թեերը պինդ բռնելով՝ ասի. «Երբէք ամուրի չպիտի մնամ մինչև վախճանս, երբէք, և այս ստոյգ է որչափ ստոյգ է թէ յոյս կայ մարդու մէջ, կամ գութ կնկան, կամ հաւատս երկրագունց մէջ։

Այս մտածութեամբ սիրտս զուարթագին փայլատակելով խայտաց, ծովու ածուխին բոցին նման, որ վեր կ'ելնէ կ'պատէ շուրջ հին և փտուկ իրաստակներ, և աչքիս ներկայացողնկարներ, որ անոնց փարելու փորձ կ'փորձէ, և այն ինչ կ'յարի որ վերատին կ'թափի, խնդագին կ'թափուի. այս է սրտի փայլակներու շարք մը, որ կ'շողան ու կ'մարին։

Եւ մտածեցի, միթէ այս աշխարհիս մէկ մասն այսպէս վառվռուն կայծեր արձակելով չշողար, ատա անդ երերալով քանի հովի յորձանքը զանոնք կ'հրահրէ։

Օրինակի համար, առ քու զգայուն սիրտդ, տկար, ջերմ, ժիր սիրտ մը, որ աղէտալի ազդեցութենէ հոգիս կ'ապատի, որու առաջնորդը խոհեմութիւնը չէ և թերևս առաքինութիւնը։ Մաքէնզի գրուած մ'ունի որու մէջ ուժգին երևան կ'հանէ այս չարաշուք զգայնութիւնը։

Մարդ որչափ սոյն զգայնութեան հպատակի, նոյնչափ զօրաւոր և պարտաւորիչ կ'գտնոյ անոր ազդեցութիւնը։ Հէք Մաքէնզին այսպէս տառապած պիտի լինի, չես կարող իր գիրքը կարդալ առանց այս բանս զգալու. աչքդ ակամայ անոր գիւրազգած վշտաց կ'հետևի, մինչդեռ գրեթէ կ'պատկերես տեսնելով անոր յաջողութիւնն նկարագիրներ յօրինելու մասին։ Սոսկալի ժառանգութիւն մ'է այս, զոր զօրաւոր մարդ մը կամ կին մը զսպելու պիտի գուն գործէ, ծովու ածուխի կայծ մ'է, որու հետևանքը վատ է։ Աշխարհ բան մեծի մասին կարծը և հրանուտ նիւթէ շինուած է, որոյ գէմ զարնուելով քու լաւագոյն և սրբագոյն խորհուրդներդ կրակ կրնան հանել — զգոյշ եղիր որ կայծերը քեզ չայրեն։

Բայց ինչ բարերագդ և անհոգ կեանք է ամուրիին, որ աշ ու ահեակ կրնայ զարնել աներիվ։ Սիրտդ ուրիշ սրտի մը հետ կապուած չէ, որ կրնայ զգացման վատ շղթաներով լեցուն լինիլ, և ոչ մեսաբսէ մարմնոյ ներքև պաղ սրտի մը մէջ սառած է, որ միայն դորովոյ անունը գիտէ, և անոր վրայ կ'բարբանջէ. սրտակցութիւն ինչ է չգիտէ, այլ միայն անմիտ խոստովանութիւն մը։ Եւ եթէ քու զգայումներուդ անմտագիր բացատրութեան ատեն՝ փոխարէն անհամ և անլի խօսքեր լսես, հաւատցի եղիր որ այլուր ճշմարիտ սրտի մ'անկեղծ ձայնը պիտի լսես։ Այս ձայնն հոգւոյդ մէջ պիտի դղրդես, և նոր նոր զգայումներու վատարանը պիտի դառնայ. իսկ միտը գլանկիդ մէկ փչումովը պիտի անցնի։

Կամ թէ զգայումներդ ընդհարին, վիրաւորին, ոմ է իմաստունն կամ յիմարը, բայց եթէ դու միայն։ Եւ միթէ քու սրտիդ թելը ձեռքդ չէ, և զայն չէս կարող ըստ հաճոյս կապել կամ բակել։ Ջնջէ զայն, հիսէ զայն, կամ պատառէ զայն քու կրակիդ լուսովը, և լաւագոյն համարած կերպովդ։ Տկար է այն մարդն որ չէ կարող իր զգացման թելերն, որքան նուրբ, որքան խառն, որքան ձիտեալ, կամ որքան զօրաւոր լինին հիւսելու և կապելու, Բանականութեան պարանին, որով իր գործունեայ կենաց խարսխած կ'մնայ։

Ընթերցումն աղդու և շահաւէտ օգնական մ'է որով զգայնութեամբ փայլուն սրտի մը կնճռոտ հանգոյցներն և այլանդակցնողքը կ'լուծուին, բայց այս ընթերցման զգուշաւոր ուղղութիւն մը տալ պէտք է։ Առ ծերունի ու անկեղծ Պրրդրին, երբ կ'զգաս որ հոգիդ տկար է և կենաց աղէտքը զժուարաւ կ'կրէ, ահա Քառբը, երբ միտքդ բարեմտին, տխրագին և կրօնական խորհրդածութեան ենթակայ է, ահա Կրասլ, երբ կ'ուզես փոքր ինչ ներկայ հետաքրքրաշարժ իրողութիւններով առնուրդդ թոթուել, ահա Վ.օլդէր, նոյնաբոյժ բժիշկ մը, զոր կրնաս կարդալ երբ կեանքն իրրև խաղ նկատել, բնութեան կատակներ ուղղել և ճակատագրին հետ զուարճաբանել ուզես. ահա Ռուսսօ, երբ անրջական աշխարհ մը վերանալ, և հոգւոյ երաժշտութեամբ և մշակութեամբ ինքզինքդ պատրել ուզես։

Եւ երբ այս մէկդի թողուս, և աշխարհային տաժանելի յաջողութեան համար մարտնչողներու մէջ կորովագոյնն լինիլ ուզես, եթէ կանխաւ կ'ուզես գիտնալ թէ ուր են այն ժայռերն որոյ դէմ անտարակոյս պիտի փշրուիս, Պօլինգրոք կարդա, աչքէ անցուր Լիդլդրնի նամականին, կարդա՝ և Ռոշֆուքոյի ճարճատուն տողերուն մէջ կարդացածդ որոճայ։ Իր խայթիչ խօսքով ինչ իմաստներ կ'ամփոփէ, ինչպէս ջիլերուն մէջ նշտարակ կ'մղէ, և սակայն բնաւ չվիրաւորեր, վասն զի անկեղծան նիւթեր կ'յօշատէ։

Եթէ զուարթ և անհոգ ժամդ է, ոմ կարող է զգացումդ և բնութիւնդ ամոքել քան թէ Սդէրնի և Ֆիլտինի պէս բարեսիրտ ընկերներ։

Դարձեալ Միլսօնն ու Եսային ունինք, որ մարդուս հոգին կ'բարձրացընեն մինչև ամպերն, և անոնց առաջնորդութեամբ թեթեւոտն կը վերանաս մինչև երկնից դռները։

Բայց այսցոլայիկ զգայութիւնն յաւագար, կամ վշտահար կամ աղքատ մարդու մը համար՝ շատ ահռելի է։ Այն հոգին՝ որ խիստ ընտիր և ուժգին ամրասնդած է, չես կարող կորզել առանց աղէտից։ Ինչպէս կ'շրջանու, վիրաւոր աղեկի մը պէս, ամէն գռեհիկ, դաժան և կոշտ բաներէ։ Այ այնպիսի մարդու մը. սկիզբէն ցվերջ պիտի ապտակի, իր կեանքը նեղութեանց ծով պիտի դառնայ։ Իրրև զոհ իր սուր զգացողութեան՝ իր առջև կեցած կասկածանաց մեծ վահանով մը կ'թափառի. այնպէս որ ոչ ոք, նոյն իսկ բարեկամները, չեն կարող հշմարել իր բնիկ բարեսէր հանգամանքը։ Աղքատութիւնը՝ եթէ վրայ հասնի, գաղտուկ անոր դէմ կ'մաքառի ուժգին և անդուլ։ Ցրտէն ինքզինքը պահպանելու համար աղքատին լաթերովը կ'փաթթուի, և այնպէս կ'ակնարկէ աշխարհին որպէս թէ բոլոր մարդիկ իրեն դէմ լիաբերան սառնաշունչ հովեր կ'փչեն։ Քաղքին բազմամարդ փողոցներէն կ'ճեմէ նա, իր տառապանօք հպարտ, իր տկարութեամբը մնապարծ, և բարիք ընելու համար կայ չառնլով։ Այս զգայումը հնկան մը վրայ, Պուլլր նկարագրած է իր Նիոբ գործին մէջ Բօրին կծուռճովը։

Իր վրէժինդիր հպարտութիւնն, կերպ մը յիմարութիւն դարձած,
Նը փարէր նէ իր աղէտից, եւ իր վիշտն էր իր աթոռ։

Պա՛ղ պատկեր, սակայն սիրտն անոր ներքև կ'շողար, իմ ծովու ածուխս պէս, որ վեր կ'ելնէ, կ'բռնկի, կ'վառի և կ'մարի անհպատակ, թողլով միայն թեթև սաբութիւն մ'որ իր մէջ կ'սկսի ու կ'դադրի։

Այս նուրբ զգայնութիւններն, միշտ ժիր, անդուլ կ'որոնեն և կը գիտեն ամէն բան. ասոնք իմաստ կ'տան ամէն բանի որմէ անհոգն ու անզգան անտես կ'անցնին, ըստ որում անյայտ է։ Մարդոց բազմաղան կարծեաց մասին կ'խաբուին, հաւատոյ նշաններ կ'տեսնեն ուր որ այլք ոչ ինչ չեն տեսներ։ Այս փափուկ կազմուածքը մարդուս համար տանջանք մ'է, և սակայն, յիմարը չէ կարող անոր դարմանը գտնել. իր վշտաց վրայ կ'զարմանայ և երբէք անոնց աղբիւրը փնտռելու հոգ չէ ըրած։ Կ'ուտէ նա վնասող տերևներն և երբէք չքաղեր բոյժ տուող արմատը։

Իսկ հնկան նկատմամբ այս բանս աւելի ծանր է. իր նուրբ դիւրազգածութիւնն վտիտ ծաղկի մը կ'նմանի, որ երկնից ամէն դառնաշունչ հովէն կ'երերի. իր յատուկ փափկութիւնը զինքը կ'վիրաւորէ, իր ամենէն ընտիր շնորհն տանջանք մը կ'դառնայ։

Ահաբեկ միտ կ'դնէ, դողդողալով կ'կարդայ, երկիւղով կ'նայի։ Իր համակրութիւնն Էօլոսի տաղին պէս՝ թեթևագոյն շունչին եղանակ մը կ'ընծայէ։ Իր զգայութեամբը կ'բորբոքի, կ'տառանի ու կ'ընկնի, ծովածուխին բոցին նման։

Երբ այսպիսի զգայուն կին մը սիրէ, իր սէրը հրափայլ, ծփին բոց մ'է, որ յուսով կ'վառի, յոյս մ'որ գոյն ինչ կիզիչնութիւն մ'ունի, այնպէս որ իսկոյն կ'սպառի։ Սակայն սաստիկ զգայնութիւնն զինքը պիտի համոզէ որ այն բոցը տակաւին կ'տոչորէ։ Անփոխարէն խղճի մը տժգոհութիւնն իրրև սիրոյ խայթոց մը սխալմամբ պիտի նկատէ և պիտի երևակայէ որ տակաւին կ'վառի։ Բաւական խորունկ չքններ և չտեսներ որ սէրը գացած է, և վիրաւոր զգայնութիւնն միայն թոյլ, դժգոյն կայծեր կ'հանէ անոր տեղ. իր զրգռեալ երևակայութիւնն այս կայծերն իրրև ճշմարիտ բոց կ'ներկայացընեն աչացը։

Այս տեսակ հնկան մը համար դատողութիւն, խոհեմութիւն և շրջահայեցութիւն պաղ բառեր են, իմաստ մը չունին, միայն թէ այլոց վարմունքին վերաբերող յատկութիւններ են։ Իր յատուկ գործերը բնաւ չգուշակեր, իր զգայումն այնքան բարձր է որ չէ կարող այս տեսակ արդիւնիչ առաջնորդներուն համեմատ վարուիլ։ Պատրանք սէտք են իրեն որ ճշմարտութիւն սորվի, սորվի որ ամէն ինչ որ կը փայլի ոսկի չէ, սորվի որ ամէն ջերմութիւն չբռնկիր . . . . . .։

Իմ կրակս երթալով կ'մարէր և ձողով զայն խառնեցի, իսկոյն բռնկեցաւ և հարիւրաւոր զայրագին բոցեղէն լեզուներ հանեց։

Ճիշտ այսպէս է, մտածեցի, յետին ծայր զգայուն սիրտ մը, որ երբ միանգամ սաստիկ յուզուի, շատ մը բոցանշոյլ զգայումներ կը ժայթքէ, որ ասդին անդին կ'սլանան, կէս մուխ, կէս բոց, սէր և հեռ, թախծութիւն և ինդութիւն, իր յիմարութեամբը վայրենի, և չդիտնալով թէ ուր կ'թռչին իր կայծերը։ Եթէ անգամ մը ուժգին յարձակիս այսպիսի հոգւոյ մը հիմնաւոր կամ մտածին յօժարութեանց վրայ, անմիջապէս խօլական գործոց փոթորիկ մը պիտի տեսնես, հրայնին մրրիկ մը, որ կ'սուլէ և վայրագ հրատներ կ'արձակէ, որ հանդիսատեսներն, նոյն իսկ բարեկամները հեռու կ'վանէ մինչև որ մրրիկն անցնի։

Բայց ասոնք չեն միայն իմ ծովու ածուխս սլաթև բոցին ինձ ներշնչածը։

— Ինչպէս պչրողի մը պէս, մտածեցի վերստին, իմ առջի գաղափարիս դառնալով, այնքան վառվռուն լինի, այլ անստոյգ, այնքան

պայծառ, այլ թեթև։ Քու Ճշմարիտ պչրողդ կայծերու հետ կ'խաղայ, իր սիրտն կայծերով կ'սպասի, կայծի հետ կ'չափէ զայն, և սովորութիւնն բնութիւն դառնալով, ուրիշ բան չէ կարող ընել այլ յաբաժամ բոց հատանել։ Ինչպէս խնամօք կ'ծածկէ զայն երբ բոցերն չափէն աւելի տաքութիւն արտադրեն, ինչպէս Ճարպիկութեամբ աստ և անդ կ'ցրուէ անոր շողն, ինչպէս զգուշութեամբ զայն կ'նուաճէ, ինչպէս հրապուրիչ կերպով կ'վառէ զայն։

Այս ամէնն իմ փնտռած հոգւոյս ինքնաբուղխ ցոլացումներուն բոլորովին ներհակն է. զգայութիւնն՝ սրտի սանձ և սրտի խրատ կ'անգոնէ, զգայութիւնը չհարցներ — Ո՞րչափ, այլ միայն Ո՞ւր։

Քու պչրողդ խոտան և անհարթ հոգի մ'ունի, շատ վայելուչ և կիրթ կ'երևի իրաւ, բայց անոր մէջ ազնուութիւն բնաւ չկայ։ Իր բոլոր ընդածին ազնուութիւնն՝ իր կամաց անբնական Ճգամբը խոտան եղած է։ Ճշմարիտ զգացումն գոհերիկ սովորոյթ մ'է պչրողին աչքին աննկարելի. անոր ամենէն լուրջ և ուղիղ յայտարարութիւնն իրաւ զգացում կ'նկատէ, սակայն քերթողներէ քաղած զգացումներու սիրուն մէկ թելը պիտի զարնէ նա քու առջև. կ'յարդարէ զանոնք այնպէս ինչպէս կ'յարդարէ Կոպլէնի ջուլհակ մ'իր օրոյին գոյները։ Զմայլելի կերպով կ'ուրուագրէ զանոնք, այլանդակ հականկարներ չկան, այլ երանգներու խիստ Ճարտարարուեստ անուշութիւն մը։

Վհուկի մը պէս կ'ժպտի նա, և այս ժպտին կ'ձայնակցի հնչական այնպիսի ծիծաղ որ Կիրկէան պուրակին մէջ հայրենատենչ Ողիսևսը հմայեց։ Կարմրախայտն որսացող լաւագոյն կարթին պէս Ճարտար և դիւթիչ խայծ մ'ունի իր նայուածքը։ Իր բառերը կ'շողան, և թրթռակ լեզուէն կ'հոսին, այլ իմաստի սիրուն երկդիմութիւն մ'ունին։ Կ'կեղծէ նա բնականութիւնը, և կ'անգոնէ։ Կ'մեղադրէ նա ինքզինքն որ միայն բնութեան թելադրութեան կ'հետևի անկեղծօրէն։ Կ'պարծի իր տուած խրատներուն վրայ, իր հնարագիտութեան տարած յաղթանակներով կ'չափէ իր խելքը, և ինքն իր յատուկ ստաբանութեան վրայ կ'ծիծաղի։ Եւ եթէ դիպուածով իր հոգին — ինչ շատ սիրուր որ անկից մնացած է — կ'գրգռէ զինքն ձախողակ վստահութիւն մը ցոյց տալու, իսկոյն կ'գատապարտէ այս ընթացքն որպէս թէ ոճիր մը գործած լինէր։

Միշտ զուարթ է պչրողը, վասն զի խորունկ զգացումներ չունի յուզելու։ Ծանծաղուտ և խճեայ յատակի մը վրայ հոսող առուակը միշտ կ'խոխոջէ։ Թեթևասիրտ է նա, վասն զի իր սիրտը կայծերու

մէջ կ'ծփայ — իմ ծովու ածուխս կրակին պէս։ Ամենութեան կ'յուսայ նա, չէ թէ իրաւ սրտի մը սիրոյն և կենաց բոլորագրաւ հոգը. այլ իրաւ յաջող, հեշտ և օրինական դաշնագրութիւն մը, որու վրայ կ'ծաղրէ, անկից հեռու կ'դեղերի, և 'ի վերջէ անոր լուծն կ'ընդունի, որպէս զի հին և սիրական անզգայութեան մը շինովի և ծիծաղելի շողերը ծածկէ։

Պչրողը վշտաբեր չպիտի մաշի, վասն զի կորուստ մ'իրեն համար նշանակութիւն չունի. ուրիշին անտարբերութեան դէմ չպիտի փրփրի, վասն զի այս իր արուեստն է. նախանձով չպիտի տանջուի, վասն զի սէր ինչ է չգիտէ։ Հոգւոյ զօրութեան և լիութեան վրայ գաղափար մը չունենալով, անոր հաճոյքը գոհ ընելու դժուարութիւն մը չտեսներ։ Զգիտէ թէ ինչէ սարսուռ մը, չէ կարող երևակայել թէ ինչէ կիրքը, անոր համար խնդութիւնն անուն մ'է, վիշտն ուրիշ անուն մը. և կեանքն իր սիրոյ և դառնութեան անրաւ հոգերով ուրիշ բան չէ, այլ տեսարանի վրայ զաւեշտ մը։

Կարծեմ թէ Տիկին Տիւտվանդն է որ կ'ըսէ գրեթէ այս ըսածիս յարաբերութեամբ. Բո՜ւերը չեն գլորեր այն շա՜ինն որմէ արձի՜ռներն արևո՜ւն կ'դիմեն։

— Նորայր, կ'ըսէի մտքով, կրակիս ոստումներուն նայելով, որս մի եղաւ և յաղթական։ Կորովի և հզօր բնութեան տէր մարդ մ'էր նա. . . : Նորայր կ'ճանչէր աշխարհը, թարմ զգացումներ և մեծ յոյսեր ունէր. միշտ այնպիսի բարեկամներէ շրջապատեալ էր, որ զինքը կը սիրէին և թերևս կ'շողոքորթէին։ Հաղիւ թէ քաղաքի ճնկոտ կենաց մէջ մտնելով, յանկարծ փայլուն դէմքով և օդային քայլվաղջկան մը կ'հանդիպէր որ խեղճ Նորայրին սիրտն իրեն անծանօթ զգացումով մը կ'յուզուէր։ Իրեն համար, զգալ գործել էր։ Ինքն անգոնելի մարդ չէր, վասն զի թէև դաւառային հով մ'ունէր, և ընկերական կենաց պատշաճութեանց մասին անճարակ կ'երևէր, սակայն զօրեղ մարդու մը հոգին, արիութիւնն և տաղանդն ունէր։ Խարուսիկ դէմքեր զանազանելու անգէտ, շողուն սրտի մը անուշ հնարքն իրեն Ճշմարիտ այլայլութեանց ընդակից համարեց։

Օրիորդը կ'պարծէր այնպիսի մարդու մը համակրութենէն որ իր գլխուն մէջ ըղեղ ունէր և խեղճ Նորայրը ստրկօրէն կ'զգուէր։ Նորայր խորհրդատու բարեկամներ չունէր բնաւ, և եթէ ունենար, իր ներքին յուզմունքը զինքն անսասան պիտի ընէին։ Ոլիմպիական խաղերուն մէջ չկար աւելի հնարագէտ ախոյեան մը քան Նորայրի սրտակից Երանուհին։ Նորայր հմայուեր, խարուեր և զմայլեր էր։

Երբ Նորայը՝ սիրոյ վրայ խօսէր, օրիորդն իր նենգաւոր սիրուն ակնարկներով կ'պատասխանէր և աւելի ևս զանի կ'ծիւրէր։ Զգնաղագեղ արարած մը, իրաւի, տատրակի պէս անուշ։

Այսպէս շարունակեց, ողորմելի յիմարը, մինչև որ օր մը — նոյն ինքն ըսաւ ինձ այս բանս տաքցած գլխով և բոցավառ աչօք — երբ իր զգացումներն յօժարակամ խոստովաներ, խանդաղին աղաչեր պաղատեր է, օրիորդն բարձր ու հեգնալի ծիծաղով մ'իր անուշ զարմանքը յայտներ է։

Մարդը կ'սպասէր որ սիրոյ անզուսպ խանդը տեսնէ օրիորդին կողմէ, և ահա անորտեղուրիշ բան չէ դտեր բայց եթէ ծովային ածուխի վաղամեռիկ բոյր։

Միխիթարութեան գիր մը գրեցի անոր, վասն զի մէկ տարիով աւելի մեծ էի անորմէ։ «Սիրելի բարեկամ, ըսի անոր, ժուժկալ եղիր, կարող ես վերի քաղքին շուկան ընդեղէն դտնել։ Ճաշիդ քիչ մը ձուկ կեր, զգուշացիր ըմպելի գործածելէ. կաղամբիդ մէջ շատ կարագ մի դներ. ձէրեմի Դէյլերի մէկ քարողը կարդա, և բերնուց թարգմանէ ամէն ասացուածները. Մօլիէրի ԺՕրժ Տանդէնի գողարիկ նկարագիրն ուշի ուշով կարդա, և՝ Ճշմարիտ վկայ, մէկ շարաթէն ողջ առողջ մարդ մը պիտի դառնաս։»

Շատ սրամտած լինելուն պատասխան չգրեց. բայց տասնութ ամիս անցնելէն ետև՝ հաստ, եռաթերթ գիր մը ստացայ, զմուռին վրայ տատրակ մը կար, և բարեկամն կ'իմացընէր ինձ որ թագաւորի մը պէս երջանիկ է։ Կ'գրէր որ բարեսիրտ, ընտել և սիրող կին մ'առեր էր, որ յունիսի օրուան մը պէս չքնաղ էր, և թէ իրենց եռամեայ մանկիկին արևուն ճառագայթին պէս պայծառ էր։

Ես մտածեցի. ինչ գողտրիկ, քնքուշ և սիրասուն կին մը կրնայ լինիլ վերջապէս այնպիսի շողուն, վառվռուն պչրող մը, նորաձևութեան ստրուկ մը, իրեն պէս յիսուն հեզգ սրտերու բոժոժը, թատերական տեսարանի մը գերասանուհին, որ մերթ գեղջուկի և մերթ գշխոյի զգեստ կ'հագնի։ Ինչ խնդութիւն կրնայ զգալ պարկեշտ սիրտ մը զանի իր կինն անուանելով, ինչ ծայրագոյն սիրոյ երանութիւն, ինչ երկրային ճոխ երազ իրագործելի։

— Վա՜հ, և երկաթէ բահը մղեցի մարող ածուխս խտացած կոյտին մէջ։ Ճիշտ այսպէս, այսպէս անարժան է քաղքի պչրողին մաշած սիրտը. Ճիշտ այսպէս իր կենաց անդուլ կայծը, և յեղյեղուկ կիրքն, ինչ որ ան՝ առողջ և հրանուտ, կ'հալի ու սև, աղտեղի, ածև գիրտ մը կ'դառնայ։

Երբ պչրողի մը հետ ամուսնանամ, հրեից ձեռօք հին հագուստներ պիտի գնեմ։

— Սակայն, ըսի մտովին, երբ բոյը վերատին խաղաց, նազանքի (coquetry) և պչրանքի (flirtation) մէջ խտիր մը կայ։

Նազուհի մը կայծ կ'հանէ, բայց անպարտ և սիրաւէտ սնապարծութեան կայծն է այս քան թէ հաշուի արդիւնք։ Արեան եռն է այն քան թէ սրտի կամաւոր կատակը։ Ճշմարիտ հոգւոյ մը բոլորտիքը պիտի թեւահարէ այն՝ պտղին շուրջը դարձող շղին նման, նուշն աւելի հաստուն և տաք թողլով։

Նազանքն՝ իր ամէն խաղերով և փուշերովն՝ Ճաշիդ համեմը կ'կազմէ, ընթրիքիդ անուշահամ գինին է։ Եթէ քեզ յուսահատութեան մղէ, վերստին պիտի դարձընէ քեզ 'ի մարտ աւելի եռանդագին։ Ո՞վ կրնայ պարծիլ յաղթութեան մը վրայ որ ոչ ոք ազմական արուեստ և ոչ զօրաց զգուշաւոր կարգադրութիւն ունեցած է . . . ։ Մարդ պէտք է վստահ լինի որ քաղաքաբերդը պաշարել կ'արժէ։

Նազանքը կ'սրէ ախորժակը, պչրանքը զայն կ'եղծէ։ Նազանքը վարդը պահպանող փուշն է որ հեշտիւ կ'կոտրի երբ մի անգամ քաղուի։ Պչրանքը շամբերու վրայ դտնուող դայռին կ'նմանի, որով դժուարաւ կ'բռնուին, և երբ բռնուին, միայն դայռոտ ջրերու մէջ զգուելի են։

Եւ այսպէս՝ իմ աչքս երերուն բոցին սևեռած, իմ երազիս մէջ կը տեսնեմ շողուն էակ մ'որ իմ առջևս կ'պարէ, փալփլուն, շամբուշ ժպիտով, և հրապուրելի շնորհքով զիս կ'խայթէ. իսկ ես կ'խենամ յուսով և երկիւղով և իմ բոլոր հոգւովս աչքս կ'բանամ, և կ'նայիմ որ իր կերպարանը քիչ քիչ գթով կ'ամրի, երբ զգայութեան շող մ'իր միտքը կ'համակէ, և հուսկ ուրեմն բարեսէր, զգայուն և ակնածու գիրք մը կ'բռնէ։ Ահա կ'մօտենայ — պատկառոտ և կասկածելի մերձում մը — և իր այտերուն վրայ ընկած գանգուրներն ետին կ'ձգէ. և իր ձեռքը — մանր սպիտակ ձեռք մը — իմ զօրեղ մատերուս վրայ վեհերոտութեամբ կ'դնէ, և իր գլուխը մէկ կողմը կ'դարձընէ փարելի, և իմ աչքս կ'նայի, երբ ասոնք շարժուն բոցին վրայ յառած են. և իմ մատերս շուտ և խանդագին կ'սեղմեն այդ փոքրիկ ձեռքը՝ գիշերային սրընթաց ամպի մը նման որ Դիանի դունատ ծաղը կ'սքօղէ, և իմ աչքս ևս քան զևս կ'մօտենայ անոր կապոյտ, գեղածիծաղ, գթոտ, սիրաբոյր աչացը, և իմ թևս այդ ստուերային կերպարանը կ'գրկէ, և իմ շուրթս տաք շունչս կ'շնչէ, որ երթալով աւելի կ'տաքնայ . . .

Ճիշտ նոյն պահուն սպասուհիս ներս կ'մտնէ, և կրակին վրայ խան մը հանքային ածուխ կ'թափէ, ուստի և իմ շողուն ծովածխային երաշտ կ'աւարտի։

Բ

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Բայց այս ածուխը շուտ չվառիր, ուստի փքոցը կ'գործածեմ։ Հնարագէտ և բարերարոյ Քսավիէ տը Մէդրը* սիրուն վէպ մը պիտի յօրինէր անտարակոյս երկաթապատ լաթէ փքոցի մը վրայ, բայց ես չեմ կարող։

Փորձ կ'փորձեմ նուաղուն և կպրային բոյէն ելնող նկարը վերակոչել, բայց միթէ կարող եմ երբ իմ աչքս այս սև փքոցին վրայ կ'մնայ։

Ճակատագրին սև վարագոյրն է որ մեր պայծառագոյն երազներու վրայ կ'ընկնի։ Քանի՛ քանի անդամ խնդութեան ցնորքը մեզ կ'պաշարեն, մեր առջև ոսկեթև, հրեշտականման, սրտաբորբոք կ'պարեն և Էլիսեան դաշտ մը կ'յօրինեն՝ որու մէջ երազատես հոգին կ'շողայ և ինքզինքն տարբեր աշխարհ մը վերացած կ'կարծէ, և ապա — յանկարծ գիշերն կամ ամպ մը — բառ մը, քայլ մը, մտածմունք մը, յիշատակ մը նոյն ցնորքը կ'վտարեն, վիրաւոր այծի մը պէս որ մուրատի մը թխագոյն հորիզոնին վրայ աներևոյթ կ'լինի։

Ճշմարիտը՝ չգիտեմ եթէ տկարութիւն կամ մեղք է մեր սիրած ցնորքը ստեղծել և հոգեկան Եդեմի մը մէջ հաւաքել։ Բայց եթէ մեղք է, անուշ և հմայական մեղք մ'է, եթէ տկարութիւն մ'է, զօրեղ և գրգռիչ տկարութիւն մ'է։ Եթէ այս սիրաը կ'մաշի ամէն կողմէ տեսած ստութիւններէ, եթէ իր բնատուր զօրութիւնն զեղուն և խորազգաց հոգւոյն արժանի առարկայի մը վրայ թափելու կ'փափաքի, միթէ մեծ սիփոփում մը չպիտի գտնէ. մանաւանդ՝ վարժութիւն մ'է այս իր նպատակին յարմար, եթէ՝ մրրկի պէս ուժգին, դահավէժ գետակի մը պէս ահաւոր հոսի սիրոն երևակայութեան ստեղծած տեսլական էակներու վրայ, զոր մեր գեղեցկութեան, սրբութեան և աշնութեան զգացումը կ'ամոքէ։

— Անօգուտ բան, պիտի ըսես։ Այո՛, անօգուտ է, եթէ անօգուտ

*Ուղեւորութիւն սենեկիս շուրջը։

է նաև երկայն ժամեր պայծառ դաշտանկարներու վրայ նայելու հաճոյքը, եթէ անօգուտ է զեղուն սրտով և յորդ աչքով Մէղէրէրէ պէս երաժշտութեան հիացմամբ մտիկ ընելը, եթէ անօգուտ է հոգիդ խանդով, սիրով և մոլորութեամբ բորբոքելու աքանչացումն՝ հանճար ճառագայթող գիրքի մը վրայ։

Իրաւի՝ կան գռեհիկ հոգիներ որ այս բանս չեն զգար, կ'ծիծաղին, կ'այպանեն, մինչև անգամ ցաւիլ կ'կեղծեն։ Նման Ատիլայի Հունաց որ իրենց թամբերու տակ կ'եփէին հումմիսն և կոստարար կ'ծաղրէին Ասիկոսի համադամ խնջոյքը։

Ո՛չ, ցնորքը հնարելը մեղք չէ, և եթէ մեղք է, այնպիսի յորդառատ, այնպիսի անկեղծ հոգւոյ մը հետ մեղանչել է, որ կարող է այս խնդագին աղաղակել առ Երկին, հաւատի լինելով որ աղերսը շնորհ պիտի գտնէ, Մեղայ, գթա՛ինձ։

Բայց կրակս կ'վառի, ախորժելի վառում մը, մեղմ, անայլայլելի լոյս մը կ'սփռէ իմ վերնայարկիս հեռաւորագոյն անկիւնը։ Ո՛րչափ անանման է ծովածուխս թեթև բոցին — անանման՝ իբրև անհաստատ և տարտամ սիրտ մը, զուարթ, ուղիղ և հաստատ սրտի մը մօտ։

Ահա, մտածեցի, տուր ինձ այսպիսի սիրտ մը. սիրտ մ'որ նանրասիրութեան հակամէտ չլինի, զգայութեամբ սաստիկ չբորբոքի, նազուն կայծեր չարձակէ, թեթևամիտ և շինովի տաքութեամբ աննշան էակ մը չլինի, այլ բաց, պայծառ և զօրաւոր։ Թերևս իր մութ ստուերներն ու անկիւններն ունենայ, վասն զի ոչ է այն հոգին որ մութ գոյն մը չունենայ արիւնը սառ կտրող ցաւերու պատճառաւ։ Այլ սակայն կրակը կ'նշողէ, կ'տեսնես զայն ծերպերուն մէջ, և պահ մ'ևս, բոլոր զանգուածը պիտի բորբոքէ։

Այս կրակն աչք կ'առնէ, և հովանեակ մը կ'քաշեմ՝ որ թէև անհարթ, շնորհալի նկարներ ունի։

Ճշմարիտ սիրտը միշտ համեստութեան քօղը կ'կրէ (չէ թէ սուտ պարկեշտութեան, որ սև, անհաճոյ, երկաթեայ հովանեակ մ'է)։ Թոյլ չտար որ զինքը շատ մօտէն դիտեն — կարելի է տոչորէ. բայց քօղին տակէն իսկ տաքութիւնը կ'զգաս, և Համեստութեան ծածկած սիրուն նկարներէն կարող ես տեսնել ոսկեշողջ ուրուագիծը, և այս նշանով գէթ թէ կ'բորբոքի ու կ'վառի յստակ և կայուն բոցով մը։

Այսպիսի սրտով մը միտքը բնապէս կ'հալի, սուրբ և ջերմ հալումմը. միասին կ'ձգնին իբրև երկուորեակ ծնունդ։ Այսպիսի սրտով մը, ինչպէս Ռաֆայէլ Ադամն կ'ըսէ.

Քանասկանութեան մէջ
Սէրն ունի իր գահ, եւ է հնարագէտ,

Բայց թող որ զանազանեմ այս սիրան, քու պաղուկ հոգիէդ — որ զգաստ է, վասն զի տգէտ է, հնարագէտ, վասն զի չունի թագուն հուրն սանձի կարօտ. պարկեշտիկ, վասն զի փորձող տաք արիւնէ զուրկ է։ Այս կերպ հոգի մը կարող է կենաց հրավառ բովէն անվնաս անցնիլ. ուժեղ է, միայն իր տկարութեամբը, անարատ, վասն զի կը զայթի, և բարի, մի միայն բացասութեամբ։ Թերևս մեղքի և մահուան վրայ յաղթական կանգնի, բայց այս յաղթանակն անբանին յաղթանակն է, որ ոչ կիրք ունի սանձելու, ոչ զօրութիւն հարուածելու և ոչ յոյս մարելու։

Արի՛ դառնանք հաստատ և անկեղծ սրտին, որ իմ հանքային ածուխիս պէս կ'վառի։

Կարծեմ թէ այս սրտին նման մէկ հատ այժմ կ'տեսնեմ։ Աչքը խորունկ է, և մտքին վրայ կ'ցոլանայ. շահագէտ աչք մը չէ, որ քսակդ կշռէ, աշխարհային աչք մը չէ, որ կացութիւնդ քննէ, անբան աչք մը չէ, որ կերպարանդ քննէ, սրտի աչքն է, որ հոգի՛դ կ'կշռէ։

Խոր, փափուկ, ծանր զգացումովլի աչք մ'է։ Աչք մ'է որ երբ մի անգամ նայիս անոր, կ'փափաքիս որ վերատին տեսնես. աչք մ'է որ երազիդ մէջ պիտի երևի, աչք մ'որ գոյն մը պիտի տայ քու բոլոր անուրջներուդ։ Աչք մ'է այն որ ընդ առաջ, ապագայիդ մէջ կ'փայլի, նաւորդին երկնից վրայ փայլող աստղին նման. անով, ակամայ, և հոգեկան վարժութեամբ՝ քու բոլոր դիտողութիւններդ կ'ընես։ Անուշ է և հանգարտ, բայց լի է, իբրև աղբիւր մ'որ յորդութեամբ կը հոսի. Աֆրոտիտէս մը և Մերկուրոս մը, Վօկլուզ մը և Կլիտոմնոս մը։

Դէմքը հրեշտակի դէմք է, փոյթ չէ թէ գեղեցկութեան սրտառուչ գծեր չունի, հոգ չէ՝ եթէ ժողովուրդն զայն չքնաղ չգտներ, փոյթ չէ՝ եթէ կանոնաւոր համեմատութիւն չունի, փոյթ չէ իր գոյնն ու ձևը, դու հոգւոյն նայէ, որ ամէն գիծ կ'լուսաւորէ, ամէն կէտ կ'յղկէ, ամէն մակերևոյթ կ'սրբէ։ Ուղղութիւն, անկեղծութիւն և արժանիք կ'յայտնէ, ճշմարտութիւն և առաքինութիւն կ'բուրէ, և այն նկարն սրտիդ վրայ կ'սեղմես, իբրև քու սիրաբուն երազներուդ անձկալի տեսիլը։

Հասակը կրնայ այսպէս կամ այնպէս լինիլ, կրնայ բարձր կամ կարճ լինիլ, ինչ փոյթ — դու սրտին նայէ։ Թերևս իր խօսքն անուշ կամ

մեղմ, ծանր կամ նուրբ է — ազատ ու պարկեշտ հոգին ամէն ինչ տաք և փափուկ կ'գործէ։ Մինչդեռ կ'խօսիս, կ'խօսի նա ևս քեզի պէս, մինչդեռ կ'խորհիս, կ'խորհի նա ևս քեզի պէս (չէ թէ ձայնակցութեամբ, այլ զոդիակոսին նոյն նշանով) մինչդեռ կ'սիրես, փոխադարձ կ'սիրէ նա։

Քրոջ մը սիրան է այն, և երանի՛ այն մարդուն որ այսպիսի սրտի մը կ'արժանանայ։ Անոր տաքութիւնն ոչ միայն վեհանձն է, այլ սրբանուէր, զուտ, ջերմեռանդ, փափուկ, անձնուէր և երկնասլայ է։

Մարդ մ'առանց տեսակ մը կրօնի շատ շատ ողորմելի դատապարտ մ'է, բաղդին խաղալիքը, որ ոչ անհունութեան և ոչ ինքնհետ սկսող հրաշալի յաւիտենականութեան հետ կապող զոդ մ'ունի. բայց առանց կրօնի կին մը յոռազոյն է — անվառ բոյ մ'է, անզոյն ծիածան մը, անհոտ ծաղիկ մը։

Մարդ մը կրնայ իր մտոտի յոյսերն ու յօժարութիւններն երկրային վաղանցուկ իրերու կամ աշխարհի վրայ դնել, բայց կին մ'առանց այն խարսխին որ Հաւատ կ'կոչուի, ալէկոծ նաւ մ'է։ Մարդ մը կրնայ մարդկային սեռի հետ ունեցած յարաբերութեանց շնորհիւ կերպ մը բարոյական պատասխանատուութիւն ստանձնել, բայց կին մը, համեմատաբար իր միայնակ շրջանին մէջ, ուր՝ չէ թէ միաքն այլ զորոնն է հսկողութեան շարժառիթը, չէ կարող ուղղութեան հիմ մը գտնել բայց միայն հոգևոր հաւատը։ Մարդ մը կրնայ իր միաքն ու ըղձերը ճղմել որ ապաւէն գտնուն այնպիսի նաւահանգստի մէջ զոր Համբաւն ու Պատիւն իրենց առջև կ'պարզեն, բայց կին մը — ո՞ւր կարող է դնել իր յոյսը փոթորիկներու ատեն, եթէ ոչ Երկինքը։

Եւ այս անուշ վստահութիւնն, այս համբոյր սէրն, այս համբերատար յոյսն, որ կենաց ամէն մէկ քայլն ու տեսարանն կ'քաղցրացնէ, ախորժելի պայծառութեամբ զանոնք լուսաւորելով, մինչդեռ աշխարհիս փոթորիկներն հրաշունչ թնդանօթներու պէս կ'գոռան — ի՞նչ բան կարող է հայթայթել, եթէ ոչ մերկէ բարձր և թնդանօթաձիգ բանակէ մ'աւելի զօրաւոր եղող սուրբ կապ մը։ Ո՞վ որ քրիստոնեայ մօր մը խորհուրդներն ու սէրը վայելած է, ամենայն զօրութեամբ պիտի կրկնէ անոր անունն ու պիտի օրհնէ արտասուքով մը — Ե՜ Ե՜, կ'՝ՐՊՍՍՈՒԵՄ։

Իմ կրակս այժմ հրաշէկ ածուխի կոյտ մ'է։ Սենեկիս բոլոր մթնոլորտը տաք է։ Սիրան որ իր փայլովը կարող է խախուտ պատուհաններ, և բեկեալ առաստաղ ունեցող տուն մը տաքցնել, ամենէն ընտիր

սէրը կրնայ պարունակել — ընտանեկան սէր։ Աւելի հեռու կ'քաշեմ աթոռս, և հովանեկին վրայ նկարները կ'փոխուին։ Ջերմութիւնը, ժամը, անդորրութիւնն առ անին զգացում մը կ'գրգռեն, և այս զգացումը, փայլակի պէս սրընթաց, երևակայական աշխարհէն ընտանի էակ մը գողցաւ (Պրոմէթէեան գողօն) որու վրայ իմ խորհուրդներս զմայլելի երազի ձև մը պիտի առնուն։

Ահա վարը, սա կրակին անկիւնը նստած է այս էակը, պարկեշտ այլխիստ սիրուն գոյնով, պարզ մնային զգեստ մը հագած է։ Կապոյտ ժապաւէնով մը, իր վիզին բոլորտիքը մեծագոյն լար մ'ամփոփուած է, և ժապաւէնին ծայրերն փոսորակ ծնօտին ներքև միանալով կոկիկ կ'կապեն պարզ և անշուք գոհար մը — բու պարգևդ։ Իր թևն — մումի պէս թափծու սիրուն թև մը — կաղնի աթոռին քանդակեալ արմկին վրայ կ'կոթնի. իր ձեռքը սպիտակ ու փափուկ, կ'բռնէ տնական գրքոյկ մ'որ մատերէն կ'կախուի։ Ցցամատը թերթերուն մէջն է, իսկ միւս մատերն գրքոյկին գորշագոյն ծածկոյթին վրայ կ'երևին։ Իր արծաթի ձայնով երևակայութիւնը գրաւող տողը կ'կրկնէ, և դու մտիկ կ'ընես — կամ անտարակոյս լսել կ'կեղծես — աչունքդ ածելով երբեմն շրթերուն, երբեմն ճակտին, երբեմն մատին վրայ, այն մատն ուր կը շողշողայ աստղի պէս ամուսնութեան մատանին — փոքրիկ ոսկի օղակ մը, որմէ չդանդաղիր — և կ'յայտնէ քեզի այն որ քունդ է։

— Տկար նշան մը, եթէ լսկ այս մատանին խօսէր քեզ որ ինք քունդ է։ Աչքը, ձայնը, նայուածքը, սիրան աւելի ազդու կերպով կ'խօսին քեզ որ նէ քունդ է։ Եւ ներքին զգացում մը, որու ուր գտնուիլը չգիտես և ուստի գալը չգիտես, սակայն սրտիդ և գլխիդ վրայ կ'հոսի հրանուտ աղբիւրի մը պէս, կ'խօսի քեզի որ դու անորն ես։ Մէսինճէրի Հորտանսիային պէս անդառնալի կերպով կապուած —

Ուրիշի կամաց եմ հլու, եւ չկարեմ
Ոչ խօսիլ ոչ գործել առանց իր հրամանին։

Կրակն առաջուան պէս ջերմէ, ինչերկարատև տաքութիւն կայ այս գժուարավառ հանքածուխին մէջ։ Հազիւ թէ կրակարանիս երկրորդ ձողին ինքնաբ, թէև եկեղեցւոյ աշտարակին ժամացոյցը տասնմէկը զարկաւ։

Այո, մտածեցի խնդալին, այսպիսի սիրտ մը չնուազիր, ընդունայն կայծերով չսպառիր, տարիներ անցնելով չսառիր, այլ հետզհետէ ոյժ և ջերմութիւն կ'ստանայ, մինչև որ կենաց հոլը մահուան մոխրին ներքև ծածկուի։

Զօրեղթէ ջերմ լինի 'ի սկզբան, դարձեալ չհատնիր։ Թերևս՝ ժամանակ անցնելով՝ չկարենայ՝ նորավառ ածուխին պէս՝ կապոյտ թուխուն կայծեր արձակել, թերևս աղբիւրի ականց պէս՝ յարատև խոխոջելով չհոսի, բայց սրտահոս գթասիրութեան զօրաւոր դետ մը պիտի դառնայ։

Թոսքանայի լեռներուն տակէն Կլիտումնոս կ'ժայթքի գրեթէ իբրև սահանք մը։ Գարնան սքանչելի օր մը ծուեցայ վար և իր աղբերակէն եռացող ջուրը ճաշակեցի. սպիտակ մարմարէ փոքրիկ տաճարը, ձիթենիներով ծածկուած լեռներու կողերը, ճամբուն ճերմակ գիծն, դեռափնեայ բարձր սօսիներն իտալական պայծառ արևուն մէջ կ'շողային բոլորտիքս։ Աւելի հեռուն գնալով տեսայ այս սահանքն որ երբ դեռ գարձեր էր, դեռ ևս վճիտ և հզօր, կ'հոսէր պայծառ իր ծաղկաւէտ եղերայ մէջ, որու վրայ հովտին ոչխարները կ'արածէին, և աւելի հեռուն ողջունեցի զայն, երբ Արնօին կ'միանայ, անտառուտ ափերէ հեղիկ սահելով, դեղանի Փլօրանսը քերելով, կորով և տարածութիւն առնելով, մինչև որ Բիզայի և Լէկհօրնի միջը հասնելով, հրաշալի Երկրահակ Կոթողին և Թոսքանայի նաւահանգստին նաւային կայմերուն առջև, այս դեռն իր ջուրը կ'տայ իր կենացը գերեզմանին — ծովուն։

Այս յիշատակն մեղմիկ դալով միացաւ իմ սենեկիս կրակարանին վրայ ըրած խորհուրդներուս, և իմ երազիս մէջ հետզհետէ հաւաքուող քաղցր զգացումներուս սահուն ընթացք մը տուաւ։

Մարի ու երևակայութեան տարօրինակ մէկ ուժովն է որ սրտի ամենէն մօտ էակներն ժամանակի շրջանին մէջ կ'նկարագրին։ Մինչև անդամ հիմակ որ կրակը քիչ քիչ կ'մարի, և ծանր ծանր իմ ժամերուս շրջանակն եղող ձողին կողմը կ'ինջնէ, այնպէս իմն կ'երևի թնճ որ սիրոյ այն նկարը կ'սեսնեմ որ տարիներ առաջ իմ կրակարանիս բոցին շուրջը սաւառներ էր։ Դեռ ևս նոյն ջերմ, վստահ, կրօնասէր սիրտը կ'ծածկէ։ Աղէտք զինքը փորձեցին, վիշտեր անոր վրայ ծանրացան, վտանգներ զինքը խոցեցին, և մահն ընդ հոսպ պիտի շանթահարէ զինքը, բայց տակաւին մի և նոյնն է։

Իր մատերն աւելի նուրբ են, իր դէմքն աղէտից և հոգերու գիծեր ունի որ զիրար կ'ընդհատեն իբրև ոստայն, որ մարդկութեան ոսկի հիւսուածքը կ'կազմեն։ Բայց սիրտը սիրաւէտ և անյողդողդ է. նոյն սիրական սիրան է, նոյն անձնազիր սիրան, որ կրակի պէս չորս կողմէ

կ'տաքցնէ։ Վիշտը չափաւորեց խնդութիւնը, և խնդութիւնը զարդարեց վիշտը։ Կեանքն իր բոլոր փորձանքով սրբանուէր խունկի պէս զատած է, որ կրակիդ անկիւնէն վեր կ'ելնէ — իբրև նուէր քու առանին ասատուածոյդ։

Քու համբաւ շահելու երազներդ, քու արագ արագ վճիռներդ, քու անախորժ դատողութիւնդ, անուն մը վաստակելու համար ըրած սրտոգին ուխտերդ, այս ամէնն սիրոյ մէջ սուզան — ամէնքն հալեցան այն սիրոյ արևուն ներքև, որ իրեն կեդրոն, յոյս և ուրախութիւն կը դանէ Ընտանի Ցարկը։ Բոլոր հոգւով կ'յուսամ այն մարդուն վրայ, որու հոգին չարտիեր երբ այս անուան ձայնն իսկ ականջին կ'զարնէ։

Ընտանի Ցարկ մը. այն պայծառ, օրհնեալ, պաշտելի տեսիլն է որ Կեանքը պատող արևային հորիզոնին բարձունքը կ'հանդչի։ Երբ պիտի հասնի մարդ անոր, յ'երբ պիտի նկատէ զայն իբրև օրական փարիզուն երազ մը, երբ պիտի տիրանայ անոր իրապէս և լիովին։

Տան շէնքը չէ այն, թէև այս ևս իր հրապոյրն ունի, ոչ հոգասար ոգւով մշակեալ դաշտեր, ուր քայլերուդ հետքը գրոշմուած են, ոչ ծառերն, թէև իրենց հովանին՝ քու աչքիդ՝ ամայի երկրի մը վրայ մեծ ժայռի մը սառերը լինի, ոչ իսկ վառարանդ՝ իր երերուն նշոյլով, ոչ այն պատկերներն որ սիրահարները ուշդ կ'բերեն, ոչ սիրած գրեանդ, այլ քան այս ամէնն աւելի ընտիր բան մ'է — Կողակցիդ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆ է։ Անդր է պաշտած թերափներդ, անդ քու վստահութեանդ խորանը, քու աշխարհիկ հաւատոյդ վախճանն անդ է, և այս ամենուն զարդ, և արեանդ ատոյգութիւն ընծայողն այն հիւսքանչ համոզումդ է թէ գոնէ անդ կ'սիրուիս, թէ անդ քեզ հասկըցող ունիս, թէ անդ քու սխալմունդդ բարեսէր ներողութեան պիտի հանդիպի, թէ անդ կարող ես հոգւոյդ բեռը նետել՝ անզգայ և անկարեկիր ունկնդրութենէ անդրկիւղ, և թէ անդ բոլորովին ինքզինքդ գտնելուդ պիտի ուրախանաս . . . :

— Այս նկարն վառարանիս մօտ, հանդարտ, սիրաւէտ, զուարթ նկարն տակաւին անդ է. չփարատիր նա, թէև իմ միաքս կ'վարանի, վասն զի իմ իրձս և կամքս անդ կ'պահեն զանի անվրդով։

Կրակը՝ հովանեկին ետեւէն՝ զեղին և տաք կ'ելնի, իբրև արփիափայլ հունձք։ Իր ամենէն լաւ տարիքին մէջն է, և այս՝ հանութեան տարիքն է։

Հասուն սիրտ մը — այժմ կ'հասկնամ թէ վ.օրդսէօրթ ինչ նշանակել ուզեց ասելով,

Առաջ բարին կ'մոռնի,
Եւ անոնք որոց սիրտերն սամառուան փոշիին պէս չոր են,
Մինչև փոդակը կ'վառին։

Կէս գիշեր կ'զարնէ քաղքին ժամացոյցը։ Ցրտաշունչ հովը կ'սկսի գրան և պատուհանին ծակերէն փչել. կրակը վառարանին մինչև երրորդ ձողն լիքած է։ Սակայն իմ երազս դեռ չհասնիր, այլ սիրապէս կ'դառնայ նոյն նկարին բոլորտիքը, շատ հեռուն, տարիներու ցրտահար մշուշին մէջ կ'երևի այն. սէրը պատկառանք դարձաւ, կիրքը խնդալի զոհունակութիւն։

— Եւ ինչ փոյթ եթէ ծերութեան հասակը գայ, ըսի նոր ուրուն յուզմամբ — գինին ինչ բանով իր ընտրութիւնը կ'հաստատէ։ Ինչ բան աւելի ներքին ոյժ, գիտութիւն և զեկավարի անսայթաք ուղղութիւն կ'տայ, որպէս զի նաւակդ անվնեհեր քշես ծովն՝ ուր կենաց դեռը կ'թափի։ Թող սպիտակ ամիտնը հաւաքուի, թող արծաթագոյն մազը թուխ մազին հետ բուսնի, թող աչքն յետոյս մթին նշոյլներ արձակէ, ինչ հոգ, յստակ երկնից խորերը կ'նահանջէ այն, իբրև առաջնորդ այն աշխարհին ուր գու ևս պիտի հետևիս։

Ցուրտը կ'պատէ չորս դին, և հովանեակը կրակին առջևէն կը բաւնամ. դեռ ևս թեթև շող մը կայ, բայց յանկարծ ածուին երրորդ ձողէն վար կ'սուզի, կ'սահի՝ շառաչիւնով մը՝ իբրև կոշտ փթաւ որ նորատիպ գերեզմանի մը մէջ կ'թափի։

— Մարեցա՛ւ, անցա՛ւ նէ։

Եկ լաւ, վայելուչ, միօրինակ, վերհանձն կերպով այրեցաւ սիրոն, որչափ որ մահկանացուի սիրտը կարող է վառիլ. անշուշտ յաւիտենականութիւնն լաւ ևս պիտի վառէ զայն։

— Արտասուքը կ'հոսին արդարև, բայց ասոնք շնորհապարտութեան, համբերատարութեան և յուսոյ արտասուք են։

Եւ այս երկնաշնորհ արտասուքով լի աչերն կորովարիր կ'սևեռին հրեշտակային սանդղին վրայ, կ'բացուին այն ապագայ կենաց վրայ ուր նէ մտաս, այն աշխարհին վրայ ուր նէ կ'բերկրի։

Կէս գիշեր է, և կենաց ձայները դադրած են։

Դու կենաց մահասենեակն ես, բայց միանգամայն վշտերու մահավայրն ես։ Քեզ այնպէս կ'երևի որ աշխարհ յետոյս կ'սահի, և Ցոյսը քեզի հետ ընդ առաջ կ'սրանայ։ Ամպերն, անձկութիւնները, մոտի ակնկալութիւնները, մտագրած աղմուկները, երկիւղները կ'անհետին

հիմակ Անգելոյն և Գիշերուան վարագոյրին ետևը։ Իրրև լեռ մը կը գլորին կ'ընկնին հոգւոյդ վրայէն։

Ներկային իրը վախճանն երևցող մթութեան մէջ՝ դու աղօթալի ձեռքդ կ'տարածես անսահման Ապագային կողմն, ուր Աստուծոյ ակնը կ'սաւառնի հորիզոնէն անդին՝ իրրև արևուն ծագումն ովկիանու վրայ։ Միթէ այս լաւագոյն բանի մը գրաւականը կ'համարիս։ Այո, եթէ սիրտդ մաքուր մնացած է և ամուր — իմ կրակիս պէս վառ — և ուսած է զայն առանց ուսանիլը ցոյց տալու։ Հաւատն անոր մէջ ամէներ է, ինչպէս բողբոջը կ'ամի ոստին վրայ կամ ծաղիկը նորածիլ ծղին վրայ։

Հոգերը չեն կարող մտնել իմ ընակած անբջական աշխարհս։ Կ'մտին գրսի նուաղոն աղաղակներուն հետ և իմ կրակիս հրաններուն հետ կ'անցնին։ Այն իսկ Փառասիրութիւնն՝ իր վառվռուն և գրգռիչ բոցովը, բոլորովին անզօր է։ Սիրաը լիովին ինքն է, աղօտ կրակին առջև։ Երիտասարդութեան ժամանակ սրտին պատահած ամէն լաւ բաներու յիշատակով կ'պահպանուի, և Յոյսն ու Հաւատը զայն կ'զօրացընեն։ Երակին այլանդակ բախում, ըղձին խօշկական տենդ չունի, այլ միայն հոգին՝ ամէն ինչ մոռնալով ընդ միշտ, մի միայն իր Ճակատագրին և բարեգործութեան կարողութեան հոգը կ'տանի։

Եւ Աստծութեան այս թևերով վեր վեր կ'ելնէ, և Յոյսն հետզհետէ աւելի կ'վառի քայքայուն կենաց առիւնին ներքև, և գերեզմանին սուր եղրն, Եղիսեան դաշտին գոնակը տանող կուռանը կ'թռի։

Բայց ինչ է թուղթը, ինչն բառերը։ Սնոսիք՝ հոգին յետոյս կը թողու զանոնք, գրիչը սովորական կաղի մը պէս կ'տատանի, և սիրտդ՝ կենաց ընթացքին մէջ՝ շատ հեռու կ'ձգէ զայն։ Հոգւոյդ վաղամեռիկ իղձերը, իր գերև ելած յոյսերը, մութ են հիմակ ընդ լոյս անհուն տենչանաց որ իր վրայ կ'սփռին, արշալուսոյ պէս անուշ և անարատ։ Յաւիտենականութիւնն իր վերաբերին մէկ ծայրը դէպ 'ի քեզ տարածեր է, և իր ծածանող քղանցքին շունչն Արարիոյ քամին պէս է։

Թեթև շշուկ մը, և իմ վառարանիս այրած ածուխին սուղուս մը լսելով՝ սթափեցայ, և երևակայութիւնս իմ ծաղկաւէտ երազ թողլով՝ Գլէկեդօնէն անդին՝ սպիտակ առիւնին դարձաւ, որ նոյն միջոցին խաղաղ էր սեղած ածուխին վրայ։

Եւ մտածեցի, ամուրիի մ'երազն է միայն այս՝ մաքուր և սիրաւէտ սրտի մը վրայ։ Եւ վաղը վերստին պիտի գայ հալեմաշ կեանքը։ Միթէ փափաքելի է. կամ, եթէ փափաքող չկայ, միթէ չփափաքիլը դժպատեհ չէ։

Միթէ երազները բաւական են, թէև որչափ կարին բարձրերը վերանան։ Վերջապէս՝ ողորմելի, լալկան արարածներ չենք երկրին և իրարու զոգեալ։ Միթէ համակրութիւն, յոյս և յօժարութիւններ չկան որ միայն սրտակցութեամբ կրնան գոհ լինիլ և սփոփիլ։ Միթէ սիրան՝ որչափ անարատ և անվրդով լինի, որչափ հոգեկան թև առնու թռի, մարդկային համակրութեան մը կարօտ չէ որպէս զի վայելելով առոյգանայ։ Միթէ այս աշխարհիս համար չկա՞յ սիրոյ աղբիւր մը, ինչպէս որ կայ սիրոյ աղբիւր մը միւսին համար։ Միթէ այս սիրան գորովալիր թագուն համբար մը չպարունակեր զոր 'ի հարկէ կ'՝՝՝ չէ դուրս թափել վախճանը հասնելէն առաջ։ Միթէ գաղտնութեանդ հետ գաղտնաղ չկանգնիր և տարուէ տարի խոհեմութեամբ չյաղթանակեր։ Միթէ ընկերական ուղևորութեանդ առեն չհեռացաւեր, և նորաբոյս ծաղիկներու պէս թարմ և հոտաւէտ էակներու վրայ իր պահանջումները չյայտներ, ըսելով, — Անսիրտ, շինովի, նանրամիտ էակէն հեռու կեցիր, և սիրտդ կշռէ, չէ թէ ձնշմամբն այլ լուութեան և խորութեան կողմէ։ Թոյլ տուր որ հոսի և զուարթ լինի։

Միթէ չկա՞յ սադան մ'որ գիշերային գաւն երազներուդ մէջ՝ ճիւաղի պէս գալով՝ կ'փախայ. — Գոհ եղիր, թոյլ մի տար սրտիդ որ բայսի, զսպէ բոլոր յօժարութիւններդ, չկայ սիրելու արժանի բան մը։

Միթէ անուշ էակ մը՝ խորհրդաւոր և լուսապսակ հրեշտակի մը նման՝ խոհուն մտքիդ վրայ չթռթռար, ըսելով, — Յուսա՛ յարաժամ, ընդ միշտ յուսա. սիրան և ես ապրակից ենք. մեր պաշտօնը պիտի լրանայ. բնութիւնն իր նպատակին պիտի հասնի. հոգին Եղեմը պիտի ստանայ։

Ելայ անկողնոյս վրայ նետուելոյս, և որովհետև իմ մտածմունքս վաղուան որոշեալ ծանր գործերուս վրայ դարձաւ, իմ Երազս և իր շղուն նկարներն, որ իմ սիրոս թունաւ հանելին, թռան գային՝ օգոստոս ամսուան անձրևային սպիտակ ամպերուն նման, ընդ որ արևն ծիածաններ կ'նկարէ, և որ Հիւսիսէն ելնող պաղ հովն հարաւային կողմը կ'քշուին։

Կ'զարմանամ, ըսի մտովին՝ քուն լինելու առենս, թէ արդեօք կանամբի մարդ մ'իր իրացած զգայումին վերջապէս այնքան երջանիկ է որչափ մեզի պէս ողորմելի արարածներ իրենց երազներովը։

ԵՐՐՈՐԴ ԵՐԱԶ

ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ՎԱՌՈՒԱՆՈՒ ԳԼԱՆԻԿ ՄԸ

ԳԼԱՆԻԿ ՄԸ ՎԱՐԱՑ

Շեմ կարծեր որ մօրքոյրը Անթառամ մը գտնուէր երբէք որ գլանիներու հանդուրժէր։ Իմ Անթառամ մօրքոյրս յատուկ ատելութեամբ մը զանոնք կ'ատէր։ Ոչ միայն գլանիի մը նորաբոյր ու ոլորուած խիտ մուխին հոտը չէր քաշեր, այլև Հավանայի գրոշմն կրող տուփի մը կարմրափայլ գոյնն իսկ չէր ուզեր տեսնել։

Գլանիկի մը վրայ լաւ բան մը չէր տեսներ։

«Բայց ներէ ինձ, մօրքոյրս» ըսի անոր անցեալ առաւ «գլանիկ մը շատ լաւ կողմեր ունի։

Իմ մօրքոյրս՝ որ կ'ուզէր, գլուխն օրեց, որով շարժեցան ևս իր թզթոյլ յօրինած գանգուրները։

«Շատ պատուական բան է» շարունակեցի ես, փչելով։

«Աղտոտ բան է» ըսաւ մօրքոյրս։

«Մաքուր և անուշ է» ըսի ես։ «Եւ յուզեալ զգայութիւններու ախորժելի ամոքիչ մը, և ընտիր ընկեր մը, և մխիթարիչ մը . . .» և կայ առի որ նորէն գլանիկս քաշեմ ու փչեմ։

«Դու քաջ գիտես որ գարշանք է» ըսաւ մօրքոյրս «և պարտաւոր էիր . . .» և լուեց որ իր գանգուրներէն մին շակէ, վասն զի գլուխն ուժգին շարժելուն տեղէն ելեր էր։

«Գլանիկն՝ ընդ հակառակն՝ հանգարտ խորհուրդներ կ'ներշնչէ» շարունակեցի «և մարդս խոհուն կ'ընէ, և իր հայեցողական կարողութիւնը կ'սրէ, ինչպէս որ կրնամ փորձով ցոյց տալ քեզի» ըսի՝ հետզհետէ սաքնալով այս խնդրոյն վրայ։

Մօրքոյրս, որ՝ բերանը դնդասեղ մ'առած՝ դեռ ևս իր մատներով հեստ գանգուրը կ'ոլորէր, ուսերը թոթուեց իբրև թերհաւատութեան նշան։

«Անթառամ մօրքոյրս» ըսի, և երկու երեք անգամ ուժգին ծուխը բերնէս փչեցի «Անթառամ մօրքոյր, կարող եմ իմ գլանիկս ուժովապէս խորհրդածութիւններ ընել որ սիրաց պիտի ախորժի լսելու։»

«Ինչ նպիտի վրայ, ըսէ կ'աղաչեմ» պատասխանեց մօրքոյրս արհամարհ կերպով մը։

«Սիրոյ վրայ» ըսի անոր «որ բաւական շուտ կ'վառի, բայց հաստատամտութեան կ'կարօտի որպէս զի միշտ վառ մնայ. կամ ամուսնութեան վրայ, որ՝ 'ի սկզբան՝ շատ կրակ ունի, բայց այնպէս մի կրակ է որ բոլը ճարակող ամէն բան կ'սպառէ, կամ կենաց վրայ» յարեցի ծանրութեամբ «որ նախ թարմ է և հոտաւէտ, բայց ապա այնպէս անոյշն դիրտ մը կ'ձգէ որ միայն սև հողին արժանի է։»

Մօրքոյրս՝ որ քառասուն տարու էր և ազապ, իր գանգուրը շինեց մատին մէկ շարժումովն, ատելը նորէն առաւ, և իր ծնօտն անոր կոթին վրայ կոթնցուց՝ զարմանք, հետաքրքրութիւն և մեծ ակնկալութիւն ցոյց տալով։

Կ'փափաքէի որ մօրքոյրս այսչափ հետաքրքիր չլինէր, կամ ես այսչափ գիւրահաղորդ չերևէի, վասն զի՝ թէև ինչ որ ըսի ուղիղ մտօք ըսի, սակայն իմ մտածութիւնս անորոշ, անրջային և զմայլելի անուշութիւն մ'ունենալուն՝ անկարելի կ'թուէր ինձ բառով բացատրել, մանաւանդ պատաւ կնկան մ'առջև՝ որ ատելի մը կոթին յենած էր։

«Քիչ մը ժամանակ տուր, մօրքոյրս» ըսի անոր «տուր ինձ լաւ ճաշ մը, և ապա լաւ գլանիկ մը, և ես ալ քեզի այնպէս լուսափայլ երազ մը պիտի հիւսեմ իմ գլանիկս մուխովն, որ քու պատաւ բարի սիրաց պիտի շարժի։»

Մօրքոյրս՝ սեպէ ճաշը, սեպէ մուխը կամ պատաւ սիրա ըսելուս վրայ՝ այնքան արհամարհանք յայտնեց որ սկսաւ կատղութեամբ ատել ածել։

«Եթէ չյաջողիմ» շարայարեցի ես՝ մօրքուս սիրան առնելու մտօք «եթէ չյաջողիմ, Անթառամ, թող տալիքդ վերջին գլանիկը լինի (Անթառամ մօրքոյրս ատելը դադրեցուց) և իմ ծխախոտի տուակս (մօրքոյրս ինձ ատելի մատ եկաւ) պիտի գործածեմ իմ յարգելի աղնիւ մօրքուս համար ժապաւէններ գնելու, և այս ժապաւէններն ուրիշ լաւագոյն անձ մը չպիտի վայելէ» շարունակեցի խօսքս՝ առատօրէն մուխ հանելով «ուրիշ մէկն ատելի լաւ չպիտի զարդարէն քան քեզ։»

Իմ Անթառամ մօրքոյրս կէս մը կատակով, կէս մը շնորհակալութեան ձևով գլխս մշուեց։

Ահա այս կերպով մեր սակարկութիւնն ըրինք. արդէն յայտնեցի թէ իմ պայմանս ինչ էր. իսկ մօրքոյրս՝ եթէ յաջողէի, ամէն իրկուն անարդել պիտի թողուր զիս զլանիկ մը քաշել իր սիրական վարդենիին ներքև՝ սիւնաշարդ դատին զիմացը։ Այսպէս հաշտուելով՝ նստայ. զլանիկս մուխը Անթառամ մօրքուս գանգուրներուն բոլորտիքը կը բարձրանար շնորհալի. մեր աչ ձեռքն իրարու կցած էինք. ձախ ձեռնով զլանիկս բռներ էի, մինչեւ ինքն ալնդ բռներ էր . . . աւելին կսմը։

Եւ խօսքս չերկարելու համար, մեր պայմանագրութեան արդիւնքն եղաւ հետեւեալ երգը։

Ա.

ԱԾՈՒԽՈՎ ՄԸ ՎԱՌՈՒԱԾ

Ունելիքը կ'բռնեմ, ածուխ մը կ'առնում և զլանիկս ծայրն անոր հպելով, կ'փչեմ . . . նորէն կ'փչեմ, բայց մուխ չելներ։ Զլանիկ մը անվառ ածուխով վառելու յոյս չկայ, ինչպէս որ, մոռացեալ, անհնար է սիրտ մը հրահրել մոռած սրտի մը շփումով։

Ջերմութիւն և կեանք պէտք են վառելու համար. և պահ մ'ոսկայ խորհիլ՝ նոյն իսկ իմ զլանիկս վառելն առաջ, այն հեք և կոյր մարդկան մտաւորութեան և յիմարութեան վրայ, որ պաղ ածուխներու փչելով կ'անցընեն իրենց կեանքը։ Յուսալի է որ Երկին՝ իր զթութեամբն, այնչափ բութ զգայարանք տուեր է անոնց որ չեն կարող զգալ թէ երբ իրենց հոգին բորբոքած և երբ մարած է։ Կ'երևակայեմ որ խիստ անհնարն հաճոյք մ'է սիրելու շարունակել ինչ որ սիրոյ կայծ մը չունի իր մէջ։ Խաղացիք զգալի առած մ'ունին. — Amare, e non essere amato. è tempo perduto. — Սիրել, և չսիրուիլ՝ ժամանակի կորուստ է։

Կերպ մը կոչտ զուարճութիւն կ'զգամ անկենդան ածուխ մը վառ նետելով։ Եւ ինձ կ'երևի թէ (թող երկին ներէ մտածութեանս յատուկ այս չարասիրութեան) մի և նոյն գոհունակութիւնը պիտի զգայ մարդ երբ իրմէ հեռու վանէ պաղուկ էակ մ'որ հին հրատի մը գեղ-

նուկ մոխրով ծածկուած է, և որչափ մտադիր լինի քեզ, որչափ իր շուրթն ընդ հուսկ բերէ, զարձեալ կենդանութեան նշոյլը չյայտներ . . . :

Քիչ մ'առաջ տեսայ սողուն որթ մ'որ մարմար պատէ մը վեր ելնելու կ'ձգտէր. իր ծիլերն ամէն կողմը կ'արձակէր, և ծերպ մը կը վնտռէր որպէս զի կապուի և մագլի. մերթ վեր մերթ վար նայելով, իւրովի ոլորելով, աւելի բարձր ելնելով, բայց՝ 'ի վերջէ, ոտնակոխ մը չգտնելով իրրև յուսահատ կ'խոնարհէր։ Բայց բնութիւնն անհամբոյր չէ. պատատուկ բաներ պատատուելու համար յօրինուած են։ Անձկալի ընձուղներն նոր ոյժ կ'ստանան արևուն և անձրևին, և հիւրասէր ծառի մը կողմը կ'հակին։ Անոր կոշտ այլ բարեսէր կեղևին հեշտիւ կ'փարին, և կ'ուռճանան՝ ընդ քարշ բերելով ուռը, այնպէս որ քիչ առնէն իր բողբոջներն ամենէն բարձր ոստէն պիտի թափէ մարմարէ պատին վրայ, որ իր նպաստը զլացեր էր, և կերպով մ'անոր պիտի ըսէ. Անդ՝ քու հպարտութեամբդ կեցի՛ր, պաղ ու սպիտակ պատ, մինք, ծառն և ես, ապրակից ենք, նա օգնականն ես օգնեալը, և այսպէս շուտ մը կապուելով՝ արևուն և խնդութեան մէջ կ'բերիրինք։

Այս նկարին տեսիլը յորդորեց զիս նոր ածուխ մը վնտռել որ գէթ թագուն փայլ մ'ունենայ։ Իրաւի, թերևս անոր վրայ սպիտակ մոխիր գտնուի, ինչպէս որ փափուկ զգացումներ մարդավարութեան դիմակով կամ երկիւղի քողով ծածկուած կ'գտնուին, բայց շունչդ բաւական է զայն փարատելու և վնտռուած տաքութիւնդ և շողդ երևան հանելու։

Առաջին հպումէն՝ զլանիկդ փափուկ ծայրերը կ'ամփոփին, մուխդ նուրբ գիծ մը կ'ելնէ — պահ մը վարանելով և մեղմիկ յապաղելով. բայց մէկ երկու անգամ սրտագին քաշելէն ետև՝ մուխը կ'սաստկանայ և զլանիկս աղոր մը կ'վառի։

Այս նոր մուխին և անուշահոտ տերևին համը շատ ախորժելի է. ծաղիկ կայ անոր մէջ և կ'փափաքիս որ միշտ տեսէ։ Առաջին սիրոյդ պէս է, թարմ, զուտ և զմայլելի։ Անոր պէս՝ հոգւոյդ բոլոր տենչը կ'ընու, և մուխին կապուտակ պօսկներն, վարդագեղ ամպերուն նման՝ որ կենացդ արշալոյսը կ'բոլորեն, քեզ կ'զատեն ընկերական պաղ մթնոլորտէն և շքեղ աշխարհ մը կ'ստեղծեն որ երևակայութիւնդ վերանայ և հրճուի։

Այժմ չեմ խօսիր այն տարաժամ և այրական կրից վրայ որ պարզ դատողութեան համեմատ կ'վառին, երբ սրտիդ բոլոր անուշ յուզ-

մունքը կ'խաղաղին և հասուն գորով մը կ'դառնան։ Այլ կ'ակնարկեմ այն մանկային եռանդն, որ ամէն հէք մահկանացուի կենաց կ'պատկանի, և որ զինքը կ'շփոթէ՝ նկատելով որ մարդկային գերագոյն ուրախութեան հասած է առանց ճաշակելու այն դառնութիւնն որմէ միայն ծագած են մարդկային վերհագոյն բերկրանքը։ Կ'ակնարկեմ այն ժամանակն երբ կաղնիի հարթ կեղևներուն վրայ սկզբնատառեր կ'փորագրէիր և արևը մարը մտնելու ատեն երկայն տառերներուն ներքև մոլորաքայլ կ'շրջէիր. և կարծէիր թէ Լուիզ անունն ամենէն սիրուն անունն է անհուն աշխարհիս մէջ, և ծաղիկներ կ'հաւաքէիր որ անոր դրան առջև նետես, և գիշերայն դուրս կ'ելնէիր ծածուկ որ անոր պատուհանին լոյսը դիտես, և Հելէն Մար կամ Շարլոտին վրայ վէպեր կ'կարդայիր որպէս զի հալումաշ զգացումներուդ համապատասխանող թարգման մը գտնես։

Այսպիսի պարագայի մէջ՝ դու լիովին հաւատալ ես որ բուռն և յիմարական սէր մ'ունիս, երկրի և երկնի առջև կ'սնդես որ կ'սիրես։ Կը փափաքիս տեսնել անձ մ'որ տարակուսի այդ մասին որպէս զի անոր բերնին չափը տաս։

Կ'մտածես որ սիրականդ խիստ վայելուչ և աշխոյժ սիրուն պզտիկ գէմք մ'ունի։ Կ'յիշես այն ժամանակն երբ մանկական խաղի մէջ՝ անոր շրթերէն համբոյր մը քաղեցիր, և այնպէս կ'երևի քեզ թէ նոյն համբոյրը դեռ ես կ'թռեցնի և քեզ բոլորովին կ'բորբոքէ։ Եւ դարձեալ՝ քեզի տարօրէն կ'թուի որ շուրթդ իրօք անոր շրթերուն դպեր է։ Կէս մը կ'հարցնես իւրովի թէ արդեօք նոյնը կրնայիր ընել և այժմ, և թէ ինչպէս պիտի համարձակէիր. և կ'զարմանաս որ վերսային նոյնն ընելու արիութիւնն ինչպէս պիտի ունենաս — և նորէն խորհելով՝ բոլորովին կ'համոզուիս որ պիտի համարձակիս և այս խորհրդով մատերդ իրարու կ'շփշփես։

Ի՜նչ փոքրիկ սիրուն գգակներ կ'հայտնի նէ, և երբ դպրոցին սրահը մտնելով գգակը կ'հանէ կ'կախէ, ինչ գանգուրներ . . . ոսկեթել գանգուրներ կ'տեսնես։ Ի՜նչպէս հեզերէնին վերի տողերը ժրութեամբ կը սերտես որպէս զի աչքդ ծածկոյթին ծայրը սահելով գանգրահեր օրիորդին տեսքով հրճուի՝ առանց վարժապետին ուշը դրաւելու։

Գրեթէ կ'փափաքիս որ մէկն օրիորդն առնու խոյս տայ, որպէս զի այն ատեն դու ալ ամէնի սև նժոյգի մը վրայ հեծնես, հրացանակդ պարպես, առևանդիչը զարնես և լալագին աղջիկը մարած շալակդ առած տունը բերես — և այն տեղ աղջկան հայրը ձեր երկուքին ձեռքն

իրենին մէջ առնելով՝ քանի մը ճարտասան գիտողութիւններ ընէ։ Այսպէս շատ մը առևանդներ մտքէդ կ'անցնին, և կ'խորհիս թէ քանի զմայլելի պիտի լինէր քեզի համար կեանքդ վտանգի մէջ դնելով ու կրակէ անցնիլ, թեզ կամ գլուխդ կամ ուրիշ ասոր նման անոտի բան մը կորցնել, քու սիրական Լուիզիդ համար։

Կ'երևակայես որ կենաց գերագոյն երանութիւնն է Լուիզին հետ սպրիլ հին գղեակ մը, շատ հեռու շրջակաւքէ և թղթատունէ, և վայրի կոնկենիներ անոր գիսակին համար քաղել, և անոր հետ ոտանաւորներ կարդալ մթագին բաղեղներու ստուերին ներքև։ Եւ հին գղեկին մէկ անկիւնն այնպէս չքնաղ զարդարան մը կ'պատրաստես, անոր մէջ սանդուղ մը դնելով, և ոսկեկազմ գրեան, որոց ծածկոյթին վրայ Կուպիտներ կան, և այնպէս կիսական մահիճ մը, կախուած վարագոյրներով — որպէս տեսած ես Արաբական պատկերազարդ վէպերու մէջ — զոյգ մը քանդակեալ տատրակներու վրայ։

Եւ երբ այդ խորհուրդդ ոմանց ծիծաղը շարժէ, չտեսնելու կ'զարնես թերևս ըսելով, «Միթէ այնպէս չէ՞» բայց ապա՝ քու սենեկիդ մէջ՝ կամ այն ծառին ներքև ուր անոր անունը փորագրեր էիր, երկին երբև վկայ կ'կոչես որ այնպէս է. և կ'մտածես որ աշխարհս հրչափ պաղ է, վասն զի այդ քու սուրբ այլայլութիւնդ անհոգս կ'դիտէ։ Բոլոր սրտովդ կանաչագոյն վարպանակ հագնող խոշոր տղայ մը կ'ատես, վասն զի անդադար կ'կշտամբէ քեզ և սիրականիդ մանանոններ կ'դնէ։ Բայց երբ հօրքոյր մ'որ պատաւ աղջիկ մ'է, իր անուշ և գգուելի կերպովը քեզ յանդիմանէ, ծանր կ'երևի քեզ անոր խօսքն, և այնպիսի զգացումով մը կ'պատասխանես որպէս թէ պատրաստ ես անոր սիրոյն համար աւելի մեծ նեղութիւններ տանիլ։ Եւ երբ քահանան ամուսնութեան ծանուցումներ կ'ընէ եկեղեցւոյն բեմէն, կ'մտածես թէ արդեօք ինչ անուշ պիտի հնչեն քու և անոր անունն երբ օր մը նոյն տեղէն կարդացուին, և ինչպէս ժողովուրդը քեզի պիտի նայի, ինչպէս աղջիկն անուշ պիտի կարմրի, և ինչպէս հէք Զարէհը, որ գիտես թէ Լուիզը կ'սիրէ, բայց յայտնելու կ'երկնչի, իր նստարանին վրայ պիտի գալարի։

— Վա՜յ, ըսի իւրովի, մինչդեռ կասկոյտ մուխը գլխիս բոլորը կը դառնար, սիրոյ այս առաջին կայծերը շատ ախորժելի են, իրաւ, բայց միշտ պիտի տեւեն արդեօք։

Ախորժ կ'զգաս լսելով Լուիզի զգեստին շրշիւնն՝ երբ սենեկին մէջ կ'շրջի։ Աւելի անուշ երաժշտութիւն մ'է այն քան տարևոր կանանց

տաւիղներն զոր ապագային մէջ պիտի նուագեն։ Բայց, փառք Աստուծոյ, այս բանը չգիտես։

Կ'մտածես որ կարող ես անոր ոտից հետքը գտնել երբ գպրոց կ'երթայ և ինչ սիրուն, փոքրիկ ոտքի հետք է այն։ Եւ այս նշանով միայն եթէ օրերով իսկ աչքդ հեռու մնայ այն էակը՝ բոլոր նկարը կրնաս երևակայել — իր առձիգ և գողարիկ կերպարանը, իր օդային քայլը, իր բծաւոր բեհեզը, թեթև և սահուն, իր մեստքսէ թաշկինակը, որու փորձիչ ծոպն իր ձիւնափայլ վզին վրայ կ'խաղայ — որչափ կը ցանկաս այդ ծոպին։ — Եւ իր թուշը դեղձի պէս կլոր է, և իր շրթունքը — ինչ շրթունք։ Եւ դու կ'հառաչես, և գլուխդ կ'ծռես, և կ'հիանաս թէ երբ պէտք վերստին տեսնես զինքը։

Կ'փափաքիս անոր նամակ մը գրել, բայց այն ատեն շատ մարդիկ պաղութեամբ պիտի խօսին անոր վրայ. ասկից ետտ բոլորովին ստոյգ չես որ Վարշաւայի Թադէոսին գրած տոմսակներու պէս պիտի գրել կարենաս, իսկ պաղ և անվայելուչ գիր մը գրկել չէր լիներ։ Այս ու այն աղջկան վրայ կ'խօսիս խիստ անտարբեր կերպով մը, թէև կ'ըսեն թէ աղուոր են, դու անոնց վրայ աղուորութիւն մը չես գտներ, ստոյգ է որ լաւ աղջիկներ են միայն, և կ'յուսաս որ օրին մէկը լաւ ամուսիններ պիտի գտնեն, բայց այս խնդիրը հետաքրքրութիւնդ չշարժեր բնաւ։ Անոնք քու վիսպային աշխարհդ չեն ապրիր, չեն անոնք այն երկնից հրեշտակներն զոր քու սիրտդ վարդագոյն կ'ներկէ, և որու նմանցուցի այս իմ թաւալուն մուխս կապուտակ կոհակները։

Դու ուրիշներու վրայ խօսելու ատենդ կատակներ կ'ընես, դու կը ժպտիս շնորհալի, մտածելու ատենդ, դու կարող ես ըսել՝ ծիծաղելով՝ թէ անոնց սաստիկ սէր ունիս, և այս ըսածդ երևելի կատակ մը համարիս, կարող ես անոնց ձեռքը սեղմել, կամ խաղալու ատեն պաչիկ մը գողնալ, անվրդով — բայց ինչ օգուտ, քեզի համար անվառ ածուխներ են։

Բայց սիրաւառն միշտ վառվռուն է սրտիդ մէջ։ Երբ անոր (սիրուհոյդ) անունը բերանդ առնուս՝ այնպէս կ'երևի քեզ որպէս թէ տարբեր նիւթէ շինուած է, անոր տառերը զատ զատ չես կարող բաժնել. — արդարև կրնաս գրել զայն, որովհետև վարժեր, շատ վարժեր ես գրելու թէ այլանդակ թղթի կտորներու և թէ աշխարհացոյց տետրակիդ և Բնական ֆիլոսոֆայութեան թուղթերուն վրայ։ Քաջդիտես թէ ինչ տեսք ունի. կարծես թէ աչացդ եալին տեղ մը դրոշմուած, և այնպիսի տեղ մը բռնած է տեսչական գործարանիդ

վրայ որ՝ թէև ներհակ կողմն իսկ նայիս՝ կ'տեսնես անոր նկարն, և այնպէս պայծառ որ կ'երկիչիս թէ աչացդ մէջ նայելով ուրիշ մարդիկ ևս զայն նշմարեն։

Այս պատճառաւ շատ աւելի փափուկ հնչում մ'ունի այս անունը քան գիտցածդդ շատերը։ Թէև զով և ախորժելի կ'բուրէ ըղձիդ վրայ, բայց շատ ջերմ և դժուարին կ'երևի երբ արտասանես շրթովդ։ Քու դասատուիդ ըսածին պէս անուն մը չէ այն, որչափ որ գաղափար մը կ'ընծայէ, ոչ անուն մը, այլ բայ մը — ներգործական բայ մը, և դարձեալ անկանոն բայ մ'որ կրաւորական ձայնէ զուրկ է։

Եթէ ըսեմ որ լուսնին լոյսը սաք է, վարժապետիդ դասերուն կերպով մը հակառակ բան մ'ըսած պիտի լինիմ, բայց երբ այն քնքուշ ձեռնը — շատ քնքուշ է — թևիդ յենու, սաստիկ տաք կայ մինչև անգամ դժոյն լուսնային մէջ, թող փիլիսոփաներն ինչ որ կամին ըսեն։ Նաև շառաւիղները համակիր զգացումներ կ'գրգռեն, խիստ ազդու զգացումներ — թէև յիշատակութիւն չկայ այս մասին տեսարանութեանդ մէջ, խօսքով բացատրելու մեծ դժուարութիւն լինելուն։ Եւ ասոնց ներգործութեան ներքև՝ նոյն փոքրիկ ձեռնը կ'բռնես, թէև 'ի սկզբան այնչափ երկար ատեն բռնելու չէիր իշխեր, իսկ սիրելոյդ պայքարն զայն քաշելու համար — եթէ իրօք պայքար կայ — առաջուանէ տկար է — մանաւանդ հոնձելի պայքար մ'է, ոչ այնքան բերդի դէմ, որչափ խնդութեան և համբոյրութեան մէջ։ Դու կ'արիանաս իբրև առիւծ մը, և փափուկ ձեռնը, իբրև գառնուկ մ'առիւծին ճանկին ներքև՝ անվնաս և շատ վատոյժ կ'երևի. և երբ կ'զգայ որ ազատում չունի, պիտի աղաչէ որ անուշ վարուիս. և կերպ մը շնորհապարտ սեղմումով պիտի ընդունի ջերմագին խոստումդ, և այս սեղմումը գիտակցութեան թեթև նշան մ'է։

Իմ գլանիկս հիանալի արագութեամբ կ'վառի, և անոր մուխէն փայլակի պէս շողուն և կայտառ նկարներ կ'արձակին — իր որոտումը միայն շնչերակի որոտն է։ Բայց արդեօք պիտի տեսէ։ Տամուկը պիտի մարէ գլանիկի մը կրակը, և բարէ, շատ, շատ գժոխային տարակուսութիւններ կան որ սրտի մը մանկային բոցը պիտի մարեն։

Սիրուն է նէ — և քանի անոր նայիս՝ աւելի սիրուն, և քանի անոր ձայնին մտադնես, աւելի սիրուն ականջիդ կ'գառնայ։ Բայց կ'զարմանաս թէ ո՞վ էր այն բարձրադիտակ պատանին որու հետ քանի մ'օր առաջ պտտելը տեսար։ Տգեղ պատանի մը չէր նա, ընդ հակառակն՝ կ'մտածես (ակառաներդ կրճատելով) որ չափէ դուրս գեղանի էր։ Երբ

անոր հանդիպիս կ'նայիս երեսն մանրամանին և կասկածոտ կերպով. կը դառնաս կ'նայիս թէ ինչպէս կ'քալէ, ուսերը կ'չափես, և կ'զննիս իր համեստ և աղնիւ քալուածքը դիտելով։ Եթէ միայն ստոյգ լինէիր որ յաղթական պիտի ելնես՝ այն պատանին կափարաթի կ'հրաւիրէիր։ Զորս կողմը կ'զննես որ հասկնաս թէ ո՞վ է այն այլանդակ պատանին և այս ընթացքիդ վրայ գրեթէ կ'կարմրիս։

Ծաղիկներ քաղելով փառաւոր փունջ մը կ'շինես, կանաչ ժապաւէնով և սիրոյ հանգոյցով մը կ'կապես և սիրականիդ կ'ուղարկես — և փոխարէն վարդի կոկոն մը կ'ընդունիս։ Նոյն օրը բարձրաղիտակ պատանւոյն քովէն խրոխտ դէմքով մը կանցնիս և կ'փափաքիս որ անոր դաս մը տաս։

Բայց շատ չանցնիր կ'տեսնես մեծահասակ պատանին որ դարձեալ անոր հետ կ'պարապի. և սիրուհիդ անոր քովընտի կ'նայի այնպէս զուարթ դէմքով որ դու զզուիկ կ'մնաս, կ'խոնարհիս և կ'կտրիս։ Աչքերդ բոց կ'արձակես տղուն դէմ, անսովոր վեստեամբ աղջկան բարև կ'տաս գլխարկիդ գպելով և կ'դիտես թէ արդեօք ակնարկդ անոր սրամտութիւն և անհանգստութիւն պատճառած չէ։

Սակայն ուրիշ օր մը կ'հանդիպիս աղջկան առանձին, և անոր տեսքը կերպարանիդ կենդանի փայլ մը կ'տայ, և դու քիչ մը ցաւագին կը խօսիս և երկիւղներդ ու նախանձդ կ'յայտնես. սիրուհիդ թէ փոքր ինչ տրտում թէ զուարթ կ'երևի, և կ'ցաւի որ քեզ վիշտ պատճառեց — և դու ևս տխուր ես։ Եւ այս կրկնակի սրամտութեամբ վերստին իրարու հետ կ'կապուիք — այդ կապն քան առաջինն ամուր է։ Իր մէկ մանր արտօսրն աւելի մեծ արժէք ունեցաւ աչքիդ քան թէ բիւր ժպիտներ։ Հիմակ դու խենթի պէս զանի կ'սիրես, պատրաստ ես երդնուլ, անոր առջև, բոլոր տիեզերաց առջև երդնուլ սէրդ հաստատելու համար։ Երեկոյին նոյնը կ'պտպես իսկ հին բարեկամի մ'առջև, բայց անոր անունն այնպէս գողահար և խնդագին կ'արտասանես, այնպէս ոստիւն մը կ'ընես խօսքիդ մէջ որ կարծես թէ սիրոյդ լեզուէդ առաջ կ'սրանայ, և շրթերդ կ'պատկառին որ հոգւոյ այս գաղտնիքն միայն լուելեայն կ'հաղորդես։ Այս վիճակիդ մէջ դու չես կարող վստահիլ սիրականիդ գովեստը կանգգալու, և եթէ յանդգնիս, յօդաւոր ձայնն մտքիդ հետ կ'թռի խօսքի ձև առնէն առաջ. և որչափ ճգնիս քան մ'արտայայտելու՝ դարձեալ խօսքդ դերադրական ածականներու կիսկատար շարք մ'է, որմէ կ'շիկնիս։ Բառեր գտնելու կ'տքնիս որպէս զի անոր դաղափարը հրաւառ դուրս թափես, բայց որչափ տապագին

լեզու գործածես՝ քու վառ երևակայութեանդ վրայ կ'ընկրկի իրբև պաղ տարափ մը։

Այսպիսի բուռն ջերմութիւն մը շատ ընդ փոյթ կ'սպառէ. և այն բանը զոր ամենէն շատ կ'սպառէ դատողութիւնն է։ Ուստի երբ մի անգամ դատողութիւնը գադրի նախանձը մուտ կ'գտնէ։ Ուրիշ անգամ այն մեծահասակ պատանին որ տեսնես կ'ստահակիս, կ'փրփրիս և այն մի արտօսրն՝ որ առաջին զայրոյթդ բուժեց, այժմ չպիտի բուժէ զայն։ Քիչ մը տենդոյին սիրտդ կ'պաղշի խօսելով և տուն կ'դառնաս խօսքիդ վրայ ողբալու։ Բայց նա սուդդ չպիտէ բնաւ, մինչդեռ ցասումդ անդադար կ'յիշէ։ Ամենայն արտասուքը գութութիւն կ'գրգռէ և երբ վերստին զայրանաս և գանգատիս՝ քու վարդագոյն շրթերով սիրուհիդ պիտի գտնես որ արժանապատուութեան դասեր կ'քարոզէ։

Այն ատեն կ'ըսես. պիտի հեռանամ երթամ — ողորմելի՛ յիմար, դու կ'ճարակիս հիւանդութեանդ ամենէն աւելի շատ ախորժելի եղած բանով։ Կ'մտածես որ թերևս կ'փափաքի վերադարձդ տեսնելու, թէ անունդ իր խորհրդոյ առարկան է, թէ իր անուշ աչերն վշտալի արտասուք կ'թափեն։

— Եւ այսպէս խորհելով՝ տրտում և յուսալից սիրուհւոյդ հօրը տան կողմը կ'դիմես. մի անգամ — երկու անգամ դռնէն կ'անցնիս, հին ծառի մը շուքին ներքև կ'դեգերիս, ուր երբեմն անոր հրաժարական բարևդ տուեր էիր, քու վաղեմի սէրդ գոռոզութեանդ հետ կը պայքարի, և գրեթէ յաղթական կ'կանգնի, բայց ճիշտ յաղթութեան ժամուն, հեռուն կ'նշմարես քու ատելի ոսոխդ, և ասոր մօտ քու նենգալի Լուիզդ ուրախ և գոհունակ։

Ինչպէս շատով կ'պարարկես ներքին պայքարիդ նշանները և մանկութեան ժպիրհ կերպարան մը կ'դասես, և որչափ ճարպիկութեամբ կ'գործածես այն սուր գանակդ երբ մայրի կեղևին վրայ սիրականիդ անուան հետքը կ'ջնջես։ Այլ սակայն գիշերը դարձեալ բարկութիւնդ կ'մեղմես, մի քանի արտօսր կ'թափես, և միւս օրն՝ երբ անոր անունը կրող ամէն թղթի կտորները կ'պատռես՝ ձեռքդ թեթև մը կ'սարսռի։ Բայց քու զուարթերես և աշխոյժ ոսոխդ տեսնելուդ՝ դարձեալ հպարտութեան դիմակը կ'դնես։ Կարելի է աղջկան հանդիպիս, սակայն բան մը չես խօսիր անոր ներքին մարտիդ վրայ — օհ, և ոչ բառ մը — այլ հիանալի շատութեամբ քու խաղերուդ կամ ուրիշ անտարբեր իրերու վրայ կ'ճառես, և երբէք, երբէք չես թողուր անոր որ քու մանկային սրտիդ մէջ ակնարկ մը նետէ։

Շաբաթ մը չես տեսներ զինքը — ամիս կ'անցնի — երկու ամիս — երեք ամիս։

— Բուֆ — բուֆ կ'փչեմ նորէն. միայն նողկալի մուխ մը կ'ելնէ, և ասա — իմ դլանիկս բոլորովին կ'մարի։ Պէտք է որ վերստին վառեմ։

Բ

ԹՂԹԱՑ ՓՆՋՈՎ ՄԸ

Կան մարդիկ որ երբ մի անդամ դլանիկ մը մարի կ'նետեն զայն, և 'ի հարկէ դլանիկներու առատ պաշար մը պիտի ունենան։ Բայց չլսած եմ երբէք որ մարդ մը սրտերու տուփ մը պահած լինի՝ Հավանայի դրոշմով։ Բաբէ, հատ մը կայ միայն վառելի։

Բայց մի անդամ սիրտ մը վառելէն ետև՝ կարող է վերստին վառիլ։ Այս մասին ձեռնհաս հեղինակութիւն մը կշիռ ունի, բաւական է որ անկողմնապահ հեղինակութիւն մը լինի։ Թէև կ'յուսամ, բայց կը դժկամակիմ իբրև իրական փաստ մէջ բերել՝ յայրատ պառաւ որբևարիի մ'օրինակն որ իր սուդը թոթափեր էր իր ամուսնոյն գերեզմանին վրայ դեռ ևս դաշարի չբուսած, նոյնպէս՝ իբրև ներհակ վկայութիւն՝ չպիտի յիշեմ նորաբոյս անուշաղջիկան մ'երդումն որ իր սրտին դոյութեան գիտակից եղաւ միայն անոր կորստեամբը։

Կ'երևի ինձ որ շատ բան կրակին տեսակէն կախում ունի, և կարող եմ այնպէս զուտ, հաստուն, անսպառ սէր մ'ըմբռնել որ եթէ մի անդամ մահուան սառն ձանկին կամ բաղդին անողորմ հարուածին ներքև մարի, երբէք նորէն չպիտի վառի — վասն զի վառելու նիւթ չպիտի մնայ։ Եւ կարող եմ նաև երևակայել այնպէս անկեղծ և ճշմարիտ հուր մ'որ, թողնենդութիւնն ամէն ճնշումներէ, թողդիւային հնարագիտութիւն մ'ամէն հնարք նիւթէ, դարձեալ չպիտի զօրէ գտնել ուրիշ մը, բարձր կամ ստորին, հեռու կամ մօտիկ, որ առաջնոյն հետ այնպէս համապատկեր մը ձևացնէ որ զանի սառոյցի պէս պաղ ցոյց տայ։

Տէվլիսրօրդի մէկ թատերդութեան մէջ կ'լիշեմ՝ այն դիւցազնն որ իր սիրուհւոյն վրայ կասկածներու կ'ենթայ. անոր վրայ լսած բամբասանքէն հեռանալու կ'ստիպուի, թէև զանի սիրած է և դեռ ևս խանդագին կ'սիրէ։ Օրիորդն անոր հրաժեշտ կ'տայ, աչքէն յորդ կայլակներ թափելով (և ես դլանիկս վար կ'դնեմ՝ որ այդ հրաժարական բարեւը մեծաձայն կարդամ, նոյն պահուն այնպէս երևակայելով անսպատկառ թէ Ապոդէմիա նոյնն ինձ կ'կրկնէ)։ —

Գնա՛ բարեաւ, Լօրէնցօ,
Զոր իմ սիրտ շատ սիրէ. Եէ երբէք կարդուիս դու,
Սրանի՛ Եէ գտնես մի կին այնքան լաւ որ
Ձերկրայիս անոր վրայ, ու նա ևս քու կասկած
Ընշարժէ բնաւին։ Եոկ երբ լսես ընդ հուպ
Որ ես սեւ հողն եմ մտած, իմ յետին խօսք փնտռէ,
Ու պիտի իմանաս որ ցվերջ սիրեցի քեզ։
Ու երբ դու ման գաս, ու այդ երկրորդ սրտով
Դաշտերու մէջ զուարճ ու պատենիս խօսիս վրաս,
Արևակայէ զիս տեսնել ներհար, զոնատ,
Սփռելով ծաղիկներ շաղիդ վրայ։

Հէք Ապոդէմիա։ Անկարող եղաւ Լօրէնցօն իրեն նման մէկը գտնել — ներելի չէր նմանը գտնել այնպիսի Լօրէնցօի համար։

Վերստին վառելու համար կարևոր է որ հին կրակն 'ի սպառ մարած լինի. և միթէ Ճշմարիտ կրակով վառ հոգի մը կրնայ պաղիլ, պաղիլ, բայց միայն գերեզմանին մէջ։ Ամէն բանահիւսները կ'ըսեն, Ոչ։ Օրէ՛լը՝ եթէ հազար տարի անդամ ապրէր, վերստին չպիտի սիրեր, նոյնպէս Տէզդէմոնա, նոյնպէս Անդրոմաք, նոյնպէս Մէաէա, նոյնպէս Ոդիսես, նոյնպէս Համլէդ։ Բայց դլանիկս ախորժելի միին պսակնեիուն մէջէն տեսնենք մի անդամ թէ՝ բան հիւսողներուն ըսածն որ աստիճան ճշմարիտ է։

Ի՞նչէ սէրը, մտածեցի 'ի սկզբան, բայց եթէ երևակայութիւն մը։ Սիրուն առարկայ մը կայ որու կ'սևեռի հոգիդ, ինչպէս աչքդ ախորժելի ծաղկի մը, կամ ականջդ դաշնաւոր ձայնի։ Փոքր ինչ ևս հիացումը քեզ կ'գրաւէ, իբրև անուաւոր կշիռ երևակայութեանդ արտակեղրոն յեղաշրջումներուն, և հիացումդ ալ յարդական զգացումով մը կ'զգածուի։ Կ'ըսեն թէ շատ յարդանք երևակայութեան թմբիր կ'տայ և սրտի զգայական ներդործութիւնը կ'յապաղէ, սակայն եթէ դոյնն

ինչ անկից պաշար մնայ՝ Ներքեւանգութիւն կ'հրաւիրէ, և ապա այս յատկութիւններն ու յօժարութիւնները կ'խմբին և Սէր ըստ ած կենսական զգայումը կ'գառնան։

Այնպէս կ'երևի թէ սիրոյդ քու էութեանդ մէկ ուրիշ լաւագոյն մասին անցաւ. քեզնէ մնացածն ուրիշ բան չերևիր բայց եթէ գողցուած նուշի մը լոկ փեճեկը։ Այլայլութիւնդ չէ որ քեզ ուրիշ հոգւոյ մը կողմը կ'մղէ, այնպէս որ կարող լինիս ըստ հաճոյս կարձել կամ երկարել, այլ կիրը մ'է որ քոյդ է միայն վասն զի անոր է, որչափ երկար մնայ անդ, այնքան սուր կ'զգաս որ այն քոյդ է։

Երաւի այս կրից ճարակ տուող հանգամանքը թերևս քեզի պատկանին, բայց յառաջուց այսպիսի կրից ծնունդ տուած չէին երբէք, պարզապէս անոր համար որ ծնելու առիթ չկար։ Նախատես է բնութիւնն այս տեսակ բաներու մէջ։ Թութունը գուրս չցատկիր մինչև որ շերամն օգնական թև մը չստանայ. խեցին չխորտակիր մինչև որ թռչունը շունչ չառնու, և ոչ ծիծեռնիկն իր ոստերն կ'հեռանայ մինչև որ թևերուն վրայ օդային թիակները չելնեն։

Սիրոյ այս գիրքն զօրաւոր է, որչափ որ զօրաւոր լինի այն մթնոլորտն որու մէջ կենտատու հուր կ'դանէ։ Եթէ մի անգամ այդ օդը պաղի սէրը մոխիր կ'դառնայ. քոյդ չէ այն, վասն զի չարմեր որ այդպէս սիրես. կենտատու չէ այն սէրն, վասն զի կորոյս հողն որու մէջ կ'ծլէր։ Սակայն ծանր յանդիմանութիւն մ'ըրած չեմ լինիր եթէ ըսեմ որ այդ սիրոյդ ծնունդ տուող սրտի յատկութիւններն սպառած լինելով, չպիտի ծաղկին նորէն բոլոր կենտայդ մէջ։

Քու սարբնայէդ հեռացուր ցեցակեր մոյթն, և աննեցուկ բաղեղիդ երկրահակ ոստերն 'ի սկզբան չպիտի սպասասին որ և էցանկի մը. կարելի չէ միամեայ սովորութիւն մը մէկ օրուան մէջ փոխել։ Բայց եթէ նոր նեցուկն ամուր մնայ, այն ատեն կարօտակէդ ծիլերն իսկոյն օտարականին պիտի փարին և տունկդ իր նախորդ շքեղ տեսքը պիտի ստանայ, թերևս իր խոնարհ զէմքով Անգելոյն մէկ յիշատակը դդուէ, բայց իր ճշմարիտ և արդիւնաբեր կենաց մէջ Ներկային անուշ հպատակութեան մնաղիր պիտի երևի։

Թող ինչ որ կամին ըսեն քերթողները. մեր սրտի յօժարութիւններն կոյր չեն, ապուշ արարածներ չեն որ բևեռային սառնամանեաց ներքև սովամահ կորնչին, քանի որ երկնից անուշարոյր քամիներն ջերմութեան և արեգական առաջնորդող սահմանեալ ուղեցոյցներ են։

— Եւ փոքր ինչ շտապելով թղթի կտոր մը կ'պատռեմ, և կանթեղիս լուսին բռնելով դարձեալ գլանիկս կ'վառեմ։ Անչափ հեշտ չվառիր, թերևս 'ի սկզբան — պէտք է տաքնայ որ բռնէ, բայց շատ չանցիր կ'բռնի կ'բորբոքի այնպէս որ սենեկիս չորս անկիւնն նշոյլներ կ'արձակէ։

— Ճիշտ այդպէս է, մտածեցի, երիտասարդութեան սէրն, որ մանկութեան շնաչուկ շողին կ'յաջորդէ, տեսլի ընդարձակ բոց մը կ'հանէ, թէև նոյնչափ շուտ չքնիր։ Գողտրիկ ոսն մը, կամ գանգուր գիսակ մը, կամ անոյշ կապոյտ ակն մը բաւական չեն. բայց նէ որ այս նոր կրակը հրահրից բոլոր այս բաներէն զատ՝ հոգւոյ անուշութիւն մ'ունի որ կ'գրաւէ քեզ քանի նէրա գէմքն ու շարժումը գիտես։ Իր հնարհնարն անուշ և գրեթէ անզգալի կերպով քեզ կ'հրապուրեն։ Կ'խորհիս որ ախորժելի ընկերուհի մ'է — ոչ այլ ինչ, և օրէ օր այս կարծեցդ մէջ ամրապէս կ'հաստատուիս — այնպէս լաւ կ'հաստատուիս, արդարև, որ կ'սկսիս զարմանալ թէ ինչ պատճառաւ նէ այնպէս զմայլելի ընկերուհի մ'է։ Այդ պատճառը չկրնար նորա աչքը լինիլ, վասն զի գրեթէ Նէլլիին աչերուն չափ սիրուն աչեր տեսած ես, չկրնար բերանը լինիլ, թէև Նէլլիին բերանն իրօք շատ անուշ է։ Եւ կ'սկսիս շարունակ քննել թէ ինչ շարժառիթ ունի նէրա քովը գտնուելու կամ նէրա ձայնը մտիկ ընելու փափաքդ։ Այս քննութիւնն հաճելի է։ Ձեզ կարող քան զայս հաճելի, կամ մտային նուազ ծանրութեամբ կատարելի քննութիւն մ'երևակայել։

Յանկարծ՝ ապրոր օր մը, երբ օդն հոտաւետ է, և Նէլլիի ձայնին և ձևերուն յիշատակն տեսլի ես հոտաւետ է, կ'զարմանաս թէ արդեօք սէր ունիս։ Երբ մարդ այսպիսի զարմանք մ'ունի, կամ այն է որ սիրոյ շատ մօտ է, կամ շատ հեռու անտի. զարմանք մ'է որ կամ իր ակնկալութենէ կ'ներշնչուի, կամ զգայման շփոթութենէ որ իր բոլոր խմացողութիւնը կ'բթացընէ։

Բայց եթէ սէր ես զգար, զէթ հզօր երևակայութիւն մ'ունիս — այնքան հզօր որ դու անհոգս կ'ըսես բարեկամներուդ թէ նէ սիրուն աղջիկ մ'է, մինչև անգամ, գեղանի աղջիկ մ'է։ Սակայն քիչ քիչ կը տաքնաս, և քու ընկերասիրութիւնդ և զարմանքդ հաստատուն, անդորը և անվրիպելի սիրոյ սովորութիւն մը կ'դառնայ. բուռն, արագ և մոլեգին չէ այն, առաջնոյն պէս, այլ հաստուն և հանգարտ։ Որպէս թէ այս սէրը հոգւոյդ հետ ծնած լինէր, և անոր ճանաչումն հինգիշատակ մը քան թէ նոր կիրք մը լինէր։ Գիշերային երգերով կամ անտառները շրջելով իր եռանդը սիրելու չես աշխատիր. ներքին, ան-

դորը խնդութիւն մը կ՚վայելէս, որ ապագայ սարվնեբու վրայ յուսալից կ՚ծփայ, անոնց փայլուն տեսք մը տալով։

Տեսակ մ՚իր, սպեղանի մ՚է այս սէրն այն ամէն բաներուն համար որ մրրկալի էին և աղէտաբեր. էութեանդ մնայուն ժպիտ մը կ՚ընծայէ։ Կենացդ ծովը շմբրկեր բուռն այլայլութեամբ, որպէս թէ հովն ուժգին փչէր, այլ կարծես թէ Ամբրոսիոս մը ծովուն երեսը պատռելով ծփանք կ՚հանէ, որ անուշ և մեղմ ձայնով կ՚տարածուին և կ՚ընդլայնին հեռուն մինչև ժամանակի եզերքը։

Հիմակ հարկ չկայ՝ ինչպէս մանկութեանդ տարին, զգայմունքդ այլանդակ ուխտերով ամրապնդել. եթէ այս բանս փարձես իսկ անոր առջև, բառ չես գտներ այդ ուխտդ բացատրելու։ Ամէն ինչ բերանդ կ՚բանաս որ երդնուս, բառերը կ՚խորշին և երդումդ շրթերուդ վրայ կ՚թոթռի կամ միտքդ կ՚բացատրես մտերու սեղմումով մը։ Ծանօթներուդ հետ անհանդարտ, ծաղրելի դէմք մը կ՚դառնս և նենգամէջ նայուածքով մը կ՚ակնարկես թէ կարելի է վիճակդ փոխես։ Երեկոյին՝ երբ Ղեէլլիդ հեռու է, ամենէն անշահ ծաղիկներ կ՚ինամես, և յանկարծական զութ մը կ՚զգաս փղոցի մուրացկաններու համար որ իրենց գունատ զաւակներով կ՚թափառին։ Ակամայ գեղը կ՚երթաս սրտոյտ ընելու, և կ՚զարմանաս թէ ինչպէս իրարու կ՚յաջորդեն պայծառ օրեր առանց տխուր բնաւորութեանդ վրայ բնաւ մնայլ մը չթողելով։ Պանդոկիդ մէջ նոյն իսկ սպասուհիներն երբէք այնչափ լաւ իրենց պարտաւորութիւնը կատարած չէին, իսկ քու Թոմ ծառադ կատարուն ընկեր մը դարձած է քեզի համար։

Գլանիկս պատուական կ՚վառի. բայց մի անդամ մարեցաւ, կարելի է վերստին մարի։

Ա՚սկսս ամուսնութեան վրայ խօսիլ. բայց կամակոր հայր մը կամ խնամակալ հօրեղբայր մը կ՚մոռանայ որ անհնարին բան է, թէ շատ կտնուխ է, կամ թէ Ղեէլլին պարզ աղջիկ մ՚է։ Կամ քու մէկ քանի վայրենի աղգականներդ — զոր լիովին մոռցեր էիր — մօր մը դերը խաղալու կ՚եկնեն և քու ճակտիդ վրայ մնայլ մը կ՚բերեն։ Կամ պատուական կինն ուրիշ տեսակ փառասիրութիւն մ՚ունի, թէև դու իրրև պարզ, պարկեշտ, ժիր ամուրի մը, չես կարող անոր համամիտ գտնուիլ — վասն զի միջակ կերպարան մ՚ունիս, աշխարհային հորաձևութեան անվարժ ես, և չես կամիր պատաս և փառասէր կնկան թեւին ներքև յաւիտեան շարժիլ։

Ա՚յս բաներն անշուշտ վշտալի պիտի գան այն երիտասարդին որ

քանի շարամիտ կամ ամիս երազային աշխարհ մը կ՚ապրի, որ գրականն խնդիրներ և փաստաբանական հաշիներ չկայրն, այլ առատահոս զգացումներու զմայլելի աղբիւր մը։ Ինչպէսք ունիս կացութեան մը, եթէ ոչ սիրականիդ մօտ կացութեան մը, ինչ հարստութիւն ունելի գին ունի աչքիդ, եթէ ոչ սրտի հարստութիւն մ՚որ երբէք չտուգիր, ինչ համբաւ ունելի կ՚գնահատես, եթէ ոչ ճշմարտութեան և պատուոյ համբաւը։ Ո՚րչափ ծանր պիտի երեի քեզ այդ ախորժելի տեսիլներու մօտ դժնեայ ձեր խնամակալ մ՚որ թնը թեւդ անցընելով կ՚ըսէ քեզի թէ երչափ հոգ կ՚տանի իր մօտքեռ աղջիկն երջանկութեան, և քեզի հետ կ՚բանավարէ գոյն հասցիդ և անձուկ գործերուդ վրայ, և կը յորդորէ քեզ — վասն զի սրտագին հոգ կ՚տանի շահերուդ — որ չշարունակես սէրդ։

Ո՚հ բարեսիրտ ծեր ժլատը։

Թոմ սպասաւորդ յանկարծ տխմար տղայ մը կ՚դառնայ և թռումած ծաղիկներու համար ունեցած զութդ կ՚մոռի։ Թերևս՝ բարկութեանդ առեն՝ կասկած մը կ՚ծագի միտքդ թէ նէ ևս կ՚փափաքի որ ունելի բարձր, ունելի նշանաւոր, ունելի հարուստ գիրք մը, կամ՝ ներկայ վիճակէդ տարբեր վիճակ մ՚ունենայիր — խիստ վատնդաւոր կասկած. վասն զի ոչ՝ եթէ հոգւոյ ազնուութիւն մ՚ունի, չէ կարող իր սիրան ուրիշին կամահաճութեան տարուն ընել։

Բայց ուշ, չես հաճիր, չես կարող այդպիսի կասկած մը տածել Ղեէլլի վրայ։ Իր դէմքը շատ անուշ և ջնորհալի է. և իր կերպերն, երբ ձեռքդ կ՚բռնէ սրտիդ արտմութիւնը գիտելով, և իր չքնաղ կապոյտ աչունքն՝ որ երկոյն ու տամուկ արեւանտնքէն քան զառաջին սքօղեալ կ՚երևին, մեկուսի կ՚գարձընէ, և իր փոքրիկ մատներուն փափուկ և խնամտալի սեղմումն և իր դաշն ու կէս հառաչն, և իր կուրծքին ելևէջն սիրոյ և պարտաւորութեան պայքարի ժամանակ, ամէն, ամէն ինչ կ՚փարատեն այդ կասկածը։ Կրնաս երդնուլ որ Ղեէլլի՝ գորովալիր է և ներողամիտ, իբրև սիրասուն ապրած մը, քու ձախորդ վիճակիդ և երբէք քու զբաղոր սէրդ և պարկեշտ սիրոյդ չափի փոխէ երկրիս ամենէն մեծ վնասներուն հետ։

Ինչ խեթան է անկեղծ սրտի տէր կնկան մը վատահ սէրն՝ աշխատութեան։ Իրյեանն սիրալիր ակնարկը, յուսալիր և քաջալերական, ունելի մեծ զօրութիւն ունի իր մէջ հոգիդ մեծ մեծ գործերու մղելու. քան թէ խնամակալիդ բոլոր խրատներն ու յանդիմանութիւնները։ Սիրաղ՝ որ կ՚բախէ յուսալի, ըղձալի վրայ կ՚ներգործէ ուժգին և անհնարին փոփոխներ կ՚երևնես մեծութիւն շահելու։

Ծառը, տաժանելի աշխատութիւնը մեզի կրնայ անուն մը տալ, և երբեմն օրեր և ամիսներ և տարիներ պէտք են այդ պղպջակի համբաւը շահելու համար, բայց երբ մի անգամ ձեռք ձգես, քու բուսն ճանկիդ ներքև հարիւրաւոր կտոր կ'լլնի այդ պղպջակին որ վերջապէս դլխիդ վերևը կ'տատանին։

Ժամանակ առ ժամանակ գաղանի տեսակցութիւն մը, և մեկ երկու սիրոյին տամնակներ սրտիդ մէջ բոցը վառ կ'պահեն։ Բայց յանկարծ սրտին ծերուկ խնամակալդ — որ այնքան հոգածու է քու և նէրա շահուց — մինչև անգամ այս անկանոն և անբաւական դրակցութիւնը կ'տրտիլէ։ Հետևապէս նէրա կերպարանին շեղակի ակնարկներ նետելով կ'տա՛ս թա, կերպարան մ'որ առաջնանէ տալի պտղծառ և շնորհալի է, և կ'ցաւես որ այն շնորհագեղ գէմքը՝ զոր տաեն տաեն կը տեսնես, գեռ ևս գեղանի է։ Մելամաղձիկ սրտիդ հետ կ'մտքաս թա, զուարթ կ'ցրնես ինքզինքդ նէրա, և շատ զուարթ՝ ծերունի ժլատին տաջև, որ հոգիդ քաղեց։ Զվայլեր որ տակաւ թիւնդ մարդու մը յայտնես։

Ի վերջէ՝ սիրուն տատաս մը՝ լուր կ'գայ քեզ թէ նէ մեկներ է. այնքան հեռու որ չես կարող տեսնել, այնքան ծանր հսկողութեան ներքև որ չես կարող նէրա մօտենալ։ Զահ մը վար կ'նետես դրանդ, և աշխատանքդ կ'թողուս յուսահատ — գառն գառն մտմտալի մէջ ընկնելով և անհնարին որոշումներ ընելով։

Իմ գլանիկս դեռ կ'վառի. բայց պէտք է շարունակ և ուժգին քաշել որ վառ մնայ։

Սիրոյին տենդդ քիչ մը կ'տաքնալ մի քանի դիրքեր ըստ դիպուածի ուղղելով, մինչև որ սովորութեամբ այդ պատահական դիրքերն տալի քիչ ջերմութիւն կ'պահեն քան թէ ուսումդ կամ գործերդ։ Ժառք Աստուծոյ, վիշտն ու բախտութեան սէս յառաջադիմ կամ զօրաւոր չէ։ Առեն մը հաճոյք կ'զգաս այն տրամութեան մէջ որով հատուկտոր յոյսերդ կ'տիշես և ինքնասիրութեամբ նէրա յոյսերն ևս տեբակ սրտիդ կը կապես. բայց տարակայութիւնն ու տպիտութիւնն տատապանքդ կ'մեղմեն։ Նէ լլեին նկարը կ'տիշես որ ուրիշ հեռատոր տեսարաններ զարդարես։ Կ'նայիս որ տրատաստուրի ժպտին կայտառ խղութիւն մը կ'յաջորդէ. և քու մտմտուքդ որ այնչափ տաեն նէրա սիրուն գէմքը սրտեղեց, զուարթութեան տրեւուն ներքև կ'թոռմի. կամ շատ շատ այդ մտմտուքդ կարծես թէ այն սպիտակ ճակատը կ'գդուէ շարժուն տատերի մը պէս զոր թափառիկ ամպ մ'տրեւային դաշտի մը վրայ կ'տրձակէ։

Իսկ քեզի համար, աշխարհ՝ իր մրրկալից հովերով կ'փաբատէ այն անուշ և հեռատոր ձայներն որ քեզի կ'հանին սիրոյդ հին և հեղձուկ խողովակներէն։ Կեանքը ծանր պարտիք կ'գնէ քու վրադ և չէ թէ մշատան ցաւեր։ Այսպէս ամիսներ և տարիներ ուշիկ կ'տահին, սովորութեամբ քու տամբի վիճակդ տալի հեշտ և թեթև կ'գառնայ. գու բաւական ողբայիր և այժմ ուրիշներուն ողբ ու կոծին վրայ կը ժպտիս, բաւական վայելեցիր և այժմ չես հառաչեր ուրիշներուն դղրդն ինչ բերիրալ ժամերուն վրայ։ Ամէն տատերներու հետ զմայլելի ծիրանեղդն և ոսկի երանդներ կենաց վրայ կ'երևին։ Քու սիրադ՝ թէև մնջորով ծածկուած՝ զարձեալ կրնայ առկայծիլ կիսոն մը քայլին շշուկը լսելով. և դէմքդ գեռ ևս կրնայ պարզիլ զարթուն ժպիտներով որ գրեթէ յոյսեր են — խոյտաին օրիորդի մը ներկայութեան։

Բայց զարձեալ՝ գլխուդ վերևն տաեն տաեն գիշերային յափշտակութիւն մը պիտի ծփայ, որով վերջապէս պիտի լսես կարօտագին ափանջով՝ անցած զացած օրերու հմայական ներդաշնակութիւնը. և տարտուր մ'զգալով պիտի սթափիս և քու մենաւոր, առնացի կենաց պաղ խորհրդոյդ մէջ պիտի գլորիս։ Բայց այդ տարտուրը կ'անցնի այնպէս շուտ ինչպէս գիշերն առաւօտն։ Արտասուալի վիշտեր և կծու յիշատակներ քու հրակէզ, եռանդուն և փառասէր առնութեանդ ասպարը խորտակելու անոր սլաքներ են։ Անոնք իրրև վեհերոտ, ապիտակատեաց ճանճեր դուրս կ'սպրդին, տակայն երբ արշալուսոյ առաջին նշոյլներն երևին՝ կ'զալարին և հոգուդ մեկ անկիւնն անշարժ կ'մնան։

Եւ երբ՝ շատ տարիներէ ետք՝ կ'իմանաս որ սիրուհիդ կարդուեր կին եղեր է՝ սիրոյդ եռանդուն այլ անշշուկ թունդ կ'երևի։ Կեանքն ու ժամանակը քեզ մաշեր են իրրև վաստակաբեկ որսական բարակ մը։ Աշխարհ քեզ վարժ ըրեր է հեշտ և անիմաստ ժպիտներու։ Անձդ կ'ամբաստանես կիսովին իրրև ապաշնորհ և մտացիոտ, բայց այդ ամբաստանութիւնը քեզ չնեղեր. և ոչ իսկ ուշդ կ'դարձնէ առաւօտեան լրագրէդ։ Ձեզ կարող ճշմարիտ սրտմտութիւն մը գրգռել սրտիդ մէջ ծերունի պարոնին — նէրա խնամակալին դէմ։

Կ'հառաչես, «Հէք տարտած» և շքեղ բաճկոն մը հագնելով կ'համարձակիս տաւաստուն նէրա այցելութիւն մ'ընել։

Նէ քեզ սիրով կ'դիմաւորէ — վայելուչ, հին տիկին մը, պարզ կտաւէ շղջազգեստ մը հագած, սանտրի մը բարձր գագաթին վրայ գանդուրները հաւաքած է. և նէ քեզի կ'ներկայացնէ երիտասարդ տղաք կարմրուն հիւսիսէն վերադարձած հագած։ Եւ դու սիրոյդ հետ

կ'Ճաշես — ընտանեկան հայկերոյթ մ'է, և կախարդ գիմաք ձեր մարդը քեզ կ'բարեւէ ձեռքդ յօժարակամ սեղմելով, կ'ակնարկէ որ դու իր քրոջն աղջկան ամենէն հին բարեկամն էիր և կ'ցուցայ որ ողջ առողջ ես։

— Բոլորովին ողջ առողջ, արդարև։

Եւ ուրախ կ'սկսին խաղալ երբ միրգը սեղանը կ'բերուն. Տիք քու գնակէդ սալոր մ'առնելու կ'ջանայ, Թոմ չձգեր որ իր վարդագոյն գէմքէն հայրը պաշիկ մ'առնու։ Մէկ խօսքով կարծես թէ բոլորովին առնդ ես. ժամ մը գլխի խմելով կ'անցընես, կ'ծիծաղես մարդավարը մօրեղբօր և քու երկրորդ սիրոյդ խիստ քաղաքավար ամուսնոյն հետ։

Ամէն բան ուրախ զուարթ է սեղանին վրայ. վասն զի լաւ գինին ինչպէս կարծեմ, ամուրիի մը սրտին ոյժ առողջ ընկելի մ'է։ Բայց ապա, երբ գիշերը մեղմիկ կ'հասնի, և կրակարանիդ բոցը կ'բեկբեկի քու մենաւոր սենեկիդ մէջ, խորին հառաչ մը կ'արձակես։ Եւ մինչև միտդ նենգամիտ Լուիզին կ'գառնայ, և առամրի Նէլլին կ'յիշէ, կ'ողբաս այդ քու համր ու ողորմելի սրտիդ վրայ որ մելեղին կ'փափաքի ազատ և խնդագին դուրս թափիլ։ Եւ երբոր կ'ծռիս ձակատդ ձեռքիդ յենած և աչքդ կ'ձգես թաղեայ խշտեկին վրայ քնացող շան, արցունքդ կ'սկսին հոսիլ և կ'ցաւիս որ տարիներ առաջ չես կարդուած որպէս զի այժմ զոյգ մը շաղակրատ աղաք ունենայիր որք ամոյի սենեկիդ առանձնութիւնը վանէին։

— Գլանիկն չծխեր, բոլորովին մարեր է։ Բայց ձշմարիտ ամուրիի մը յամառութեամբ ուխտ ըրի որ վերսին վառեմ։

Գ.

ԼՈՒՑԿԵՐՈՒ ՄԷՋ ՎԱԳՈՒԱԾ

Կ'ասեմ լուցկի մը (match — նոյնպէս ամուսնութիւն)։ Ստոյգ եմ որ ցնմրայն լուցկիներն երբէք չեն շփուած երկինքը, և ցաւալի է մտածել որ՝ քանի մը բոցաւորութեամբ, բոլոր լուցկիներն իրենց պաշտօնը ծծումբ ունին։

Բայց մոմն հատաւ, և վառարանիս կրակը մարած լինելով բոլորովին՝ միայն լուցկի մը կայ գլանիկս վառելու համար։

Ամէն լուցկիներն առաջին շփումով չեն բռնիր. կան նաև այնպիսիներ՝ որ շարունակ շփուելով իսկ կայծ մը չեն հաներ։ Իրաւի՝ փոսփորեան գիսաւոր շաղիկներ կ'թողուն, բայց որչափ անհնար է անով գլանիկդ վառել, նոյնպէս չես կարդացիրդ բորբոքելանծանօթ կնոջին երամէ մը զոր գիւղին, շաղակրատ, պատուխնամիներ քու ձամբուդ վրայ կ'գնեն։

Քսան եօթն տարու եղած ամուրի մ'իսկոյն ընդունի պատքներ, բարեմիտ կանամրի բարեկամներ անոր մօտ կ'յաճախեն անդադար՝ որպէս զի խնամութիւն ընեն և անոր առջև սքանչելի օրիորդներ շարեն։ Ա՛ր պատանին երկար գիրեր չէ ստացած իր մէկ պարզամիտ մօրեղբօրը կողմէ խիստ ընտրելի ամուսնութեան մը վրայ, բարձր և տոհմիկ աղջկան մը մասին։

Արդարև՝ ինչ զմայլելի բան է հաւատաշատ ամուրիի մը համար՝ երբ տոհմային դերդաստանի մը մէջ մտնելով կ'ծաղկի։ Ինչ անգին զմայլում կ'ղդայ այն որ իր կենաց մէջ թեթեւատ Հերմէսը պաշտեր էր, երբ յանկարծ հին և պատկառելի տան մ'անդամը կ'դառնայ։

— Տէր վրայ, մտածեցի՝ ուժգին փչելով, ինչու համար մարդուս սիրտ մը տրուեր է, եթէ ոչ ընտրելու այն անձն որու վրայ իր սրտին արեան մէն մի կաթիլը կ'հոսի։ Ա՛վ պիտի թռամ գնէ հոգւոյ այն աղէծուփ կոհակներուն դէմ. որ կ'թատրին լուսնակէն առելի զօրաւոր մոլորակի մը հրամանաւ, և այս մոլորակն է Աստղիկը։ Ա՛վ պիտի փոփոխէ իմ բաղձանաց հողմացոյցն, երբ իմ երկնից երեսէն անցնող քամին զայն պայմանեալ կողմը կ'դարձնէ անդուլ։

Ակիկ զան՝ դրամի ամուսնութիւններ կան. անշահախնդիր ամուրիներ կ'յորդորուն քեզ որ ստակով կին առնուս, և կ'փափաքին քեզ տեսնել դերդաստանի մը գլուխը։ Եւ պէտք է խոստովանիլ որ այսպիսի յորդոր մ'անուշ հով մ'ունի որ ազատ մարդու մը փառասիրական երազները զգուելու ամենէն հարստաբեր շարժառիթն է։ Բայց թող գմնեբես կինը զիս չդատապարտէ այս խօսքիս վրայ՝ զայն առարանէն առաջ։

Ստուգիւ խնդագին բան մ'է մտածել մանաւանդ ամուրիի մը համար՝ թէ այն սիրուն արիսնին որ քու մտածին կնկանդ թափանցիկ գոյնը կ'աղնուացրնէ, կամ այն կռնակն որ այնչափ գիւթիչ կերպով իր չքնաղ կլոր կուրծքին վրայ կ'ներեի, կամ այն շնորհալի լանջապատն, բոլորովին սքնաղարդ, որ այնչափ քաջալերս կ'գրկէ իր թիւրութեամբ իրանը, միշտ նէրա հրամանին ներքև պիտի գտնուին — մանաւանդ, ա-

սոնք դեռ ևս նշանաւորներն են երբեմն երբեմն երանգներու որոյ ներքևէ պիտի մնանիս ներա դեղեցկութեամբ։ Կ'փափաքէի դիտնալ թէ արդեօք երևակայութեան հեշտութիւն տուող նկարներու սիրուն թանդարան մը չէ՞ այն անուշկնկանն, որ շատ մը բարեկամներ սիրոյ, համակրութեան և հիացման կ'հրապուրէ՝ իր հարստութեան համեստ աղատարաշխութեամբը։ Միթէ ախորժելի չէ՞ յուսալից հոգիդ մտուցանել այս առատութեան մէջ, որ ոչ միայն ներա պիտոյքը պիտի հայթայթէ, այլնաև իր մարդասիրական հաճոյից ալ պիտի բաւէ, որ տրամութեան մռայլն ն'ներա ճակատէն պիտի վանէ և նէրա համբոյր բնութիւնը պիտի զսէ, ասոր աւելցնելով գթասէր հրեշտակի մը շնորհը։

Միթէ սփոփելի չէ՞, երբ այս ատենները ամուրիութեան կորստաբեր մոլութիւններն քու վրադ կ'ծանրանան, ընդնշմարել այն շքեղ թագաւորութեան մէջ, որու բնիկն Յոյն է, տան մ'անդորրութիւնն որ իր հրապոյրներով շքեղ և զանոնք հայթայթող կնկան ներկայութեամբ իրական կ'դառնայ։ Ճշմարիտ վայ, կ'մտածէի ես՝ ծխելը շարունակելով, այսպիսի ամուսնութիւն մը ներքին համակիր զգայումներու շնորհաշարտ լոյս մը պիտի բերէ, և տրամադիր եմ նաև ըսել որ այսպիսի միութիւն մը կրնայ զօրութիւն ազդել ամենէն վերացեալ սիրոյն։

Պահ մը կայ առ և խորհէ. մեղի պէս հէք արարածներ ինչ կ'սիրենք՝ եթէ դլանիկ ծխելով առանձին դատենք, անուշութիւն, դեղեցկութիւն, վեհանձնութիւն և իմացականութիւն և քանզայս աւելի, փոխադարձ սէր, որ բոլոր այս յատկութիւններով կազմուած է, և օրէ օր, ու ամսէ ամիս քու հոգւոյդ վրայ կ'տարածուի՝ իբրև արևային առաւօտ մ'որ դիշերուան ցուրտը կ'վանէ։

Բայց հարստութիւնն կատարելագործութեան մեծ միջոց մ'է. անուշութեան համար գրաւական մ'է, քանի որ վրդովիչ անձկութիւնները կ'փարատէ. նոյնպէս իմացականութիւնը զարդացնող սիրուն դրդիչ մ'է, քանի որ անոր ընդունակութեան շաւիղները կ'բաղմապատիկ. առատաձեռնութեան դեղեցիկ հիմ մ'է. նոյն իսկ դեղեցկութիւնը կ'զարդարէ, քանի որ աշխատութեամբ ձեռքերը չսկսդացներ և երեսի խորշոմներն շուտով չբերեր։ Բայց արդեօք փոխադարձ սէր, անձնուրացութիւն, անուշ վստահութիւնն և հանդարտ դորովը մը կ'դրդռէ՞ որով սիրտդ ուրախութեամբ պիտի լնու, ահա այս տարակուսելի է։ Երբ հարստութիւնն այսչափ շատ կ'շնորհէ, փոխարէն շատ կ'պահանջէ. և մանաւանդ շնորհաշարտ եղող հոգին, միշտ պատրաստ չլինիր մեծագոյն սիրոյ շնորհաշարտ գանուելու։ Դժուարին է զոհ ընել անոնք որ զոհ ընելու բան մը չունին։

Աստուած օգնէ այն մարդուն՝ որ սիրոյ մանր մունր խաղերով իր հոգին կասկածներու և յապաղումներու մէջ մաշելէն, կամ իր առոյգ երիտասարդութեան թարմութիւնը վատնելէն ետև՝ կ'մնանէ վերջապէս այն ճամբան զոր ռամկօրէն դրամական կամ տոհմական դեղեցիկ ամուսնութիւն կ'անուանեն։

Աստուած օգնէ քեզ (դլանիկս մոխիրը փչեցի) երբ կ'սկսիս ամուսնութիւնն իբրև արդոյ հիմնարկութիւն մը միայն նկատել և՝ քանի մը ծեր բարեկամներու խրատին համեմատ՝ կ'սկսիս չորս կողմդ նայիլ որ արդոյ կին մը գտնես։ Թերևս նէրա կերպարանին և դերդաստանին վրայ զարմանաս, և ախորժանօք յիշես քու մէկ քանի խորագէտ բարեկամներուդ յատուկ մէկ յիշատակութիւնը՝ թէ նէ մեծ ակնկալութիւններ ունի։ Կ'մտածես որ քու սեղանիդ գլուխը պատուական երեւոյթ մը պիտի ունենայ նէ, և թէ իր բարեկրթութեամբը հանդիսաւոր պարագայի մէջ քեզ սև երես չպիտի հանէ։ Նէ լաւ, շատ լաւ կը խօսի. և նէրա դէմքը հրապոյր ունի, մանաւանդ երբ քիչ մը դրդռի։ Նէրա հագուստը վայելուչ է և ճաշակաւոր և բոլոր բարեկամներդ անդադար կ'ըսեն թէ «Գեղեցիկ անձ մ'է»։ Սակայն պատ. կին մ'որուն նստարանը կ'բաղմի նէ երբեմն կիրակի օրեր, կ'մտածէ նենգաժէտ քթիթով մը թէ ընտրած անձդ աղուոր կնիկ մը պիտի լինի — ուրիշ մարդու մը համար։

Ճշմարիտը, վայելուչ դէմք մ'ունի նէ. և քու վեցի չափ հին սիրուհիներուդ ամուսնութիւնն կ'աղդարարէ քեզ թէ ժամանակը կ'սահի կ'անցնի և յաջողութեան յոյսն ալ կ'տկարանայ։ Եւ կէսօրուան կերակուրէն ետև՝ մէկ զուարթուն տաք ժամուդ՝ կ'որոշես՝ ընդելիդ մէջ ունենալով նէրա դեղեցկագոյն մուշտակով քաշուած նկարն — թէ պիտի կարդուիս։ Այնուհետև կ'սկսիս վայելելորսի հաճոյքդ, և թէև ընտանեկան պատշաճութիւններով պաշարուած է նէ, դարձեալ աւելի մեծ և հաճելի դրդիռ մը կ'տան քեզ։ Ժամ մ'աւելի կ'անցընես հայելիդ առջև և դերձակիդ մէկ երկու հարիւր ոսկի աւելի կ'տաս։ Ամէն ինչ կանոնաւոր, պատշաճ և շնորհալի է։ Շարլոդ զգայուն կին մ'է, ինչպէս ամէն մարդ կ'ըսէ, և դու ևս կ'հաւատաս։ Խօսակցութեան մէջ՝ նէրա հետ համամիտ կ'գտնուիս դրականութեան, եկեղեցւոյ և ծաղիկներու մասին։ Անտարակոյս ընտիր ճաշակ ունի նէ, վասն զի քեզ կ'ընդունի։ Այդ ընդունելութիւնն աղնիւ, վայելուչ և նոյն իսկ մարդավարական է։

Ամէն կողմէ շատ շնորհաւորութիւններ կ'ընդունիս, և քու հին բարեկամդ Թոմ քեզի կ'գրէ թէ 'ի լոյս դիտէ որ շքեղ կնիկան մը հետ պիտի կարդաս. իսկ բոլորը պատուները կ'ըսեն. «Ինչ փառաւոր նշանառութ» : Եւ քու առաւարի ընկերակիցդ, որ կանանցի մարդ մի է և փոքր ինչ խեղճասակ, անկեղծօրէն քեզի խնդակից է : Վերջապէս այդ խնամութեան մասին քիչ մը կ'պարծիս : Հին դատարանակ բարեկամի մը կ'գրես, թէ քիչ առանէն այս ինչ փողոցը բնակող օրիորդ Շարլօտին հետ պիտի ամուսնանաս, թէ նէրա հայրն երբեմն շատ անուանի անձ մ'էր, և յետագրութեան մէջ կ'յաւելուս թէ՝ աղջիկն ուներ վիճակ և «ակնկալութիւններ» ունի : Քու բարեկամդ, որ կին մ'ունի զոր կ'սիրէ և կինն ալ զինքը կ'սիրէ, պատասխան կ'գրէ քեզի, «յուսալով որ երջանիկ կ'լինիս» և դու ալ նոյն յոյսն ունենալով գլանիկդ կ'վառես, քու ամուրի վերջին գլանիկդ իր նամակին լուսանցքովը :

Ամուսնութիւնը կ'կատարուի, փառաւոր հարսնիք մը կ'ընես. կնոջդ աղաղ մօր և օրիորդներն քեզ վայելուչ ընդունելութիւն կ'ցուցնեն և նէրա ամուրի քոյրերուն հետ շատ մը գինի կ'խմես : Եւ դու երբ նոր հարսին քնքուշ ձեռքը կ'բռնես, նոր հարսն որ փառաւոր կ'փայլի իր հարսանեկան պսակով և պայծառ դէմքովը — աչքդ և հոգիդ, առաջին անգամ կ'յորդին : Եւ երբ թեզ նէրա վայելչագեղ հասակը կ'բոլորէ և զանի քեզի կ'քաշես, զգալով որ նէ քուկդ է, այժմ սիրդ այնպէս կ'արտիսէ որ նոյն պահուն կ'մտածես թէ կեանքդ առլի է և իրապէս կ'վայելէ : Միտքդ բոլոր հին երազներովդ կ'պաշարի՝ իրրև թովիչ երաժշտութիւն, և երբ նէրա վրայ կ'նայիս, հիւրերուն հիացումը կ'գիտես, քեզի այնպէս կ'երևի որ սրտիդ փափաքները լցուած են այս բարեբաստիկ ամուսնութեամբ :

— Ա՛խ քաշեցի՝ նորէն գլանիկս մոխիրը թոթուելով, հարսանեկան նկարներ սնական նկարներ չեն, և խորանին առջև անցած ժամն վատնուած տարիներու տխուր մէկ տիպարն է :

Տունդ վայելուչ կերպով շտկուած է. Շարլօտ սրատուական անտեսուհի մը ձեռք ձեր է, և քեզի սեղանակից լինելու համար եկող հին բարեկամներուդ շնորհաւորական գովեստներն աննման քաղցրութեամբ կ'ընդունի : Եւ այս հիւրերը կ'ըսեն քեզի՝ երբ սեղանին լաթը կ'վերցնեն և դու կ'նստես հանդարտ կ'ծխես հին ատենները յիշելով, թէ նէ չքնաղ կին մ'է : Նոյն իսկ պառաւ կիներն որ ատեն ատեն նպատակ խնդրելու կ'գան, կ'մտածեն թէ Տիկինը տիկիններու տիպար մ'է, նոյնը կ'մտածեն և իր վաղեմի խնկարկուներն դորս նէ այնպէս հեշտաւ ընտանի շնորհքով կ'ընդունի որ քեզ բաւական կ'շփոթէ : Եւ երբ պարահանդեսին սրահին դուռը կ'կենաս՝ առաւօտեան ժամն երկուքին՝ Շարլօտին շալը թեւդ վրայ ձգած, կամոյին պատանի մը ընդհանուր կարծիքը պիտի հաստատէ քեզի ըսելով թէ Տիկինն չնաշխարհիկ պարող մ'է, և պարան կամն անչափ պիտի գովէ նէրա գաղղիաբէնը : Այս ամէն գովեստներուն համար շնորհապարտ ես, բայց այդ շնորհապարտութիւնդ անտոլոր ծանրութեամբ կ'բացատրես :

Կ'մտածես թէ պէտք է որ շատ երջանիկ մարդ մը լինիս, այլ սակայն երևակայութեանդ մէջ սաուերներ կ'սպրդին, և կ'զարմանաս թէ այդ սաուերները Շարլօտին տեսքովը չեն փարատիր, այն Շարլօտդ որուվրայ կ'զմայլէիր երբեմն իր հագած սիրուն զգեստով. բայց լնդունայն : Ձեռ իշխեր նէրա գոյութիւնի մէջէը թեւերովդ բոլորելու առ ահի որ շրջաղեստին ծալքը չարեռ : Քաղաքավար է նէ քեզի հետ, և փափկասիրտ քու ազատ բարեկամներուդ հետ : Ընտանութեամբ ի՛խօսի — իր դդակին կապը կ'շոկէ — և կ'յուսայ որ աշխարհիս մէջ զեր մը պիտի ունենաս՝ գերդաստանին անունը փառաւորելու համար : Արտօսր մը չարատեր երբէք նէրա այտը, և սակայն կ'ժպտի երբոր քանի մը սքնոտաղդ պատանիներ սեղանակից ունիս :

Թերեւս ատեն ատեն կ'դիտես որ նէ դիրեր կ'ստանայ, որոց ստորագրութեան անտեղեակ ես, և իր խնկարկուներէն մէկ քանին այնչափ յաճախ կ'երթևեկեն որ հպարտութիւնդ կ'վիրաւորի : Անպատեհ է նախանձ յայտնել, բայց «սիրականիդ» կ'ակնարկես թէ իր վարմունքը փոքր ինչ անվայելուչ կ'գտնես :

Կարելի է կ'փափաքիս ստատիկ որ ձեր մէջ վէճ մը ծագի որպէս զի վիրաւորս վստահութեանդ մէկ փորձը ցուցնես, բայց ոչ, ամէն ինչ խաղաղ է, և նէ վստահութեամբ կ'սպասէ (քեզ «սիրելիդ իմ» անուանելով) թէ իր կացութեան արժանապատուութիւնը պահպանել պիտէ :

Իսկ դու սրտովին շատ հիանդ ես, ուստի ոչ բացատրութիւն կը խնդրես և ոչ պատասխան մը կ'տաս :

— Եւ միթէ այս է քու երբեմն երազած հոգւոյ միակցութիւնդ. այս է այն հոգելից համակրութիւնն որ կենաց դաշնութիւնը պիտի ջնջէր և տաժանելի հոգեր պիտի ամրէր բարեսրտութեան և սիրոյ շնորհիւ : Թարէ, այժմ վերստին կարող ես քու ազատ վիճակիդ դառնալ, ժամերդ լրջորեն կարդալով, թատրոն գնալով վատնել, և

ախուր կեանքդ անարդիւն վարել։ Հին բարեկամներուդ հետ աշխուժութեամբ խօսէ, և չունեցած խնդութիւնդ կեղծէ, թէ ոչ վատ անուն մը պիտի ստանաս տանդ և գլխուդ վրայ։ Զդոյշ եղիր որ Շարլօդ չտեսնէ այն արտասուքն որ դառն ժամերու մէջ թերևս աչքէդ հոսին, կամ չլսէ այն հառաչներն որ յանկարծ սրտիդ խորէն կրնան ելնել երբ միայնակ կ'խորհիս։ Շարունակէ կեանքդ կեղծելով ինչպէս որ սկսար։ Փառաւոր ամուսնութիւն մ'էր, և դու փառաւոր ամուսին մ'ես։

Բայց, զոհութիւն Աստուծոյ, փոքրիկ տղայ մ'ունիս, որու կողմը կ'սրանայ հոգիդ աղատօրէն։ Երբ տղադ իր կանոնապահ դայեկին քովէն և դասերէն կ'ազատի, կ'ախորժիս զանի մինակ դտնել, տարիներէ'ի վեր սրտիդ խորը թագուն կեցած համակրական զգացումդ անոր վրայ թափել։ Անոր հետ կ'խաղաս, զանի կ'գգուես և սրտիդ վրայ կը սեղմես։

«Բայց, հայրիկ» կ'ըսէ տղան «նայէ ինչպէս Ամրդեցիր վիշնոյս։ Ի՞նչ պիտի ըսեմ մամայիս։

«Ըսէ անոր, տղաս, որ քեզ կ'սիրեմ։»

Ա՜հ, մտածեցի (դլանիկս կ'մարմրէր և կ'անհամէր) միթէ սրտիդ մէջ տեղ մը չկայ որու երբէք չէ հասած նազելի կնոջդ թաթպանաւոր ձեռքը, թէև կ'փափաքիս որ հասնէր։

Կ'երթաս հեռաբնակ բարեկամը տեսնելու. «փառաւոր ամուսնութիւն» չէր իրենը. շատ տարի քեզնէ առաջ կարդուած է, և սակայն իր կնոջ լուսափայլ նայուածքն և սիրալիր ժպիտն տարիներ առաջ եղածին պէս թարմ են և սպրիդեշտ, և դու ամօթապարտ կ'մնաս անմխիթար վիճակիդ վրայ։ Ընդ երկար սարակայ կ'դտնուիս տունէն, բայց ընտանեացդ դիրերը չեն սիպեր քեզ որ շուտ վերադառնաս. սակայն հրաշալի մաքուր դիրեր են, և դաղդիական adieu իրև վերջաբան ունին։ Կ'փափաքէիր որ տղադ ալ բան մը մրոտած լինէր՝ այն յետադրութեան տեղն ուր նոր օրէրայի խմրի մ'անունները նշանակուած են, և այս բանս մեծ հարուած մ'է սրտիդ։

«Պէն» կ'ըսէ նէ «շատ վատ կ'դրէ։»

Իսկ 'ի դարձին ուրախութեան մեծ ցոյցեր չես տեսներ. ամառնային ուղևորութեան մը դրդուած ախորժելի երաշներուդ հետ բաղդատելով՝ քու խօսարանդ՝ ներս մտնելուդ, շատ վայելուչ, շատ հանդարտ, շատ նորաձև կ'դտնես, և կարծես թէ սրտիդ կեղևն է։

Քիչ ատենէն՝ հիւանդութեան տաղտկալի օրեր կ'պաշարեն քեզ.

պատուական հիւանդապահներ ունիս, խիստ յարգի հիւանդապահներ, հիւանդապահներ որ երբէք չեն սխալիր, հիւանդապահներ որ ընդ երկար ծառայած են ընտանիքին մէջ։ Բայց, ա՜խ, համակիր սիրտ մը, անուշ դէմք մ'որ ցաւերուդ վշտակից դտնուի, փախստեայ ամպերով ամուշ դաշտանկարի մը պէս, բնաւ չես տեսներ։

Մերթ ընդ մերթ շնաշխարհիկ կինդ ներս կ'մտնէ, հիւանդապահին կ'հարցընէ թէ արդեօք հանդարտ քնացա՞ր, և ապա դուրս կ'սահի՝ իր մետաքսէ շրջազգեստին շրշիւնն լսուելով՝ իրև չոր տերևներու խօշիւնն, որ կ'շարժին ձմեռնային հովէ մը։ Կամ թերևս՝ ամիսոր մը տեղը դնելէն կամ անկողնին առաղաստին տելի վայելուչ ծալմը տալէն ետև՝ քեզի կ'հարցընէ ձայնով մ'որ գուցէ համակրական թուէր՝ եթէ օտարոտի չլինէր քեզի համար, թէ արդեօք ուրիշ բան մը կարո՞ղ է ընել։

Ըստ կարի անուշութեամբ շնորհակալ եղիր նէրա և աչերդ դոյելով երազէ. կամ ելիր նստիր անկողնիդ մէջ, ձեռքդ փոքրիկ տղուն գլխուն վրայ դնելու, որ կենդանութիւն և երջանկութիւն քաղես անոր անկեղծ նայուածքէն՝ մինչդեռ ակնապիշ կ'նայի նա դունատ և նկուն Ճակտիդ։ Ժպիտդ անդամ՝ որ դժնեայ է երկարատև աղէտից պատճառաւ, տղուն այլայլութիւն կ'աղդէ. ձեր մէջ թարդման մը չկայ, բայց եթէ սիրոը։

Քու սրտագին շրթունքդ այլանդակ կ'ներդործուին տղուդ կայտառ և կենսաւէտ դէմքէն։ և նա չորս կողմը մատերուն վրայ կ'քալէ՝ հիւանդապահ կնկան նշմայրին վրայ, որպէս զի սեղանին վրայի վարդագոյն դեղերը նշմարէ. անկիւնէն ցուպդ կ'առնու, իր ձեռքն անոր փղոսկրեայ կատարը կ'ռնէ, և իր նայուածքը պատէն կախուած պատկերներուն կ'ածէ, մինչև որ իրեն ծանօթ մէկ կենդանագրի վրայ կ'յանի — հարսանեկան հագուստով կենդանագիր մը — դեղանի, գրեթէ սիրասուն, և որդիդ ինքզինքը կ'մոռնայ և բարձրաձայն կ'ըսէ. «Ահաւասիկ մաման»։

Հիւանդապահ կինն իր մատը շրթերուն վրայ կ'դնէ. քունէդ կ'արթննաս որ նայիս թէ եռանդոտ տղադ ո՞ւր կ'նայի, և քու աչերդ ալ կարելի եղածին չափ կ'սեւեռին կենդանագրին վրայ, որ այժմ նուաղուն երևակայութեանդ իրև ստուեր կ'երևի, իսկ աելի ստուերային քու նուաղուն սրտիդ։

Օր ըստ օրէ կեանքդ կ'հալի, բժիշկը կ'ըսէ թէ քու վախճանդ մօտալուտ է, և ինչպէս մօտալուտ չլինի։ Տան տիկինն ու որդիդ կը

հրաւիրուին սենեակդ։ Աչքդ մութ կ'տեսնէ, քեզի ձայն կ'տան որ նէ անկողնիդ մօտ է. ձեռնդ, երկու ձեռներդ ալ դուրս կ'հանես։ Կ'երեւակայես թէ հառաչ մը կ'լսես, այլանդակ հառաչ։ Կարծես թէ հեռաւոր տարիներէ կ'հասնի ականջիդ, շփոթ և կիսատ հառաչ մը, որ կենացդ բոլոր շրջանը կ'բռնէ. և սրտիդ ըղխեալ հառաչ մը, անլսելի, նէրա հառաչին կ'պատասխանէ։

Քու գողգոջուն մատերդ քու տղուդ ձեռքը կ'սեղմեն ուժգին. զանի քու քովդ կ'քաշես և շուրթերդ կ'շարժես որպէս թէ անոր կ'ուզես խօսիլ. իսկ գլուխն քեզի մօտ կ'բերեն այնպէս որ զգաս թէ անոր աղօր մազերն այտերդ կ'շօշափեն։ «Որդեակ իմ, պարտիս սիրել . . . քու մայրդ»։

Յանկարծ քու միւս ձեռնդ արագ և ցնցող բուռն մը կ'զգայ և արտասուքի նման բան մը երեսիդ վրայ կ'հոսի։ Տէր Աստուած, արդեօք արդարև արտօսր մ'է։

Գուն կ'գործես նայուածքդ սրելու և տարբ ժպիտ մը կերպարանիդ վրայ կ'սահի երբ կարծես թէ նէրա երեսը կ'նշմարես . . . կենդանագրին երեսը . . . որ քու վրայ կ'ծռի, և սրտիդ մէջ թունտ մը կ'ըզգաս, փեսայութեան առաւօտն զգացած թունդիդ նման, նման այն թունդին զոր սովոր էիր զգալ կենացդ դարնան ժամանակը։

Սրտի թունդ մը միայն ուժեղ ու լեցուն, ու այլ ոչ ինչ։

Իմ գլանիկս անցաւ։ Եթէ կամի, դարձեալ չպիտի կարենայի զայն վառել. բոլորովին հատեր էր։

«Անթառամ մօրբոյրս» ըսի, երբ ընթերցումս աւարտեցի «Հիմակ հրաման պիտի տաս որ վերջենիին ներքև ծխեմ։» Անթառամ՝ որ գործը վար դրեր էր մոխիկ ընելու համար, ժպտեցաւ, արտասր մը սրբեց և ըսաւ. «Այո, Խոսակ» և ապա իր ասեղնագործարկը քերելէն ետև՝ նորէն գուլպան առաւ գործելու համար։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԱԶ

ԱՌԱՒՕՏ, ԿԷՍՕՐ ԵՒ ԵՐԵԿՈՅ

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆԸ

Գարնանի օր մը կ'փայլէր կաղնիներուն ներքև — երբեմն սիրեցեալ հայրենի տան սիրական կաղնիներ — այժմ, ափսոս, իմս չեն։

Աղարակի հին տունս ծախեր էի, նայնպէս պուրակները, զովարար աղբերակունքը, ուր իմ գլուխս ստէպ լուացեր էի՝ ամառուան տաքին, ասոնք մայիսի սկիզբները ուրիշի ձեռքը պիտի անցնէին։ Եօթանասուն տարի մօտս ընտանեաց կալուածքն էին, եօթանասուն տարի մի և նոյն կալուածատիրոջ անունը պահեր էին, եօթանասուն տարի մեր դեղի տան ոդիներն — որ ստէպ լքեալ, դրեթէ մոռցուած էին, և սակայն մերթ ընդ մերթ կ'փայլէին արտաքին յիշատակներով — իրենց տեղը պահեր էին Էլմկրով. չքնաղ հովին մէջ։

Եւ մեր ամերիկեան դիւրափոխոն և աղմկալի կենաց մէջ՝ եօթանասուն տարին աղայական խաղ մը չէ։ Արդարև կրնան անցնիլ անոր վրայէն ժամանակ և պատահարք, բայց անոնց հետքը շատ են և խորունկ։ Անտարակոյս չպիտի զարմանաս եթէ տրտմութիւնն ու մտմտուքն առին զիս երբ հարկ եղաւ խորտակել տարիներու շղթայն որ իմ սրտիս հետ կապեր էին կաղնիները, աղբիւրներն, հովիտն, և ինչ հովիտ։

Արդարհոս գետակ մը՝ ծառաղարդ ափերու մէջէն կ'տաղտկի, ուր ամառը ծիծառներն իրենց բոյները կ'շինեն և բիւրաւոր թռչուն կը դնեն։ Գետափին երկայքն մեծ կնձնիներ ասա ու անդ կ'բարձրանան և իրենց բարձր ուղեղներով և տերևուտ ոստերով մարդագետինը կ'հովանաւորեն։ Նաև հին առուծանման կաղնիներ հողին կապուած են իրենց արմատներով և դորշ փայտարներ պատսպարան կ'ընծայեն թռչունն գործաւորներուն։

Գետակին արևմտեան կողմն՝ գետափունքը զաւիհակ կ'խոնարհին

բլուրներէն, որ կաղնի պուրակներով և գալարաւէտ արտերով ծածկուած են, և տեղ տեղ լուռուտ ժայռեր ցցուած են: Իսկ աւելի հեռուն՝ ուր շուրջ տաս տարի առաջ քանի մը ծառեր տապարին ներքև վար տապալեր էին, նորաբոյս տունկեր դարձեան ճոխ տերևներով ծածկուած զառ 'ի թափ երկրին ընդարձակ վայրերը կ'զարդարէին, մինչդեռ չորաբեկ ծառ մը միջավայրը կեցած՝ հովին կ'տարածէ իր մերկ ճիւղերն՝ իբրև մենաւոր աշխարող՝ իր բուսակից անտառներուն աւերածին վրայ:

Արևելեան կողմն՝ սեսպաձև ափունքն ալեծուփ մարդերէ կ'անցնին, որոց հեռաւոր ծայրն հին դղեկի մը տամալին կ'տեսնես բարձր ծխահաններով և զայն հովանաւորող բարձրադոյն կնձնիներով: Աւելի վարն՝ բլուրները մեղմիկ կ'ելնեն և անտառուտ բարձունք կ'դառնան, որ 'ի հեռուստ կապոյտ կ'երևին: Հովին վերի ծայրն դեռևս անհետ կ'լենի լայնարձակ մօրատ անտառի մը մէջ . . . . : Աւելի հեռուն՝ բլուրներ կ'դիզուին առուակին մօտ, և վար կ'իջնեն ժայռի կտորներով և ցախի ու փեկոնի ծառերով ծածկուած: Մայիսի մշուշապատ առաւօտներն՝ դեռ ևս ժամանակ դտայ այս ծառերուն ներքև թափառելու և իմ կարթս նետելի ձկակին մէջ, որու ջրերը թէև մութ ու անդորր, կ'աչէկոծին կնճռոտ արմատներու ներքև . . . . :

Հանդարտ ճամբայ մը իջնէ քիչ մը հեռու կ'երևի և ընդ դեռևին՝ ստաղէ հաստ կամրջի մը դիմացը կ'անցնի: Կամրջին մօտ՝ սառնորակ ձկակ մը կայ հին սօսի և հացի ծառերով հովանաւոր, ուր ամէն առաւօտ խաշինք ջուր կ'խմեն երբոր արածելու կ'ելնեն բլուրն 'ի վեր: Առուակին մէկ քանի քայլ հեռու՝ մարդին մէջ ծառուղի մը կ'բացուի և դղեակը կ'հանէ: Այժմ իսկ կարող եմ յիշելայն կորովի և թիկնեղ ծերունին՝ իր սպիտակ դլխարկով, իր սպիտակ երկայն մազերով, և ապիտակագունդ դաւազանով, որ այս տունը շինեց և իմ բոլորտիքս դտնուող բոլոր հովիտը վարձու տուաւ: Շատ, շատ ատենէ վեր աշխարհէս դնայ, և ծովուն վրայ նայող դերեզմանատան մը մէջ կ'ննջէ. իր տնկած կնձնիներն իրենց ճիւղերը կ'տարածեն կիսատուլ տամալիներու վրայ, և իր մրդատանն միայն շատ մը մամուռ ծառեր կ'պարունակէ որ հազիւ կ'հրապուրեն յուլիսի աւարառուները:

Առուակին այս կողմն՝ ճամբան ծառերուն մէջ կ'անհետի. բայց եթէ բլրին շաւիղները բռնելով քալեմ՝ քիչ ատենէն զիս իմ պապիս հին տունը պիտի բերեն. այժմ այն կողմերը թափառիլն ախորժելի չէ: Հիւսիսային հովին դէմ զայն պատսպարող ծառերը կտրուած են,

քարձր կերասենիներն՝ զոր բակը դալարաւէտ հովանոց մը կ'յօրինեն՝ չորցած են: Շրջանակը քիւերէն կախուած է, դուռն ընկած, և քարկիր ծխահանը լայն ծերպերով բացուած է: Ներքուստ աւելի աւեր է. յատակն խարխուլ դերաններու վրայ կ'մնայ, դռներն իրենց ծխնիներէն դուրս ելած են, խօսարանին պատին նկարներն խանդարած են. ամէն ինչ կործանման կ'դիմէ: Եւ իմ պապս պարտիզին պատին մօտ փոքրիկ դամբարանի մը մէջ կ'ննջէ:

Գիւղի արահետէն զատուելով նեղ ուղի մը, որ իրմէ քանի մը կանգուն հեռի կ'դտնուի, մարդին շուրջը քերելով կ'տանի հայրական տնակն, որ իմ յատուկ խնամոց առարկան եղած էր: Իր դորշդաւիթն ու ծխահանն պայծառ կ'փայլին յետուստ բլուրը շրջապատող կաղնիներու պուրակէն. և տատրակներն անհանդարտ կ'թռին բոց շտեմարանին դրան բոլորտիքը: Առաւօտեան արևն զուարթագին լոյս մը կը սփռէ տնակներու վրայ, և կովերուն բառաչէն սոյն տեսարանին աւելի չքնաղ միայնութեան երևոյթ մը կ'ընծայէ: Բայց, ափսոս, այն դարնիներն, որթետունկերը զոր հիւղիս դրան առջև եղող բլրակին վրայ տնկեր էի, բոլորն ալ ոսնակոխ եղեր էին. ողորմելի որթ մը միայն կախուած է թոյլ սարիճայէն, բոլորովին անտերև և ընկեցիկ . . . :

Վաթսուն տարի առաջ, կ'ըսեն, իմ հաւս սովոր էր այս կողմերը թափառիլ իր հրացանով, մինչդեռ իր որսական շուներն ցիր ու ցան կաղնիներու ներքև իր բոլորտիքը կ'հանդչէին: Այժմ, ինչպէս ըսի, վարը փոքրիկ դերեզմանատան մէջ կ'ննջէ, և կարող եմ տեսնել մէկ երկու սպիտակ քարեր որ տերևներուն մէջէն կ'փայլին: Երբէք չտեսայ զանի. ինչպէս որ տապանագիրը կ'յայտնէ՝ քսանվեց տարու մեռաւ: Երբէկ՝ դերեզմանատունը շրջապատող պատէն վեր ելայ, և իր շիրմին վրայէն ծաղիկ մը քաղեցի: Այժմ իմ դրպահս կ'բանամ, այս ծաղիկը կ'առնում — վախ, նորածիլ մանիշակ մը — և կ'դրեմ իր դողտրիկ բունը պահած թղթի կտորին վրայ. «Իմ պապիս դերեզմանէն, 1850»:

Բայց այս բլրակին վրայ ուրիշ աւելի սիրական ոսներ կոխեր են: Հին դրացիներն երբեմն կ'ըսէին ինձ թէ ինչպէս քառասուն տարի առաջ՝ տեսեր էին նոյն վայրը՝ շուքին ներքև, երկու վարդագոյն օրիորդներ՝ որ ոստոստելով կաղին կ'հաւաքէին և իրենց ճակտին համար պսակներ կ'յօրինէին: Աւաղ, աւաղ, պսակները զոր այժմ կ'կրեն, չեն երկրային պսակներ:

Կաղնի ծառերուն մէջ իմ ձեռօքս շինած փայտէ նստարանի մը վրայ նստեր եմ այս մայիսի առաւօտուն։ Հրայանս ծառի մը յեներ եմ. իմ վառօդակիրս կոտրած բունէ մը կախեր եմ։ Ոտքս նստարանին վրայ երկնցնելով՝ կաղնիներու տուեր եմ կռնակս։ Գլուխս բաց է, իմ գիրքս և թուղթս քովս են. և մատիտս կ'գողդոջայ մատերուս մէջ, երբ կ'նշմարեմ այն սպիտակ տապանաքարերն որ իմ վերևս՝ իբրև հրեշտակային դէմքեր՝ ծառերուն մէջէն կ'շողշողան։ Երանի՛ թէ կենդանի լինէին — երկու մօտաւոր և սիրական բարեկամներ աշխարհի մը մէջ ուր բարեկամներն հազուադիւտ են։

Առաւօտ է, գարնան պայծառ առաւօտ մը կաղնիներու ներքև։ Անցած դիշեր՝ վարը կնձնիներուն տակը գտնուող գղեկին մէջ քնացայ։ Արտերը դիմող խաշինք կամրջին մօտ ճակէն ջուր կ'խմեն. խաշնարած տղան իր սրինգը կ'հնչէ և բլուրներն արձագանք կ'տան։ Արփին արևելեան լեռներու կողմէն վեր կ'ելնէ դեղաձիծաղ և մարգին վրայ պայծառ կ'շողայ, շողալով նաև վարի առուակին մէկ մասին մէջ։ Թռչուններն — կապոյտ թռչուններն որ ամենէն անուշ և աղմկալի են — իմ գլխս վերևը՝ ճիւղերուն վրայ կ'երգեն։ Փայտփոր մը բարձր շոր ճիւղ մը կ'փորէ, և Գարլօ ականջները անկելով մտիկ կ'ընէ, ինձ կ'նայի, ապա գլուխը թաթերուն վրայ կ'տարածէ արևուն, և կ'քնանայ։

Առաւօտն ինձ Անցեալը յետս կ'կոչէ, և անցեալն ոչ միայն իր իրական անցքերն, ոչ միայն իր պատահարներն ու յիշատակները կ'բերէ այլ որ մեծն է, ինչոր կարողէ լինիլ։ Արթուն յիշողութեան մէջ ծագող որ և է թեթև պարագայ մը՝ ոչ միայն իրական այլ հաւանական գոյներով կ'երևի։

Անցեալն ինչ ընդարձակ աշխարհ կ'ընծայէ — մեծ և փարթամ, ճոխ և սուրբ աշխարհ մը։ Իրրև նկարիչ երևակայութիւնդ կ'գունաւորէ զայն, մթութեան անուշ ստուերներ կ'գառնայ, ոև դիծերն հեռաւորութեան նուրբ մթնոլորտին մէջ կ'սգողին, և երևակայութիւն ու յիշողութիւն անրջային երկիր մը կ'դարձրնեն անցեալը։

Եւ հիմակ որ պիտի սկսիմ նկարել թղթի վրայ Առաւօտեան երազային աշխարհին մէջ ծածանող մէկ քանի տեսիլներ, չեմ կամիր, չեմ կարող ըսել թէ որչափ երևակայութեան և որչափ յիշողութեան կողմէ կ'բղխին։ Բարեմիտ ընթերցողն այս մասին դատաւոր պիտի լինի։

Ա.

ԱՌԱՒՕՏ

Զապէլ և ես — նէ իմ մօրեղբօրս դուստրն և եօթ տարեկան է, իսկ ես՝ տասը — գետակին ափունքը, ջուրը կիսովին ծածկող կաղնիի մը ներքև նստած ենք։ Ես իրմէ ուժեղ եմ և գլխու չափ աւելի երկայն։ Ձեռքս ունիմ եղէգն մ'որով վարի ճակին մէջ մանր ձկներ կ'որսամ։

Զապէլ կ'դիտէ սունկն որ ջրին երեսը կ'ծփայ, կամ կ'զբօսնու որսած ձկնովս որ գետափին վրայ է։ Ունի սևորակ խոպոպներ որ ուսերուն վրայ կ'ծածանին, յարդէ գլխարկն ետին ընկած և լոկ ժապաւէնով մը՝ որ ծնօտէն կ'անցնի, բռնուած է։ Բայց արևն նէրա գլխուն չզարներ, վասն զի մեր վերևը գտնուող կաղնին տերևալի է. միայն ճակին երեսն՝ ուր կ'որսամ, թեթև շառաւիղներ դէս ու դէն կ'խայտան։

Կաղնեղոյն ու պայծառ են աչքերը. մերթ ընդ մերթ իմ կողմս կը դառնան և մանկային հետաքրքրութեամբ կ'նային, երբ իմ եղէգս վեր կ'հանեմ — և ապա խնդալին կ'սպառնայ, մեռած ձուկն իր մանր մատերու մէջ սեղմելով՝ վերստին զայն գետակը նետելու։ Իր փոքրիկ ոտքը գետափին ծայրը կախած է, և ատեն ատեն իր մատը ջրին մէջ կ'թրջէ, և մանկային ծիծաղը կ'ձգէ երբ կ'սաստեմ գինքն որ ձկներն ահարեկելով կ'փախցնէ։

«Զապէլ» կ'ըսեմ «ի՞նչ պիտի ընես եթէ գետակն ընկիս։

«Բայց ես չեմ ընկիր։

«Հապա եթէ ընկնէ՞ր։

«Լաւ, այն ատեն գիս դուրս պիտի հանէիր։

«Բայց եթէ քեզ ջրէն դուրս չհանէի՞։

«Բայց ես գիտեմ որ պիտի հանէիր, այնպէս չէ՞, Պօղ։

«Զապէլ, ո՞վ այդպէս մտածել կ'տայ քեզ։

«Վասն զի Զապէլը կ'սիրես։

«Ուստի՞ գիտես որ ես Զապէլը կ'սիրեմ։

«Վասն զի անդամ մ՚այդպէս ըսիր, վասն զի ինձի համար ծաղիկներ կ՚քաղես երբ ես չեմ կրնար հանիլ, վասն զի կը թողուս որ եղէզը բռնեմ երբ ձուկ մ՚որսաս։

«Բայց այդ պատճառ մ՚է, Զապէլ։

«Ուրեմն ինչ է, Պօղ։

«Ճշմարիտը, ես ալ չգիտեմ, Զապէլ։

Բաւական տանէ՚ի վեր՝ փոքրիկ ձուկ մը խայծը կ՚կրծէր, սունկը վեր վար կ՚շարժէր, և ահա յանկարծ ձուկը կ՚բռնուի և դէպ՚ի եզերը խոյս կ՚տայ այնպէս որ սունկը չտեսնուիր։

«Զապէլ, այս կողմն եկուր, շուտ» և Զապէլ եռանդագին կ՚վազէ որպէս զի իր փոքրիկ ձեռներով եղէզը բռնէ։ Բայց ձուկը զայն միւս կողմը քաշեր էր, և որովհետև Զապէլ աւելի ծռելով կ՚ծռի, յանկարծ կ՚սահի և կ՚պոռայ. «Օ՛հ, Պօղ» և ջրին մէջ կ՚ընկնի։

Մեզի ըսեր էին՝ թէ դեռակը մարդու մը հասակէն աւելի խոր էր, ուստի և փոքրիկ Զապէլին գլխէն վեր էր ջուրը։ Եղէգս վար կ՚նետեմ, և դեռատիպնայ արմատները բռնելով կ՚ծռիմ և Զապէլ ջրին երեսն ելնելուն, գլխարիէն կ՚բռնեմ, բայց ժապաւէնը կ՚կտրի և նէրա աղերսագին նայուածքը կ՚տեսնեմ երբ վերսին կ՚սուզի։ Ո՛հ, մայր իմ, մտածեցի, եթէ ասա գանուէիր միայն։

Սակայն նորէն վեր կ՚ելնէ. այս անգամ ձեռքս զգեստին կ՚փաթթեմ և բոլոր ճիգս թափելով՝ զանի ջրէն վեր կ՚պահեմ՝ մինչև որ կը յաջողիմ երկայնաձիգ արմատի մը վրայ կռուան մը գտնել. և այսպէս ամուր կենալով զանի դեռատիպն կողմը կ՚քաշեմ և վեր մագլցելէն ետև՝ գօտիէն պինդ կ՚բռնեմ երկու ձեռքս և դուրս կ՚հանեմ, և եղկելի Զապէլն այսպէս թրջած, խեղդած և սառած խոտին վրայ կ՚մնայ։

Այն տեղն բարձր աղաղակելու կ՚սկսիմ։ Դաշտի գործաւորներն աղաղակս կ՚լսեն և վար կ՚իջնեն։ Մին թեներուն մէջ կ՚առնու Զապէլն և ես բլրակն՚ի վեր կ՚ելնեմ մօրեղբօրս տունը կ՚գիմեմ հետիոտն։

«Ո՛հ, զաւակներս» կ՚ըսէ մայրս, և Զապէլը գիրկը կ՚առնու. և քիչ առենէն երբ անոր լաթերը կ՚փոխեն, և բոյանշղալ կրակ մը կ՚վառուն, փոքրիկ Զապէլ նորէն կ՚ժպտի։ Ես ալ մօրս ծնկայ մօտ եմ։

«Ես քեզի չըսի՞, Պօղ» կ՚ըսէ Զապէլ «հօրքոյրս, միթէ Պօղ դիս չսիրեր։

«Ես կ՚յուսամ որ կ՚սիրէ, Զապէլ» ըսաւ մայրս։

«Ես ես այդպէս դիտեմ» ըսի, և անոր երեսը համբուրեցի։

Եւ ինչպէս գիտէր, տղեկը չլներ այս հարցումը, մարդս կ՚լնէ։

Ո՛հ, քանի թարմ, պարկեշտ, զօրեղ է տղեկի մը սիրտը, ինչպէս ասոր յիշատակը կ՚զվայլնէ աղբիւրի մ՚առաջին բխման կամ ապրիլ ամենան յանկարծական տարափին պէս։

Բայց մանկութիւնն իր Հպարտութիւնն ունի ինչպէս Սէրը։

Մօրեղբայրս բարձրահասակ և դժնեայ մարդ մ՚է. կ՚վախնամ երբ զիս «տղայ» կ՚կոչէ։ Կ՚սիրեմ զինքն երբ «Պօղ» կ՚անուանէ։ Գրեթէ միշտ գրենովն զբաղած է, և երբ երբեմն իր գրատան դուռը կ՚երեւիմ, կապոյտ մը ձկներով կամ սապատ մը կաղնիով, որ իրեն ցոյց տամ — պահ մը հետաքրքրութեամբ անոնց կ՚նայի, երբեմն իր ձեռքը կ՚առնու — ապա ինձի կ՚դարձնէ և կ՚սկսի իր գիրքը թղթատել։ Կը վախնաս հարցընելու անոր թէ արդեօք լաւ աշխատեր ես թէ ոչ, թէև կ՚փափաքիս որ հարցընես։

Կամացուկ մը դուրս կ՚սահիս, և մօրդ քովը կ՚երթաս. հաղիւ ուրեմն աղաղոր պաշարիդ կ՚նայի, բայց քեզ կ՚բռնէ և ճակատդ կ՚պաղնէ։ Հիմակ բերանդ կ՚բացուի, այս համբոյրն ու այս գործը քեզի լեզու տուին. կ՚ըսես թէ որչափ բաղդ բաներ է և հրապուրելի յաղթանակներդ վեր կ՚վերցընես։ «Միթէ պատուական չէն, մայր»։ Բայց մայրդ երեսդ կ՚նայի և չէ թէ մրցանակիդ։

«Մայր իմ, առ այս բաներն» և սապատդ անոր ծնկայ վրայ կը դնես։

«Շնորհակալեմ, Պօղ, ես չեմուզեր, բայց պէտք է որ մէկ քանի հատ Զապէլին տաս։

Եւ շուտ մը կ՚վազես որ ծիծաղկոտ, զուարթ Զապէլը դտնես։ Եւ միասին գալարաւէտ հողին վրայ կ՚նստինք և իմ պաշարս դուրս կ՚թափեմ։ «Զապէլ, որչափ որ կ՚փափաքիս ընցուր զոգնոցդ, և ապա, երբ դասի ժամերը լմննան, այն տեղն մեծ ժայռէն վար պիտի իջնենք դէպ՚ի մարգագետինը։

«Բայց չգիտեմ թէ արդեօք պապան պիտի թոյլ տայ» կ՚ըսէ Զապէլ։

«Զապէլ» կ՚ըսեմ «կ՚սիրե՞ս պապադ։

«Այո» կ՚ըսէ Զապէլ «ինչու չէ։

«Վասն զի այնչափ պաղէ, նա չհամբուրեր քեզ, Զապէլ իմ մօրս պէս յաճախակի. ասկից զատ՝ երբ կ՚արդիլէ քեզ դուրս ելնելու, մամային պէս չըսեր քեզի. «Իմ փոքրիկ աղջիկս, պիտի յոգնիս, աւելի աղէկ է որ տունը նստիս» այլ միայն կ՚ըսէ. «Զապէլ, դուրս մի ելներ»։ Զգիտեմ թէ ինչ պատճառաւ այսպէս կ՚խօսի։

«Բայց, Պօղ, նա մարդ է, այնպէս չէ — ինչպէս է, ես զանի կ'սիրեմ, Պօղ։ Դարձեալ մայրս հիւանդ է, ինչպէս որ գիտես։

«Զապէլ, իմ մայրս քու մայրդ ալ պիտի լինի։ Եկուր, Զապէլ, երթանք հարցնենք թէ դուրս կրնանք ելնել։

Եւ ահա տղոյ մէջ երջանկագոյնն՝ կ'սկսիմ աղերսել իմ բարեգութ մայրս որ հրաման տայ։

Կրնաք երթալ» կ'ըսէ նա «եթէ քեռիդ թոյլ տայ։

«Բայց, մամա, կ'վախնամ անոր հարցնելու. չեմ կարծեր որ գիս սիրէ։

«Պօղ, այդպէս մի խօսիր» և նա քեզ իր քովը կ'քաշէ, որպէս թէ իր սիրով կ'կամի ընուլ աշխարհի մը պակասող սէրը։

«Զապէլին հետ գնա և անուշութեամբ հարցուր. և եթէ ոչ ըսէ, պատասխան մի տար։

Եւ ձեռք ձեռքի բռնած արիութեամբ ճամբայ կ'ելնենք և կամոյոկ մը գրատան դուռը կ'հասնինք։ Անդ կ'բազմի նա — կարծեմ թէ հիմակ աչքիս առջևն է — հին սենեկին մէջ գիրքով և պատկերներով լի, և նա կ'կրէ իր ծանր ակնոցները. հաստ հատորի մ'առջև ծռած է, որու գժուարին բառերն իմ քերականիս մէջ չկան։ Մեղմիկ ներս կը մտնենք և Զապէլ իր փոքրիկ ձեռն անոր թևին վրայ կ'դնէ. քեռիս կ'դառնայ ու կ'ըսէ. «Ի՞նչ կ'ուզես, պզտիկ աղջիկս»։

Կ'հարցնեմ թէ արդեօք մարդասիրին ժայռը կրնանք երթալ։

Նա Զապէլին կ'նայի և կ'ըսէ. «Կ'ցանիմ որ չէք կարող երթալ։

«Բայց ինչու համար, քեռիս։ Ճամբան երկայն չէ, և շատ զգոյշ պիտի լինինք։

«Կ'վախնամ, զաւակներս. աւելի մի խօսիք. կրնաք երիվարին ու Դրէյն առնուլ և տունը խաղալ։

«Բայց, քեռիս . . . ։

«Հարկ չկայ աւելի խօսիլ, տղաս։»

Փոքրիկ Զապէլին ձեռքը կ'քսմթեմ, և անոր աչաց մէջ կ'նայիմ — մինչդեռ իմն գրեթէ արտասուքով կ'լեցուին։ Կ'զգամ որ իմ ճակատս կարմրցեր է, և Զապէլին գիսակին ետևը կ'պահեմ՝ անոր ականջին փսփսալով, «Օ՛ն երթանք։

«Ի՞նչ է այդ, պարոն, կ'ըսէ քեռիս, իմ ըսածս ծուռ մեկնելով, միթէ կ'յորդորես Զապէլին որ ինձ անսաստէ։

Այն ատեն կ'բարկանամ, և կուրծքէն կ'ըսեմ, «Ո՛չ, պարոն, ես այդպիսի բան մը չըրի»։ Եւ իմ գիւրազրգիռ հպարտութիւնս չպիտի

թողու ինձ ըսելու թէ ես միայն Զապէլին ըսի որ միասին սենեկէն դուրս ելնենք։

Զապէլ կ'արտասուէ, և ես դուրս կ'նետուիմ. հանգիստ չեմ գտներ մինչև որ վազելով չերթամ գլուխս մօրս ծոցը չդնեմ։ Բարէ, հպարտութիւնը միշտ այսպիսի ապատէն մը չգտներ։ Ժամանակ պիտի գայ որ հպարտութիւնը քեզ պիտի տանջէ, բարեկամութիւնը վտանգի մէջ պիտի դնէ. հին, հաստատուն մտերմութիւնը պիտի խորտակէ, և այն ատեն ուրիշ դարման չկայ այլ միայն դառնութեամբ ճարակիլ։ Ատելի՛ հպարտութիւն, պէտք է զայն զսպել, ինչպէս որ մարդ թշնամի մը կ'զսպէ, թէ ոչ քու արտիդ մէջ մրրիկներ պիտի յուղէ . . . ։

Բայց մանկութիւնն ես իր Վիշտերն ունի, Հպարտութենէ զատ։

Դու կ'սիրես ծեր շունը Դրէյն, և Զապէլ ես քեզի չափ կ'սիրէ զայն։ Ազնիւ հին ընկեր մ'է, խիտ մազերով, երկար ականջներով և հաստ թաթերով, զոր ձեռացդ մէջ կ'դնէ երբոր խնդրես։ Երբէք չսրդողիր երբ անոր հետ խաղաս, խոտին վրայ գլորես, և իր մատաքսեայ ականջները քաշես։ Իրաւ է որ՝ երբեմն՝ իր բերանը պիտի բանայ որպէս թէ պիտի խածնէ, բայց երբ ձեռքդ իր բերանը կ'առնու մեղմօրէն, հաւիս թէ իր ակռաներուն նշանը պիտի թողու անոր վրայ։ Նոյնպէս կ'լողայ մեծ քաջութեամբ, և գետերը կ'բերէ ջրին վրայ նետած փայտերդ, և երբ զայրացնելու համար քար մը նետես, չորս դին կ'լողայ կ'մրմնայ, և կ'տխրի որ զայն չէ կարողցանել։

Դրէյ Նոյնպէս կրնայ կողով մը լեցուն կաղին տանիլ իր բերանովը, և ոչ հատ մը վար ձգել, և երբ դարնան՝ քեռւոյդ տունը դառնաս, բոլոր ձմեռը քաղաքը մնալէն ետև՝ քեզ իսկոյն կ'ճանչէ — այն ծեր Դրէյն։ Նա քու վրադ կ'ցատկէ, ուսիդ վրայ կ'դնէ իր թաթերը, դէմքդ կ'լզէ, և շատ ուրախ է քեզ, նոյնպէս Զապէլը տեսնելուն։ Եւ երբ Զապէլն անոր կոնակը կ'հեծցնես, Դրէյ անոր փոքրիկ ոտքը խածնելու կ'փորձէ, բայց երբէք չխածներ։ Իրաւի, Դրէյ ծեր ալնիւ շուն մ'է։

Բայց ամառը՝ ագարակապանները կ'ըսեն թէ իրենց մէկ քանի ոչխարները սպաննուեր են, և թէ շունները գանոնք պատռուեր են. և ագարակապան մը կ'գայ այս բանին վրայ իմ քեռւոյս հետ կ'խօսի։

Բայց Դրէյ երբէք ոչխար մը չէ պատռած. գիտես որ այդպիսի բան մը բնաւ չ' ըրած, նոյնը կ'վկայէ դայեակն. նոյնպէս Զապէլ, վասն զի գարնան սիրուն գառնուկ մ'ունէր, և Դրէյ փոքրիկ հատատարիմ շան վնաս մը չէր հատուցած։

Դրայինեռուն մէկ քանի շունները հրայանի կ'բռնուին, թէև ոչ ոք կ'իմանայ թէ ով սպաննեց, և ահ ու դողի մէջ կ'մնաս խեղճ Դրէյին համար. կ'ջանաս որ տունէն դուրս չհանես և առաջուանէ աւելի կը զգուես զայն: Բայց Դրէյ ատեն ատեն դուրսերը կ'ելնէ կ'թափառի. վերջապէս երեկոյ մը կ'վերադառնայ ողբալին հեծեծելով. իր կոնակին արիւնլուայ է:

Փոքրիկ Զապէլ բարձրաձայն կ'լայ, և դու ևս կ'լաս մինչդեռ սպասուհին վէրքը կ'պատէ, և խեղճ ծեր Դրէյն շատ տխուր կ'կաղկանչէ: Դու անոր գլուխը կ'շոյես, և Զապէլևս կ'զգուէ. և անոր մօտ գաւթին մէջ նստելով միասին թաւ ասուի մը կ'փռես դեռևին որ շունն անոր վրայ պառկի, ապա կ'փորձես որ անոր քիչ մը կաթ տաս և Զապէլկոր մը կարկանդակ կ'բերէ, բայց Դրէյ բան մը չուտեր: Երկայն ատեն կ'հսկես, թէև Զապէլ քնանալու կ'երթայ՝ անոր գլուխը զգուելով, և խնդրելով որ խեղճ Դրէյին համար բոլոր հոգդ տանիս, բայց նա միայն ձեռքդ կ'լզէ և աւելի ողբմալին կ'ձչէ:

Առտու կանուխ կ'ելնես կ'հագուիս, և սանդղէն վար կ'վազես. բայց Դրէյ ասուին վրայ չէ պառկած. այն ատեն զանի գտնելու համար ամէն կողմ կ'վազես, կ'սուլես և կ'կոչես. «Դրէյ, Դրէյ»: Ի վերջէ իր հին տեղն, դուրսը կերասէնիին մօտ կ'գտնես և անոր մօտ կ'փութաս. բայց այն չշարժիր, կ'ծռիս որ զայն զգուես, բայց պաղէ այն, և յօդով թրջած է. խեղճ Դրէյ մեռեր է:

Գլուխը ծնկայդ վրայ կ'առնուս, և վերստին կ'զննես այն փայլուն ականջները, և կ'լաս, սակայն չես կարող անոր կենդանութիւն տալ: Ապա Զապէլ կ'գայ և քեզի հետ ձայներ կ'արձակէ: Հաղիւ կ'հանդուրժես որ զանի հողին տակ դնեն, բայց քեռիդ կ'ըսէ թէ պէտք է որ թաղուի: Այսպէս գործաւոր մը կեռասենիին ներքև փոս մը կ'փորէ, խորունկ փոս մը, և անոր վրայ հողակոյտ մը կ'ընեն, հարթելով բունձերը. հիմակ իսկ կարող եմ Դրէյի գերեզմանին հեռքը գտնել:

Դու և Զապէլ փոքրիկ տափակ քար մը կ'տնկէք իրև մահարձան նոյն փոսին վրայ և նէ ծաղիկներ կ'կախէ անոր վրայ և ժապաւէնի կտորով մը զանոնք կ'կապէ: Գրեթէ բոլոր օրը սիրտ չունիս խաղալու, և քանի մը շաբաթ եաքը, երբ դաշտերու վրայ կ'թափառիս կամ առուակին մօտ կ'դեգերիս՝ հոսանքին մէջ փայտեր նետելով՝ ծեր Դրէյին բրդոտ վերարկուն, խոշոր թաթն ու պարկեշտ նայուածքը միտքդ կ'բերես, և քու մանկային վշտիդ յիշատակը քեզ պաշարելով արտասուալի կ'ըսես. «Խեղճ Դրէյ»: Նոյնպէս Զապէլ իր տրտում, անուշ ձայնով կ'ըսէ. «Խեղճ ծեր Դրէյ, մեռաւ»:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕՐԵՐ

Առաւօտն անպոռ էր և անձրև կ'սպառնար. աշնայնի օդ էր և հովը քիչ-քիչ սաստկանալով կ'որոտար ծառերուն կատարներուն վրայ, որ ահարկու կերպով մը տունը կ'հովանաւորէին: Զէի համարձակեր ականջ դնելու: Իրաւի՝ եթէ տան կրակարանին մօտ նստէի և ընկած կաղինները հաւաքէի, և գետնէն տերևներ ժողվելով՝ պէնի և միւս տղոց հետ կուտակէի և աղօր կրակ մ'ընէի, այն ատեն յօժարակամ մտիկ պիտի ընէի, և այն ահռելի առաւօտուն ամենէն զուարթն ես պիտի լինէի, և անոր դէմ անվեհեր պիտի մնայի. վասն զի խիստ յարմար ժամանակ մը պիտի լինէր մեր պատին ներքև շինած փուռը վառելու, շատ ախորժելի պիտի լինէր եթէ մեր մատերը կրակին տաքցընէինք, և մեծ մեծ խնձորներ անոր կատարին հարթ քարերուն վրայ եփէի: Բայց այդ բաղդը չունեցայ: Առաջին օրը քաղքի տղաներէն բաժնուեր էի, իմ մնտուկս պատրաստ էր, պարտաւոր էի մեկնիլ և երթալ — դպրոց: Ստիպեալէի տունէն հեռանալու. իմ մօրս՝ Լիլլին, Զապէլին հրաժարական բարև պիտի տայի, և այնչափ հեռու պիտի երթայի, որ միայն նամակներէ պիտի իմանայի անոր վիճակը: Այս տրտմալի պարագայ մ'էր: Եւ միւս կողմէ, նոյն առտու ամպերու տեսքն և այնպէս զարհուրելի կերպով հովին փչելն, ո՜հ, շատ դժուար է, մտածեցի:

Այս գարնան առաւօտն այս տեղնստած ատենս ինձ այնպէս կ'թուի որ ասոնք դեռ ևս երեկեան բաներ են: Կ'յիշեմ որ աղաւնիներն տան քիւներուն ներքև կ'թաղչին և ինչպէս որ սովոր են ընելու ամառը, կատարը չեն նստիր, և հաւերն ախոռին մօտ կ'խռնէին որպէս թէ աշնան ցրտէն խոյս կ'տային: Եւ պարտիզին մէջ սպիտակ մոլոշավարդ (hollyhock) կ'գողգողային և հովին կ'ծռէին որպէս թէ իրենց օրը հասած լինէր: Անուշահոտ գեղին սերխերն սառնահար այգիներու մէջ որոշակի կ'երևէին, և պաղուկ ու անհանգիստ երես մ'ունէին:

Դարձեալ ուրչափ բարեսիրտ էին տնեցիք: Խոհարարն իմ նախաճաշս համար ընտիր բաներ պատրաստեր էր, վասն զի փոքրիկ տատէրը պիտի մեկնէր. Լիլլի կրակին մօտ իր տեղը կ'տար ինձ և իր շաբաթի կտորն իմ թասիս մէջ կ'գնէր, իսկ մայրս այնքան ծիծաղերես և գրավալի էր, որ կարծեցի թէ առաջուանէ աւելի կ'սիրեմ զինքը: Փոքրիկ պէնն ևս շատ զուարթ էր, կ'առաջարկէր որ իր զմելին առնում,

եթէ կ'ուզեմ, թէև գլխէր որ մնաուկիս մէջ նոր մ'ունէի։ Մեր պառաւ դայեակն փոքրիկ քսակ մը տուաւ ձեռքս գաղտնի, կանաչ ժապաւէնով զոցուած էր, և պատուիրեց որ Պէնի կամ Լիլիին բան մը չըսեմ։

Եւ Զապէլ՝ քեռւոյս աղջիկն որ իբրև այցելու ներկայ էր, եկեր իմ աթոռիս մօտ կեցեր էր՝ երբ մայրս ինձի հետ կ'խօսակցէր. ձեռքս բռներ էր և երեսս կ'նայէր. բայց խօսք մ'անգամ բերնէն չէր հաներ։ Տարօրինակ երևցաւ ինձ այս լռութիւնն, սակայն տարօրինակ բանի մը տեղ չդրի երբ տեսայ որ բան մը չեմ կարող ըսել անոր։ Դրնամ ըսել թէ մի և նոյն զգացումն ունէինք։

Ի վերջէ Պէն վազվզելով եկաւ ներս և խնայուց թէ կառքն եկեր էր, և իրօք՝ պատուհանն տեսանք զայն. դեղին փայլուն կառք մի էր՝ չորս սպիտակ ձիերով, վրան շատ մը տուփեր կային, իսկ ետին կոյտ կոյտ արկղեր։ Պէն ըսաւ թէ մեծ կառք մ'էր, և թէ կ'փափաքէր որ ինքն ալ հեծնէ. իսկ պառաւ դայեակը դուռն եկաւ և յայտնեց թէ պատուական օղով պիտի ճամբորդեմ, բայց ես կ'տարակուսէի որ դայեակը ճշմարիտը կ'խօսէր, թէև կարծեմ թէ նա անկեղծ համբոյր մը տուաւ — և ինչ գրկանք։

Բայց մայրս աւելի կաթոգին գրկեց զիս։ Ըսաւ ինձ որ մարդ լինիմ և Տրոյացիի պէս բան սորվիմ, բայց ես այն ատեն ուսմունքի վրայ չէի խորհեր։ Կառքին մէջ բարձրահասակ տղայ մը կար, և չէի ուզեր որ իմ լայս տեսնէ. ուստի առաջ չլայի։ Բայց կ'յիշեմ որ՝ երբ ետևս նայելով Զապէլը տեսայ որ փողոցին մէջ տեղը կ'վազէր որ կառքին մեկնիլը դիտէ, երբ տեսայ իր գանգուրներն որ հովէն կ'ծածանէին՝ զգացի որ սիրտս սաստիկ կ'տրոփէր և աչերս կ'լեցուէին — կ'յիշեմ նաև թէ ինչպէս ինձ նայող մեծ տղան աչքիս զարկաւ, ինչպէս աչքս ուրիշ տեղ դարձընելու փորձեցի՝ ջանալով իմ մեծ վերարկուս կոճկել կոճակի ծակերն իրարու հետ շփոթելով։

Բայց անօգուտ եղաւ. գլուխս կառքին պատուհանէն դուրս հանեցի, և ետևս նայեցայ, այն միջոցին որ Զապէլի պզտիկ գէմբր կ'անհետանար, և ապա տունը, և ապա ծառերը. և արտասուքս սկսան հոսիլ. և թաշկինակս դուրս հանելով շարժեցի առանց գառնալու, այնպէս որ կարող էի աչունքս սրբել զիս մեծ աղան տեսնելէն առաջ։ Ո՞րտեղ թէ այս առաւօտեան ստուերներր կ'փարատին, քա՛ի արևը կը փայլի միջօրէին, բայց դարձեալ շատ մեղմ ստուերներ են ասոնք։

Թող հայր մը կամ մայր մը լաւ խորհի իրենց զաւակը դուրս գրկելն առաջ — այն մնայնի կապերն՝ որ տղուն սրտին բոլորն սիրոյ անթիւ ու նուրբ ոստայն մը կ'յօրինեն, կարելէն առաջ թող մտածեն, թող մանկական աշխարհ մը զանի նետելէն առաջ, ուր իր ծաղիկ հասակն այլ և այլ վէճերով և կռիւներով պիտի անցրնէ, թող խորհին։ Իրաւի կան տղեկներ որ նրբազգած, քնքուշ սիրտ չունին, և որոց համար հեռաւոր դիւղին վարժատունն արտաքին զրօսանք մ'է, և որ 'ի դարձին իրենց բնիկ կոշտ զգացումներն աւելի զօրութիւն առած կ'երևին, այն բոյսերուն նման որ առանց տերև մը թափելու կարող են բաց օդին ամիլ և մնական կենաց ջերմոյը վերադառնալ քան զառաջինն ուժեղ և յոսալից։ Բայց կան նաև տղեկներ որ երբ իրենց քոյրերուն խօսակցութենէ զրկուին, երբ մօր մը ներողամիտ գորովը չվայելեն, և մնայնի խորանին անշնարելի ներգործութենէ հեռու մնան, այնպիսի հարուած մը կ'ընդունին որ ընդ միշտ կ'տանէ. անագորոյն ձեռք խզել է ինչ որ խստութիւն չկրնար տանիլ, և այն հառաչներն որոյ հրաժարական ողջոյնները կ'արտասանեն, հառաչներ են որ ապագայ տարիներու մէջ աւելի ուժգին, աւելի անդուլ և սոսկալի կերպով 'ի դարձին լսելի պիտի լինին։

Ասուած թող այն տղեկին որ կանուխ հառաչելու կ'վարժի։ Երբև զգացում դատապարտէ զայն, եթէ կամիս, որչափ կամիս գովէ տղեկին սրտին անվեհերութիւնն և ոյժը, սակայն սիրոյ այնպիսի անուշալուր թելեր կան որ երբ զգնուին դաշն և քաղցր երաժշտութիւն մը կ'հանեն, որ կենաց ամէն ներդաշնակութեանց համար ականջը կ'սփոփեն և հաստուն կ'որձեն։ Այս թելերն եթէ փոքր ինչ դաժան և անբնական կերպով ձկտին կ'կտրին, և ընդ միշտ կ'կտրին։

Ուրեմն հսկէ տղուդ վրայ՝ եթէ 'ի բնէ կարող է բռնադատում կրել, իր բնութիւնը փորձէ՝ եթէ անդուլ է կամ փափուկ, և եթէ փափուկ է՝ յանուն Աստուծոյ, եթէ քու և իր անգորրութիւնն աչքիդ սրժ ք մ'ունին, մի ներշնչեր անոր պատանեկան դժնեայ ոգի մը, որով իր ընտիր զգացմանց փափկութիւնն ու ճոխութիւնը զսպելու և մոռնալու իրեն փոյթ համարի։

— Կ'տեսնեմ այժմ՝ անցեալն նայելով, տղոց խումբերն որ մեծ խաղարանին մէջ ցրուած էին, մինչ եռ կառքը գիշերայն կ'ընթանար։ Դպրոցը բարձր ու հոյակապ շէնք մ'էր՝ կատարը դմբեթ մ'ունէր, որուն վրայ երկել կ'փափաքի։ Տոնն՝ ըսեր էին ինձ որ մարժապետը բարեսիրտ էր. նա յայտնեց ինձ թէ կ'յուսայ որ լաւ տղայ մը պիտի լինիմ և գլուխս շոյեց, բայց մօրս շոյած կերպով չբրաւ։ Կար նաև

կին մ՚որ անտեսուհի կ՚կոչուէր, զգակին վրայ անհամար ժապաւէններ կային. իմ ձեռքս թոթուեց — բայց այնպէս պինդ, որ անոր երեսը նայելու չհամարձակեցայ:

Տղայ մը գիս առնլով վար տարաւ որ զպրոցին սրահը ցուցնէ. այս սրահը գեղանայարկն էր, և պատերը, ինչպէս որ կ՚ասիշեմ, բորբոսեալ. և երբ դունէ մ՚անցանք՝ նա ըսաւ. «Այս տեղ բանտ մը կայ»: Նոյն պահուն ինձ՚ի զգացի: Այս տղան կ՚ատէի, բայց կարծեմ թէ այժմ մեռած է: Ապա անտեսուհին գիս իմ սենեակս տարաւ. երկու մահճակալ ունէր, երկու պատուհան, մէկ կարմիր սեղան և դահլիճ մը. իսկ իմ սենեկակից ընկերս իմ հասակս ունէր, և լայն ու այլանդակ բաճկոն մը հագեր էր հաստ զանգակաձև կոճակներով. նա վարժապետին «Ցնդած ծեր» կ՚կոչէր, և գիս մինչև կէս գիշեր չթողուց որ քնանամ՝ պատմելով ինձ թէ ինչպէս աշակերտները կ՚ծեծէր, և ինչպէս իրեն խաղեր կ՚խաղային: Մտածեցի որ իմ ընկերս տարօրինակ տղայ մ՚էր:

Մէկ երկու օր դասերը շատ դիւրին երեցան ինձ. նոյնպէս մեծ ուրախութիւն էր այնչափ տղոց հետ խաղալը: Բայց քիչ ատենէն, երբ գիշերները անկողին կ՚մտնէի, սկսայ զգալ որ մինակ եմ: Սովոր էի փափաքիլ որ մայրս գար և գիս համբուրէր. կ՚փափաքէի նաև որ զպրոցէն երթալէն ետև՝ տուն դառնայի և Զապէլին ըսէի թէ որչափ ժրաջան եմ և շուտով զատերս կ՚ուսնիմ: Երբ իմ ընկերիս այս ըսի, նա սկսաւ գիս ծաղրել և ըսաւ թէ այն տեղն «ծնողատենչ և դունատ տղոց» տեղը չէ: Չէի կրնար հաւատալ որ իմ ընկերակիցս մայր մ՚ունենար:

Շաբաթն անգամ մը մանր ծախուց համար գրամ կ՚ստանայինք, գիւղին նպարավաճառն կ՚գնէինք, միասին պաշար կ՚գնէինք որպէս զի օշարակ շինենք: Քանի մ՚աշակերտներ եւեթ օրը ստակ կ՚պահէին, թէև կանոնի հակառակ էր, և կ՚ասիշեմ որ մէկը հինգ տալերոց թուղթ մը ցցուց մեզ — և ամենքնիս ալ կարծեցինք թէ շատ հարուստ էր:

Կիրակի օրեր կարդաւ գիւղին եկեղեցին կ՚երթայինք: Գաւթին մէջ երկու երկայն նստարաններ կային, որ մինչև դասը կ՚հասնէին. ահա ասոնց վրայ կ՚նստէինք: Ի սկզբան մանր տղոց մէջ էի, և պատին մօտ էր իմ տեղս՝ բեմին ներքև. բայց վերջէն, երբ մեծցայ, առաջին նստարանին վարի ծայրն եկայ: Այս փոփոխութենէ չխորժեցայ, վասն զի անցուդարձի ճամբուն վրայ էր. ասկից զատ՝ շատ անգամ քա-

նի մը գիւղացի կիներու մօտ կ՚գտնուէի, որ ցից գլակներ կ՚հագնէին, սամիթ կ՚ուտէին և ձայնաւորներուն հետ կ՚երգէին: Բայց կար նաև փոքրիկ սեակն օրիորդ մ՚որ դասին ետեր կ՚նստէր, և աղոր գտեր էի. սովոր էի սաեպ անոր նայելու, բայց նա կ՚զգուշանար իմ աչքս գիտելու:

Ուրիշ մ՚ևս վարը՝ վանդակապատ նստարանի մը վրայ կ՚երևէր, և շատ սիրուն էր, և ձմեռն մուշտակաձիր գլակ մը կ՚հագնէր: Զպրոցին մէջ շատ տղաք կ՚ըսէին թէ օրին մէկն անոր հետ պիտի կարդուին: Միոյն անունն էր Յովհաննա, միւսինը Սոֆիա. մեզի աղոր անունները երևցան և սաստկին վրայ խաղալու սատն կ՚գծէինք: Բայց ասոնց և ոչ մին Զապէլին չափ սիրուն դատայ:

Մի անգամ դասատու մը գիս ձաղկեց. զպրոցին մէջ արիաբար այս ծեծը կրեցի. բայց ապա՝ գիշերն՝ երբ ընկերս քնացաւ, դատնապետ լայի՝ Զապէլին, Պէնին և մօրս վրայ խորհելով և յիշելով թէ որչափ կ՚սիրէին գիս. և երեսս ձեռքիս մէջ դնելով մինչև քնանալս հեծեցի: Առաւ՝ բաւական հանգարտ էի. իմ սրտիս մէկ ուրիշ թեն ալ խորտակեր էր՝, բայց այն ժամանակը չգիտէի: Իմ հայրենի տանս համար ունեցած հին սէրս նուազեցուց, վասն զի այս ոչ կ՚պաշտպանէր և ոչ համակրութեամբը կ՚սփոփէր գիս: Երաւ՝ յիշողութիւնս կ՚զօրանար, բայց դառնութեամբ և վշտօք: Եթէ տղու մը սէրն օրական սնունդով չես կարող կազդուրել՝ հպարտութեան, անտարբերութեան պիտի դիմէ և իր հոգին օտարոտի բաներ գտնելու պիտի ձգնի: Եթէ նա չէ կարող արևուն բանալ իր ոստերն, 'ի մթան պիտի աճի, բաղդին ուղղուած պատահական նշոյլներուն անզգայ մնալով:

Երբեմն գիւղին և զպրոցին տղոց մէջ գժտութիւն կ՚ծագէր. բայց սովորաբար այնպէս աղմուկ և շփոթ հանելով կ՚անցնէին՝ ինչպէս կ՚անցնին մեր փոքրոգի քաղաքացիներու պատերազմները . . . : Երկու կողմն ալ քաջախոյժներ կային . . . : Կար նաև Լէոլի անուն աշակերտ մ՚որ բարեկամներ ունէր անշուշտ հեռաւոր երկիրներ, և մերթ ընդ մերթ օտար դրոշմով նամակներ կ՚ընդունէր: Այն ինչ կարդէ դուրս տղայ մ՚էր, ինչ կարդէ դուրս նամակներ և ծնողք: Կ՚զարմանայի և կ՚ըսէի թէ արդեօք ես ալ «օտար աշխարհէ» դիր պիտի ընդունիմ, արդեօք ես ալ պիտի գրեմ հատ մը. բայց այս անհեթեթ տենչ մ՚էր: Ինչպէս, ես, Պօղ, որ կապոյտ կապայ մը կ՚հագնէի ոսկեզօծ կոճակներով, և թիւ 4 կօշիկներ՝ աշխարհայոյց տախտակներուս մէջ յիշուած քաղաքներն երբեք պիտի ուղևորէի: Ոչ, ոչ, այս ալ-

լանդակ բան մ'էր. սակայն գիտէի որ պիտի ձամբորդեմ, եթէ հասակս առնէի — ուխտեցի որ ուղևորիմ, Դիւ Եօրք ուղևորիմ։

Թիւ 7 հի անդանոցն էր, արգիլեալ հողը. ամէնքիս այ սեսակ մը սոսկումունք ունէինք 7 թիւէն։ Քի անդամանդ աղայ մը մեռաւ, և՝ բարէ, ինչպէս կ'ողբար և ինչ աղէսալի ժամ էր երբ հայրն եկաւ հասաւ։

Թում Պէյդրն անուն աշակերտ մ'որ մոխրագոյն չոխայ զգեստ կը հագնէր, դպրոցին մօտ՝ վասկի մը մէջն թումբ մը շինեց և սղոցաւոր աղօրի մը յօրինեց որ այժմ կ'սղոցէ. հանճար ունէր այս տղան։ Կ'յուսայի որ ամերիկեան գործարանի մը գլուխ կ'տեսնեմ զանի, բայց ցաւ'ի սիրտ կ'իմանամ որ գեղարան մը բացեր է։

Դպրոցական ամէն շրջան աւարտելէն ետև՝ հանդէսներ ունէինք, ուր բոլոր քաղաքացիներու կ'գիմէին, որոց մէջ կ'գտնուէին նաև սեպհ Յովհաննան և սիրուն Սոֆիան՝ մուշտակածիր գդակով։ Մեծ եղաւ իմ յաղթանակս, երբ Բիլարդոի մէկ հրամանատարին դերը խաղացի, դպրոցէն երեքս աւարթիս։ Ինչ վէս կերպարան ունի . . . .

Հետևեալ իրիկունն՝ մեր թատերական գլխարկներով կառքին կատարն երանք նստանք և դպրոցէն հրաժեշտ տուինք։ Դասապետը՝ կանաչ ակնոցներով՝ դուրս ելաւ որպէս զի մեր ձեռքը թոթուէ . . . . Խեղճ մարդ հիմակ գերեզմանին մէջն է։

«Հին դպրոցին համար» երեք անգամ բարձրագոչ կեցցէ, պոռացինք. դարձեալ գիւղին վրայ նայող բլրին գագաթին որ հասանք նոյն աղաղակը կրկնեցինք . . . . Երբ եղևին ծառերու ներքև եկանք՝ սեպհ Յովհաննային՝ նոյնպէս միս օրիորդին նկարը յիշեցի, և մտածեցի թէ արդեօք ի՞նչպէս կարող պիտի լինիմ՝ դպրոցական հանդիսան աւարտելէն ետև՝ վերադառնալ՝ իբրև մարդ մը, բարձր գլխարկով և պաւարանով, և փառաւոր կառք մը հեծած. թէ ի՞նչպէս պանդոկին լապտոն սենեակը պիտի վարձու բռնէի՝ և իմ վաղեմի վարժապետս պիտի զարմացնէի անոր ուսին ընտանեբար զարնելով, և թէ ի՞նչպէս զարմանք պիտի պատճառէի մուշտակածիր գդակ հագնող օրիորդին։ Աւաղ, ինչպէս մեր մտածմունքն մեր գործերէն ընդ առաջ կ'անցնին։

Շատ ու շատ տարիներ անցան իմ հին դպրոցս չտեսայ, և երբ վերջապէս նոր աշխարհ տեսայ մեծ մեծ փոփոխութիւններ իմ բոլոր խորհուրդներս փ շի դարձուցին։ Այլ ես չխորհեցայ գի զեր իրար անցընել և սեպհն օրիորդներ հիացրնել։ Ոչ, ոչ. բաւական սեպեցի փոքրիկ քաղքին մէջէն հանդարտիկ սահիլ մէկ երկու արտասուք թափելով՝ քանի մեռեալները յիշելի և կենդանի ունայնութեան վրայ մտածելի։

ԾՈՎԸ

Երբոր յետոյս կ'նայիմ, մանկութիւնն իր ցաւերով և հոգերով պատանեկութեան վէս պերճութեան մէջ կ'նուազի։ Դպրոցական կենաց փառասիրութիւնն և ուրախութիւններն, իր առաջին պարծուկ կարևորութիւնն, քանի գիտութիւնը կ'ծագի արթուն մտաց վրայ, կ'սահին կ'անցնին իմ յիշողութենէս, մարդերու վրայ համասիւռ փչող քամիին նման, և ասոր պէս նաև, իրենց թևերուն վրայ սառնաշունչ ցրտութիւն մը կ'բերեն։

Պէն մեծցեր գրեթէ մարդ եղեր էր. Լիլի հեռաւոր տուն մը կը բնակէր, և Իզապէլ կ'ծագէր այն անուշհասակի մէջ երբ կնային մեծավայելչութիւնն իր գեղեցկութեան կ'սպասէ. տարիք մ'որ վշտագին կ'շփոթէ այն որ նէրա մօտ ապրեր էր — այնպէս որ լեզուն կ'կապուի, բայց սիրտը կ'վառի։

Ծովն իմ շուրջս է։ Ցեռին սարաւանդներն հորիզոնին ներքև կ'սուզին, քաղքի աշտարակներուն նման՝ երբ ամայի դաշտերու մէջ մոլորիս, կամ հանճարի վսեմ խորհուրդներու նման՝ երբ բանահիւսին դրուածքէն կ'սահիս քու յատուկ հանդարտիկ մտմտուքիդ կ'դառնաս։

Ջրերը կ'պատեն զիս, աջ ու ահեակ. ջուր կայ միայն իմ դէմս, ջուր միայն իմ ետևս։ Գլխուս վերևն օդապար ամպեր կ'երևին, կամ կապոյտ կամարը զոր տղայական աղատութեամբ երկին կ'անուանենք։ Առագաստներ՝ սպիտակ ու հովալիր՝ իբրև զօրավիգ բարեկամներ՝ զիս ընդ առաջ կ'մղեն, և գիշեր ուցերեկ կ'յաջորդեն իրարու՝ հովերու պէս՝ որ կ'գան ու կ'երթան ոչ ոք գիտէ ուստի՝ և ոչոք գիտէ ուր։ Ցամաքի թռչուն մ'որ օդին մէջ կ'սաւառնի, ընդ երկար թռելէն յոգներ մոլորեր է այնպիսի աշխարհի մը մէջ ուր չկան ուրիշ անտառներ բայց միայն կողմնահակ կայմեր, և ոչ ուրիշ տերևներ, բայց միայն փրփրադէզ հոսանքը։ Պահ մը նաւուն շրջանակին վրայ կ'դադարի, բայց հայրենի տենչով մը վառեալ հովին գիմադրաւ կ'սրանայ և ալէծուի ջրերուն մէջ կ'իջնէ կ'ելնէ, մինչև որ ուժը կ'սպառի, և կապոյտ կոհակներն իրենց պաղ ու սառնորակ ծոցը կ'ընդունին ողորմելի թռչնիկը։

Բոլոր առաւօտ՝ իմ առջևս ուրիշ բան չեմ տեսներ բայց միայն ջուր կամ յարաշարժ կէտերու խումբ մը. բոլոր միջօրէին՝ եթէ հորիզոնին վրայ ճիւաղադէմ սպիտակ առագաստ մը չտեսնուի, ուրիշ բան չերևիր

բայց միայն հոսանուտ ծովը. բոլոր իրկուն՝ արեր խոշորնալով մարը մանելէն, և լուսինն՝ սպիտակ ու պաղ ելնելով փրփրալի ովկիանու սարերու վրայ շողալէն ետև՝ ուրիշ բան չտեսնուիր բայց միայն ծովն ու երկին որ մարդուս միտքը կ'վերացընեն կամ իրենց վսեմութեամբը կ'ճղմեն։

Մինչդեռ այսպէս ժամերով կ'նստիմ բարձրաւանդակին (taffrail) վրայ, կ'դիտեմ լուսնկային ահագին կոհակներ որ հեռուն կ'գիղուին և կ'խորտակին — և աւելի մօտենալով կ'գիղուին և ահեղագոչ կ'խորտակին — և դարձեալ գիղուելով կոնչողնաւուն ներքև կ'թաւալին արագ և ահաւոր, զայն թեթևակի վեր կ'հանեն ուռելով և վերսին մեղմիկ կ'նետեն իրենց եռուն և փրփրալի օրորանին մէջ, մօր մը գրկաց մէջ օրորող մանկան պէս, կամ առնի մտածութեան կոհակներու վրայ իրրև աղօտ յիշատակ։

Խիճը կ'զարթնու. ովկիանու լոին դիշերներն. կեանքն իրրև դիրք մը բայց կ'մնայ և ծովուն պէս հարթ հաւասար կ'հոսի։ Գիշերային սրաթռիչ թռչուններու պէս վիշտ, կարօտ և թերի խորհուրդներ կը սաւառնին հոգւոյն վրայ, և յիշողութեան բազմայոյզ այլ վճիտ անդունդէն որոշու պայծառ դուրս կ'ելնեն մեր անկայուն գործոց տխուր վախճանը։

Սակայն իմ գտնուած ալէծուի աշխարհին վրայ համակրութիւնները կ'ամիոփին և՝ ինչպէս ցամաքի վրայ՝ չեն կարող հազար տեսակ առարկաներու վրայ տարածուիլ։ Ա'զարմանաս որ ուշդ կ'դրաւէ վախտ օրիորդ մ'որու գունատութեան յաջորդեր է ծովային կենաց կայտառութիւնը։ Եռանդագին միտ կ'դնես վարէն լսուող պատահական երգի ձայներու և կ'յափշտակուիս, մինչդեռ երկար առաւօտներ կ'հսկես։ Ա'խորժիս տեսնել ներա փոքրիկ ոտքն որ անկայուն կամրջին վրայ կ'ելերին, և չափէն աւելի կ'բերկրիս երբ ներա քայլը ուղղես և մարմնոյն ծանրութիւնը թեթիդ վրայ զգաս, մինչդեռ նաւն սպառնալի ծովուն վրայ կ'ճղնի։

Ովկիանու վրայ յոյս և երկիւղ միրովին կ'կցորդին։ Կարծես թէ ամէն օր անոնց նոր մտնդ կ'տայ. քու առաւօտեան ողջոյնդ՝ բայակայութենէ ետք ծովեզրի վրայ եղած տեսակցութեան կ'նմանի, և ամէն «բարի դիշեր» ցամաքի վրայ տրուած ողջոյնի մը մեծութիւնն ու լիութիւնն ունի։ Եւ ովկիանու վրայ դեղեցկութիւնը կ'ծաղկի։ Ի հարկէ չես կարող ըսել որ սիրուն ուղևորին դէմքը քան Իղապէլինը չքնաղ է. Ա'հ, ոչ, բայց այս ստոյգ է որ անմեղ և բարեկիր ակնարկներ կ'արձակ-

կես ներա վրայ, մինչդեռ ներա քայլը կ'սնդես կամրջին վրայ աւելի ստէպ քան զառաջինն. և ծովային կեանքն ու համակրութիւնն զինքը բարեսիրա կ'ընէ. քու անվայելուչ ընթացքդ այնքան ծանր չգտներ որչափ որ պիտի զտներ եթէ ինք ցամաքի վրայ լինէր։

Իրկուն մը պիտի հսկէ նէ և նախ իր մօրը հետ պիտի վերը մնայ խօսակցի, քու քովդ պիտի կայ առնու, իր սպիտակ ձեռնն ցանկին վրայ դնելով քու ձեռքդ ոչ շատ հեռու. վար ծռելով պիտի նայի սև նաւն որ քանի սուրայ զմրուխտէ պսակներ կ'յօրինէ. կամ վեր պիտի նայի նէ (կարելի է մտածելով որ դու ևս նոյն տեղը կ'նայիս) երկնից երեսը, աստղ մը փնտռելով որ երբեմն իր դրային էր տունը։ Ծովու ամայութեան մէջ մանր մունր վէպեր պիտի պատմէ իրարու. հին քերթուածներու կտորներ պիտի արտասանէ օրիորդն դողդոջուն շրթերով — թերևս նաւուն շարժումն, կամ սպիտակ ձեռքին մէկ պատահական դպումն։

Բայց ովկիանոսն իր փոթորիկներն ունի, մինչդեռ երկիւղն տարօրինակ և նուիրական բարեկամութեան զգեր կ'կապէ, և աստ ևս իմ յիշողութիւնս կ'հայթայթէ ինձ յանկարծ ահեղ մրրկի մը նկարագիրը։

Ահաւոր դիշեր մ'է։ Նաւորդները վարը հաւաքուած կ'դողդողան։ Ամէն տախտակ կ'դղրդի, և կաղնի կողքը կ'շառաչեն որպէս թէ կը տառապին վաստակաբեկ։ Ամէն ձեռք գործի է, նաւապետն իր օգնականին հրամաններ կ'արձակէ բարձրաձայն, և ես կողմնացոյցին մէկ խեչակէն բռնած կեցած եմ։ Նաւը մոլեգնաբար կ'տատանի և ալիքն վեր կ'ոստնուն և երբեմն այնքան կ'բարձրանան որ առաղաստակալին ծայրը կ'հասնին և ապա դողը կ'թափին այնպէս պտոյտներով որ նաւուն մէն մի ատաղձը կ'սարսի։ Երկին կ'գոռայ որպէս թէ անհամար թնդանօթներ կ'պայթին, և երբ՝ մերթ ընդ մերթ հրափայլ հոսանք մը ամպերը պատռելով կոհակներուն սարը կ'լուսաւորէ, թաց կամուրջն ուցանկերը կ'շողացընէ — այնպէս պայծառ լոյս մը սփռելով՝ որ կարող եմ կայմին ծայրը տեսնել նաւաստիներուն դէմքը և առաղաստակալին վրայ կ'նշմարեմ օղալամբատարներն (reefer) որ մահուան պէս կը յարին — ապա ամէն ինչ ահռելի մթութեան մէջ կ'ընկղմի։

Փրփուրը զայրագին կ'ժայթքի կտաւին դէմ. ալիքը լեռներու պէս նաւուն դլուխը զարնելով կ'խորտակին, հովը պարաններուն մէջէն կ'ոռնայ և երբ առասան մը կ'կտրի, առաղաստն հովին կողմն ուղևորելով՝ հրացանի պայթումի պէս կ'պատռուի։ Ա'լսեմ նաւապետին ձայնն որ հրամաններ կ'աղաղակէ, և օգնականն որ նոյն հրամանները

կ'գոչէ մինչև որ փայլակն և ապա որոտումը դալով կ'փարատէ անոնց աղաղակներն որպէս թէ ՀՀՇող ՀՆՀՁՂՈՒԿՆԵՐ լինէին։

Անդամ մը փայլակին լուսովը կ'տեսնեմ ձեռք մ'առագաստակալին վրայ. նաւաստին ոտքը կ'սահի՝ նաւը խորասուզելու ատեն, բայց իր թևերովը կ'փաթթուի ցանկին։ Մթութիւնը դալով ուրիշ բան չեմ տեսներ և որոտընդոստ շանթն իմ ականջս գրեթէ կ'խլցունէ։ Կարծեմ լսել մեղմ ձայն մը, և մրմունջներ որ երթալով կ'նուազին հեռուն, և երբ նորէն կ'փայլատակի՝ կոհակի մը սարը կ'նշմարեմ ողորմելի օղալամբարարն որ ծովն ընկեր էր։ Փայլակն անոր դէմքը կ'լուսաւորէ։

Բայց ընկնելու ատեն կոյտ չուանի մը կտորը բռներէր, որ կամրջին վրայ կ'դալարի։ Բոլոր ուժովս կ'սրամամ. «Մարդ մը ծովն ընկաւ» և պարանը կ'բռնեմ երբ դարձեալ չորս կողմը մութը կ'կոխէ։ Ծովը շատ ալէկոծ է, և մարդն ինձի համար շատ ծանր։ Դարձեալ կ'աղաղակեմ, կ'աղաղակեմ շարունակ, և ՀՀակոէս առատ քրտինք կ'հոսի տեսնելով որ չուանը մատերէս վար կ'սահի։

Նոյն պահուն նաւապետը կ'յաջողի իմ քովս դալու, և կ'սկսի ինձի հետ քաշել, ապա խոհարարն օգնութեան կ'հասնի և միասին կ'քաշենք։ Յուսահատական գործ մ'է այս նաւաստին համար, վասն զի նաւը սոսկալի կերպով կ'տատանի, բայց նա կիսամեռ մարդու մը պէս պարանին փաթթուած է։

Քիչ մ'ետք՝ փայլակին լուսովը կ'տեսնենք նաւաստին կոհակի մը վրայ, և նաւէն երկու թիակի երկայնութեամբ հեռու է։

«Պինդ բռնէ, բարեկամ» կ'պոռայ նաւապետը։

«Ատուծոյ սիրոյն, շուտ ըրէք» կ'ըսէ խեղճ մարդը, և երկու աչքերս մէջ կ'ընկղմի։ Կ'սկսինք աւելի ուժով քաշել, և նաւապետը շարունակ կ'պոռայ անոր որ արիանայ և պինդ բռնէ։ Բայց լռութեան ատեն կ'լսենք նաւաստին ձայնն որ կ'ըսէ. «Չեմ կարող աւելի ես դիմանալ — պէտք է որ թողում։»

Ի վերջ մարդը քաշելով կ'բերենք այնչափ մօտ որ կարող ենք զանի բռնել, և միայն կ'սպասենք որ ծովը բարձրանալով զանի վեր հանէ, երբ յանկարծ մարդը կ'հեծեծէ. «Անօգուտ է . . . այժս հատաւ . . մնաք բարեաւ»։ Եւ կոհակ մը չուանին վարի ծայրը նաւուն կողերուն կ'զարնէ պարապ։

Երկրորդ փայլակին՝ կ'տեսնեմ մարդն որ ծովուն տակը կ'սուզի։ Դանը ծանր վար կ'իջնեմ՝ հիւանդ ու սրտաբեկ. կ'նետուիմ փոքրիկ անկողնոյս մէջ և քնանալու կ'ՀՀգնիմ։ Բայց որոտումն ու նաւուն ելևէջը, և ծովամոյն մարդուն դէմքն որ ամէն կողմէ կարծես թէ աչքիս կ'երևէր, չթողին որ ննջեմ։

Հուսկ ուրեմն ծովը կ'հանդարտի, նաւն անոր վրայ կ'սրանայ՝ իր ետևէն թողլով գիշերայն՝ փոսփորեան շքեղափայլ շաւիղը։ Նաւաստիները կամրջին վրայ կ'երթևեկեն, որպէս թէ ընկեր մը չեն կորուսած, և ՀՀամբորդներն՝ երկիւղի զունատութիւնը կորուսելով եռանդաղին ցամաքի հետք կ'փնտռեն։

Ի վերջ իմ աչքս Բրիտանիայ ցանկալի դաշտերուն վրայ կ'հանդչին, և օր մ'ևս անցնելէն ետև՝ իմ քովս գտնուող դեղանի օրիորդին պայծառ դէմքը կ'շողայ՝ Էսսէքսի դալարաւէտ ծովափանց վրայ սիրուն հիւղերը դիտելով։ Լայն առագաստով նաւակներ, որ տարօրինակ այլ դեղեցիկ կ'երևին, թէմզի ջրերու վրայ կ'սահին կարապներու պէս. սև, քառակուսի կուրեր ածխալի, խումբ խումբ կ'կենան իրարու մօտ, և ծանր, եռայարկ նաւեր մակընթացութեան հետ հանդարտիկ վեր կ'ելնեն։ Մթագոյն, սպիտակ ու կարմիր ծխահաններով շոգենաւեր՝ սուրալով կ'անցնին մեր քովէն և դէպ 'ի ծով կ'դիմեն, և ահա աչքս կ'դադարի Կրինիչի մեծ ապարանին վրայ։ Կ'տեսնեմ փայտոնն զօրականներն որ պալատին պատերուն տակը կ'ծխեն . . . :

Ի վերջ՝ մթին տանկերու մէջէն Ս. Պօղոսի գմբեթն, Կրակի Կոթողն և Լոնտոնի Միջնաբերդին սպիտակ աշտարակները կ'նշմարեմ։ Մեր նաւն ահագին աւազաններուն դռնէն կ'սահի և կայմերու անտառի մը մէջ՝ որ Բրիտանացւոց ոսկի պտուղներ կ'բերէ, իր խարիսխը կ'նետէ։

Այն գիշեր «իմ հին դպրոցէս» շատ հեռու կ'պառկիմ։ Ընդ երկար կ'տապալիմ իմ անկողնոյս վրայ՝ Լոնտոնի այլ և այլ նշանաւոր վայրերն իմ աչքիս առջև բերելով. . . . Եւ երբ վերջապէս կ'քնանամ՝ անուշ երազներ կ'տեսնեմ, բայց այս երազները գիս կ'առնուն կ'տանին ովկիանոսէն անդին, Լոնտոնէն հեռու, նոյն իսկ սիրուն ուղևորուհիէն հեռու — իմ վաղեմի կաղնիներուս ներքև, իմ առուակներուս մօտ — քու քովդ, անուշիկ Իզապէլ։

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Մեծ տարբերութիւն կայ ծովային կենաց դիւր և անզարդ ընթացքին և ցամաքային կենաց շքեղազարդ և պայմանական ձևերուն մէջ։

Նաւու մէջ սակաւաթիւ են մարդիկ որոց հանձելի լինելու կ'փափաքինք և ասոնք իրարու ծանօթ են, իսկ ցամաքի վրայ աշխարհ մը կայ, և օտարներու աշխարհ մը։ Փառաւոր սրահի մը մէջ՝ որ հին Զերին Քրօսի մէկ կողմն, և միաթև Նելսօնի վրայ կ'նայի, Նելսօնն որ կանգուն կ'մնայ իր պարանի կոյտին մօտ, իմ ծովային դեղանի ընկերուհւոյս հրաժարական բարեւս կ'տամ։ Իր սպիտակ առ անին զրեստին տեղ մուտքսէ զրեստներ հագեր է, և պարզ, անշուք գլխանոցը՝ զոր ովիլանոսին վրայ կ'կրէր՝ հանելով նորելուկ գդակ մը դրեր է։ Սակայն իր դէմքը մի և նոյն փայլն ունի, և իր աչունքը կ'շողան, ինչպէս որ ինձ կ'երևին, աւելի վէսութեամբ. և կարծեմ թէ իր փոքրիկ ձեռքը կը գողգողայ (անտարակոյս խմն ալ գող կ'ելնէ) մինչդեռ անոր հրաժեշտս կ'տամ և ասա կ'սպիտ Անկլիոյ մէջ իմ աստանդական ուղևորութիւնս շարունակել։

Հին Անկլիա դեռ ևս հին սիրելի Անկլիան է, թէև որչափ որ կ'ուզես թշնամանէ զայն, որչափ որ կ'ուզես իր սովամահ գիւղացիներուն վրայ գթա, որչափ որ կ'ուզես ծաղրէ անոր արքունական շքեղութիւնը։ Իր հիւղերն, իր գալարի դաշտերն, իր գղեակները, իր տաքուկ տունները, իր եկեղեցւոյն սլաքները բանաստեղծութեան չափ հին են, և զանոնք կ'ժառանգենք սրտովին իր երգերովն ու վէպերովը։

Արևմտեան սաքսօնն տարօրինակ զգայումով մը կ'համակուի երբ առաջին անգամ Անկլիոյ կանաչագեղ ծառուղիներուն մէջէն կ'ՀԵմ և ապրիլ ամսոյն ծաղկաւէտ թուփերուն հոտը կ'առնու, և երբ վայելուչ յանկապատի մը մօտ դեղերելով բարձր մայրի ծառերու շուրջն յուլաթև և կուչող ագռաւները կ'դիտէ, և հինօրեայ ապարանի մը քանդակեալ քիւերը կ'զննէ, և անկլիական սիրուն քերթուածներու մէկ քանի կտորները կ'մրմնջէ, որոնք կարծես թէ յատկապէս այս տեսարանիս համար յօրինուած են։ Այս տեսիլ չէ բնաւ և ոչ ուղևորութիւն, առնուշ երազներ երազել է, որ զրեանց հինաւուրց կեանքով կ'մատնին։

Կ'թափառիմ ընդ առաջ, առ ահի որ երազս կ'ընդհատեմ արագքայլ մ'առնելով, և պատ 'ի պատ դնալով ծաղիկի ցանկերէ, քիչ առանէն կ'նշմարեմ սիրուն հովիտ մ'որու ստորոտն յարդէ տանիքով հիւղ մ'ապրիլի արևուն կ'հանդչի ինչպէս կ'հանդչի մեռելը պատմութեան մէջ. ուրիշ ձայն չեմ լսեր, եթէ ոչ դարբինին կռանին թնդիւնն կամ մշակին հէյ, հէյը բլուրներէն։ Երկունն՝ սոխակին ականջ դնելով, ծանրաքայլ կ'դիմեմ անբոյթ գիւղ մը զոր կանխաւ բարձր տեղէ մը տեսած էի։ Սովորական արահետէն շատ կ'հեռանամ և տղաք իրենց խաղը կ'թողուն որպէս զի ինձ նային, և վարդագոյն երեսով օրիորդներ կիսբաց դռներու եւեէն գաղտագողի կ'դիտեն զիս։

Մեկուսի կ'դտնուի Արծիւ և Շահէն պանդոկն որու դրան երկու կողմը նստարաններ ունի։ Պանդոկապետուհին գրեթէ տրամադիր է զիս համբուրելու, և այնպէս կ'վարուի ինձի հետ որպէս թէ ծպտեալ իշխան մը լինէի։ Նա կ'առնու զիս և փոքրիկ սրահ մը կ'տանի, որ սպիտակ վարագոյրներով և հին նահապետներու կոկիկ նկարներով զարդարուած է։ Այն տեղ բոյսավառ կրակարանի մ'առջև կ'նստիմ և կը դիտեմ սպիտակ բոյն որ ածուխին մէջէն կ'ոստոստէ։ Պանդոկապետուհին ամսան մը քաղցրաւենի կ'մնծարէ սեղանին վրայ դնելով, և կ'ցաւի որ ընաիր չէ, թէև ներքուստ կ'հրճուի որ լաւ է։ Ժամ մը կրակին առջև մնածելով կ'անցընեմ հանդարտիկ կոտուին նման որ ներս մտեր էր ինձի հետ ընկերանալու. և պառկելու ժամուն լեռներու օդին պէս թարմ և մաքուր անկողին մը կ'դտնեմ . . . . . :

Երեք ամիս ետք՝ Տիվոն սիրուն գիւղը կ'դտնուիմ։ Իր հովիտները զմրուխտի պէս են. մշակներու շնորհիւ դաշտերու վրայ առուակներ կ'սողսկին և արևուն կ'փայլին։ Հեղաբարոյ ծեր աղարակպան մը իմ պանդոկապետս է։ Շուկայի օրեր աղոր սև սայլակ մը հեծնելով Թոդնէս քաղաքը կ'երթայ. կոշիկներ կ'հագնի որոց ծայրը փայլուն են, և լայնածիր գլխարկ մը։ Շատ կ'հրճուիմ անոր պարկեշտ, ուղիղ խօսակցութիւնը լսելով օրուան բարեկարգութեանց և աղքին վիճակին վրայ։ Երբեմն անոր մէկ երիվարիկը կ'հեծնեմ և միասին դաշտերը կ'շրջիմ կամ մշակներուն տուներն այցի կ'ելնեմ, որ իրենց սպիտակ տանիքը կ'ցուցընեն չքնաղագեղ դաշտին մէն մի անկիւնը . . . . . :

Երբեմն հեռուն բլուրները կ'թափառիմ և ծառատան մ'իջնելով ժամեր կ'անցընեմ ահագին կաղնիներուն ներքև, կ'դիտեմ թեթևոտն այծեամներն որ ինձ կ'նային անուշ և կենդանի աչօք, նոյնպէս սկիւռներն իմ ստորոտս կ'խաղան ու կ'ոստոստեն, իմ ներկայութեանս անմտադիր, և փասիանները ոտիցս ներքև կ'պորտին անելիս։

Երբ անգամ մ'այսպէս մենաքայլ կ'շրջի անհոգս և կ'մտածէի այն ահագին ծովուն վրայ որ իմ հայրենի անտառէս զիս կ'զատէր, և իմ գաւառանով մարդարիտ ծաղիկներու գլուխը կ'կոտրէի, անտառին մէկ անցքէն, ձիերու դափրը լսեցի։ Այս ձայնն անսովոր էր, վասն զի ըսեր էին ինձ որ մօտակայ գեղեկին ընտանիքը տակաւին քաղաքը կը դտնուէր . . . :

Նախ՝ որսական բարակ մ՚ոստոստելով դէպ իմ վրայ եկաւ, պահ մը ինձ նայեցաւ և դարձաւ որ ձիաւորներուն գալուստը տեսնէ։ Ապա երևցաւ արբուն աղատանի մ՚որ վառվռուն նժոյգի մը վրայ հեծեր էր, և իրեն ուղեկից ունէր գրեթէ տասներկու տարու տղայ մը, և այս տղան շնորհքով կ՚վարէր իր երիվարիկն, վասն զի այս ձիավարժութիւնն անկլիական տղոց դաստիարակութեան մէկ մասն կ՚կազմէ։

Իր անունն — որպէս թէ պիտի կարենայի մոռնալ — Քարոլին էր, իր մայրը զինքը «Քէրի» կ՚անուանէր. կ՚մտածէի թէ արդեօք կ՚յարմարէր ինձ Քէրի կոչել։ Փորձ փորձեցի, և այս անունն անուշ հնչեց ականջիս։ Քանի մ՚անգամ փորձ ըրի մինչև որ բնակարանս հասայ։ Անդ քանի մը շիլին տուի կնկան մ՚որ մեծ դուռը բացաւ։ Խնամարհութիւն ըրաւ նէ և ըսաւ. «Աստուած օրհնէ քեզ, պարոն»։

Այս խօսքին համար զինքը սիրեցի. ոսկի մ՚անգամ տալու տրամադիր էի — արդեօք պառաւ կնկան օրհնութիւնն էր պատճառ, թէ ոչ պատշգամէն ծածանող սպիտակ թաշկինակը չգիտեմ, բայց այս իրաւ է որ մտքիս մէջ հրապուրելիյոյս մը կար, որպէս թէ հրեշտակ մ՚իմ քովս կ՚գտնուէր։

Մարեցաւ այն, թէև երաշխս մէջ, վասն զի երաշեցի որ Իղապէլի անուշդէմքը կ՚նշմարեմ անկլիական ծառաստանի մը մէջ, և թէ ձիավարժ օրիորդի մը թաւշէ գդակը կ՚կրէր՝ փետուրով մը. ապա անոր մօտեցայ և մրմնջեցի շատ անուշ ձայնով, մտածեցի. «Քէրի՛, սիրելի՛ Քէրի»։ Եւ նէ դողելաւ, ինձի նայեցաւ տրտմագին և թողուց գնաց։ Եռևէն վազեցի որ բռնեմ համբուրեմ, ինչպէս որ կ՚համբուրէի երբ իմ մօրս գիրկը կ՚նստէր, գետամոյն լիներլու վասնզն անցուցած օրը. կ՚փափաքէի լսել անոր, ինչպէս այն ատեն ըսի, «Եղ կ՚ուրէմ, այո»։ Բայց նէ իր արտասուալի դէմքն իմ վրայ դարձուց. երաշեցի. և ապա բան մը չտեսայ։

ՀՌՈՄԱՑԵՑԻ ՕՐԻՈՐԴ ՄԸ

Քաջ կ՚յիշեմ բուն այս խօսքը. «Non parlo Francese, Signore — Ֆրանսերէն չեմ խօսիր, պարոն» ըսաւ խոշոր կինը «բայց կարելի է որ իմ աղջիկս հասկընայ»։

Եւ կինը կանչեց. «Էնրիէ՛, Էնրիէ՛ — Venite, subito! c'è un forestiere.» (Շուտ եկուր, օտարական մ՚եկաւ։)

Եւ օրիորդը ներս մտաւ. իր բաց խարտեշ մազերը թոյլօրէն ուսերուն վրայ ընկած էին, իր մեղրայշ աչունքն կ՚բթէին և կենսալից էին, իր թափանցիկ այտին վրայ վարդեր բացուեր էին և շուտ ընդ փոյթ քալուածքէն կուրծքը կ՚ելնէր ու կ՚իջնէր։ Մէկ ձեռնով իր ճակտին վրայ ծածանող գիսակն յետոյս նետեց, մինչդեռ միւսն իր մօրը թևին վրայ մեղմիկ դնելով հարաւային ներդաշնակ ձայնով հարցուց. «Cosa volete, mama?» (Ինչ կ՚ուզես, մայր իմ։)

Այս հեղինեալ 31 տողերը մոռցուած լինելով, պէտք է որ կարդացուին 456 երեսի վերջերորդ տողին անմիջապէս ետքը։

Եռևէն կ՚գային երկու ուրիշ երիտասարդք և կառք մը, որու մէջ երկու արբուն կանայք նստած էին։ Բայց ամենէն աւելի իմ ուշս գրաւողն եղաւ օրիորդի մը դէմքն որ գորշագոյն և նրբասրուն նժոյգի մը վրայ հեծեր կառքին առջևէն կ՚երթար։ Իր կերպերն բնական շնորհ մ՚ունէին, և երեսին անուշ հարմրութիւնն — որ աւելի փայլ կ՚ընդունէր իր սև թաւշէ գդակէն, որ միայն ծփին փետուր մը կ՚կրէր — բոլորովին աչքս գրաւեց։ Զարմանք էր, բայց մտածեցի որ այսպիսի կերպարան մը, այսպիսի դէմք մը, այսպիսի աչք մ՚արդէն տեսեր էի. և երբ օտարականի մը սովորական ողջոյնը կ՚տայի, և անոր ժպիտը նշմարեցի, կարող էի երդնուլ որ նէ էր — իմ ծովու սիրուն ընկերու հիս։ Ճշմարտութիւնն իսկոյն ըմբռնեցի։ Օրիորդն այցելութեան պիտի երթար, ինչպէս որ ըսեր էր ինձ, Անկլիոյ հարաւային կողմը բնակող բարեկամի մը, և այս էր իր բարեկամին տունը։ Կառքին մէջ գտնուող կիներէն մին իր մայրն էր, և երիտասարդներէն մին իր դպրոցի եղբայրն, որ ծովու վրայ զինքը նեղեր էր։

Հիմակ լիովին կ՚յիշեմ իր անկեղծ ընթացքն, երբ իր ձեռնոցը հանելով ձեռքս սեղմեց։ Անոնց ուղեկից եղայ։ Տիվոն գիւղն իր գեղեցկութիւնն ինձի համար նորէն զգեցաւ։ Պատմեցի օրիորդին թէ ինչպէս այլ և այլ գիւղեր թափառելով այն տեղերն ընկայ, և նա զմայլան հարցումներ ըրաւ ինձ։ Բարեսիրտ ազարակապանին հետ աւելի երկար ատեն մնացի, և ընդունած երկու աւուր ասպնջականութիւնս երեք չորս օր տևեց։ Զիերով ստէպ կ՚արշաւէինք ծառուղիներուն մէջ, և յաղթ կաղնիներու ներքև պտոյտներ կ՚ընէի ոչ միայնակ . . .։

Անկլիական գեղային կեանքն շուտով կիս կ՚հրապուրէ — շատ շուտով, և շատ դիւրին բան չէ հրաժարական բարև տալ, ինչպէս Զէրին Քրօսի մէկ սրահին մէջ։ Բայց վերջապէս հրաժեշտ առի, տրտմագին հրաժեշտ մը, վասն զի Աստուած միայն գիտէ թէ որչափ ատեն պիտի տևէր այս բաժանումը։ Եւ երբ ծանր ծանր վար կ՚իջնէի իմ արձակուրդս առնելէն ետև, յետոյս դարձայ, քանի մ՚անգամ դարձայ։ Կարծեցի թէ կ՚տեսնեմ օրիորդն պատշգամին վրայ, թէև գրեթէ մութ էր, և կարծեցի թէ — թէև կրնայ պատրանք մը լինիլ — նէ բարձեռքը սպիտակ բան մը կ՚շարժէր։

Շատ ատենէ 'ի վեր այսպիսի չքնաղ նկար մը չէի տեսած, թէև Հռոմի մէջ էի, և նոյն առտու իսկ Պօրկէզի Պալատէն եկեր էի։

Անձնեղ կինն իմ օթևանի տիկինն էր, և Էնրիքա, որ այնքան չքնաղ, որ այնքան անման էր դեղեցկութեամբը միւս իտալացի կանանց, իմ տանտիրուհւոյս աղջիկն էր։ Տունս այն բարձր, շատ հին տուներէն մին էր, որ Գօրսօին արևելեան կողմը շինուած են, և Գօլենայի հրապարակին վրայ կ'նային։ Սանդուղները շատ բարձր ու աղտոտ էին, միանգամայն նեղ ու մութ։ Հոս հատ քարէ աստիճաններ կ'հանէին նրբագաւիթ մ'ուր տանտէրները կ'բնակէին։ Դրան վրայ փոքրիկ ակնատ մը կար և զանգակի մը լարն, այնպէս որ եթէ թեթև իսկ շարժէի զայն՝ ստոյգ էի լսել քարէ յատակին վրայ արագասահ ոտից ձայն մը, և ապա ակնատին մեղմիկ բացուիլը տեսնել, և այս մեղրաշաչունքն, որ ինձի կ'նայէին. ապա դուռը կ'բացուէր, և իմ հռոմէական սենեակս կ'մտնէի աղջկան առաջնորդութեամբ։ Այս ճամբան սորվելու համար բաւական ժամանակ անցուցի։

Իմ սենեակս Գօրսօին վրայ էր, և անկից կարող էի նշմարել Անտոնինոսի բարձր կոթողին ծայրն և կառավարչին պալատին մէկ մասը։ Իմ սրահս՝ որ նրբագաւթով մը կ'զատուէր ընտանիքին սենեակներէն, փոքր բակի մը վրայ կ'նայէր որու շուրջն արևնակներ կային։ Բարձրագոյն արևնակէն երկու սևակն օրիորդներ ատեն ատեն դուրս կ'նային, և գրեթէ կարող են կարդալ իմ գրքիս անունն երբ պատուհանը նստիմ։ Վարն երեք չորս ծաղկահասակ տղաք կան որ սև աչեր և հռոմէական առատ մազեր ունին։ Ամենէն փոքրն Էնրիքային բարեկամն է, և բնապէս վեր կ'նայի շատ անդամ խիստ անմեղ կերպով, որպէս զի դիտէ թէ արդեօք Էնրիքա դուրս կ'նայի՞ թէ ոչ։

Ամէն գիշեր պայծառ կրակ մը կ'վառի վառարանիս մէջ լաստենի փայտերով զոր Ալբանեան բլուրներէն կ'բերեն։ Նոյնպէս ամէն գիշեր ընտանիքն իմ սենեակս կ'գայ որպէս զի իմ իտալերէն սխալներս ուղղէ և կրակիս բոցավառ տեսքը վայելէ։ Փոքրիկ Կեսարէն՝ թխագոյն իտալացի տղայ մը, մատիսն ու սև քարը կ'առնու և՝ բոցին նշոյլով՝ բերկիներ ու դղեակներ կ'գծագրէ։ Էնրիքայի միականի դասատուն իր քթախոտի տուփը սեղանին վրայ կ'դնէ, իր թաշկինակը ծնկայ վրայ, և ակնոցները քթին վրայ, և հատ մատը դասագրքին վրայ ֆրանսերէն amare (սիրել) բային այլ և այլ ժամանակները խոնարհելով կ'անցնի։ Տան հայրն տժգոյն և սրակն մարդ մը, ճշմարիտ իտալացի դեմքով, թևերն աթոռին արմուկներուն վրայ դրած կ'նստի, և Պապին

կամ օդին վրայ կ'խօսի։ Անքննայի սահմաններէն պանդուղ Կոմս մը ժամացոյցի ծանր կնիք մը կ'կրէ, և Տանդէն կ'կարդայ կոպոլդրէն։ Մայրն՝ թևերը ծալլած՝ իր աղջկան վրայ կ'նայի հպարտութեամբ և զանի հռոմայեցի օրիորդներու մէջ անման գոհար մը կ'համարի, և իրաւամբ։

Սեղանը կլոր էր, մէկ կողմէն կրակը կ'վառէր, միւս կողմին առջև հազիւ երեք հոգւոյ համար տեղ կար։ Մինն էր պարոն Լոբդեոը, միւսն Էնրիքան, և ապա — ինչպէս լաւ կ'յիշեմ — ես էի։ Վասն զի երբեմն Էնրիքայի կրնայի օգնել ֆրանսերէն բառ մը գտնելով, և ինքն ալ աւելի յաճախ առիթ կ'գտնէր օգնելու ինձ իտալերէնի համար։ Իր դէմքը կայտառ և զգայնամով լի էր. սովոր էի դիտել խնդագին իր ձայնն՝ երբ քանի մը խրթին բառերու իմաստը չկրնալով ըմբռնել՝ զայն կ'խորշոմէր, նա մանաւանդ կ'տեսնէի սիրուն ժպիտն երբ իսկոյն կ'ըմբռնէր ֆրանսայի հին հեղինակի մը միտքն և զայն իր գիւրասահ անուշ լեզուովը կ'բացատրէր։

Այն ինչ Էնրիքա տասնվեց ամառ տեսեր էր, և նոյն դարման իսկ՝ Հռոմի շրջակայքը գտնուող վանքի մը գերութենէ ազատեր էր։ Կեանքն ի՞նչ է չգիտէր, բայց միայն զգայման կեանքը. և ամէն երջանկութեան խորհուրդ դեռ ևս իր մանկային յոյսերն էին։ Ախորժելի էր նայիլ իր երեսն, և աւելի ախորժելի՝ լսել իր անուշ հռոմէական ձայնը։ Ի՜նչ գերադրական և նուազական ածականներ կ'հոսէին առատօրէն այն վարդագոյն շրթերէն։ Մը անձն այսպիսի պարագայի մէջ չպիտի սիրէր ուսմունքն, և ով, առանց դիտնալու, չպիտի սիրէր ուսուցիչը։

Այն օրերն Հռոմի սրճարանները դեղերելու փափաք չունէի, այլ իմ օթևանիս փոքրիկ սրահը կ'դառնայի ընդ փոյթ. քանի՜ հրճուելի էր կրակը։ Եւ քանի՜ հրճուելի էր Էնրիքան բարևել իր մօրը հետ, միականի վարպետը դալէն առաջ. և ախորժելի էր դիրքը մեր մէջ բանալ և ձեռքս թղթին վրայ դնել — փոքրիկ թղթի երես — ուր իրեն արդէն դրուած էր։ Եւ երբ նա շիտակ չէր նշանակեր, ախորժելի էր ուղղելմատն, կրկին և կրկին, սնդելով թէ իր ձեռքը պարտի դնել այս կողմը քան թէ այն կողմը, և իր փոքրիկ մատերն վերցնելով մէկ երեսէն ուրիշ երեսի մը վրայ։ Եւ երբեմն երբ կ'բարկանար վրիպակները ցոյց տալուս, իր ձեռքն իմն ուժգին կ'զարնէր, բայց երբ իր երեսը կ'նայէի հարց ու փորձ ընելու համար թէ ի՞նչ կ'նշանակէր իր շարժումն, այնպէս հեզ և վշտագին աչք կ'նայէր ինձ որ

կ'ստիպուէի ոչ միայն իր թշնամական ընթացքին ներել, այլև կը զրդուէր զիս կերպով մ'որ վերստին իր սրտմտութիւնն իմ վրայ հրաւիրեմ։

Բարեկենդանի բոլոր օրերն՝ երբ գլխուս անուշեղէն կ'տեղար, իմ աչքս սովոր էր թափառիլ հեռուէն, Գօրսօի վրայ գտնուող բարձր տան կողմն, ուր ստոյգ էի գտնել միշտ սոյն ներողամիտ աչունքն, և այն փափուկ խարտեշմազերը՝ որ լոկ մէկ յատակ փետրով զարդարուած գլխարկի մը ներքև ամփոփուած էին։ Եւ իր ձեռքը շաքարեղէնով լի՝ ինձի կ'ցուցնէր սպառնալի. և ծիծաղ մը — երաժշտական ծիծաղ մը կ'ձգէր, երբ այս յարձակման դէմ գլուխս կ'ծռէի. ապա գնդակներու տարափն անցնելուն՝ իմ ամենէն խոշոր փունջս անոր արևնակին կ'նետէի։ Գիշերն իմ սրահս կ'տանէի օրուան լաւագոյն յաղթանակս իբրև տրիտուր մը Էնրիքային համար. և Էնրիքա այս նուէրիս փոխարէն չէր մոռնար խնամքը սպհուած և իր դեղեցկութեան շահած ամենասիրուն ծաղիկներ ընծայել ինձ։

Այս բարեկենդանի օրերն՝ Էնրիքա երբեմն Ալբանեան ջրկիրներու պէս կ'ծպտի, և արդարև չկայ աւելի չքնաղ բան մը քան իր հագած ծիրանեգոյն բաճկոնակը, գլխի տարօրինակ գդակն իր հոպտանքով, և կարճ ժապաւէններն՝ որ Հռոմի ամենէն քնքուշ սրունքն 'ի տես կ'ընծայէին։ Ուրիշ գիշեր մ'ալ մինչդեռ կրակին առջևը նստած ենք, իմ փոքրիկ սրահս կ'մտնէ, թաւշէ նեղլանջապանակ մը հագած, և հելլէնիստական գդակ մ'որ արծաթ օղակով մը բռնուած է և լիածիլ վարդով մը զարդարուած. կրնաս երևակայել որ ասոր պէս սիրուն կերպարան մը չէր կրնար լինիլ։ Դարձեալ՝ իր մանկային խաղերուն մէջ՝ մի անդամ մարապետի հատ ու սև կտաւէ զգեստը կ'հագնի, սգալի քօղն երեսը, որ վեր ելած է միայն գդակին պարզ սպիտակ կաշիէն. և կը փափաքիս որ նէ միշտ մարապետ լինէր։ Բայց այս փափաքդ կ'մարի երբ յանկարծ զինք սպիտակ բեհեզով հագուած՝ Ճակատն նարնջի ծաղկօք շինուած պսակ մը բոլորած, և լոկ սպիտակ վարդի կոկոն մը դուրծքին դրուած կ'տեսնես։

Էնրիքա փոքրիկ արևնակին վրայ մէկ երկու թաղաթ կ'պահէ, որ բոլոր ձմեռը ծաղկալի են. ամէն առտու սեղանիս վրայ թարմ վարդի կոկոն մը կ'գտնեմ, ամէն գիշեր՝ իբրև շնորհապարտ տրիտուր, ամենասիրուն փունջ մը գնելով օրիորդին կ'բերեմ։ Վերտին կ'դառնան այն գիշերներն երբ հանդարտ կ'անցընենք կրակարանին մօտ, իմ ձեռնս ներքև գրքին վրայ կ'փնտռէ ցակալի վայրն, լոկ իմ միւս ձեռնս Էնրի-

քայի աթոռին թիկնակին վրայ կ'սահի բոլորաձև, և Էնրիքա կ'սկսի սրամտիլ և ապա բոլորովին ներողամիտ երևիլ։

Օր մը նամակի մեծ ծրար մ'առի։ Ա՛հ, քանի՛ հեշտալի է լայն թիկնաթոռի մը մէջ լարուիլ ճարճատուն խարոյկի մ'առջև, մինչդեռ քովդ մետաքսեայ շրջազգեստի մը քաղցրալուր շրշունը կ'լսես. ապա երկրորդ և երրորդ անգամ աչքէ կ'անցընես այն անձայն նամակներն, որ հարիւրաւոր մղոններով հեռի տեղերէն շնորհաւորութեան և սիրոյ խօսքեր կ'բերեն քեզ . . . ։ Էնրիքա իր գիրքը վար նետեց և հետաքրքիր եղաւ իմանալու թէ ինչ կան նոյն նամակներուն մէջ. ուստի հատ մը ձեռքս կորզեց և անոր տարօրէն գիրերն տրտում այլ ընդունայն մեղադրութեամբ դիտեց։ «Ինչ կրնայ լինիլ» ըսաւ նէ. և իր մատը կէս տողին վրայ դրաւ, որ էր «Սիրելի Պօղ»։

Ըսի նէրա որ «Caro mio» էր (սիրելիդ իմ)։

Էնրիքա թուղթը ծնկացը վրայ դրաւ և իմ երեսս նայեցաւ։

«Միթէ մ'ուրիշ կողմէ է այս» հարցուց նէ։

«Ո՛չ» ըսի նէրա։

«Քրոջդ կողմէ» ըսաւ նէ։

«Ափսոս, ոչ։»

«Il vostro fratello, dunque» (ուրեմն եղբօրդ կողմէ)։

«Nemmeno» ըսի «և ոչ եղբօրս կողմէ։»

Էնրիքա նամակն յանձնեց և գիրքն առաւ. սակայն քիչ մ'ետքը գիրքը նորէն դետինը դրաւ, և նախ նամակին և ապա ինձ նայելով՝ ելաւ դուրս գնաց։

Նոյն իրիկուն վերսային ներս չեկաւ. առաւօտուն՝ սեղանիս վրայ վարդի կոկոն չտեսայ, և երբ գիշերը փնջով մը վերադարձայ, նէ հարցուց ինձ. «Ո՞վ գրեր էր ստացած գիրս։»

«Յոյժ սիրական բարեկամուհի մը» պատասխանեցի նէրա։

«Կի՞ն մ'է» շարայարեց նա։

«Կին մը» ըսի։

«Այս փունջն անոր համար պահէ» ըսաւ նէ «և զայն ձեռքս տուաւ։

«Բայց, Էնրիքա, այն կինը շատ ծաղիկներ ունի, անոնց մէջ կ'ապրի, և ամէն առտու իր զաւակներն առաւօրէն կ'քաղեն որպէս զի իրեն համար պսակներ յօրինեն։»

Էնրիքա նորէն մատերը ձեռացս մէջ դրաւ որ փունջն առնու, և պահ մը թէ մատերն և թէ փունջը սեղմեցի։

Ծաղիկներն ամենէն առաջ վար սահեցան։

Հռոմի մէջ բարեկամ մ՚ունէի որ վերջէն Անքոնայի և Կորնթոսի մէջ մեռաւ. օր մը Քօլիզէի մէջ՝ հողակոյտի մը վրայ միասին նստած՝ կ՚զիտէինք այն ստուերներն զոր հարաւային պատին վրայ դանուող երերուն թփեր ներքին կիսափտել կամարներուն վրայ կ՚սփռէին, և մանիկ կ՚ընէինք աւերակներու վրայ դադարող ճնճղուկներուն ձայնն, երբ նա յանկարծ ըսաւ ինձ. «Պօղ, դու խաղալցի օրիորդը կ՚սիրես։»

«Շատ կեղանի է նէ» ըսի անոր։

«Կարծեմ թէ նէ կ՚սկսի քեզ սիրել» ըսաւ նէ տրտմագին։

«Շատ տաք սիրտ ունի, կարծեմ» ըսի ես։

«Այո՛» ըսաւ նա։

«Բայց նէրա զգացումները մանկային են» շարունակեցի ես։

«Մանկային չեն» ըսաւ բարեկամս, և ձեռքը ծունկիս վրայ դրաւ, և դաւաղանովն դծեր սկսաւ շինել հողին վրայ։ «Ես, Պօղ, քեզնէ լաւ կ՚ճանչեմ այս հարաւային օրիորդները։ Տանտիկոյ տարեկան օրիորդ մը ստէպ կին մ՚է — եռանդոտ, զգայուն, քնքուշ էակ մ՚է իրաւ, այլ սակայն կին մը. դու կ՚սիրես, եթէ իրօք սիրահար ես, լիակատար սիրտ մը. նէ կ՚սիրէ, եթէ իրօք սիրահար է, իբրև հասուն սիրտ մը։»

«Բայց ես չեմ կարծեր որ այդ ըսածներդ լիովին ճշմարիտ լինին» ըսի ես։

«Փորձէ» ըսաւ նա՝ դաւաղանը վար դնելով և երեսս նայելով։

«Ի՞նչպէս» պատասխանեցի ես։

«Դեռ ես երբէք շաբաթ աղատութիւն ունիմ» շարայարեց նա։ Արի միասին Ապէնինեանց կողմերն երթանք. թող Գօրսօի բնակարանդ, և տես մի անգամ թէ արդեօք պիտի կարենաս մոռնալ քու կապուտակն հռոմայեցի աղջիկդ լեռնային բաց օդին։

Պատասխան մը տալու համար կ՚մտմտայի, երբ նա շարունակեց.

«Այսպէս լաւագոյն է, որչափ կարող ես սիրէ, այս հարաւաբնակ էակն՝ իր բոլոր խանդով՝ ընտանեկան երջանկութիւն հայթայթող հանգամանքը չունի, իսկ քու հիւսիսային բարքդ ես չէ կարող միշտ գդուել այն խանդալից համակրութիւններն որ այս մթնոլորտին և տեղւոյս տեսարաններուն միջոցաւ կ՚սնանին։

Պահ մ՚իմ միտքս փոքրիկ սրահիս, այն դեղանշոյլ կերպարանին և այն հրեշտականման անուշդէմքին թռաւ, ապա՝ կայծակի պէս ծովերէն անցաւ և հայրենի տան հին յիշատակներ գրգռելով անհետ ե-

ղած նկարներ բերաւ ինձ, որ կարծես թէ երկնային թներու վրայ կը շարժէին՝ այս հռոմէական փափուկ մթնոլորտին մէջ՝ և ինձ ողջոյններ և ակնարկներ կ՚ուղղէին։

«Բեղի հետ պիտի դամ» ըսի անոր։

Տանտէրն ուսերը թոթուեց երբ ըսի անոր որ լեռները պիտի գնամ և առաջնորդի մը պէտք ունիմ։ Իր կինն ըսաւ թէ բլուրներուն վրայ շատ յուրտ պիտի լինի, վասն զի դեռ ձմեռը կ՚տևէր։ Ենրիքա ըսաւ թէ հովիտներու մէջ տաք պիտի լինի, վասն զի գարունը գալու մօտ էր։ Ծերունին մատերը սեղանին վրայ թմբկեց, և գարձեալ ուսերը շարժեց. բայց բան մը չըսաւ։ Տան սիրուհիս ըսաւ որ չեմ կրնար ձիաւորել։ Կեսարէ յայտնեց թէ գժուարին պիտի լինի ուղեորութիւնը։ Ենրիքա հարցուց հօրը թէ արդեօք վտանգ կայ։ Իսկ ես վերջին խնդրեցի որ ինձ առաջնորդ մը գտնէ, և երբ ծերունին տեսաւ որ գիտաւորութեանս մէջ հաստատ եմ՝ խօսք տուաւ հետևեալ օրն առաջնորդ մը գտնել։

Երբ իրիկունն Մօնդէ Զիմօրիօի մօտ հրապարակը պտտելու կ՚երթայի, ուր Թիվօլի երթեկող կառքերը կ՚կենան, Ենրիքա իմ քովս սահեցաւ և փսփսաց. «Ah, mi dispiace tanto-tanto, Signor!» (Ա՛հ, քանի՛ ծանր է ինձ այդ, պարոն)։

ԱՊԷՆԻՆԵԱՆ ԼԵՌԻՆԵՔ

Հրաժարական բարևս տուի, և ժամէ մ՚իմ բարեկամիս հետ Տրայիանու հրապարակէն անցնելով՝ Սան-Մարճիօրէի մութ ծմահներու կողմը կ՚դիմէի որ մեր ճամբուն վրայ լեռներու ուղղութեամբ կ՚երևէին։ Արևը մարը մտնելու ատեն Ադրիանու գիւղաքաղքին աւերակներու մէջ կ՚թափառէինք, որ Ապէնինեան լեռներու առաջին շղթային վրայ կ՚տեսնուի։ Մեր ետևն՝ Թիվօլիի երեկոյեան ժամերգութեան զանգակը կ՚հնչէր, և անոր արձագանքն կիսափտել կամարներու ներքև քաղցրալուր կ՚տատանէր. մեր առջևն՝ մինչև հորիզոն՝ ընդարձակ Կամպանիան կ՚տարածուէր, մինչդեռ իր կոհակներուն միջև, որ վերջալուսին նշոյլներով մանիշակագոյն կ՚երևէր, Յաւիտենական Քաղքին բաղմախումբ աշտարակները կ՚բարձրանային, և ասոնց ամենուն վրայ՝ իբրև հսկայ կ՚տիրապետէր Ս. Պետրոսի սեւաթոյր գմբեթը։

Օր ըստ օրէ դէպ 'ի լեռները դիմելով՝ Կամպանիան մեր եռանը կը թողուինք։ Ահագին ու պատառուն ժայռեր ու քարեր, աջ ու ահեակ սփռուած կ'մնային. խոր հովիտներ հաղարաւոր ոտք բարձր լեռներու ստուերներու ներքև կ'տեսնուէին՝ որ թերևս իրենց կատարներու վրայ հին ամրափակ քաղաքներ կ'պահէին թռչուններու բոյնին պէս։ Բայց լեռ ու ձոր այրած և աւերուն են, նոյն իսկ անտառները ցանցառ, վասն զի Ճարակ չունին, որպէս թէ Նինուէն այրող ծծմբային հուրն իրենց զօրութիւնը սպառած լինէր։ Երբեմն մեր աչքը կ'դադարի հաստուկտոտ կրային ապառաժի մը խոշոր ու սպիտակ պատառուածին վրայ, որու վրայ լօռը չէ կարող ամիլ և մողէսը չհամարձակիր մագլցիլ։ Ապա կ'նշմարենք երկնարերձ սեպաձև ժայռ՝ որու ստորոտը կը շողայ Ճկնարանի մը պատերը։ Կողմնակի դեռակներն ջրարուղիս բլրային անուշաղբիւրներու արգիւնքը չեն երևիր, այլ մեծագոյն դեռերու մնայորդն, որոյ մեծութիւնն անհետ եղած է. պղտոր վտակներ են անոնք՝ որ պատառուած քարերու մէջ կ'հոսին։ Նոյն թփերն այնպիսի երևոյթ մ'ունին որպէս թէ Վեսկեան պատերազմիկ երիվարն սանահար ընելով չորցուցեր է, և դարնան ծաղիկներն ու մանիշակները միայն լեռան շուրջերուն մօտ սիրուն և չքնաղ համեստութեամբ կ'երևին աւերակներուն մէջ։

Երբեմն հովտի մը մէջ կ'շրջինք. մեր դլխին վերևն նոխասները կ'սրածին առասպառներու վրայ, և Ապենինեանց հովտական սրինդները մտիկ կ'ընենք. կ'տեսնենք հովիւներն՝ իրենց մորթէ կոշտ վերարկուով ծածկուած՝ լեռնակներու կատարը։ Իրենց հօտը կ'Ճարակի խիստ անձուկ եզրերու վրայ, նուազարանին ձայնն կ'ծփայ և կ'տատանի մեղմ մթնոլորտին մէջ, հովի շունչ մը չկայ որ զայն վանէ, կամ շշուկ մ'որ անոր ներդաշնակութիւնը վրդովէ։ Ստուերներն փոքր առ փոքր կ'խոտորին մինչև մենք կ'դեղերինք, և ուլերը կ'սկսին նոյն վայրը հաւաքուիլ։ Եւ քանի մենք՝ հովտին խորն, այդիներուն մէջն ընդ առաջ կ'քալենք, անուշ ձայնը մեր եռանէն կ'հոսի երգի առուակի մը պէս, և մեզ չթողուր մինչև որ հեռուն ուլերն անհետ կ'լինին և նոյն իսկ ցից ժայռերն ստուերային մութ պատ մը կ'դառնան։

Գիշերն՝ լեռնային անշուք փոքր քաղքի մը դռեհները կ'դառնանք կամ եկեղեցիներու ծանրակիր կամարներու ներքև կ'թափառինք։ Այլանդակ պառաւ կիներ ներս կ'մտնեն կ'երևին. կողմնակի խորաններու վրայ աղօտ կանթեղներ կ'փայլին և Հոդեսպառ Քրիստոսի նկարներու վրայ ահաւոր լոյս մը կ'սփռեն . . . . . .։

Առտու նորէն Ճամբայ կ'ելնենք և զանազան դաշտանկարներու վրայ դմայլելէն ետև՝ բարեկամիս հետ ժայռի կտորի մը վրայ կ'նստինք՝ լեռներու ստորոտը հովանաւորող բարձրուղէշ ծառերու ներքև։ Անդ կ'խօսինք Սիլլայի քաջերուն և Սաբինայի կանանց վրայ, և ստէպ սիրուն դեղջուհիներուն և անուշադէմ Հռոմայեցի օրիորդին վրայ։ Բարեկամս իր կենաց և սրտին պատմութիւնը կ'պատմէ ինձ, կը պատմէ այն մշուշապատ յոյսերն որ իր առջևը կ'երևին։ Այն միջոցին բնաւ չէինք մտածեր որ քիչ ժամանակի մէջ իր յոյսերը պիտի մարին և իր մարմինն Ադրիական ծովուն խորը պիտի մնայ կամ ալիքները Տոլմատեան եղերքը պիտի բերեն ձկեն։ Բնաւ չէի մտածեր որ աստ, այս նահապետական անտառին ներքև, յիշատակներ պիտի հաւաքեմ Ապենինեան լեռներու թափառաշրջիկ ուղևորութեան ժամանակ՝ և իմ ամուրիի երազներուս հետ պիտի հիւսեմ։

Երևակայութեան սրաթռիչ թևով վերստին Ճամբայ կ'ելնեմ, և քանի մը շաբաթ թափառելէն ետև՝ նորէն կ'հասնինք բլուր մ'որ Կամպանիոյ վրայ կ'նայի. արևը մարը կ'մտնէր, Ս. Պետրոսի գմբեթը լուսաւորելով, և Տիբեր գետին ջրերն իր կարմրուն նշոյլներով կ'վառէր։ Մեր ստորևը կ'գտնուէր Պալէսդրինա — այս բանահիւսներու Պրէնէստա քաղաքը, բազմաթիւ կոյսերայ բնակարանը։ Աղոտ փողոցներէ քալելով՝ օթևան մը փնտռելու ելանք։ Վերջապէս կին մը գտանք որ մեզի անկողին մը տալու կարող եղաւ, այլ ոչ կերակուր։ Բարեկամն ատթոռի մը վրայ ընկաւ սրտաբեկ։ Պարզմիտ քահանայ մը ներս մտաւ որ մեզի ցաւակից լինի։

Եւ միթէ Պալէսդրինան — Ոմբրատիոսի . . . . Պրէնէստը, որ քանիցս իր ծոցն ընդունած է Կոլոնայի ազնուականներն և ազնուագոյն Ադրիանոսը — Պալէսդրինան վաստակաբեկ ուղևորի մը չէ կարող ճաշ մը տալ։

«Sì, Signore (Այո, պարոն)» ըսաւ միամիտ քահանայն։ Նոյնը կրկնեց և մաքրասէր պառաւ կինն, և գարձեալ դուրս ելանք ուտելիք փնտռելու։ Կայտառ և երջանիկ դէմքեր տեսանք — մանաւորապէս տասներկու տարեկան օրիորդ մ'որ ինձի մօտեցաւ երբ կերակուր կ'ուտէի և ասա ոսկեծաղկանց շամփրակ մը բոլորեց և դլխուս վրայ դրաւ։ Նոյնպէս տասնչորս տարու պայծառ աչքեր տղայ մը կար անդ, որ իր և բոլոր ընտանեաց անունն իմ դրբիս մէկ թերթին վրայ դրեց, և տասնվեց տարեկան սիրուն ու ժպիրհ դէմքով աղջիկ մ'որ ընդ երկար դիտեց խոհանոցին դրան եռանէն, բայց իրկուն չեղաւ իմ քովը

գտնուած աթոռին վրայ եկեր և նստեր և Գարլոդանունն իմ օրագրիս առաջին թերթին վրայ գրեր էր։

Երբ արթնցայ, արևն արդէն ելեր էր։ Անկողնէս կարող էի տեսնել քաղքին վրայ բարակ և յամրաշարժ մշուշն որ Պիւրրոսի հին պատերազմի դաշտին վրայ կ'տարածուէր. աւելի հեռուն կ'տեսնուէին լեռներն որ կ'ծածկեն Գրաքաթին ու Մօն Գավին։ Անդ էր նաև հին Կոլոնան, որ

Հրեշտակի մը բոյնին նման՝ ծէրանի Ապենինեանց
կախուած է կոտրէն։

Մշուշը քանի փարատէր, և արևն դաշտը լուսաւորէր, կարող էի նշմարել այն ճամբան ուստի Սիլլա՝ Միհրդատեան պատերազմէն ետև՝ փրփրալից և մոլեգին կ'փութար։ Կարողէի տեսնել, էս երազի, էս քունի մէջ՝ ահաբեկ դեղացիներն որ իրենց եղջերաւոր արջառներն դէպ 'ի քաղաքագուռը քշելով կ'աղաղակէին, և կանայք՝ երեխայքն իրենց գիրքն առած, մանկտիկ առ ահի և ատելութեան խոժոռադէմ նայելով՝ շուտ ընդ փոյթ և խելայնորի պէս կ'վազէին որպէս զի Վրէժխնդիր մարդուն բարկութենէ ազատին. բայց, ափսոս, ընդ ուստայն, վասն զի Սիլլա կոտորեց զանոնք և հոյակապ Պալէսդրինա քաղքին պարիսպները կործանեց . . . : Բայց բոլոր բլրակներն այժմ հանդարտ էին, երկեղիկ ձայն մ'անդամ չէր լսուեր անոնց վրայ։ Օթեւանին մէկ փոքրիկ տղան ինձի հետ բլուրն ելաւ որպէս զի քաղաքն և վարը գտնուած ընդարձակ դաշտը տեսնէ. բայց ապրիլի անուշ, տաք արևուն ներգործութիւնը սեպէ, կամ ոտիցս ներքև գտնուած աւերակները սեպէ, կամ յիշողութեանս տխուր ազդմունքը սեպէ, բան մը կար որ զիս կ'տխրեցընէր։

«Ինչո՞ւ այդպէս տխուր էք» ըսաւ ինձ սրակն տղան։ «Օդն աղոր է, տեսարանն աղոր է, պարոն, դուք նորահասակ էք, բայց ինչո՞ւ այդպէս տխուր։» «Եւ մինթ ճիօվանին երբէք տխուր չէ՞» ըսի անոր։ «Գրեթէ երբէք» ըսաւ տղան «և եթէ ձեզի պէս կարենայի ճամբորդել, նոր նոր երկիրներ տեսնել, միշտ զուարթ պիտի լինէի։»

«Երանի՜ թէ միշտ այդպէս ուրախ լինիս» ըսի անոր։

Այս մաղթանքս սիրտը շարժեց. տղան թեւէս բռնեց և ըսաւ. «Տունը դառնանք, պարոն, առջի իրիւն երջանիկ էիր օթեւանին մէջ. դառնանք և քեզ վերստին պիտի ուրախ ընենք։»

— Ա՞ւր էր թէ միշտ տղայ լինէինք։

Շնորհակալ եղայ այնպէս որ զինքը տխրեցուցի։ Քիչ ատենէն քաղքին դռնէն դուրս ելանք և ընդարձակ դաշտին վրայ ձիավարեցինք։ Երկու երեք անդամ ժայռուդ բարձունքը դիտելու համար մեր դլուխն ետև դարձուցինք, բարձունք որու ներքև կ'գտնուի Պալէսդրինա քաղաքը — քաղաք մ'որ Հռոմի դիմագրաւ մնաց — որ թագաւոր մ'ունէր դեռ ևս Կապիտոլի վրայ խոփ մը չանցած։ Բաղեղն Ետրուսկեան պատերն առատօրէն կ'ծածկէր, և ամենուրեք խորին անդորրութիւն մը կ'տիրէր։ Ծխնելոյզներէն մուխը դէպ ուղիղ երկին կ'բարձրանար. մէկ երկու գիւղացիներ ճամբան կ'երթային գրաստներով. սակայն դարձեալ քաղաքը՝ ըստ երևոյթին, մեռած քաղաք մ'էր։ Եւ ինձ այնպէս երևցաւ որ ծերունի կրօնաւոր մը, զոր կարող էի իմ խոշորացոյցով տեսնել քաղքին վերևը գտնուած մատրան մօտ, թերևս պատարագ ըսելու կ'երթար մեռած քաղքին հոգւոյն համար։

Եւ ասա՝ երբ Հռոմի մօտեցանք, և Մեդէլլոսի տաճարի պէս դամբարանին տակէն անցանք, բարեկամս ըսաւ ինձ. «Եւ հիմակ տեղդ պիտի դառնաս, թէ ոչ ինձի հետ վաղը ճամբայ պիտի ելնես Անդօնա դնալու։

«Բայց դոնէ հրաժարական բարևս տալու պարտաւոր եմ» պատասխանեցի անոր։

«Բարի ճամբորդութիւն» ըսաւ նա, և Բիաձա տի Վէնիցիայի վրայ իրարմէ բաժնուեցանք, նա իր վերջին պատարագը տեսնելու դնաց Սուրբ Պետրոսի եկեղեցին, ես Գօրսօի վրայ գտնուող բարձր տան կողմը դիմեցի։

ԷՆՐԻԲԱ

Այն ինչ զանգակը զարկի որ նէրա թեթևուան քալուածքը լսեցի — և ահա աչացս առջևն է Էնրիքա իր խարտեշ մազերով զոր գեղահիւս ամփոփած է գլխուն վրայ, և իր աչունքն խնդութեամբ և շնորհաւորութեամբ լի են։ Եւ մինչդեռ ես իր մօրը հետ դէպ 'ի պատուհանը կ'դիմեմ որպէս զի անցնող թափորը տեսնեմ, նէ ետևէն կ'սահի և ելէկտրական արագ շարժումով մ'իր թևը վրաս կ'նետէ, և այնպէս անուշ կ'սեղմէ իմ գալուստս ողջունելու դիտմամբ որ հազար խօսքէ աւելի նշանակութիւն ունի ինձի համար։

Ցուզարկաւորութեան հանդէս մ'է որ վարը փողոցէն կ'անցնի։ Հէ-

ուն գլուխներ կ'տեսնենք որ պատուհաններէն դուրս կ'ելնեն, և թափորին կամրափայլ ջահերէն աչքի կ'զարնեն։ Վարը՝ մութ դէմքեր լրիկներուն վրայ կ'հաւաքուին որպէս զի այս հանդիսաւոր տեսարանը դիտեն։ Խոժոռ երդ մը փոքր առ փոքր կ'բարձրանայ, և զիշերային օդին մէջ կիսալին կ'նուազի և վերստին կ'որսայ նոր և խորին դառնութեամբ։

Ահա առաջին ջահն՝ մեր ներքև պատուհաններէ երևցած կերպարանքներու վրայ աւելի որոշ կ'փայլի, նոյնպէս փողոցին մէջ ծունր դնող կանանց վրայ։ Առջևէն կ'երթային մեռելին ուղարկաւորներն՝ որ երկայն բոցավառ ջահեր կ'կրէին։ Ասոնց կ'հետևէին քահանայից դաս մը զոյգ զոյգ, գլխիբաց, և ամէնքը կ'երգէին։

Ապա կ'հետևէին թուխ վերարկուներով և հողաթափներով վանականներ, և կարմիր լայն իրենց մերկ գլխուն վրայ կ'շողայ։ Իրենց կոկորդային ծանր ձայնով երգեցողութեան կ'մասնակցին և ընդ առաջ կ'անցնին յամրաքայլ։

Ապա կ'յառաջանան քահանայից դաս մը՝ սպիտակ բեհեզէ փողպատներով, սև պատմուճաններով և սև խոյրերով. ասոնց ձեռքը բաց գրքեր կան, որոց վրայ լայս կ'տիրեն եկեղեցական սպասարկուներ իրենց մոմերով, առ ընթեր քալելով, և քահանաներն գիրք կարդալով կ'երգեն բարձր ու հանդիսաւոր եղանակաւ։ Այժմ երաժշտութիւնն աւելի ահեղ կ'դառնայ. վանականներն կ'շարունակեն սպիտակափող քահանաներէն առնլով ահաւոր երգը, և առջևէն գացող քահանաներն սեւազգեստ կրօնաւորներէն առնլով կ'շարունակեն, և այսպէս ձայնը սգալի կ'բարձրանայ հոյակապ շէնքերու մէջէն և կ'ելնէ մինչև կաստաղոյն մթնոլորտն որ երկնից և Հռոմի մէջ կ'գտնուի։

«Նայէ, նայէ» կ'ըսէ Կեսարէ. և կարմրափայլ կերոններու բոլոր մէջ կ'դայ դագաղը, զոր կորովի կրօնաւորներ ուսերու վրայ կ'կրեն, և դագաղին մէջ՝ կրօնաւորի հագուստով մեռել մը կար. իւրաքանչիւր անկեան վրայ սև ջցունք կ'ծածանին։

Մեռելը Ճիշտ մեր ներքև է։ Էնրիքան խաչ կ'հանէ, իր ժպիտը նոյն պահուն մարած է։ Կեսարէի մանկային դէմքն յանկարծ կ'տխրի։ Կարող ենք տեսնել մեռեալ մարդուն գունատ, ծաղկահաս կերպարանքը։ Ենջոլին դժգոյն դէմքին վրայ բոցավառ ջահերն գերբնային լոյսի մը շքեղ հեղեղներ կ'թափեն։ Հազարաւոր աչքեր անոր վրայ կ'նային, բայց իր երեսը՝ ամէն բանի անուշադիր՝ վեր, դէպ 'ի աստղունքը դարձած է։

Տակաւին երգերը կ'լսին հեռուէն, և ինչպէս ընդ առաջ նոյնպէս յետուստ քահանայից դասերը կ'քալեն։ Ապա կ'գան թխադոյն վերարկուներով վանականներ, եպիսկոպոսներ և Կարմելեան միանձունք — ամէնքը կերոններ բռնած։ Զոյգ զոյգ կ'յառաջանային — իրենց ձայնը կ'կերկերի — կ'քալեն և կ'երգեն։ Պահ մը ձայները կ'դադրին և կարող ես լսել իրենց պատմուճաններու շշշունն և ոտից դափրը որպէս թէ ակամայ դեղինը դրած լինէիր։ Ապա ձայները վերստին կ'բարձրանան, երբ շարժուն և շողուն գծի մը վրայ կ'սահին և յուղարկաւորհանդիսին վրայ կ'գառնան՝ ձմերային հովի մը գոչիւնին նման։ Թափուն անցնելուն՝ դէմքերը պատուհաններէն կ'անհետին։ Սալարկին վրայ ծունր դնող կանայք ոտք կ'ելնեն՝ յուշածելով վերստին թէ կենայ մէջ են։ Դուռներու մօտ դումարուած խումբերը կ'ցրուին, բայց իրենց մեղմ ձայնը լուկաններու ամբոխին և դամբանական երաժշտութեան ձայները չեն կարող խափանել։

Հրաւառ դագաղին վրայ կ'նայիմ, հռոմէական պալատներու խորին ստուերներու ներքև կ'սահի, կ'նայիմ ջահերու շարքին որ շողշողուն և թեփատ օձի մը պէս կ'սողսկի։ «Քահանայ մը չէ» ըսի տան տիրուհւոյն պատուհանը փակելու միջոցին։

«Ո՛չ, պարոն, անամուսին պատանի մ'է. ուստի 'ի պատիւ իր վիճակին՝ քահանայական զգեստներ ձգած են անոր վրայ։»

«Նոյնպէս ես» ըսաւ սիրուն Էնրիքա «Ձերմակներ պիտի հագնիմ բարեկենդանի իրիկուան պէս, եթէ մեռնիմ, և մարապետներ ու կոյսեր իմ թափորս պիտի յօրինեն։

«Էնրիքա, երանի՛ թէ այդ օրն շատ ուշանայ։»

Աղջիկն իմ ձեռքս իրենին մէջ առաւ և սեղմեց։ Խտալացի օրիորդ մը մահուան վրայ կ'խօսի աներկիւղ, և տակաւին նոյն նիւթին վրայ կ'խօսակցէինք՝ դէպ իմ սենեակս դնալով — միշտ ձեռքս ձեռքին մէջ — և իմ կրակարանիս առջև նստանք։

Աւագ շաբաթ էր. Էնրիքա երբէք այնքան անուշ չէր երևցած որչափ այն սև հագուստով — մեծ պահոց երկայն և մթագոյն քողին ներքև։ Ս. Պետրոսի լայնարձակ սալայատակին վրայ, ուր բիւրաւոր ժողովուրդ կ'հաւաքուի, և ահագին տաճարին խորաններու շուրջն խումբ խումբ կ'երևի — գլուխնին նէրա ծունր դնելն իր մօրը քովը. աչերը վար սևեռած, շրթունքն չերմեռանդութեամբ շարժուն, և իր բոլոր կերպարանքն խորին այլայլութեամբ դողդոջուն։ Մինչդեռ Պապին նիզակաւոր պահապաններուն շուրջն, Աւսարիայի աղնուականնե-

բու և բոկոսն, դաւաղանակիր ուխտաւորներու մէջ կ'շրջէի, շատ անդամ մեկուսի կ'քաշուէի որպէս զի այն ծնրադրող աղջիկը դիտեմ, և տաճարին յաղթ սիւներուն յենած՝ կ'երազէի — ինչպէս և այժմ կ'երազեմ։

Երեկոյեան դէմ՝ Սիսդինէի Մատուռը կ'սահիմ կ'մտնեմ. Էնրիքա իմ քովս է, և ինձի հետ կ'նայի Անձէլի վերջին Դատաստանի վրայ կերպարանները։ Սկսան Մէղէրէրէն երգել։ Ժամերգութեան ժամանակ՝ սեղանին վրայի տասներկու աշտանակներն մի առ մի կ'մարին։ Արեւը մարը կ'մտնէ և միայն վերջալուսին կարմրուն նշոյլները նսեմ պատուհաններէն ներս կ'սպրդին։ Պահ մը ձայները կ'դադրին, ապա ծիրանագոյն կարմնալ մը համառօտ բան մը կ'կարդայ և բոլոր ժողովուրդը ծունր կ'դնէ, նէ իմ մօտս կ'ծնրադրէ, և Մէղէրէրէի անուշ և սպալի եղանակը վերստին կ'սկսի — հեղհեղէ կ'բարձրանան ձայներն այնպէս որ բոլոր մատուռը կ'թնդայ և ձայնաւորներու պատշգամը կ'երերայ. յետոյ նորէն կ'մեղմի որոտումն և միակ ձայն մը մնալով այնպէս սղրագին, անուշ, դողդոջ կերպով կ'երդէ որ մարդուս սիրտը կը յուզի և արտասուքը կ'թափին — վասն զի Քրիստոս մեռաւ . . . ։

Մատրան մէջ մութ էր երբ դուրս ելանք. ձայները մեղմեր էին։ Էնրիքա բան մը չէր ըսեր. նոյնպէս ես չէի կարող բերանս բանալ։

Զատիկն եաք՝ Հռոմէն պիտի հեռանայի. իմ չուխս վրայ խօսիլ չէի ախորժեր և ոչ իսկ խորհիլ։ Հռոմ — այս հինաւուրց քաղաքն՝ իր բոլոր թշուառութեամբն, իր անկեալ վիճակով, և Կայսերութեան աւերակ պալատներով — մարդուս սրտին վրայ կ'ծանրանայ . . . . . Հռոմի բոլոր հնութիւններն, տեսարաններն կարելի չէ դիւրաթողուլ ու մեկնիլ։ Եւ ոչ Էնրիքան, իր խարտեշ գիսակով, և զայն բոլորող մեստաքսեայ ցանցով — և իր մութ կապոյտ աչերով — և իր սպիտակ, քնշուշ մազերով։ Ա՛հ, Զատիկը շատ մօտիկ է։

Բայց ահա կ'հասնի, և Ս. Պետրոսի փառաց հետ կ'անցնի, որ կատարէն մինչև վարը կ'լուսաւորի։ Էնրիքային հետ տեսայ այս լուսաւորութիւնն Ռիպէթայէն, երբ 'ի հեռուստ կ'շողար՝ հրաւառ քաղաքի մը պէս։

Հետևեալ օրն իմ ծաղկանց վերջին փունջս տունը կ'բերեմ, և անոր հետ զեղեցկաշէն հռոմէական մատնի մը։ Կրակարանին մէջ կրակ չվառիր, բայց բոլոր տուներն իմ սենեակս են։ Տաք օրերն հասան, և ամառնային օդը, նոյն իսկ այժմ՝ դաշտին զողաւոր վայրերը կ'շրջի ենդալի։

Իմ բաժանման օրուան առաւուն տունուորները կանուխ ելան։ Զեմ կարծեր թէ ես ալ լաւ քնացայ նոյն գիշերը։ Երբէք Էնրիքա այնքան գեղեցիկ երևցած չունէր ինձ — երբէք։ Բարեկենդանի բոլոր շրջազգեստներն, և Խաչելութեան աւուր սպալի լաթերն չէին կարող լաւ ևս զարդարել իր գեղեցկութիւնն որչափ այն առաւօտեան հագուստն և այն պարզ վարդի կոկոնը զոր իր ծոցին վրայ դրած էր։ Այն կոկոնն ինձի տուաւ — վերջինն — գողահար ձեռնով մը։ Շնորհակալ չեղայ նէրա, վասն զի չէի կարող. գիտէր նէ, և իմ աչունքս արտասուալի էին։ Ծերունի մարդն իմ երեսս համբուրեց, այս էր հռոմէական սովորութիւնն, բայց այս սովորութիւնն հռոմէացի աղջկունք չունէին — գէթ ոչ ստէպ։ Երբ Գօրսօէն վար իջայ, դարձայ նայելու այն պատշգամն ուր կ'կենար նէ բարեկենդանի օրեր, սեղադոյն կոձկէնով և սպիտակ փետրով։ Գիտէի որ այժմ անդ պիտի լինէր, և արդարև անդ էր։ Աչքս այս տեսլեան վրայ մնաց և չէր կարող թողուլ. բայց երբ իմ աչքէս հեռացաւ նէ, սիրտս նէրա յարեցաւ — ինչպէս այժմ կ'յարի իմ յիշողութիւնս։

Կէսօրին կառքը բլուրներուն վրայ կայ առաւ, որոնք Հռոմի կողմը կ'նայէին։ Թեղջի ծառի մը ներքև նստայ, վասն զի կերակուր ուտելու ախորժակ չունէի. եռևս կ'նայէի սրտայոյզ հանդարտիկ քաղքին վրայ, որու բոլորտիքը կ'երևէր Կամպանիայի թխադոյն և աղէտանջ ծովը։

Այնպէս իմն երևցաւ ինձ որ Էնրիքան, հռոմայեցի աղջիկը կ'տեսնեմ՝ իր առաւօտեան հագուստով. իր խարտեշ գիսակով, բայց վարդի կոկոնն որ իր ծոցին վրայ էր, այժմ իմ ծոցս էր։ Նոյնպէս իր արծաթափայլ ձայնը կարծես թէ իմ բոլորտիքս կ'ծածանէր, հռոմէական երգերու հատուածներ բերելով, բայց երգերն ախուր և սրտաբեկ էին։

— Բայց վերջապէս այս ամէնն տխուր մտատանջութեան արդիւնք է, մտածեցի ես. և սակայն եթէ նոյն պահուն Հռոմ դարձող կառք մը տեսնէի, կարծեմ թէ իսկոյն անոր մէջ տեղ մը պիտի բռնէի և ետ դառնայի, և թերևս մինչև յայսօր Հռոմի մէջ պիտի ապրէի։

Բայց կառապանը զիս կոչեց, կառքը պատրաստ էր։ Վերջին ակնարկ մը նետեցի քաղքին վրայ և ապա լեռնէն վար իջանք շուտ ընդ փոյթ։

— Անուշիկ Էնրիքա, արդեօք տակաւին ողջ ես, թէ ոչ անցար և դու այն ըլին Երկիրն, ուր բարին և գեղեցիկը կ'ննջեն։

Անգելոյն տեսիլները կ'նուագին։ Առաւօտեան քամին դաշտավայրին վրայ դադարեցաւ, և թռչուններն այլ ևս չեն երգեր։ Ծառերն վտակին վրայ կ'հակին, բայց ստուերներն արծաթափայլ ջրերուն վրայ ուղղահայեաց կ'ձգին։

ԿԷՍՕՐՆ երկնից միջևը հասաւ, և ԱՌԱՒՕՏՆ անցաւ գնաց։

Բ

ԿԷՍՕՐ

Կէսօրը կարճատև է. միջօրէին վրայ երբէք չգեղերիր արևը, և ոչ ստուերը՝ պարտիզին արեւելակնային հին ժամացոյցին վրայ ԺԲ-ին ընդ երկար չմնար։ Կէսօրին պէս՝ Ներկայն լոկ կէտ մ'է, և այնպէս նուրբ կէտ մ'որ գործողութեամբ և մեծութեամբը չչափուիր։ Մտածութիւնը միայն բաւական փափուկ է Ներկային ընդարձակութիւնը նկարագրելու համար։

Անցեալն Աստուծոյն է. ներկայն միայն մերն է։ Եւ որչափ որ կարճ է, դարձեալ շատ բան կ'պարունակէ եթէ խնայել գիտենանք։ Այն մարդն որ կարող է զայն գրաւել, չափել և իր խորհրդովը լնուլ՝ մարդու մը գործ կ'ընէ. ոչ ոք կարող է աւելի ընել. բայց հազարաւոր մարդիկ կան որ աւելի քիչ բան կ'ընեն։

Թէև կարճատև՝ Ներկայն մեծ է և հզօր — քան Անցեալն հզօր, քան ամիսն կրակոտ, կամ գերեղմանին պէս Մեռեալ։ Միջօրէական արևն պիտի կենդանացընէ բուսական կեանքն որ առաւօտ մեռած էր։ Տաք է և տոչորիչ. այժմ կ'զգամ զայն իմ գլխուս վրայ. բայց տաղնապալի Ներկային պէս ոչ կ'տապէ և ոչ կ'տոչորէ։ Հրատապ Հիմային Ճառագայթները խափանող կաղնիի տերևներ չկան։ Իր ստուերներն ոչ արևելեան և ոչ արևմտեան կողմը կ'սփռին. Կէսօրին պէս՝ անոր բերած ստուերն երկնէն շիտակ կ'ընկնի երկրի վրայ — Երկնաստ շիտակ Դժոխք։

Ցիշողութիւնը կ'սաւառնի Անցեալին վրայ. գործն կ'սաւառնի Ներկային վրայ։ Առաջինն՝ փառաւոր յաղթանակներով զարդարուն, շիրիմներով լեցուն տաճարի մը մէջ կ'ապրի, միւսն ուրիշ վիայարան չունի

այլ միայն Պարտաւորութիւնն, և երկրի վրայ Ճիւաղի մը պէս կ'շրջի։

— Շունս քովս կոչեցի, կնձնիներուն ներքև զմտուող տունէն անդին եկեղեցին իմ հետս բերած կերակուրս միասին կերանք, և այժմ, Գարշը նեռած ոսկորս կ'կրծէ, և ես երազային կ'ձեմիմ՝ միջօրէական մթնոլորտին մէջ՝ դալարուտ բլրակին վրայ, կաղնիներուն ներքև։

Կէսօրը շատ հանդարտ է դիւղը։ Թռչունները չեն երգեր. մշակները գաշտը չեն. ոչխարներն իրենց քիթը հողին վրայ կ'դնեն, և հօտերն՝ հովանաւոր ծառերու ներքև՝ ճակներու մօտ անշարժ կը մնան։ Աղջիկներն՝ վտակին վրայ՝ սրահ մ'իրենց աշխատութիւնը գաղարած են, և ջուրն իր խոխոջը կ'մեղմէ և հեղիկ կ'սահի։

Մտածութիւնն, ըսի ես; Ներկային միակ չափն է. և միջօրէական անդորրութիւնը մտածութեան անունդ կ'հայթայթէ. իմ միտքս հին ընկերներս կ'գտակերէ և Ներկային մէջ կ'կեցնէ։ Մտածութիւնն աշխարհի վրայ կ'սաւառնի, և մեզի կ'բերէ յոյսեր, երազներ, գիտաւորութիւններ՝ հրատապ Հիման չափելու համար։ Խնդութիւն, վիշտ և խորհուրդ՝ իմ մտածութեանս մէջ շփոթելով՝ Ներկային ծնունդ տուին։

— Այժմ ուր է, մտածեցի, փոքրիկ Իպատէն, ուր է Լիլին, ուր է Պէն, ուր Լէսլի, ուր իմ վաղեմի ուսուցիչս։ Ո՞ւր է իմ սենեկակիցս որ այնպէս զարմանալի խաղեր կ'ընէր. ուր սեւակն Յովհաննան։ Ո՞ւր է այն անուշ օրիորդն որմէ բաժնուեցայ այն պատշգամին վրայ որ Մօղպրրի եկեղեցւոյն հին կատարին վրայ կ'նայի։ Ո՞ւր են իմ յոյսերս — իմ խորհուրդներս — ուր են իմ վիշտերս։

Զգիտեմ թէ դուք ի՞նչ էք, բայց եթէ Ներկային չափելու համար այդպիսի մտածութիւններ բերէք, Ներկայն ընդարձակ պիտի երևի, և Կէսօրին պէս հրակէզ պիտի լինի, և Հիման տենդային ժամը պիտի դարձնէ։

ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ո՞ւր են ասոնք։

Այժմ չեմ կարող գետափին վրայ երկար ժամեր նստիլ, ձուկ բռնելու համար կարմիր ջուրը նետել և այս բանս մեծ զբօսանք սեպել։ Զկայ այն գանգրահեր օրիորդն որ այժմ քովս նստի և գետերին վրայ խաղայ։ Ժամերն առաջուան պէս երկայնատև չեն, և մանկային խաղերն որոշմեր սիրտը կ'հրճուէր, չեն կարող դիս շարժել։ Շատ ատենէ՝ ի վեր՝ խեղճ Դրէյ մեռաւ։ և ճակին վրայ ծփացող փայտերը բռնելու համար այլ ևս չբնդար։ և ոչ ես կարող եմ շատ ժամեր անոր

հետ խաղալ և ինքզինքս երջանիկ համարիլ. Հողակոյտն որ իր փոսը կը ծածկէ հարթեր է, և զայն հովանաւորող ծառերն կոտրեր և լոռ բռներ են։

Փոքրիկ Լիլլին կին եղեր է, կարդուեր է, և ուրիշ փոքրիկ Լիլլի մ'ունի՝ ոսկեթել մաղերով, կ'ըսէ նա, և Ճիշտ իր պատկերին նման։ Հաւատի եմ որ սիրուն աղջիկ մ'է, բայց իմ Լիլլիս չէ։ Փոքրիկ տղայ մ'ալ ունի, զոր Պօղ կ'անուանէ — լակոտ մ'որ, ինչպէս կ'գրէ մայրն, ինձի պէս անսաստ է։

Պէն՝ որ զիս գպրոց տանող կառքով արշաւել կ'ուզէր երբեմն, այնուհետև բաւական արշաւներ ունեցեր է. նա մեծցեր մարդ եղեր է, և իր բաղդը շինելու կ'նկրտի մեր արևմտեան աշխարհին մէկ կողմը, ժամանակիս կարճառև մէկ պատուոյն հասնելու համար։ Շատ չկայ կարդուեր էր նա, կ'յիշեմ որ իր կինն իմ՝ գպրոցի առաջին ընկերուհիներէն մինն էր, գեղանի էր նա, այլ վախտ տերևի նման։ Ամուսնութենէ տարի մ'ետքը մեռաւ։ Պէն իրնէ տաս տարի օր փոքր էր, բայց իր վիշաը զինքը տաս տարուան աւելի մեծ կ'ցուցնէր. ինք չըսեր այս բանս, բայց իր աչքն ու դէմքը զայն կ'մատնեն։

Դայեակին որ այն ողբալի առատն ձեռքս քսակ մը տուեր էր, պառաւ կին մը դարձեր էր։ Այն ատեն յիսունն անցած էր, այժմ թերևս եօթանասուն տարու է։ Անցած օր՝ երբ զինքը տեսնելու գացի, չճանչցայ ձայնս և ոչ դէմքս։ Կրկնեց նա անուանս երբ անոր ըսի. — Պօղ, Պօղ, չէր յիշեր նա Պօղ մը, բայց միայն շատ ատեն առաջ գիտէր որ այս անուամբ տղայ մը կար . . . . Նա երկար զրոյցներ պատմեց ինձ հին տան վրայ, և թէ ինչնոր ընկերներ եկեր գացեր են, պատմեց ինձ իմ խաղերս և բոլոր մանկային գործերս . . . ։

Իսկ մօրեղբօրս գալով, այս պաղ և լուսակայ մարդն՝ որ բլրին վրայ գտնուած տան մէջ իր գիրքերով կ'ապրէր, և որ երբեմն իր նայուածքով զիս կ'զարհուրեցնէր, իմ մանկելս ետև սաստիկ սակաւ ընկեր և գրեթէ խելագարեր էր։ Իզաբէլ իր անուշապատով անոր յարեր, զանի կ'առաջնորդէր գուրսը, պարտէզը կ'տանէր և սիրած գիրքերը կ'կարդար։ Եւ ըսին ինձ, որ երբեմն Զաքէլ իմ գրած գիրերս առ Լիլլի և Պէն անոր կ'կարդար և կ'հարցնէր թէ արդեօք Պօղը կ'յիշէր, որ զինքը գետէն ազատեր էր. բայց ծերունին մինակ գլուխը կ'օրորէր, և կ'մրմնար թէ ուրչափ զառամեր և ուժէ ընկեր էր։

Վերջէն գրեցին ինձ որ քեռիս մեռեր է, և հեռաւոր վայր մ'ուր իր կինը բնակեր էր, թաղուեր է, և այժմ իր կնկան մօտ կ'ննջէ։ Ի-

զարկել առ վշտին հիւանդացեր և ժամանակ մը Լիլլին հետ անցընելու մեր տունն եկեր է, բայց երբ վերջին անգամ գրեցին ինձ իմաց տուին որ իր հին տունը դարձեր է — ուր Դրէյ թաղուեր էր — ուր միասին ստէպ խաղացեր էինք ամառուան երկար օրերը։

Վերադարձիս ուրախ եղայ այն տեղ գտնելով զանի։ Լիլլի և Պէն կ'բնակէին այն քաղաքն ուր իմ երկար ուղևորութենէս ետև՝ եղեր էի. բայց ամենէն առաջ գացի Իզաբէլը տեսնելու։ Թերևս ստէպ միտնեռուն վրայ լուրեր ստացած լինելուս՝ այնչափ շատ չէի շատպեր զանոնք տեսնելու, կամ թերևս՝ իմ լաւագոյն այցելութիւնս միտներուն համար կ'սպահէի, կամ թերևս (և այսպէս կարծեմ) թերևս Իզաբէլն միտներէն աւելի կ'սիրէի։

Այսպէս զիւղը գացի, և ճամբան կ'մտածէի թէ արդեօք ուրչափ փոխուած պիտի գտնեմ զանի։ Այժմ տասնեմն կամ քսան տարեկան պիտի լինէր. և անտարակոյս իր վիշան փոքր ինչ կերպարանին տրամութեան մուայլմը տուած պիտի լինէր. բայց մտածեցի որ տասը համար աւելի ևս պիտի սիրէի զանի։ Այն ատեն, թերևս՝ չպիտի ծիծաղէր և սաստէր զիս, այլ աւելի հանդարտ պիտի լինէր, անուշ ժպիտ մը պիտի ցուցընէր, և հանդարտիկ ու գեղանի դէմք մը — ինչպէս որ կը խորհէի։ Անշուշտ իր երեսն աւելի վայելչութիւն ու շնորհ առած պիտի լինէր, և կերպարանին վրայ աւելի աղնութիւն դրոշմուած պիտի լինէր։

Այս մտածելով քիչ մը դողելայ. վասն զի կարծէի թէ հազիւ ուրեմն պիտի մտածէր այն ատեն իմ վրայ. կարելի է իր սիրականներն աւելի կ'տեսնէր. կարելի է որ զիս բնաւ պիտի չսիրէր, սակայն ես քաջ գիտէի որ զինքը պիտի սիրէի։

Շիտակ Զաքէլին տունը գացի. շատ տարի առաջ՝ այն առուակէն ուր ձուկ որսացեր էինք՝ անցայ, և մտածեցի որ այժմ՝ քանի որ նա մեծցեր կնութեան հասակը մտեր էր, վերստին նոյն վայրը չպիտի նստիմ նէրա հետ, և անտարակոյս ջրէն չպիտի հանեմ, ինչպէս որ երբեմն հաներ էի, և ոչ ձեռները պիտի սեղմեմ, և թերևս չպիտի համբուրեմ, ինչպէս որ կ'համբուրէի՝ երբ իմ մօրս գիրկը կ'նստէր — ահ, ոչ — ոչ, ոչ։

Տեսայ այն տեղն ուր Դրէյը թաղեր էինք, բայց հին քարը կորսուեր էր։ Գէթ կ'յուսայի որ Զաքէլ քարը նորէն դնել կ'տար, բայց յոյսս դերև եղաւ։ Երբ դէպ 'ի տան դուռը դիմեցի զող զգացի, վասն զի կայծակի պէս եկաւ անցաւ մտքէս թէ արդեօք Զաքէլ կարդուե-

էր. չէի կարող ըսել թէ ինչո՞ւ չկարդուէր, բայց գիտէի որ շատ հոգ պիտի ընէի եթէ նէրա կարդուիլն իմանայի։

Բարձրահասակ կին մը դուռը բացաւ. թէև գիս չճանչցաւ, բայց ես շուտ մը գիտցայ որ հին սպասուհիներէն մին էր։ Նախ հարցուցի թէ անտեսուհին ո՞ւր էր, որպէս զի Զապէլն յանկարծակի իմանայ գալուստս։ Սիրտս փոքր ինչ կ'դողդողար կարծելով թէ ինքն յանկարծ նէրս կրնար գալ, կամ թերևս տեսած լինէր բլրէն վեր ելնելս։ Բայց զարձեալ կասկածելի էր որ գիս ճանչցած լինէր։ Նոյն պահուն անտեսուհին նէրս մտաւ. ծանրաբարոյ դէմքը մ'ունէր, հարցուց թէ արդեօք զինքը տեսնել կ'ուզէի։ Ի հարկէ զինքը տեսնել կ'ուզէի. ուստի կրակին մէկ կողմը նստաւ, աշնան մէջ էինք, և տերևները կ'թափէին, և նոյեմբերի հովերը ցրտաշունչ էին։

Ըսէի՞ արդեօք թէ ով եմ, կ'խորհէի, կամ անմիջապէս Զապէլը հարցընէի։ Փորձ փորձեցի հարցընել, բայց ծանր էր ինձ նէրա անունը տալ, սարսռելնակ էր այս, բայց այս անունը չէի կարող արտասանել։

«Ո՞վ էք դուք, պարո՞ն» ըսաւ անտեսուհին այնպէս ծանր կերպով՝ որ իսկոյն ոտք ելայ, քովը գացի և ձեռքը բռնեցի «դուք կ'ճանչէք զիս» ըսի «հաւատի եմ որ Պօղը կ'յիշէք։

Զարմանքէն ոստում մ'ըրաւ, բայց շուտ մ'ինքզինքը դատաւ և նայեցաւ ծանր կերպարանքը ցցուց։ Կարծեցի թէ սխալմունք մը, կամ նախատինք մ'ըրի։ Զինքը Տիկին անուանեցի և Զապէլը հարցուցի։

Տնտեսուհին դունատեցաւ, սոսկալի կերպով դունատեցաւ։ «Պէլլան (Զապէլ)» ըսաւ նէ։

«Այո՛, Պէլլան։»

«Պարո՞ն . . . Պէլլան մեռաւ»։ Աթոռիս վրայ ընկայ, բան մը չըսի։ Տնտեսուհին — օրհնեալ լինի — կամացուկ մը դուրս սահեցաւ գնաց։ Ձեռքս աչացս վրայ էին։ Հովը կ'շնչէր ուժգին դուրսը, և ժամացոյցը դէ՛ դէ՛ կ'զարնէր ներսը։

Չէի հեծկլտար, չէի արտասուեր, ձայն մը չէի հաներ։ Ժամացոյցը սպասի կ'ճճար և հովը կ'հառաչէր. բայց այլ ևս չէի լսեր. սրտիս մէջ փոթորիկ մը կ'մոնչէր, որ կարող էր որոտումն իսկ խափանել։ Վերջապէս ներքին փոթորիկն երկայն, խորին հառաչով մը պայթեցաւ։ «Ո՛հ, Աստուած իմ» ըսի։ Թերևս աղօթք մ'էր այս ձայնս — անէծք մը չէր. գիտեմ։

Պէլլա, անուշիկ Պէլլան մեռա՞ւ։ Այնպէս ինձ կ'երևէր ինձ որ

աշխարհիս կէտն նէրա հետ մեռաւ, ամէն կայտառ դէմք մթացաւ, ամէն արև մարեցաւ, ամէն ծաղիկ թօշնեցաւ, ամէն յոյս նուազեցաւ։ Դուրսը բայց օդն ելայ և կայ առի այն ծառերուն ներքև ուր խեղճ Դրէյլին հետ խաղցեր էինք. բայց Դրէյ չէր իմ հոգս երբ անդ կեցեր էի և ցրտապէն հովն մազերս կ'ծածանէր, և աչերս արտասուք կ'լցուէին։ Ի՞նչպէս կարելի է որ նէ մեռնի. ընդէ՞ր գնաց նէ։ Մի թէ երբեք Զապէլ մեռաւ . . . իր դաղտին մէջ . . . թաղուեցա՞ւ։ Ուրեմն ընդէ՞ր մարդիկ կ'ապրին։ Ի՞նչ հարկ կար ապրելու, այժմ որ Պէլլա գնաց։

Ա՛հ, ի՞նչ անդունդ կ'բացուի աշխարհիս մէջ մեր սիրած անձերու մահուամբը։ Այն ատեն բովանդակ աշխարհը չէ այլ ողբմելի կիսադունդ մ'է որ իր առանցքին վրայ կ'դառնայ, և իր աւերակներու շառաչմամբ քեղ թաքուկ կ'աղդէ։

Տնտեսուհին փոքր առ փոքր ամէն ինչ պատմեց ինձ երբոր մտիկ ընելու համար քիչ մը հանդարտութիւն դտայ։ Պէլլա ամսէ՛ի վեր մեռած էր. Լիլի բոլոր ժամանակն անոր հետ անցուցեր էր. նէ մեղմիկ մեռաւ, առանց նեղութեան, առանց երկիւղի — ի՞նչքան է կրնան երկնչիլ հրեշտակները։ Սակայ «Պօղ ազատոհվին» վրայ խօսեր էր, փոքրիկ ծրար մը թողեր էր անոր համար, բայց ծրարն անդ չէր, Լիլիին տուեր էր որ պահէ։

Իր դերեզմանն տունէն քիչ մը հեռու էր — եղբօր մը դերեզմանին մօտ, որ շատ տարի առաջ մեռած էր։ Նոյն իրկուն անդ գացի։ Բարձր էր հողակոյտը և թարմ։ Դալարներն դեռ բոլորովին չէին դոյացած զայն, և թափուած չոր տերևներն դերեզմանին տխրելի և աւերուն երևոյթ մը կ'ընծայէին։ Հետեւեալ օրն բոլորն ալ մաքրեցի, երկայն խոտերը կտրեցի, և ուրիշ կողմն կապոյտ մանիշակի փունջ մը դնելով արտասուք թրջեցի։ Բնակարանն, ծառերը, դաշտերն, արտերն տխուր տեսարան մ'ունէին հովաշունչ նոյեմբեր ամսեան մէջ։ Չէի կարող վերստին զանոնք սիրել. իմ սիրածս միայն Պէլլայի դերեզմանին վրայ յարդարած հողաբլուրս էր։ Այժմ անդ կ'քնանայ նէ — մահուան քունը . . . . . .

ՊԷԼԼԱՅԻ ԾՐԱՐԸ

Չէի մոցած Պէլլայի այս ծրարը, և չէի կրնար մոռնալ երբէք։ Նէ երբը Լիլին տեսայ — այժմ տարիքն առած Լիլին, իր տանը մէջ երջանիկին, և աղջիկ եղած ժամանակուան պէս զուարթներես Լիլին —

զայն ինձի տուաւ։ Պատմեց նաև Պէլլայի հիանդութիւնը, տառապանքն և թէ ինչ կերպով փոքրիկ ծարը տուեր էր «Պօղին համար է» ըսելով։ Բայց այս չպիտի կրկնեմ, չեմ կարող կրկնել։

Զգիտեմ պատճառը, բայց այս իրաւ է որ անոր անունը լսելով զգոյշ ելայ։ Կան մարդիկ որ սեղանի վրայ խօսակցելու ատեն կ'յիշեն մուռեալ բարեկամներ. կ'զարմանամ թէ ինչպէս կ'ընեն այս բանս։ Իսկ ես, երբ գերեզմանն իր դռները կ'գոյնէ իմ սիրած անձերուս վրայ, որչափ որ սգալի տեսիլներ իմ միտքս կ'պաշարեն, զարձեալ լեղուս լուին կ'մնայ։ Չեմ կարող անոնց անունները յիշել. անախորժ կ'երևի ինձ երբ ուրիշներն յիշեն։ Կարծես թէ կիսովին բուժ զտած վէրքեր կ'պատռին, և աշխարհային գաժան դոչումներով մեռնողին քունը կը վրդովեն։

Կ'սիրէի Պէլլան. չգիտեմ թէ ինչպէս կ'սիրէի, իբրև սիրահար մը թէ ոչ իբրև կինը սիրող ամուսին մը։ Այնքան բարեսիրտ, այնքան զեղանի, այնքան անմեղ էր որ ես միշտ կ'մտածէի որ բոլոր աշխարհ սիրածիս պէս կ'սիրէր զանի։ Բան մը միայն կար որ երբէք Պէլլայի չըսի։ Իմ բոլոր ցաւերս կ'պատմէի նէրա, կ'պատմէի իմ բոլոր ուրախութիւններս. կ'յայտնէի նէրա իմ յոյսերս, իմ փառասիրական երազներս, իմ ձախորդութիւններս, իմ նեղութիւններս և տհաճութիւններս, բայց երբէք չըսած եմ նէրա թէ որչափ զինքը կ'սիրէի։

Զգիտեմ թէ ինչու համար այսպէս կ'վարուէի, միայն գիտէի թէ անօգուտ էր։ Սակայն կ'յիշեմ որ ձմերայնն օրեր կ'ըսէի նէրա. «Պէլլա, ձմեռ է»։ Կամ օգոստոսի հոտաւէտ օր մը նէրա կ'փսփսայի. «Պէլլա, ամառ է» որպէս թէ մեծ աղջիկ լինելէն ետև՝ նէրա ըսէի. «Պէլլա, կ'սիրեմ քեզ։»

Ուղևորութեանս ատեն իրմէ նամակ մը միայն ստացեր էի. անուշ գիր մ'էր. կ'յայտնէր ինձ թէ ինչ կ'ընէր, թէ ինչեր կ'մտածէր իմ վրայ երբ կ'շրջէր անտառներն ուր միասին թափառեր էինք։ Լիլի ըսաւ ինձ որ ուրիշ երկու երեք հատ նամակներ գրած էր ինձ, բայց ինձ չէին հասած բնաւ։ Ես ևս գրեր էի թէ ինչ բանի վրայ կ'կայանար իմ երջանկութիւնս, գրեր էի թէ ինչպէս նաւուն մէջ անուշ օրիորդին հանդիպեր էի, թէ ինչպէս վերջէն զանի գտեր էի, և թէ ինչ երջանիկ ժամանակ անցուցեր էինք 'ի Տէվոն։ Մինչև անդամ այս լանդակ երազս պատմեր էի, երևակայելով թէ Զապէլ Անկլիա կը գտնուի, և թէ ինչպէս տրամագին երես դարձուց իրմէ՝ զինքը «Քէրի (Քարօլին)» անուանելուս։

Նոյնպէս Բարիզ բոլոր տեսածներս գրած էի — այնպէս որպէս թէ քրոջմը կ'գրէի. նոյնպէս խօսեր էի Հռոմայեցի անուշաղջկան, Էնրիքայի վրայ, նէրա խարտեշ մազերուն, կայտառ աչաց, և բարեկենդանի սիրուն զգեստներուն վրայ։ Եւ տեսնելով որ իր գիրերը ձեռքս չէին հասներ, խնդրեր էի որ իր գրութիւնները շարունակէ կամ փոքրիկ օրագիր մը բռնէ որ 'ի դարձիս ինձի կարդայ։ Կ'մտածէի թէ քանի՛ ախորժելի պիտի լիներ իր հօրը տան ծառերուն ներքև նստիլ և գողտրիկ ձայնը լսել իր մտածութեանց ու երկիւղներուն յայտագիրը կարդալու ատեն։ Աւա՜ղ, ինչպէս մեր յոյսերն 'ի դերև կ'ելնեն։

Այս գրուածքն օրագրի նման սկսեր էր, իր հօրն հիանդութեան ժամանակ։ Այս թուղթը Լիլիին տալով ըսեր է. «Եթէ Պօղ ասա լինէր ինչ որ բերնով պիտի ըսէի ահա գրի առի»։

Օրագիրն այսպէս կ'սկսի. «Այժմ հօրս տունը դարձայ. չէի կարող մինակ թողուլ զինքը. վասն զի ըսին ինձ որ հիանդ էր։ Արդարև լաւ վիճակի մէջ չգտայ զինքը. շատ ուրախ եղաւ զիս տեսնելով, և այնպէս գորովանօք համբուրեց զիս որ հաւատի եմ, Պօղ, որ չպիտի ըսէիր, ինչպէս ըսելու սովոր էիր, որ նա պաղ մարդ մ'է։ Երբեմն անոր կ'կարդայի, գրատան ներքին պատուհանին մէջ նստած (անշուշտ կ'յիշես) ուր սովոր էինք նստիլ մեծան իր աչքէն հեռու։ Նա չէ կարող հիմակ կարդալ։

Փոքրիկ Գարօլինը տեսնելու համար ունեցածս կ'տայի. բայց գիտես որ զանի բնաւ չնկարագրեր ես նամակիդ մէջ. չպիտի ըսես ինձ թէ սև՞, թէ ոչ գեղեցիկ մազեր ունի, թէ իր աչերն կապոյտ են թէ ոչ իմինս պէս սև։ Բարեսի՞րտ է, միթէ անհամ խօսքեր չէ՞ր ըներ, կամ գէշութիւն չէ՞ր յայտներ նէ ձեր նաւարկութեան օրերն ովկիանոսի վրայ։ Ինչ երջանկութիւն պիտի համարէի ձեզի հետ լինիլ այն ասողտիայլ դիշերներն՝ հեռուն ալեաց վրայ նայելով։ Բայց ապա կը մտածեմ որ թերևս չէիր փափաքեր որ ձեզի հետ գտնուէի, թերևս և ոչ մի անգամ զիս մտքդ անցուցիր։ Այս կարծիքը զիս կ'տրտմցընէ, բայց դարձեալ չգիտեմ թէ ինչ պատճառաւ կ'տրտմիմ, վասն զի քեզ աւելօք սիրած եմ երբ երջանիկ էիր, և ստոյգ եմ որ այն ատեն երջանիկ էիր։ Կ'ըսես թէ նաւէն ելնելէն ետև երբէք Գարօլինը պիտի չտեսնես, պէտք չէ որ այդպէս խորհիս, Պօղ. եթէ ըսածիդ պէս նէ դեղանի է և սիրասուն, օրին մէկը քու սիրադ դէպ 'ի անոր կողմը պիտի տանի քեզ, և այս մասին գրեթէ ստոյգ եմ։

* * * «Հայրս օր ըստ օրէ կ'տկարանայ և խելքը կ'ցնդի, սոսկալի

է այս բանս. երբեմն մօրս անուամբ կ'կոչէ զիս, և երբ կ'ըսեմ. Զապէլն եմ, նա կ'պատասխանէ. Ինչ Զապէլը, և ինձի հետ օտարականի պէս կ'վարուի: Բժիշկը գլուխը կ'թօրթուէ երբ հօրս վիճակին վրայ հարց ու փորձ կ'ընեմ: Ո՛հ, Պօղ, եթէ նա մեռնի, ես ի՞նչպիսի ընեմ: Ես ալ պիտի մեռնիմ — գիտեմ՝ որ պիտի մեռնիմ. ոչ պիտի խնայեմ զիս այս տեղ. Լիլի կարդուած է, և Պէն տար աշխարհ կը գտնուի, և դու, Պօղ, զոր երկուքէն աւելի կ'սիրեմ, ինչ շատ հեռու կ'գտնուիս: Բայց Աստուած բարի է, և հօրս պիտի խնայէ:

* * * «Այսպէս, վերսալն տեսար քու փոքրիկ Դարօլինդ, ես արդէն քեզի ըսի որ պիտի տեսնես: Կ'ըսես թէ ի՞նչպէս պատահմամբ անոր հանդիպեցար: Ահ, Պօղ, Պօղ, չարաճճի, թէև ճշմարտասէր ես, բայց այս մասին տարակոյս ունիմ: Կ'սիրեմ նէրա վրայ ըրած նկարագիրդ — սև աչեր, իմիններուս պէս է կ'ըսես — «գրեթէ նոյնչափ սիրուն»: Լա՛ւ, Պօղ, այս բանս քեզի պիտի ներեմ, այդ միայն սոլիտակ սուտ մ'է: Գիտես թէ իմ աչերէս շատ աւելի սիրուն պիտի լինին իրեն աչերը, թէ ոչ՝ Տէվօն երկու շաբաթ ամբողջ մշակի մը հիւղը չպիտի բնակէիր: Փափաքելի էր ինձ զանի տեսնել, կ'փափաքէի որ քեզի հետ ասա գտնուէր նէ այժմ, վասն զի ամառ է, և ծառերն ու ծաղիկներն այսպէս չքնաղ չ'լին երևցած երբէք: Բայց ես միայնակ եմ. հայրս շատ հիւանդ է և չէ կարող բնաւ դուրս ելնել: Այժմ տարակոյս ունիմ որ այսուհետև կարենայ երբէք դուրս ելնել: Երէկ Լիլին ասա էր, բայց հայրս չճանչեց զանի: Լիլին կարդայ ինձ վերջին գիրդ, իմինիս չափ երկայն չէր: Շատ, շատ բարի ես ինձի համար, Պօղ:

* * * «Երկար ատենէ 'ի վեր բան մը չգրեցի. հայրս շատ հիւանդ էր, պառաւ անտէսուհին ալ հիւանդացաւ, և հայրս միայն զիս կ'ուզէր իր քովը: Ընդ երկար չպիտի ապրի նա: Շատ տխուր, ողբմելի վիճակի մէջ եմ. զիս չպիտի ճանչէս երբոր տուն դառնաս, քու «սիրուն Պէլլադ» ինչպէս սովոր էիր զիս անուանելու, իր բոլոր գեղեցկութիւնը կորուսած պիտի լինի: Բայց թերևս հոգ չպիտի ընես, վասն զի կ'ըսես թէ շատ աւելի սիրուն էակ մը գտեր ես: Զգիտեմ, Պօղ, թերևս տրտում եսասէր լինելուս է — վասն զի վիշտն եսասէր էր — բայց Հռոմայեցի աղջկան համար ունեցած խանդդ չեմ հաւնիր: Զգոյշ եղիր, Պօղ, կ'ճանչեմ քու սիրտդ. գիտեմ՝ որ վառվռուն և զգայուն է, և կ'ժամեմ ըսելու որ նէ չքնաղէ, և գեղանի աչեր ունի, վասն զի կ'ըսեն ինձ թէ բոլոր Իտալացի օրիորդներն ասնուշ աչեր ունին:

«Բայց Իտալիա շատ հեռու է, Պօղ. երբէք Էրիքսն չպիտի կարենամ տեսնել. նա երբէք ասա չպիտի գայ: Ո՛չ, ոչ, Տէվօնը յիշէ: Այնպէս կ'զգամ որ Դարօլին այժմ իմ քոյրս է. նոյն զգայումը չունիմ հռոմայեցի աղջկան համար, և չեմ ուզեր որ այնպէս զգամ: Պիտի ըսես թերևս որ այս կարծիքս ծանր է, և կ'վախնամ որ ասոր համար զիս պիտի պարսաւես, բայց ձեռքս չէ, ստիպուեցայ յայտնապէս խօսելու: Քեզ շատ սիրելուս, Պօղ, չեմուզեր ծածկել միտքս:

* * * «Ամէն ինչ լմընցաւ: Պօղ, ճշմարիտը շատ յուսահատական է վիճակս. «Ոսկի բաժակը կոտրեցաւ: — Իմ խեղճ հայրս իր վերջին բնակարանը դնաց: Այս բանիս կ'սպասէի. բայց ի՞նչպէս կարելի է սպասել այն ահռելի եկաւորին — Մահուան: Հայրս այնչափ տկարացաւ վերջին ատենները, որ հազիւ նարոդ էր խօսիլ. ժամերով կը նստէր իր աթոռին վրայ, կրակին նայելով կամ պատուհանէն դուրս նայելով: Նա հազիւ կարող էր դիտել զիս երբ իր բարձը փոխելու կ'զայի, կամ իր գլխուն համար կ'կակուղցնէի: Բայց մեռնելէն առաջ շատ քաջ կ'ճանչէր զիս: «Զապէլ, ըսաւ նա, դու բարի աղջիկ մ'ես. Աստուած քեզ պիտի վարձատրէ»: Եւ նա այնպէս գորովագին համբուրեց զիս, և իմ վրաս այնպէս անձկանօք նայեցաւ, որ պահ մը մտածեցի որ թերևս վերսալն կենդանանար: Երկուսն խնդրեց որ իր մէկ շատ սիրուն գիրքը բերեմ: «Հայր իմ» ըսի անոր «դու չես կարող կարդալ, գրեթէ մութ է»:

«Ո՛հ, կարող եմ, ըսաւ նա. Զապէլ, հիմակ կարող եմ կարդալ»: Եւ գիրքը բերի. ձեռքս ընդ երկար բռնեց. ապա գիրքը բացաւ — մահուան վրայ գրուած էր:

«Կանթեղ մը բերի, վասն զի գիտէի որ առանց կանթեղի պիտի չիրնար կարդալ:

«Սիրելի Զապէլ, ըսաւ նա, կանթեղն աւելի մօտ գիր» բայց նոյն պահուն իսկ կանթեղն իրեն մօտ էր:

«Գիչ մ'աւելի մօտ բեր, Զապէլ» կրկնեց նա, և իր ձայնը շատ տկար էր, և ձեռքս ուժգին բռնեց:

«Աւելի մօտ, Զապէլ — աւելի մօտ:

«Հարկ չկար աւելի մօտեցընելու, վասն զի խեղճ հայրս մեռած էր: Ո՛հ, Պօղ, Պօղ, գթա՛ իմ վրայ. կարծեմ թէ ցնորեր եմ: Առջի աշխարհը չերևիր աչքիս: Հապա տունն և ծառերը — ո՛հ, բոլորն ալ ահաւոր տեսք մ'ունին:

«Ո՛փափաքէի որ տուն դառնայիր, սիրելի Պօղ. կեանքս այսչափ

դատարկ չպիտի լինէր։ Լիլի շատ բարեսիրտ է, սրտովին շնորհա-պարտ եմ անոր։ Բայց մեռնողն իր հայրը չէ։

* * * «Հիմակ աւելի հանդարտ եմ, Լիլիին հետ կ'զմտուիմ։ Աշխարհ առաջուանէ փոքր կ'երևի ինձ, բայց երկին աւելի լայնարձակ. մեր ամենուն համար տեղ կայ անդ, Պօղ, եթէ միայն այն տեղը փնտռենք։ Կ'ըսեն թէ հայրենիք պիտի վերադառնաս. շատ ուրախ եմ։ Թերևս կ'դժկամակիս այն քու սիրուն Էնրիքայէն հեռանալ, բայց եկուր, Պօղ։ Այնպէս իմն կ'երևի ինձ որ աւելի պայծառ կը տեսնեմ այժմ և աւելի համարձակ կ'խօսիմ։ Զպիտի դանես փոքրիկ Զապէլդ, վասն զի այժմ աւելի տարօր եմ, և իմ բնութիւնս աւելի ծանրաբարոյ. իսկ տառապանքս զիս աւելի — շատ աւելի տկարացուց։

* * * «Դիւրին չէ ինձ գրել. բայց պարտաւոր եմ ըսել թէ հակըցայ ոմ է քու Գարօլինդ։ Շատ տարի առաջ, երբ տունէն տարակայ կ'զտնուէիր, անոր հետ դպրոցն էի։ Միշտ միասին էինք։ Կ'զարմանամ թէ ինչպէս շուտ մը չգտայ ըրած նկարագրէդ թէ այն ոմ է. միտքս անդամ չէր անցներ այս բանս։ Սիրուն աղջիկ մ'է, և բոլոր սիրոյդ արժանի։ Այնուհետև անդամմը տեսայ զինքը, խօսեցանք քու վրայ. նա լաւ — շատ լաւ խօսեցաւ, ասկէ աւելի չեմ կարող ըսել, վասն զի աւելի չգիտեմ։ Ա՛հ, Պօղ, երանի՜ թէ երջանիկ լինիս, կ'զղամ որ իմ վախճանս մօտ է։

* * * «Իմ սիրելի Պօղ, ըսածս է, քիչ մ'ևս պիտի գրեմ. ձեռքս այժմ կ'դողայ։ Բայց պատրաստ եմ։ Փառաւոր աշխարհ մ'է ասկից վեր գտնուող աշխարհը — հաւաստի եմ որ փառաւոր է. և անդր իրարու պիտի հանդիպինք։ Կ'յուսայի վերստին տեսնել քեզ և ձայնդ լսել։ Կեանքս շատ անկայուն է. կարծես թէ բոլորովին իմ երթալիք աշխարհս կ'ապրիմ. անոր է իմ մայրս և իմ հայրս և իմ պզտիկ եղբայրս։ Պիտի իրարու հանդիպինք — այո՛, զիրար պիտի տեսնենք։

* * * «Վերջին տողս է այս, Պօղ։ Այլ ևս չեմ այս աշխարհէն։ Երջանիկ եմ. . . շատ երջանիկ։ Դու պիտի դաս ինձի։ Այլ ևս չեմ կարող գրել։ Թող բարի հրեշտակները քեզ պահպանեն և քեզ Երկին առաջնորդեն։»

— Միթէ շարունակեմ։

Բայց կենաց բեռն իմ վրայ է։ Առանին վիշտեր մեծ Ներկային ոյժն ու ծանրութիւնը չեն խորտակեր։ Կենաց լաւագոյն կէտն իմ առջևս է։ Պէտք է որ արդեամբ և գործով նկրտի այն։ Եւ օրհնեալ լինի

Աստուած, յուսոյ նշոյլներ կ'երևին ինձ հեռուն։ Անուշ Գարօլինն, որ այժմ կրկնապատիկ սիրելի է ինձ, վասն զի Զապէլի կորուստն ինձի հետ կ'ողբայ, պէտք է որ փնտռեմ։

Եւ ԿԷՍՕՐ կ'նուազի երբ անոր անուշ նկարն իմ աչաց առջև կը ծփայ, և Երեկոյեան ստուերներն երկրի վրայ կ'տարածին։

Գ.

ԵՐԵԿՈՅ

Ազատան մեծ երկիր մ'է. ինչպէս լոյս ու ստուեր, մերթ պայծառ, մերթ մութ, մերթ ծանր, մերթ շուտ կ'հաւաքուին անոր վրայ։

Հպարտութիւնն ու Փառասիրութիւնն անոր դաշտաց վրայ մեծ գզեակներ կ'կառուցանեն, լեռներու վրայ մեծ յիշատակերտներ, որ դէպ ուղիղ երկին կ'սլանան և իրենց գագաթները յաւիտենականութեան մէջ կ'ծրարեն։ Ապա կ'պատահի գեղեցկաշարժ մը, յուսահատութեան, վհատութեան կամ անպտղութեան շարժն, և զանոնք վար կը կ'տապալէ։ Աղէտք ամենուրեք ողբ ու կոծ կ'սփռեն, աչքը միայն քար ու քանդ կ'տեսնէ, և ոչայլ ինչ։ Փոքր առ փոքր արևը կ'ծագի. ինչպէս այժմ հեռաւոր ամպին մէջէն. . . և հողին կ'կենդանացընէ։

Համբաւը կ'հրամայէ՝ երկնից բարձունքը բաղմած. և Ուրախութիւնն այս տեսլեան խնդութեան աղաղակ մը կ'արձակէ։ Հազար տեսակ խորհուրդներ սիրտդ կ'յուզեն, տաք է ձեռքդ, և բազմատենչ գործի համար. զլուխդ խանդաղին կ'գործէ, և այդ աւիւնն քեզ մերթ այս մերթ այն կողմը կ'մղէ։ Կարելի է կ'տեսնես ժիր, ուշադիր վաստակաւոր մ'որ երբեմն քան քեզ յետադէմ էր, իսկ այժմ՝ ծանրօրէն այլ ապահովի կ'աշխատի կենաց ասպարիզին մէջ, մինչև որ ապագային հորիզոնին վրայ շարժող փալփլուն ստուերները բռնէ. այս տեսքը քու հոգիդ անհնարինս կ'բորբոքէ, և տենդային եռանդովսոյն վաստակաւորին ետևէն կ'սլնդես։ Բայց բարեբաղդ գործաւորն այդպէս գործելով չէ առաջդացած։ Իր բազուկն անվրդովէ, իր ըղեղը պաղ, իր աչքն անխռով է և ստոյգ։

Ապագան մեծ երկիր մ'է. մարդ մը չէ կարող անոր շրջանն ընել մէկ օրուան մէջ, մէկ ոտախնով չէ կարող չափել զայն, չէ կարող իր հունձքը մէկ կապոց ընել։ Տեսլէն աւելի լայնատարած է, անեղը է։

Սակայն միշտ, օրէ օր, ժամէ ժամ, դաժան Ներկայն մեղ կ'մղէ Ապագային կողմը։ Մեր հոգին անոր կ'դիմէ ինչպէս կ'դիմէ հայրենի յարկը. կ'սլանայ՝ ժամանակ և անջրպետ թողլով՝ դէպ մոլորակներն ու արևը, դէպ 'ի հեռաւորագոյն աստղեր ու գիսաւորներն, մինչև որ՝ կոյր թրթռուններուն պէս՝ անհունութեան բոցին մէջ կ'կորսուին, և միայն բնազդումի զօրութեամբ մեր երկիրը դալու համար ետ կ'դառնան։

Ի բայց վանէ Ապագայն — նոյն իսկ այն փոքրիկ Ապագայն որ մեր կենաց ԵՐԵԿՈՅՑՆ է — և ինչպէս անէութեան մէջ կ'գլորինք։ Հրամայէ հոգւոյն որ ներկային եղերքն արշաւելէն դադրի, և այն ատեն ի՞նչ մնունդ պիտի դանէ այդ հոգին։

Ես կ'ախորժիմ դեղերիլ անդ և անցեալ կենաց մէն մի օրն դալիք կենաց օրուան հետ հիւսել — այնպէս սերտիւ որ այս միութեան անդէտ լինիմ։ Եւ եթէ այս ընելու յաջողիմ, այն ատեն բոլորին յարմար համեմատութիւններ պիտի տամ և բնական նկարներ, այն օթոյներուն նման, որոց վրայ մարասեաներն քիչ քիչ կ'գործեն և զանոնք իրենց կենաց հետ կ'աւարտեն, կամ այն գունաւոր պատկերներու նման, որով բանահիւս-արհեստագէտները հին և հսկայաձև տաճարներու գմբեթները զարդարած են — որ 'ի սկզբան լոկ ծիրանեղոյն և կապոյտ ծեփուկներ (daubs) կ'երևին՝ մինչդեռ կոնակի վրայ քիչ քիչ կը շինեն, բայց երբ ամբողջանան վայելուչ և շքեղ կ'փայլին։

Բայց հոգին միայն համբաւոյ ընակած փայլուն բարձունքը չթափուր ուր իր փետուրներն ծափահարութեան զեփիւռով կ'ծածանին, ուրիշ բաղձանք ևս ունի որ Ապագային վրայ համասփիւռ կ'տարածին։ Մենք միայն իմացական գործող մեքենաներ չենք, այլև ընկերային էնձիներ, որոց լուծումն կենաց գործն է։ Որքան որ հոգին երևելի հանդիսանալու արբեցուցիչ ուրախութեան յուսով կ'համակի, ուրիշ հակում մ'ևս ունի, աւելի խորունկ և զօրաւոր, դէպ 'ի այն հանձոյց որոց սիրտը կ'տենչայ և որոց շրջանին մէջ բարեյօժար զգացումները կը ծաղկին և կ'հասնին։

. . . . . Մարդ կրնայ իր ջերմ զգացումները պահել. կրնայ զանոնք ընդ աղօտ նկարել, կրնայ իր նաւարկութեան աշխարհացոյցին սրբել, ուր միայն առուտուրի համար նաւահանդիստները կ'նշանակէ, սակայն դարձեալ իր սրտին խորն Ապագայի մեծ աշխարհին վրայ կ'գծագրէ

սիրոյ և խղճութեան զուարճալի կղզիները։ Անդ վստահ է դեղերիլ, երբ իր հոգին կ'սուզի այն անդորը ու սուրբ յոյսերուն մէջ որ դէպ 'ի երկին կ'սլանան։

Սէրը միայն այս ապագային դռները կ'բանայ, ուր երանելեաց կղզիները կ'գտնուին աստղերու պէս։ Սէրն առ Աստուած պատուանդան մ'է։ Սիրտը միայն անբաւութեան չափն է։ Միտքը մեծութեամբ կը տաղտկանայ . . . սիրան ոչ երբեք։ Մտածութիւնն ձանձրոյթ և տկարութիւն կ'զգայ երբ անհուն տարածութեան մէջ իր թիւը կ'առնու, բայց սէրը Բարձրելոյն դահին բոլորտիքը կ'սաւառնի, երանութիւն և զօրութիւն վայելելով։

Զգիտեմ թէ այլք ինչ խորհին այս մասին, բայց ես կ'հաւատամ որ սիրան աւելի ժիր և գործօն հիմնադիր մ'է այն յիշատակներուն որով Ապագային աշխարհն աւելի ևս կ'զարդարէ քան թէ միտքը։ Այս շինութիւններն փառասիրութեան կանգնած վեհ բուրգերուն չափ չեն բարձրանար, իրաւ, բայց անուշահոտ կղզիներու պէս կ'երևին ծովու մը վրայ, որու ծփանքը մշտատև ներդաշնակութիւն մ'է։

Եւ հիմակ որ ԵՐԵԿՈՅԻՆ կողմը նայելով կ'խորհիմ, երեկոյ մ'որ արդէն հասաւ, Անցեալին յիշատակներով համակուած, և ներկային վիշտերով շրջարած — իմ սիրայօժար զգացումներս ապագայ պատապարանը հիմնող ճարտարապետն են։ Եւ դէթ երևակայութեամբ զայն պիտի հիմնեմ անվներ։ Թերևս երեկոյեան պատահական ստուերներով մթին և տխուր պիտի թուի այս ապաւէնս, բայց վերջապէս կ'յուսամ որ առաւը մարը պիտի մնանէ, երբ օրն աւարտի՝ ծիրանի և ոսկի դոյներով շքեղափայլ։

ԳԱՐՕԼԻՆ

Ըսի որ, թէև դժնեայ և ջերմ էր Ներկայն, սակայն Ապագային վրայ լուսոյ զուարթուն շողեր կ'փայլէին։ Ի՞նչպէս կարելի է ուրիշ կերպ լինիլ, քանի որ այն անուշ էակը որու առաջին անգամ լայնատարը ովկիանու վրայ հանդիպեցայ, և որու անունն իսկ Զապէլի հոգեվար շնչովսրբացած է, իմ ապրած աշխարհիս երեսը կ'ապրի։ Զիս պաշարող ամէն անձկութեանց մէջ՝ երբ Ներկայէն Ապագային կ'թափիմ, իր նկարին, իր ժպտին, իր յեսին հրաժարական ողջունին տեսիլն՝ իմ շուրջիս վրայ արևային նշոյլ մը կ'սփռէ։

Եւ դարձեալ, ինչու համար։ Մինթէ մնոտի յոյս մը չէ այս։ Տա-

ըներ անցան գինքը տեսնելէս 'ի վեր. և ոչ իսկ գիտեմ թէ ո՞ւր կը գտնուի։ Ի՞նչ վերաբերութիւն ունի նա ինձի հետ։

[illegible] Բայց իմ հպարտութեան ատենս այս ձայնին չեմ անար։ Նէ կլն մ'է, արդարև դեղանի կլն մը, զոր մի անգամ տեսայ։ Նէ կ'ապրի, բայց պիտի մեռնի, կամ պիտի կարդուի. թերևս քիչ ատենէն այս մասին լուր ստանամ, և թերևս հաուաչէմ. . . : Պիտի մոռնամ այն անուշ օրիորդն որ ինձի հետ ովկիանոսի վրայ էր, և պիտի երևակայեմ թէ մեռած է։ Այս առնական հոգին զօրաւոր է, եթէ միայն այսպէս խորհինք. կարող է վիշտերն առ ոչ ինչ դրել և ըստ հաճոյս վեր 'ի վայր շրջել իրայոյսերուն նշանակները։

— Բայց ո՛չ, չեմ կարող. որքան այսպէս խորհիմ, իրապէս նոյնքան ասոր հակառակը կ'խորհիմ։ Երբ այս վտիտ օրիորդին մէկ ժպիտն անգամ յիշեմ, իմ բոլոր խորհուրդներս կ'ցրին, որպէս թէ առանց նէրա իմ խորհուրդներս ոչ ինչ են։

— Վա՜յ, կ'ըսեմ, ի՞նչ անոտի բան, և իսկոյն իմ ուշս գիրքերու մէջ կ'թաղեմ և երկար ժամեր կ'պարապիմ. բայց քանի ժամերն երկարին և գլուխս ծանրանայ, և երեկոյեան ստուերներն իմ բոլորտիքս դառնան, վերստին կ'ներկայի ինձ այն անուշկարն՝ գողտրիկ հեգնութեամբ մը. «Անոտի՛ բան»։ Եւ ես անոք անօգնական կ'մնամ, իմ ձամբէս կ'շեղիմ յուսալի և խնդալի, և կ'գիմեմ այն ոսկի գուներն որ Ապագայն կ'բանան։

Բայց այս վիճակին մէջ կ'մտնեմ այն լուին ժամերուն մէջ երբ մարդ միայնակ է, և անաշխատ։ Ցերեկն կամ աղմկալի աշխարհին մէջ՝ այս պիսի խնդագին անուրջներու դէմ կ'զրահաւորի։ Պաղէ և անհոգ, և պատրաստ 'ի ցաւ և 'ի պայքար։

Օր մը ճամբորդելու կ'ելնեմ։ Քանի մը ներկայ հոգեր միտքս գրաւած են, և կ'մտածեմ թէ կենաց ուղևորութիւնն ինչ կերպով աւելի անդորր ու ախորժելի կրնամ ընել։ Իմ առջևս պարզեալ տեսարանին և նոր դէմքերու վրայ կ'նայիմ անտարբերութեամբ մ'որ տարիներու արդիւնք է։ Զկայ կողակից մ'որ համակրութիւնդ գրաւէ, չկան որդիք որոց հետ խաղալ կարենաս. իմ բարեկամներս սակաւ են և ցիր ուցան, և լոկ իրենց գործին կ'պարապին։ Լիլի ասա կ'ապրի, Պէն՝ անդ. ուրախալի նամակներ կ'գրեն ինձ և ինձի միշտ բարիք կ'մաղթեն։ Վիշտերն անգամ մաշելով կ'թեթևնան, և այնպիսի անհոգ վիճակի մը մէջեմ որպէս թէ կ'ըսեմ. — Ընդ առաջ խաղայ, հին աշ-

խարհ, ընդ առաջ խաղայ։ Վախճանն ընդ հուպ պիտի հասնի, և մենք, ողբմելի արարածներ, մեզի պատշաճ եղածը պիտի ընդունինք։

Բայց յանկարծ աչքս կ'գադարի դէմքի մը վրայ զոր կարծեմ թէ կը ճանչեմ։ Արդ՝ անտարբերութիւնն մշուշի պէս կ'փարատի. և սիրտս կ'արոփէ — և հին տեսիլներն նորէն կ'հասնին։ Կ'նկատեմ այս կերպարանն, որպէս թէ ուրիշ տեսնելիք բան մը չկար։ Ճիշտ նէրա ձևն է, ճիշտ նէրա շնորհն է, պարզ հագուստն — մաքուր, ճաշակաւոր, դարձեալ նէրա հագուստն է։ Իր գլուխը կիսովին կ'դարձընէ. այն գլուխն է զոր Տէվօնի ծառաստանին մէջ՝ անդուսէ դգակին ներքև տեսայ։ Ընդ առաջ չեմ փութար, այլ կ'նստիմ իրը զի հիացման մէջեմ, նէրա ամէն շարժումները կ'գիտեմ, նէրա անուշութիւնն որով հոգ կը տանի իր մօրն որ իր մօտ նստած է, նէրա անմեղ բացագանչութիւններն երբ սիրուն բան մը կ'տեսնէ։ Այնպէս իմն կ'թուի ինձ որ նոր աշխարհ մը կ'պարզուի աչացս առջև, սակայն չեմ կարող մեկնել պատճառը։ Իմ տեղէս չեմ շարժիր, կ'խորհիմ և կ'նայիմ ակնապիշ։ Ձեռքս բռնած թուղթս կտոր կտոր կ'ընեմ. իմ ժամացոյցիս շղթային հետ կ'խաղամ և կոտրելու չափ կ'ոլորեմ կնիքս։ Ժամացոյցս կ'հանեմ, կ'նայիմ և նորէն կ'դոյժեմ — և սակայն չեմ կրնար ըսել թէ ժամը քանի՞ է։

— «Նոյն ինքն է» կ'մրմնջեմ «գիտեմ Քէրիին (Գարօլին) է։»

Բայց երբ մայր ու աղջիկ ոտք կ'ելնեն մեկնելու համար, իմ թմրութիւնս կ'փարատի. սակայն դողդոջուն վարանմամբ, կերպով մը ներկայ և ապագայ կենաց մէջ դայթ 'ի դայթ գնալով է որ կ'մօտենամ։ Իսկոյն գիս կ'ճանչէ, և գիս կ'ողջունէ սիրով — ինչպէս Պէլլա գրեց շատ սիրով։ Բայց թեթև շփոթութիւն մը կ'յայտնէ նէ, շփոթութիւն մը որ սրտիս մէջ աւելի մտադիր կ'պահեմ քան թէ իր ողջոյնը։ Իմ ճամբաս կ'փոխեմ և անոնց հետ կ'ուղևորիմ։ Եւ սկսինք հին տեսարաններու վրայ և կարծես թէ իրենց յիշատակներն կենաց մեծագոյն մասը կ'կազմեն։

Հինգ տարի կայ իրմէ բաժնուելէս 'ի վեր, չյուսալով երբէք որ վերստին իրարու պիտի հանդիպինք։ Այն ատեն նէ վտիտ օրիորդ մի էր. արդէն կնայիս ձև մ'առնելու վրայ է։ Իր աչունքն առաջուան պէս սև ու խորունկ են. արտևանունքն, որ զանոնք կ'բոլորեն, ինձ առաջուանէ աւելի երկար կ'երևին։ Իր գոյնը նոյնչափ պայծառ, իր ճակատը նոյնչափ չքնաղ, իր ժպիտը նոյնչափ անուշ, որչափ որ էին ա-

ռաջ. միայն արտմութեան մուայլ մը կ'ծածանի իր աչաց վրայ, իբրև մշուշամառնային դաշտանկարի մը վրայ։ Նէրա նայելու կ'յանդգնիմ, բայց նայելով կ'երկնչիմ։ Պէլլայի վրայ կ'խօսինք. նէ քաղցր, մեղմ ձայնով մը կ'խօսի, և դէմքին վրայի տրտմութեան ամպը կ'դիպուի, ամառուան մէջին նման որ արևը կ'նուազեմ։ Միավանկ բառեր կ'արտասանեմ. ուրիշ խօսք չեմ կարող գտնել. և իր աչաց մէջ համակրութեան այնպիսի ակնարկ մը կ'երևի երբ այսպէս կ'խօսիմ անոր հետ՝ որ սիրաս իրեն կ'քաշէ այնպէս որ երբէք ժպիտ մը չպիտի կարենար ընել։ Ինչ բան կրնայ այնքան արագ հրապուրել սիրան առ՝ի սիրոյ քան թէ համակրութիւնը։

Բայց այս կ'անցնի. պարտաւոր ենք բաժնուիլ, նէ իր տունն գիմելու, և ես այն ընդարձակ տունն, որ այնչափ ատեն իմն եղեր էր — այս է աշխարհ։ Այժմ քան զառաջինն աւելի լայնարձակ, աւելի պաղ, և նուազ ցանկալի կ'երևի ինձ։ Ցուսոյ նոր գիրք մը կենաց մէջ կ'բացուի — առանին յոյս մը։

Քիչ ատենէն իրարու հետ պիտի տեսնուինք՝ միջնաբաղաքն ուր ես կ'բնակիմ։ Անհամբեր կ'սպասեմ այն ժամուն, ինչպէս կ'սպասէի պարապոյ օրերուն գպրոցը . . . ։ Ի վերջէ կ'հասնի, և երազի պէս կը սահի։ Նէրա մնան եմ որչափ ատեն որ իշխեմ։ Նէ գիս մտադիր կ'ընդունի, և չկրնար ուրիշ կերպ վարուիլ։ Բայց միթէ ուրիշ տենչ չկայ։ Մարդուս բնութիւնն անկուշտ է, և երբ անուշ բարեսրտութիւնը կ'վայելենք՝ աւելի ևս կ'պահանջենք։ Գիտեմ որ բարեսիրտ է, և սակայն, ես ալ փոխնակ շնորհապարտ լինելու, աւելի մեծ բարեսրտութեան կ'տենչամ։

Նէ կ'դուշակէ իմ տենչանքս, անտարակոյս. այս մասին կասկած մի ունենար կնկան մը վրայ։ Բայց ինչ ունիմ, կամ ինչ եմ որ փոխարէն մը պահանջեմ։ Հրեշտակի պէս անարատ և անուշ է, իսկ ես, ափսոս, ողորմելի զինուոր եմ այս աշխարհիս պայքարին մէջ Սատանի դէմ։ Երբեմն՝ երբ սնափառութիւնս կ'բռնէ՝ իբր թէ իմ ձիրքս կ'ցիշեմ — ախուր, ողորմելի պատրուակ մ'որով ամօթապարտ կ'մնամ երբ նէրա առջևն եղնեմ։ Իսկոյն զանոնք կ'վանեմ։ Բայց որչափ որ արժանիք չունիմ, որչափ որ իրաւունք չունիմ նէրա սէրն ու ներողամտութիւնը խնդրելու, որչափ որ կենաց պայքարին մէջ առնական գործ մը չեմ ըրած, դարձեալ այս փաստն ունիմ թէ՝ այս սիրաս իրեն է։

Նէ կ'մնկնի. և իմ սրտիս մէջ եռացող զգացման վրայ նէրա բան մը չըսի — որչափ կ'անիծեմ իմ յիմարութիւնս։ Գնաց նէ, և թերևս երբէք չպիտի վերադառնայ։ Ցուսակտուր կ'յիշեմ իր յետին անուշակնարկը։ Աշխարհ դատարկ կ'երևի ինձ։ Զգիտէ նէ, թերևս փորձեց նէ թէ զինքը կ'սիրեմ։ «Լա՛ւ, պիտի քաշեմ այս նեղութիւնս» կ'ըսեմ։ Բայց չեմ կարող տանիլ։ Գործերս դադար առին, գրեանքս փոշոտած են, կիսկատար բան մը կայ. Ճակատագիրը կ'հրամայէ որ կատարեմ։ Չեմ կարող տեղ մը գտնել, ուր որ գնամ նէրա անուշ ժպիտն կամ խնդութեան նշոյլ մ'ընծայէ կամ յուսահատութեան սև ստուեր մը։

Սեղանիս առջևը կ'նստիմ զուարճալի գիրքերով. կրակը գեղազուարճ կ'վառի. շունս ինձի կ'նայի երբ անոր խօսքս կ'ուզեմ. բայց այս բաւական չէ։ Նէրա նկարն այս ամէն վայելքն կ'փարատէ կ'տանի։ Գրեանքս վար կ'նետեմ, կռնակս շանս կ'դարձընեմ. կրակս կը բորբոքի և կ'շողայ որպէս թէ գիս ծաղրել կ'ուզէ։

Ցանկարծ խորհուրդ մը գլխուս մէջ կ'ծագի. «Ես նէրա պիտի գրեմ» կ'ըսեմ։ Եւ ժպիտ մը դէմքիս վրայ կ'շողայ, յուսոյ ժպիտ որ կասկածով կ'սարսի։ Իսկոյն գրիչս կ'առնում, իմ հաստատիմ գրիչս, և սպիտակ թերթն իմ առջևս կ'սփռի։ Լաւագոյն թուղթ և գրիչ չէ կարելի գտնել։ Հարիւրաւոր նամակներ գրած եմ. գիւրին է նամակներ գրել. բայց այժմ գիւրին չէ։

Քանի մը տող կ'գրեմ և կ'սրեմ։ Վերստին կ'սկսիմ, և աւելի կը գրեմ — ապա դարձեալ կ'սրեմ։ Նորէն կ'փորձեմ, բայց չեմ կարող բան մը գրել։ Ցուսահատութեամբ գրիչս վար կ'նետեմ, թերթս կ'պարեմ, և գրատունս բանալով Շէֆիլդցիներուն և Լիդբրիդցիի մէկ հին տիպ գործը կ'առնում որ կարդամ, և նոյն միջոցին առանձին կը խօսիմ. «Թող նէ երթայ։ Նէ գեղանի է, բայց ես ուժեղ. կեանքը կարճ է. մենք, ես և շունս, և իմ գրեանս, և իմ գրիչս արիաբար ապոր մէջ պիտի մնաքարինք, և տապանաքար մը թողլու համար բաւական բան մը պիտի շահինք։»

Բայց երբ այսպէս կ'խօսիմ արտասուքս կ'հոսին — բոլոր լսածներս սուտ են։ Եւ Շէֆիլդցիներն սենեկին մէջ կ'նետեմ և նորէն գրիչս ձեռք կ'առնում։ Այժմ կ'սկսի սահիլ թղթիս վրայ, և յոյսս կ'վառի, և նէրա կ'պատմեմ մեր առաջին տեսակցութիւնն, և ովկիանու վրայ վերջալուսին մեր անցուցած ժամերը, և ալէծուփ նաւուն վրայ մեր անկայուն պտոյտները, և Լոնտոնէն բաժանումը, և սիրուն գիւղին մէջ զինքը տեսնելուս զգացած ուրախութիւնս, և վերջէն կրած վիշտս։ Եւ ապա Պէլլան կ'յիշատակեմ, որ իր և իմ բարեկամուհիս էր, և արտասուքս կ'վազին. և ապա մեր վերջին տեսութեան վրայ կը

խօսիմ, իմ կասկածներս կ'յայտնեմ և նոյն երեկոյեան մատանջուութիւնս, որով չէի կարողցրել, և հուսկ ուրեմն իմ սրտիս մէջ բան մը զիս յորդորելով սկսայ գրել և ամէն ինչ ըսել։ Գրեցի այն, թէ՝ «իմ սիրտս իմն չէր, այլ լիովին իրն էր. և եթէ իմն կամենար լինիլ — զինքը պիտի սիրեմ, և միշտ սիրեմ»։

Այն ատեն տեսակ մը երջանկութիւն կ'զգամ, տարօրինակ աղմկալի երջանկութիւն մը, որու մէջ մերթ ընդ մերթ կասկածը կ'ասի, իրեն հետ բերելով պաղ սարսուռ մը։ Գիրս կ'կնքեմ և զայն կ'տանիմ թղթատունը։ Ծանր նամակ։ Ինձ այնպէս կ'թուի թէ նոյն օրն ուրիշ գիր չպիտի գտնուի, և թէ ամէն կառք և ձի, ամէն սայլակ, նաւակ յատկապէս իմ միակ գիրս հասցէին տանելու սահմանուած էին։ Մեծ գիր մ'էր ինձի համար, իմ ճակատագիրս անոր մէջն էր։

Այն գիշերը լաւ չեմ քնանար. անհանգարտ քուն մ'է. մի անգամ խնդութիւնը՝ անուշ և սրբանուէր խնդութիւն մը իմ երազիս մէջ կ'ըզգամ և հրեշտակ մը իմ քովս է. ուրիշ անգամ հրեշտակը կ'անհետի, պայծառութիւնը կ'մարի, և ահաբեկ կ'արթննամ։ Շատ գիշերներ այսպէս կ'անցընեմ, մինչև որ կ'հասնի այն օրն երբ պատասխանի մը կ'սպասեմ։

Գրաբերը բնաւ մտքէն չանցըներ որ ինձ յանձնած թուղթը — թէև ոչ մուրհակներ, ոչ արժէթուղթ, ոչ առևտրական յօդուածներ չպարունակեր — սակայն իմ ապագայ կենաց վրայ աւելի մեծ ներգործութիւն պիտի ունենար քան յառաջագոյն բերած բոլոր նամակները։ Բայց ես չեմ յայտներ անոր այս բանը, նոյնպէս չեմ ցոյց տար թէ ինչ անձկանօք զայն կ'ընդունիմ, կ'առնում, կ'կրեմ զայն՝ որպէս թէ մեծ և ահռելի բեռ մը լիներ, և սենեակս կ'մտնեմ, դուռը կ'փակեմ և գողահար ձեռօք կնիքը բանալէն ետև՝ կ'կարդամ.

ՆԱՄԱԿԸ

«Պօղ — վասն զի կ'յուսամ որ կարող եմ այսպէս անուանել քեզ այժմ — չգիտեմ ինչպէս պատասխանեմ քեզ։ Գիրդ ինձ մեծ խնդութիւն պատճառեց, բայց պատճառեց նաև վիշտ։ Չեմ կարող, չեմ կամիր երբէք կասկածիլ գրածիդ վրայ. կ'հաւատամ որ իմ արժանիքէս աւելի կ'սիրես զիս, և գիտեմ որ այդ բոլոր գովեստից արժանի չեմ։ Բայց զիս վշտացընողն այս չէ, վասն զի գիտեմ որ վեհանձն սիրտ մը ունիս, և ինչպէս միշտ՝ դարձեալ իմ տկարութեանս պիտի ներողամիտ գտնուիս։ Մեծ փառք, այո, մեծ փառք է ինձ որ կարող եղայ սերդ

գրաւել, բայց ցաւ է ինձ՝ Թերևս կարծածէդ աւելի ցաւ մը, քանի մտածեմ որ չեմ կարող իմ փափաքիս համեմատ պատասխանել քեզ — աւաղ, երբէք։»

Ատանօր գիրը գետինը կ'նետեմ՝ և ձեռքս ճակտիս վրայ դրած՝ կ'գիտեմ բոցավառ ածուխներն՝ արագ և մեծաձայն շունչ առնլով։ Ուրեմն երազը անհետ եղաւ։

Վերստին կարդալու կ'սկսիմ։

— «Գիտես որ՝ իրարու հանդիպելէն առաջ՝ հայրս մեռաւ։ Վաղեմի բարեկամ'ունէր որ Անկլիայէն եկած էր, և որ շատ տարի առաջ մեծ ծառայութիւն մը մատուցեր էր իրեն, այնպէս որ իբրև եղբայրը կ'սիրէր։ Երբ իմ հայրս մեռաւ, զիս իր մօտ կանչեց և ըսաւ. 'Գէորի, ես պիտի բաժնուիմ քեզնէ. բայց իմ հին բարեկամս քու հայրդ պիտի լինի' և իմ ձեռքս անոր ձեռքին մէջ դնելով ըսաւ. 'Իմ աղջիկս քեզի կ'տամ'։

Այս ծեր պարոնն՝ քան զիս տարեւոր որդի մ'ունէր, բայց ստէպ միասին էինք, և իբրև եղբայր ու քոյր մեծցանք։ Հպարտութեամբ անոր կ'նայէի, վասն զի բարձր էր և ուժեղ, և ամէն մարդ զանի աղուր կ'գտնէր։ Նոյնպէս՝ եղբօր պէս սիրով էր ինձի հետ, և իր հայրն իմինիս կ'նմանէր։ Ամէն մարդ կ'ըսէր և կ'հաստատ որ օրին մէկն իրարու հետ պիտի կարդուինք, և մայրս ու նոր հայրս բացէ 'ի բաց նոյն բանը կ'խօսէին։ Նոյնը կ'կրկնէր և Լօրէնս — վասն զի այս է իմ բարեկամիս անունը։

«Պօղ, հարկ չկայ աւելի ևս գրել քեզ. վասն զի՝ երբ տակաւին փոքր աղջիկ մ'էի՝ իրարու խօսք տուեր էինք որ օրին մէկն այր ու կին լինինք։ Լօրէնս ընդ երկար կեցաւ Իտալիա, և կարծեմ այժմ ևդ է։ Ծերունի հայրը զիս դեռ ևս իբրև իր դուստրը կ'գգուէ, և անհամբեր կ'սպասէ այն ժամուն երբ իր տունը պիտի հարս երթամ ապրիմ։ Լօրէնսի գիրերն շատ սիրաւէտ են, և թէև առաջուան պէս մեր ամուսնութեան վրայ ստէպ չխօսիր, սակայն կարծեմ թէ պատճառն այն է որ իբրև ապահով կ'համարի։

«Այս ամէնն առաջուց քեզի իմացընելու փափաք ունէի, բայց չհամարձակեցայ։ Թերևս եռասէր համարիս զիս որ պահեցի ցարդ։ Եւ այժմ ինչ կարող եմ ըսել։ Լօրէնս ինձի համար բոլորովին եղբայր մ'է, իսկ դու Պօղ — բայց պէտք է որ ըսեմ, վասն զի թէ որ Լօրէնսի հետ կարդուիմ, և բաղդն այսպէս տրամադրած կ'երևի, պիտի ջանամ ամէն բանէ աւելի սիրել զանի։

«Բայց դու ինձ եղբայր մը չպիտի լինիս. զիս չպիտի սիրես, ինչպէս կ'սիրէիր Երբեմն Պէլլան։ Կ'ըսես թէ նէրա աչերն ունիմ, և իմ ճակատս ալ նէրա ճակտին կ'նմանի։ Միթէ չէ՞ս կարծեր որ իմ սիրտս ալ անոր սրտին նման է։

«Պօղ, եթէ այս նամակիս վրայ արտօսր թափես, գիտցիր որ ես ալ քեզի պէս թափեցի։ Այժմ աւելի չեմ կարող գրել։

«Մնաս բարեաւ։»

Կ'նստիմ և ակնապիշ կ'դիտեմ կրակին փայլը, և երբ կ'սթափիմ, ճակատագրին դէմ անէծք կ'կարդամ։ Դարձեալ՝ բոլորը ապագաս մութ կ'երևի աչքիս։ Չեմ կարող Բէրին սիրել ինչպէս սիրեցի Պէլլան. չէ կարող նէ քոյր մը լինիլ ինձի համար, պէտք է որ քան զքոյր աւելի լինի, կամ ոչ ինչ։ Դարձեալ՝ կենաց ալէծուփ ծովուն վրայ միայնակ կ'ծփամ և իմ շուրջս զուարթ ակումբներ կ'տեսնեմ։ Կը փայլի արևն ամէն տեղ, այլ ոչ իմ պաղ ճակտիս վրայ։ Կարծես թէ յերկինս ողորմութիւն չկայ ինձի համար և ոչ գթութիւն երկրի վրայ։

Քանի մ'օրէն՝ այս նամակին պատասխան մը կ'գրեմ։ Բայց դառն պատասխան մ'է, ինքզինքս կ'մոռնամ իմ աղէտից բռնութեան ներքև և մինչև անդամ յանդիմանութիւններ կ'արտայայտեմ։

Նէրա պատասխանն՝ որ շուտով կ'հասնի, քաղցր է և համբոյր։ Իմ յանդիմութիւններս զինք վիրաւորեր, կարեվէր վիրաւորեր են։ Բայց սրտաշարժ բարութեամբ մը՝ որու ես արժանի չեմ, իմ աշխուժութիւնս վիրաւոր սիրոյս կ'վերագրէ։ Նէ կ'սփոփէ զիս, սակայն՝ սփոփելով՝ աւելի ևս կ'վիրաւորէ։ Կ'ջանամ հաւատալու խօսքին՝ երբ իր անարժանութեան վրայ կ'խօսի, բայց չեմ կարող։

Գործերն, և փառասիրութեան կամ շահու հետաղօտութիւններն կ'սահին կ'անցնին անզգայ, շունչուն մեքենայի պէս։ Գարտատորութիւններ կան զոր արիութեամբ կ'կատարենք իրաւ, բայց առանց խնդութեան։ Մեծ է մեր քաջութիւնն՝ երբ աշխարհի հարուածներն ու փորձանքը մեր վրայ կ'հասնին, բայց բիրտ, անհոգ քաջութիւն մի է, որ ընդդիմութեան մէջ կ'պանծայ։ Կ'ծիծաղիմ որ և է վտանգներու կամ նեղդաւոր ծուղակներու առջև։ Ի՞նչ են սոնք ինձի համար, ուր նիմ բան մ'որու կորուստն ինձ ցաւ պատճառէ. իմ շունս իմ քովս է, ներկայ է իմ պառակտս, պատրաստ իմ կերակուրս. զօրեղն սրունքս, ուրիշ ի՞նչ բանի պէտք ունիմ։

Ամիսները կ'սահին, և իմ երեկոյեան արևուս վրայ ծածանող ամպը կ'անցնի։

Լօրէնս՝ որ դուրսերը կ'թափառի և Գարօլինն իրև քրոջ կ'գրէ, ասոր հօրը փափաքածէն աւելի բաներ կ'գրէ։ Նա նոր դէմքեր տեսեր է, շատ անուշ դէմքեր, մանաւանդ ազնիւսի անձի մը սէր կապեր է որուն նկարագիրը բացորոշ կ'երևի իր նամակին մէջ։ Ծերունին չկամիր որ այսպէս իր փոքրիկ Գարօլինն 'ի կորուստ մնանէ, և Լօրէնսին յանդիմանական գիր մը կ'գրէ։ Բայց Լօրէնս՝ իր Գարօլին քրոջ բարեսրտութեան և գթութեան կ'դիմէ։ Ծերունին կ'զարմանայ թէ ինչպէս Գարօլին Լօրէնսի կողմը բռնելով այսպէս տարօրինակ կերպով իր որդին կ'պաշտպանէ։ «Ուրեմն ինչպիսի ընես, Գարօլին» կ'հարցնէ Ծերունին։

«Սուպերու մէջ մնալով, տէր իմ, քեզ և Լօրէնսն ընդ միշտ պիտի սիրեմ։»

Այն ատեն Ծերունին իր գրկաց մէջ կ'առնու զանի և կ'ըսէ. «Գարօլին, Գարօլին, դու շատ բարեսիրտ ես, և այն վայրենի Լօրէնսը սիրոյդ արժանի չէ։»

Այնուհետև մեր նամակներուն ոճը կ'փոխուի։ Լի են յուսով — որ կ'փայլի ապագայ երկնից երեսը։ Գործ, հոգ, վաստակ կ'սահին այնպէս որպէս թէ հրեշտակ մ'անոնց նոր ոգի կ'ազդէ։ Երկին քիչ քիչ կը ժպտի, թռչուններն անուշ կ'երգեն, և քեզնոր կենդանութիւն կ'ներշնչեն։ Մարդիկ զուարթ դէմքով կ'երևին քեզ, փոթորիկներն իսկ դութ ունին՝ որ իրենց կատղութեան մէջ կ'փայլատակի։

Կ'մտնեմ այն օրերն երբ պիտի կարենաս զանի քու կենակիցդ կոչել։ Վասն զի նէ ըսաւ, իր մայրն, ըսաւ, բարեսիրտ Ծերունին որ կ'յայտնէ թէ միշտ իր հայրը պիտի մնայ, նոյնը կրկնեց. ամէնքը քեզ սիրովին ընդունեցան, իմանալով սիրային յարակցութիւնդ, և երջանկութիւնդ չափ չունի։ Մոմուք մը միայն խնդութիւնդ կ'վրդովէ։ Միթէ ճշմարի՞տ է, և եթէ ճշմարիտ է, միթէ արժանի՞ ես վայելելու։ Միթէ միշտ պիտի սիրես, ինչպէս որ խօսք տուիր, այն հրեշտակն որ խօսքդ կ'ընդունի և իր երջանկութիւնը քու հաւատարմութեանդ վրայ կ'հիմնէ։ Միթէ դաժան հանգամանք չունի՞ս բնութեանդ մէջ, որով կ'երկնչիս թէ մի գուցէ զղջայ նէ քու սիրոյդ և գթութեանդ վստահելուն։ Եւ այն բարեկամներն որ նէրա վրայ կը հսկեն՝ իրև իրենց աչքին լոյսը, միթէ միշտ պիտի գոհ ընես իրենց դանձն անվթար պահելով։ Միթէ այս դանձ մը չէ՞ որ քեզի խնդ ու միանգամայն երկիւղ կ'ազդէ։

Բայց այս ամէնը կ'մոռնաս երբ նէրա ժպիտը տեսնես. նէրա բարե-

սրտութիւնը, անուշութիւնը, համեստութիւնը չպիտի թողուն քեզ յիշել այս բանը։ Այսպիսի խորհուրդներ կ'արթնին նէ, և այնպէս հնազանդ կ'դանուիս նէրա, որ մօր անդամ այդչափ հնազանդութիւն չես ցոյց տուած։ Եւ եթէ գործերդ և աշխատութիւնդ անտես կ'առնուս, ինչ փոյթդ է։ Ինչէ շահն, ինչ համբաւն երբ կ'բաղդատես սրտիդ երանութեան հետ։

Ամուսնութեանդ օրը կ'հասնի, և կարծես թէ երազ կ'տեսնես։ Ամէն ինչ լաւ կ'խորհիս, և ամէն աշխարհի համար լաւ բաներ կ'մաղթես։ Գթասիրութեան Ճառագայթ մը կ'սփռի բոլորտիրդ։ Եւ երբ նէրա մօտ կ'նստիս այդուն, կամ այն իրիւն որու հետևեալ օրն զանի քու կինդ պիտի կոչես, և խօսիս ապագայ յոյսերու և անցեալն անուշ ստուերներու վրայ, և Գեղլայի սիրոյն, այս քաղցր քրոջ մահուան վրայ հառաչես, նոյնպէս Լօրէնսի, իբրև նոր եղբօր մը վրայ որ իր հարսնայուհին հետ տուն կ'դառնայ խնդալին, և այդ նէրա այտին վրայ կ'դնես, կեանքը մշտատև արև մը պիտի երևի քեզ որ երբէք գիշեր չունի։

Հարսանիքը կ'կատարուի. նէ քոյդ է — քոյդ ընդ միշտ։

ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Վերստին ծովու վրայ եմ, բայց ոչ մինակ։ Առաջին անդամ ովկիանու վրայ հանդիպած անձս ահա այժմ իմ մօտս է։ Վերստին նէրա անկայուն քայլը կ'կաղդուրեմ նաւուն կամրջին վրայ. երբեմն վաղանցուկ հաճոյք մ'էր, այժմ հաճոյքը նոր իրական է։

Երբեմն այն երկիւղը զոր կ'զգայի՝ երբ փոթորկալի ամպեր կ'հաւաքուէին, և գիշերը կ'հասնէր, և նաւը կ'շարժէր զայրագին, և ահաւոր կոհակներ գիզուելով սահուն լեռներու պէս վեր կ'ելնէին ու կ'իջնէին և իրենց ոյժը կ'սպառէին ալէտանջ նաւուն դէմ, եսական երկիւղ մ'էր, բայց հիմակ այնպէս չէ։ Ճշմարիտը՝ հաւիս թէ երկիւղ կ'զգամ, վասն զի փոթորիկն ինչպէս կարող է Նէրա վնասել։ Միթէ Երկին այսպիսի բարեսիրտ էակի մը դէմ իր բարկութիւնը կ'թափէ։

Եւ հանդարտ գիշերներն — նուիրական գիշերներ — նաւուն եզրին վրայ կ'յենուինք՝ և ինչպէս տուն մը, վարն մութ անդունդը կ'դիտենք և ծովային նուագներ կ'երգենք և մեր սիրելիներուն վրայ կ'խօսինք, և աստղերը կ'նկատենք, որ մեզի դրացի կ'երևին, իբր թէ մեր մեռ-

ելիք՝ բարեկամներն են։ Եւ երբ ծովն ուռելով՝ մեզ վեր վար ծովային հովիտներու և բլուրներու վրայ կ'տատանէ, կարծես թէ բնութեան մեծ սրտին զարկերն են՝ որ մեզ կենաց նպատակին և դէպ 'ի երկնից դռները կ'մղեն։

Հորիզոնին վրայ երևցող նաւերը կ'նշմարենք որ դէպ 'ի մեզ կը գան, իբրև սուտ բարեկամներ, իրենց առաղաստներուն վրայ արևը կ'փայլի, ապա կ'շեղին և կ'մեկնին՝ իրենց փայլուն առաղաստներն ստուերային կողմերը դարձընելով։ Երկարաթև թռչուններ կ'դիտենք որ ժամ առ ժամ՝ զուարթուն խորհուրդներու պէս՝ կոհակները քերելով՝ նախ նաւուն առջևէն սրանալով և ապա ետևէն՝ մինչև որ ջրերու փոսերու մէջ անհետ կ'լինին։

Վերստին կեանքը կ'ծաղկի՝ ինչպէս երբեմն կ'ծաղկեր. բայց յաւ, վհատութիւն և ապարդիւն խորհուրդներ այլ ևս չեն վրդովեր զիս։ Ապագան է որ ծովու պէս հաստատ դարձաւ, և նէ իմ քովս է, այս ապագային հաղորդակից էակը, որպէս զի ինձի հետ դիտէ գեղաձուի ջուրն, և մեր ու ցամաքին մէջ գտնուող հիասքանչ ծփանքը համբէ։ Բիւր սիրուն խորհուրդներ մեզ կ'պաշարեն և կ'հեռանան, մեր եաև ձգած ալեայ պէս, ուրիշ բիւրաւոր զուարթուն յատակագծեր մեր երևակայութեան մէջ կ'ծաղկին՝ մեր առջև փայլիլող ալեայ պէս։ Կ'խօսինք Լօրէնսի և իր ամուսնոյն վրայ զոր քիչ ատենէն պիտի տեսնենք, կ'խօսինք նէրա մօր վրայ որ հիմակ իսկ կ'դիտէ գովերն որ կ'օրորեն իր զաւակն ովկիանու վրայ, կ'խօսինք այն բարեբարոյ ծեր մարդուն, կնքահօրը վրայ, որ հօր մ'օրհնութիւնը տուաւ անոր, կը խօսինք մեզմիկ վերջալուսին՝ Զապէլի վրայ՝ որ կ'նայէ։

Վերջապէս արևը մարը կ'մտնէ, պայծառ գիշեր մ'է, Գօրնվալի և Տէվոնի ափերուն կապուտակ գիծը կ'նշմարենք։ Գիշերայն՝ նաւերի ստուերի նման լուսաւոր լապտերներով մեր քովէն կ'անցնին, և առտու Ուայդ կղզեկին գեղնագոյն ժայռերը կ'տեսնենք . . . Լոնտոն՝ իր մշուշով, գղրդիւնով և խուժանով՝ երբեմն իմ աչքիս ունեցած հրապոյրը չունի, այս գղրդիւնն ու խուժանն կ'օգնեն մարդուս իր վիշտերը մոռնալու և սրանչանալով ապշելու. բայց այժմ այսպիսի մոռացման մը պէտք չունինք։ Հէմրդըն Քրրդէն տահող անտառուտ գետեղրին երկայնքը կ'ընթանանք, և դէպ 'ի Ռիչմընտ Հիլ կ'քշենք, որպէս զի այս ջրային և դաշտային տեսարանին վրայ զմայլինք, որ տերևալից ծառերով և պայծառ գիւղական տնակներով, թխագոյն հիւղերով և խմբապին շէնքերով զարդարուած են — այս ամէնն թեմզի ծոցը կ'սփռին

գեղեցկութեան քօղի մը պէս։ Բայց չենք կարող ասա դեղերիլ, և ոչ Վինտզը Փօրէստի հինօրեայ փառաւոր պուրակներու ներքև, այլ կը փութանք դէպ 'ի Տէվոնի անուշ երկիրն, որ իր առուներովը դալարաւէտ կ'ծաղկի։

Առաջուան պէս կաղնիներու ներքև կ'թափառինք նորէն, և ողբերգ այծեամն իր աղու աչերով առաջուան պէս մեզի կ'նայի։ Սկիւռներն թաւերուն մէջ կ'խաղան աներկիւղ, և քանի մը թափառիկ Ճագարներ՝ մեր քայլերուն ձայնէն՝ իրենց երկար ականջները կ'սնկեն՝ և ցանկերէն ոստոստելով իրենց ոջիը կ'վազեն։ Վերստին կ'տեսնեմ Քէրին իր ձիաւորի սնդուսկ զգակով, սպիտակ փետուրը վրան, և նէրա կ'հանդիպիմ ինչպէս որ առաջ հանդիպեր էի, այն նահապետական ծառերուն ներքև որ հիւսիսային ծառուղին կ'շրջապատեն։ Կ'յիշեմ այն իրիկունն երբ ծառաստանին դռնէն դուրս ելնելով՝ դռնապանին կնոջ կողմէ օրհնենք առի և այն տարօրինակ երաշը տեսայ. այժմ երաշն աւելի իրական կ'երևի քան թէ իմ կեանքս։ «Աստուած օրհնէ քեզ» ըսաւ կինը վերստին։

«Այո, պառաւ տիկին, Աստուած օրհնէ՛ զիս» և ոսկի մը կ'նետեմ նէրա, չէ թէ իբրև պարգև, այլ իբրև պարտք։

Ինչպէս ագարակապանն՝ նոյնպէս երէցը կ'գանեմ անդ, և ամենուն բերնէն Քէրիին գովեստը կ'լսեմ։ Սակայն որչափ որ հին անտառներ, յիշատակներով լի, տարափին վրայ երեկոյեան վերջալոյսն որչափ որ զմայլելի են՝ պարտաւոր ենք Հելվէտիայի լեռներն երթալ։ Անդ պիտի գտնենք Լաբէնսը։

Քէրին տեսած չէր բնաւ Հուրայի փառաւորութիւնը, և որովհետև Տօլի բլուրներուն վրայ կ'ուղևորինք՝ նշմարելով բոլորաձև բարձունքն մայրի ծառերով ծածկուած՝ և բիւրաւոր ոտք խորութեամբ ստորին վայրերը կ'նկատենք, հիւղերու տանիքն, կանաչադեղ հովիտներն, ուր սև խաշինք կ'արածին հանդարտ, Քէրի սքանչանալով կ'սքանչանայ։ Ի վերջէ Կէքս փոքրիկ քաղքին վերև՝ այն կատարը կ'հասնինք, ուսկից կ'նշմարես համասփիւռ Ժընէվան շրջապատող դաշտերը, Լէման ընդ ինքն վճիտ երեսն և Սավոյի ժանտատեսիլ և ապառում լեռները. իսկ յետուստ՝ իր սառնապատ սարով և մութ կատարներով հորիզոնը պատող Մօն–Պլանը։

Գարօլինին կ'ցուցնեմ՝ ստորև հովտի մէջ՝ Ֆէրնէյ փոքրիկ քաղաքը, ուր Վոլտէրի թափուր դղեակը կ'երևի, և հեռուն՝ ընդ ինքն ափերուն վրայ՝ Սոմէլի հին բնակարանը, և գիմացը՝ ջրին երեսն իր սպիտակ պատերով բեկբեկող տունն՝ ուր Պայրն «Շիլյոնի բանտարկեալը» գրեց։ Ժընէվայի բաղնաթիւ տուներուն մէջ կ'դիտենք անոր հին մայր եկեղեցին, և բարձր պանդոկներն որ ընդ ինքն եղերքը կ'շողան։ Եւ այն ատեն պատմեցի թէ ինչպէս վարի հովիտն ուղևորելու ատենս, իմ մտածին ապագայիս վրայ յուսաբեկ, այս շքեղ տեսարանը կ'վայելէի իմ միայնակ և մենակերպ կենաց իբրև սիրտիս։

«Իսկ հիմակ, Գարօլին, հիմակ որ ձեռքդ ձեռացս մէջ սեղմեր եմ, սիրտդ սրտիս մէջ, այս վարի արևափայլ և հանդարտ ընդակը, և այն սառնապատ լեռներն վարդագոյն նշոյլներով՝ Բնութեան ժպտին կ'նմանին, որ մեզի ուրախ լինիլ կ'հրամայեն։»

Լաբէնս Ժընէվա է, Գարօլինը կ'ընդունի նա; ինչպէս պիտի ընդունէր քոյր մը։ Ազնիւ երիտասարդ մ'է, և շատ կ'գովէին անուշ իտալացի կինն, և զիս կ'ներկայացնէ, ժպտուն, պատկառոտ Էնրիքային։ Նէ այժմ գիտէ անկիւարէն լեզուն։ «Ես լաւագոյն դասատու մը գտայ, կ'ըսէ նէ ինձ, քան զքեզ»։ Նէ ջերմագին, իբրև քոյր մը կ'ընդունի զիս, և կրակարանին առջև երբեմն մեր անցուցած գիշերները՝ վրայ կ'խօսի, ինչպէս կ'խօսին աշակերտներն իրենց դպրոցի դասերուն և դասատուներուն վրայ։ Զէ կարող նէ ուղածին չափ Լաբէնսն և անոր ազնիւ սիրտը գովել։ «Դու լաւ էիր» կ'ըսէ ինձ «բայց Լաբէնս լաւագոյն է»։

Քէրի կ'զմայլի նէրա խարտեշ, փափուկ մազերուն, նէրա մութ կապոյտ աչերուն, և կ'զարմանայ թէ ինչպէս Հռոմէն հեռանալու կարող եղեր եմ։

— Միթէ իրօք կ'զարմանաս, Քէրի։

Եւ միասին դէպ 'ի Սավոյա կ'ուղևորինք, այն հիանալի հովիտն որ Մօն–Պլանի թևին ներքև կ'գտնուի. ապա Մէր դը Գլաս (սառոյց ծով) վրայ թափառելանք և սառնալեռն եզրներէն Ալպեան վարդեր քաղեցինք։ Երեկոյին Մեծ Սէն–Պէրնարի մենաստանն ելանք, ուր սառորակաղմ սառոյցն անձուկ շաւղին վրայ կ'բեկանի և պաղ լուսինն լայնաձաւալ ձիւնին և մթագոյն հիւրատան պատուհաններուն վրայ կ'նշողէ։ Դարձեալ կրանիկ բարձանց վրայ ենք, որոց եզրերը ձիւնով լի են, և Կրիմսէլի վրայ կ'նային։ Ճակը մութ ու սառ է, ճամբաները մեռած են, և ամենայն ինչ ամայի մը կ'փչէ, և արձագանգն ժայռէ ժայռ կ'հնչէն որպէս թէ սառոյցի աստուածը կ'պատասխանէր։ Եւ սակայն մենք ոչ կ'տառապինք և ոչ կ'երկնչինք։

Մէյրինճէնի սիրուն հովտին մէջ Լաբէնսէն կ'բաժնուինք։ Նա հիւ-

սիսային կողմը կ'դիմէ, Կրինտէլվալտի և Թունի վրայէն, ուսկից ա-
ռևմտեան կողմը զարնելով ովկիանոսէն պիտի անցնի և Հռոմայեցի օ-
բիորդին տուն տեղ պիտի պատրաստէ։ Էնրիքա կ'յորդորէ զիս Հռոմ
դնալ. նէ գիտէ որ Քէրի աւելի պիտի սիրէ անոր անուշ և տաքուկ օ-
ղը, աւերակներն, պատկերներն ու տաճարները քան թէ Հելվէտիան
իր ցուրտ ձորերովը։ Եւ նէ բարևներ կ'ուղարկէ իր մօրն և Կէսարէի
համար, և կ'խնդրէ յիշել զինքը՝ եթէ երբէք Զատկին Հռոմ մնանք,
երբ Միղէրերէն մտիկ ընելու երթանք, երբ Հայրենեացը բլուրները
շրջինք։

Անոնց ետևէն կ'նայինք՝ մինչդեռ սեպաձև լեռն 'ի վեր կ'ելնեն՝ ո-
րու վրայ կ'թափի որոտաձայն Ռինէնպախի փրփուրը, և անոնք իրենց
ձեռքը կ'օրօրեն դէպ 'ի մեր կողմն և կ'անհետին փոքրիկ լեռնադաշ-
տին վրայ որ բիւրեղեայ Ռոզէնլօի և բարձր ու անդորր Էնգէլ-Հօր-
նէրի կողմը կ'տարածուի։

Թող լեռներու հրեշտակներն զանոնք պահպանեն։

Մինչդեռ մենք Սբլունգէնի սքանչելի անձուկէն կ'անցնինք՝ կ'յիշեմ
բլուրներու և ձորերու մէջ՝ այն վայրերն ուր թափառեր էի տարիներ
առաջ. ասա ծաղիկ մը քաղեր էի, անդ՝ սառնալեռին ցուրտ ու դե-
ղին ջրէն խմեր էի, ասա՝ եղևէջ լեռներու պարին վրայ նայող ժայռի
մը գլուխն, որոնք իրենց մշտաև սառոյցով միշտ սպիտակ են, նստեր
էի խորհելու այն Ապոգոյին վրայ որ Այժմ ինձի հետ է։ Բայց երբէք, նոյն իսկ այն միջոցին որ լեռնային պարիկներն մոլորեալ ուղևորիս
ամենէն աւելի նպաստաւոր կ'երևէին, չէի ակնկալած այսչափ խնդու-
թիւն, կամ լաւագոյն հրեշտակ մը։

Ի վերջէ դէպ 'ի հարաւ կ'ուղղենք մեր ընթացքը. կ'անցնինք Գոմ-
յէն և կ'հասնինք Միլան։ Քէրի Վէնէտիկ տեսնել կ'փափաքի. այս
քաղքին ջրային փողոցներն ու պալատներն իր երևակայութեան մէջ
ընդ երկար ծածաններ էին։ Մեր բնիկ հայրենեաց անդուլ գործունէ-
թեան մէջ, և Անկլիոյ հանդարտիկ դաշտերու մէջ, Ադրիականի վրայ
գտնուող տարօրինակ, կէս մ'ամայի մայրաքաղաքն իր միտքը գրաւած
էր։

Այսպէս Բատվան և Վէրոնան մեր ետևը կ'թողունք և գարնան
կէսօր մը՝ ինքզինքնիս այն երկաթէ ճամբուն ծայրը կ'գտնենք որ Լա-
կունէն մինչև Վէնէտիկ կ'տարածուի։ Երբ շոգին մարդուն ականջին
մէջ կ'սուլէ՝ դժուարին է մտածելն հրաշալի քաղքին վրայ որու կը
մօտենանք։ Բայց երբ կառքէն իջնելով՝ այլանդակ, դագաղի նման,

երկաթէ քթով հին նաւակի մը մէջ ոտք կ'կոխենք, և քանի վէնէտակե-
յի թիավարին ներդաշնակ լեզուին միտ կ'դնենք, քանի մեր առջևը
պարզող հոսանուտ դաշտին վրայ՝ արևուն փայլող քառակուսի բարձր
աշտարակները կ'տեսնենք, բրդային կատարներով և բազմախտ մը
գմբեթներով, և շքեղաշէն բնակարաններ որ մարմարէ պատերէ վեր
կ'սլանան — բոլորն ալ հին պատկերներու յարևնման — քանի փոքր առ-
փոքր մօտենանք՝ ծածանող հրաշալի քաղքին, մեր այժմ լուակաց թի-
ավարին լուն թիակին ուժովը, քանի արագաշարժ կ'սահինք պալատ-
ներու լայն ու մութ ստուերներու ներքև, և նեղ դետեր կ'մտնենք որ
բարձրադիր պատերէ կ'հովանաւորին, և ուրիշ աղմուկ չլսելով բայց
միայց ձայներ, կամ ջրին բախումը տուներու դէմ — այն ատեն կը
նշմարենք քաղքին ներկայութիւնը։ Եւ Անգելոյն խորհրդաւոր մա-
տերն՝ մեր ոգիները բռնելով՝ կ'տանի հեռուն՝ կամաւոր և խնդումերես
դերիներու պէս, այն հին դարերուն որ այլ ևս չկան։

Քէրի կ'յափշտակուի, այս հմայելի տեսարանին առջև կ'երազէ։
Այս է իր Վէնէտիկը, որ իր երևակայութեան մէջ ունեցած նկարը կը
դերազանցէ։

Փոքր առ փոքր հմայքն իրական, կենդանի քաղաք մը կ'դառնայ որ
անուշ տեսիլներով մեր սիրան ու երևակայութիւնը կ'հրապուրէ։ Ի-
տալական ջերմ արևուն՝ կ'թափառինք և կ'դիմենք այն սանդուղն ուս-
կից գլորեցաւ ողբալի Մարինո Գալիէրօի ալեզարդ գլուխը։ Անու-
շիկ Քէրին այժմ կարող է իր մերկ ձեռքն սոսկալի Առիւծին բերանը
մտել։ Ահարկու Տասնից սրահը կ'մտնենք, և կիսբաց դռնէ մը աւելի
ահարկու Երից դահլիճը կ'սահինք։ Գարմանիօլայի և Գարարայի խո-
րունկ գուբերէ կ'անցնինք, և թիավարին կ'ապսպրենք որ իր մթագոյն
նաւակն Հառաչանաց Կամրջին կողմը քշէ։

. . . Կ'նաւեմ, ուրիշ բան չլսելով այլ միայն նաւավարին թիակին
շարժումն, կամ Նէրա անուշ ձայնը, արագընթաց կ'սահիմ այն պալա-
տին դրան ներքև որ այս սոսկալի առաւօտ Պիանքա Գարէլլօի ոճիրն
ու ամօթը փափեց։ Եւ կամ խանդագին ոգով, որ հազիւ իրականը
գրականէն կարող է որոշել, ընկեցիկ Գօրինային անձկալի քայլը կը
տեսնենք, կամ հնաշէն ապարանաց մէջ ծեր Պրապանդիօին հիւղն,
Տէզդէմօնայի սենեակը, Եէսիքայի տունը կ'որոնենք, և հրէայ լու-
մայափոխներու մէջ, որ տսկաւին Ռիալտօն կ'յաճախեն, մօրուսաւոր
Շայլօքի պատկերը կ'փնտռենք։ Կ'պտտինք հոյակապ եկեղեցիներ,
բակերու մէջաճող դալարի խոտերուն և ապրիմ-մեռնիմ ծաղիկներուն

վրայ կոխելով, և զանոնք տամուկ և տխուր կ'դանենք. խունկը կը բարձրանայ մթագոյն և խորհուրդներուն ու պատկերներուն վրայ իբրև խիտ ամպ կ'դադարի. երկնհոնի երաժշտութիւնն տխրագին է և ողբալի։

Դէպ 'ի Լիտօ շրջան մ'ընելէն ետև՝ երեկոյեան դէմ՝ թև թևի մտած Գարօլինի հետ՝ այն մեծ հրապարակը կ'գիմենք որ Ս. Մարկոսի պալատին առջև կ'տարածուի։ Արծաթէ դունտի պէս՝ սպիտակ լուսինն երկնից միջևը կ'սահի. նաւավարներն հնչական քարերուն վրայ կ'ՀԵմեն, և իրենց երկար սև տուներներն՝ սալարկին վրայ տարածուելով՝ կամ շարժուն ջրերու վրայ երերալով՝ իբրև դամբանական փետուրներ կ'երևին՝ Վենետկի դաղաղին վրայ ծածանող։

Այս վայրերէն մտածութեան և երևակայութեան անբաւ դանձեր միասին առնելով՝ որպէս զի ապագայ տարիներու մէջ որոճանք, մեր քայլը դէպ 'ի Հռոմ կ'ուղղենք։

Միականի դասատուն կ'տեսնեմ, և սիրուն Էնրիքայի մայրը մտերմական սիրով զիս կ'ընդունի։ Կոմն Անբօնա ուղևորեր էր։ Ծաղկեվաճառներն խիստ փառաւոր փունջ մը կ'յօրինեն Հռոմի նորեկ կեղեցկութեան մը համար։ Գարօլինի կ'պատմեմ իմ ուղևորութիւնս Ապէնինեան լեռներն։ Գարնան երեկոյ մը Ֆրասքաթիի և Ալպանօի մէջ դտնուած բարձունքը կ'թափառինք, և արևմտեան կողմը նայելով Կամպանիոյ շքեղ տեսարանը կ'նշմարենք, որ անմոռանալի է։ Բայց անդր քան Կամպանիա, անդր քան Ս. Պետրոսի յաղթ շէնքն՝ երկնից հորիզոնին վրայ կ'տեսնենք, կամ տեսնել կ'երևակայենք՝ ծովուն մէկ նշմարն որ կ'սփռի դէպ 'ի այն երկիրն զոր քան զՀռոմ աւելի կ'սիրենք։ Եւ մտովին կ'շինենք այն յարկն որ 'ի դարձին մեր տունը պիտի լինի. տուն մ'որ ապագայի մէջ ընդ երկար թագուն մնայ և հիմակ որ ապագան հասաւ, իմ աչքիս կ'ընծայի դեղատեսիլ։

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Ըստ երևոյթին տարիներ անցան, կեանքն հասուն գործելով։ Եռանդ, փոփոխութիւն և հրատապ փառասիրութիւնն կարծես թէ սահեցան դայլին։ Անդորը ու զուարթուն հանդստութիւն մը յաջորդեց։ Այն ապագան՝ որ դեռ ևս իմ աչքիս կ'պարզի՝ վարդագոյն արշալուսոյ պէս՝ խաղաղաւետ և լուիկ դիշերուան մը կ'վերածի։

Իմ հայրենի տունս հիւղմ'է Զապէլի բնակած հիւղին մօտ։ Նոյն

հովիտն իմ շուրջս է. նոյն առուն խոխոջելով կ'սողսկի հովանաւոր ծառերու կնճռուտ արմատներուն քովէն։ Հիւղն վատ հիւղ մը չէ, այլ հաստատուն, ընդարձակ, երկար քիւերով և շատ հովանիով — այն հիւղերու նման զոր Տէվոնի տարափներու վրայ կ'շինեն։ Որթերն անոր վրայ կ'մագլին, և քարերն լօռուա կ'երևին։ Ցած կամարակապ դաւիթներ կան, կակուղ թևաթոռներով. նոյնպէս դեղեցիկ ածուներ որ լի են ասորեակներով և նորածիլ մանիշակներով։

Ծխնելոյզներն բարձր կ'երևին և կ'փայլին հոծ թեղջներու մէջ, որոնք ձմերային հովերէն մեզ կ'պահպանեն։ Աղաւնոյն բնիկներով լի է, և ծիրանի վիղոլ աղաւնիներ խմբովին կ'դուրդուրան տանիքին բոլորտիքը։ Սպիտակ դժնիկն՝ ցանկին երկայնքը ծելելով իր անուշ բուրմունքը կ'սփռէ, և ուղիները հարթ են և մաքուր։ Թուփեր և զանազան տունկեր դեղանկար կ'երևին դալարուտ արօտին վրայ։

Վարի թաւուտին մեծ դուռն երկու մամուռ հին քարի միջևն է, և անդ կ'երևի բարձր մոլախինդ մը, ահագին թեղջի մը մօտ, իբրև պահանորդ։ Հիւղին մէջ՝ բնիկ կաղնիէ շինուած է դրբատունս, ու իմ հաւատարիմ հրացանս եղջերուի զոյդ մ'եղջիւրներու ճիւղէն կախուած է։ Իմ կարթս ու վարմս դրբատան դարակներուն վրայ դրուած են, և յաղթ արծիւ մը, երբեմն բնիկ անտառներու հիւրն, կեդրոնական նիրհելին վրայ թառած է։ Գիւղական վառարանին շրջանակին վրայ ցիր ու ցան կ'երևին ճամբորդութեան դրեանք, Հռոմէն եկած սրճնէ մանր տաճարներ, Տրէզտայէն յախճապակէ անդրիներ, և Հռենոսի մօտ՝ Սև Անտառի մէկ եղջերուի եղջիւրէն յօրինուած թաս մը։ Կուռ աթոռներ ասա անդ դրուած են՝ հրապուրելի կերպով. կաղնի սեղանի մը վրայ սփռուած կ'մնան օրուան նոր դրեանց հատորներ, և առիւծի մորթի մը վրայ՝ կրակարանին դէմ պառկած է ուրիշ Դրէյ անուն շուն մը։ Բայց դեռ ևս ուրիշ բաներ ալ կան։ Երեխաներ կան հիւղին մէջ։ Օհաննիկ մ'ունիմ — մեզի աղոր կ'երևի, վասն զի իր մօրն սև աթոյր դէմն ունի, նոյն սև աչունքը, երկայն ու խիտ արտանունքով։ Ունիմ նաև Գարօլին մը, փոքրիկ Գարօլին պարտիմ անուանել զանի, ուրախ զուարթ, կայտառ ու վարդ դէմքով. ասկից զատ երկու տարեկան լակոտ մը կայ, որու Պօղ անունը կ'տանք — շատ չարաճճի տղեկ մը, ինչպէս որ կ'ըսենք։

Մայրն առաջուան պէս դեղանի և աւելի սիրելի է ինձ, վասն զի՝ տարուէ տարի երախտագիտութիւնն մեր սէրը սաստկացուց։ Պատահած են պարագաներ՝ երբ իմ մէկ ծանր խօսքս՝ զոր տաղտուկ գործէ-

ռու ժամուն արտասանած եմ, Գարօլինի սիրտը վիրաւորած է, և տեսած եմ աչքն արտասուքով լի, և ապա ինքզինքս մեղադրած եմ որ նէրա այս ցաւը պատճառեցի։ Բայց այսպիսի բաներ չյիշեր նա, կամ եթէ յիշէ մի միայն իր անուշ անյիշաչարութեամբը պարարկելու համար է։ Լօրէնս և Էնրիքա մեղի մօտ կ'բնակին։ Եւ ծերունին՝ որ Գարօլինին կնքահայրն էր, արևային օրեր ինձի հետ կ'նստի դաւիթը, և փոքրիկ Պօղն իր ծնկայ վրայ առնլով՝ կ'հիանայ որ աշխարհիս երեսը Էնրիքային և Գարօլինին նման էակներ կ'գտնուին . . . ։ Երբ իմ տունէս հեռանամ՝ կարծեմ թէ կեանքէս հեռու կ'մնամ։ Իսկ ներս մտնելուս՝ այն ընդարձակ ու շքաւոր սպաղան՝ որ մանկութեան ու պատանեկութեան ժամանակ՝ իմ առջևս կ'պարզուէր, երջանկութեամբ լի է, նուրբ մշուշի մը պէս որ բիւրեղայ կաթիլներու կ'փոխուի։

Իսկ երբ հեռանամ՝ այն երկար նամակներն՝ որ իմ հայրենի տանս թուականը կ'կրեն, ինս կենայ զօդող կապերն են։ Իմ սիրեցեալ կինս, որ այժմ աւելի սիրելի է ինձ քան առաջին դիրը դնած ժամանակը, որ իմ և սպաղայիս մէջ սև վարագոյր մը կ'թուէր, այժմ առաջուան պէս գորովանօք կ'գրէ։ Իր քնքուշ ոճով՝ բոլոր առանին դործերը կը պատմէ, կ'նկարագրէ ինձ ըրած պտոյտները, խաղերն և նորատունկ ծառերը։ Կ'խօսի ինձ թէ ինչպէս Օհաննիկ ուսմունք կ'սորվի, ինչպէս փոքրիկ Գարօլին օրէ օր կ'մեծնայ ու կ'ծաղկի, ինչպէս Պօղը — իր հօրը պատկերը — չարութիւններ կ'ընէ։ Եւ ամենուն կողմէ համբոյրներ կ'առաքէ ինձ և այնպէս մաղթանք և այնպէս «Աստուծոյ օրհնենք» կ'թափէ դլուխս որ կարծես թէ հրեշտակ մը ինս կ'պահպանէ։

Բայց դեռ ըսելիք ունիմ. վասն ինս Օհաննիկ իրրև յետ դրութիւն քանի մը տող դնած է. — «Սիրելի հայր» կ'ըսէ նա «մայրս կ'պատուիրէ ինձ դրել թէ ինչպէս դասերս կ'ուսնիմ։ Ի՞նչ պիտի ըսես, եթէ 'ի դարձիդ տեսնես որ ֆրանսերէն կ'խօսիմ. իրաւ որ կ'ուզեմ շուտով դառնալ. դժնիկները կ'ծաղկին և իմ պատուհանին ներքև ծիրանի բողբոջներով լի է։ Եթէ ինձ ընծայ մը բերես, ինչպէս միշտ կ'բերես, պիտի կարթի եղէգն մը խնդրեի։

«Քու սիրական որդիդ

«ՕՀԱՆՆԻԿ»

Եւ փոքրիկ Գարօլին ևս իր բարակ՝ թափառիկ գիրն ունի իբրև երկրորդ յետդրութիւն. — «Ինչու համար չես դառնար, պապա։

Դու շատ երկար ատեն կ'մնաս դուրսերը. երկու անդամ մտրուկը հեծայ. անդամ մը քիչ մնայ վար պիտի նետէր զիս։ Այս դրողն է

ԳԱՐՕԼԻՆ»

Պօղ ևս դրիչն առեր է, և խոշոր Պ մը դրելու համար բոլոր ձիղը թափելու ատեն, խոշոր բիծ մ'բրեր է։ Եւ Օհաննիկ անոր տակը կ'դրէ. «Այս Պօղին գործն է, պա» բայց կ'յաւելու թէ «Սիրոյ բիծ մ'է, միայն տասն հարիւր անդամ աւելի կ'սիրէ քեզ»։

Եւ վերադարձիդ Օհաննիկ պիտի պնդէ որ միասին առուակն երթաս, և մայրաւուտ դետափը նստելով՝ կարթը ջուրը նետես, թէև խածան ձկունք (roach) խորը կ'խաղան։ Գործաւորներուն ապսպրած ես որ դետափի ուռիներուն կոճղերը խնայէ որպէս զի վայրի բադն ձմեռն պատսպարան մը գտնէ, և կաքաւներն գարնան ժամանակ բոյն շինելու հանդարտ վայր մը գտնեն։

Երբեմն կինդ՝ որ բարի լինելուն չմերժեր քեզի այս շնորհը, քեզի հետ արտերու եզերքը կ'շրջի և դու դարնան ծաղիկներ կ'ժողվես մարդերէն 'ի յիշատակ հին ժամանակաց։ Փոքրիկ Քէրին ծաղիկներէ բոլորաձև փունջեր կ'յօրինէ որպէս զի Պօղին ճակատը զարդարէ, և միասին պար կ'բռնեն արօտներու վրայ, վայրի նարդէս (daffodil) կը խլեն և եղերդներու (dandelion) հունտերը կ'փչեն որպէս զի փորձեն թէ իրենց փափաքը պիտի լրանայ թէ ոչ։ Օհաննիկ կոգիի աման մը կ'բռնէ Գարօլինի ծնօտին ներքև՝ տեսնելու համար թէ արդեօք ոսկի կ'սիրէ, և Պօղ, չարաճճի որդիս, զանոնք կ'բարկացնէ քրոջը դանդուրենեներուն մէջ փուշի կտոր մը մղելով։

Մտրուկին վայն 'ի գլուխը կ'գայ Գարօլինին շուտ շուտ քալեցընելովը — բայց Գարօլին իր ձեռօքը կ'խնամէ կենդանին և անոր կ'տայ իր պաղ նախաճաշիկը։ Ժամանակին կ'հաւաքեն ընկերներն և ձմերային երկայն գիշերներուն համար կ'ամբարեն, երբ կրակը պայծառ և զուարթ կ'վառի, և իր նշոյլներն կայտառ, ծիծաղկոտ դէմքերու վրայ կ'ծածանին, նոյնպէս աւելի գրեանց դարակներու և սիրական կենդանագիրներու վրայ։ Իսկ՝ այն կինն՝ որ այս առանին տեսարանիս հոգին է, տղայ թրթռակ լեզուին վերջ կ'տայ իր դաշնակ ձայնովն՝ որ կը թռթռայ քանի մ'երդերու կամ վէպերու վրայ . . . ։

Ապա տղայք կ'սկսին այլ և այլ խաղեր խաղալ, և Դրէյ շունն ու Միլօ կատուն՝ առիւծենիին վրայ՝ կրակարանին դիմացը՝ մօտ առ մօտ կ'նստին։ Փոքրիկ դեղձանիին՝ իր վանդակին մէջ կ'ննջէ, կամ աչքը

կ'բանայ կրակի մէկ յանկարծական Ճարճատունէն՝ և մեր ընտանեկան խմբին վրայ ընտանի ակնարկ մը կ'նետէ։

Բայց չկայ ապագայ մ'առանց մեայլի, և հիմակ իսկ դաշտանկարին վրայ ստուեր մը կ'տատանի։

Ամառնային անուշ և սիրուն օր մ'է։ Տունկերն բոլորովին ծաղկած են։ Հարաւային քամի մը բոլոր առտու կ'փչէր հովտին վրայ և թեթև մշուշն հեռաւոր լեռներու ծերպերէն կ'կախուի՝ իբրև պերդեցկութեան քողը։ Օհաննիկ դասերով զբաղէր եռաւ՝ դաշտին մէջ կ'խաղար Միլօին հետ. փոքրիկ Քէրին երկար պոյտէ մը գարձեր էր՝ երեսը վարդեր բացուած և աչերն ժպիտներով և խնդութեամբ վառ։ Մայրն իր սիրած ծաղիկներով պարապելու վրայ էր. իսկ փոքրիկ Պօղ՝ ինչպէս որ ըսի, մարդին մէջ կ'խաղար, և ծեր Դրէյ անոր հետ զայեր էր։

Բայց Ճաշի ժամանակ Պօղ տուն չէր դարձեր։

«Պօղայնքան հեռու տեղեր գացած չպիտի լինի, կ'ըսեմ ես։ Մայրը բան մը չըսեր, բայց իր դիմաց վրայ անձկութեան նշոյլ մը կայ որ գիս կ'վրդովէ։ Օհաննիկ կ'հարցնէ թէ Պօղ ո՞ւր կրնայ լինիլ, և անոր սիրած բաներն ափսէի մը մէջդնելով կ'պահէ. սակայն Ճաշի ժամը կ'անցնի և Պօղ չերևիր։ Ծեր Դրէյ դաւիթն արևուն նստած է։

Մօրն հոգն երթալով կ'շատնայ, և ես թէև չեմ յայտներ, ահ ու դողով կ'պաշարուիմ։ Բնազդումը գիս դէպ 'ի մարդը կ'մղէ. առուակին կողմը կ'թափառիմ կոչելով. «Պօղ, Պօղ» բայց պատասխան չկայ։

Բոլոր կէսօրէն վերջը՝ կ'փնտռենք, դրացիներն ալ ասդիս անդին կը փնտռեն, բայց անօգուտ բան։ Այն իրկուն տրտմութիւն կ'տիրէ տան մէջ, լուռ ու մունջ սեղան կ'նստին տաք. փոքրիկ Քէրին կ'հարցնէ միայն՝ արտասուալի աչքք թէ Պօղ ե՞րբ պիտի դառնայ, բոլոր գիշերը կ'փնտռենք և Պօղը կ'կոչենք. մայրն գիշերային ցուրտն առ ոչ ինչ գրելով՝ այսր անդր կ'վազվզէ մինչև որ առաւօտ կ'հասնի և մեզ արտում՝ ու յուսահատ կ'գտնէ։

Այն օրն — հետևեալ օրն — գաղանիքն երևան կ'ելնէ, բայց մեզի սև լուր մը կ'բերէ։ Եղնիկ փոքրիկ Պօղ. առուակին ջրերուն մէջ իր գերեզմանը գտեր է. իր մանկային լեզուն, իր վարդային ժպիտներն մեզի համար 'ի սպառ կորան։ Զպիտի ըսեմ թէ ինչպէս և երբ գտանք զանի, և ոչ մեր առտնին յուսահատութիւնն, ոչ նէրա վիշտը պիտի նկարագրեմ՝ — իր կենդանի առաջին վիշտը։

Մեր հիւղն հանդարտ է։ Ծառաներն անշշուկ կ'սահին՝ որպէս թէ կ'վախնան որ փոքրիկ հնջողը չարթնցրնեն։ Տունը պաղ կ'երևի — շատ պաղ, և սակայն ամառ է, մարդագետին երեսը հարաւային քամին հեզիկ կ'բուրէ, հեզիկ կ'բուրէ առուակին մահատու ծփանաց վրայ։ Ցեռոյ կ'սկսի թաղման շշուկը։ Բարեսիրտ աշխարհներն անդ են, դիւրին է իրենց համար ողբալ. պատուական երկրը դաղաղին մօտ կ'աղօթէ . . .։

Շաբաթներ կ'անցնին, և համբերատարութեան ժպիտ մը մօրը տրտմագին դէմքը կ'լուսաւորէ։ Այն սև սուգի շրջազգեստներն առելի աղդու կ'խօսին սրտին, և հարսենական հագուստն քան զառաջինն աւելի կաթողին։ Քու տրտմութեանդ բերը փոքր ինչ կ'թեթևցրնէ իր երկայնամիտ անուշ խօսքերով. «Ատուած առաւ մեր որդին» կ'ըսէ։ Ուրիշ շաբաթներ ալ կ'սահին կ'անցնին։ Դեռ ևս ուրախութեան օրեր կան — մեծ և հատուն ուրախութիւններ։ Գարնան արևուն՝ զեղածիծաղ երևոյթ մ'ունեցող հիւղն անդ է, թռչուններն թաւուտներու մէջն են. Օհաննիկ և փոքրիկ Քէրին անդ են, և այն էակն, որ դեր 'ի վեր է քան զամէնքը, խնդումերես է և գոհ։ Երկին մեղուսոյց որ ամենէն պայծառ ապագան իր ամպերն ունի — թէ այս կեանքն լուսերու և ստուերներու պիսակ մ'է։ Եւ երբ մեր բոլորը գտնուող աշխարհին վրայ, և մարդկային բարվաղան թշուառութեանց վրայ նայինք՝ մեր խորին շնորհակալութեան մէջ խնդութիւն մը կ'ծագի։

Տարի մը կ'անցնի, և մեր անակին վրայ ուրիշ մայր մը չձգեր։ Ուռերն կ'ածին ու կ'բողբոջին, կաղնիներն կ'ստուարանան և կ'բարձրանան. փոքրիկ Քէրին աղջկութեան հասակը կ'մտնէ, և Օհաննիկ իր սև մազերով և բոցավառ աչքքը իր մօրը պարծանքն է։ Մեր անդորրութեան արտաքերդը միայն խնձ փոքրիկ Պօղին յիշատակն է։ Եւ նոյն իսկ այս յիշատակը տարիներէն նուիրաբերուելով՝ աւելի շնորհատուր յիշատակ մ'է թէ մեր կեանքն այս աշխարհի համար չէ միայն, քան վիշտ մ'որ մեր սրտերու վրայ կ'ծանրանայ։

Երբեմն փոքրիկ Քէրին և Օհաննիկն իրենց խաղին թողլով երեկոյին կ'թափառինք ուռենիին կողմն՝ որու ներքև մեր գետամոյն որդին կ'ննջէ մինչև յվերջին Յարութիւն։ Կիրակի մ'է, մեր կենաց միջօրէին մէջ, փոքրիկ գերեզմանին մօտ գեղերիկ, մահարձանին վրայ ծաղիկներ սփռելն և աղօթք մը փսփսալն որ մեր փոքրիկ Պօղն հանգիստ ննջէ Անոր ծոցն որ մանկանին սիրեց։

Եւ նէրա սիրան ու իմ սիրտս, իրարու վշտով կապուած, ինչպէս որ

կապուած էին խնդութեամբ — արծաթէ թել մ՝ոսկիին խառնուած — կ՝հետևի մեռնողին դէպ՝ի այն Երկիրն որ մեր առջևն է. մինչև որ վերջապէս տղեկը նոր բնակարանը պիտի գտնէր, բնակարան մ՝որ՝ երբ այս հիմնայ, մերն ալ պիտի լինի։ Եւ իմ՝ոգիս, անոր ոգւոյն հետ խօսելով երեկոյեան հսկումներու տեղն՝ կարծես թէ խնդալին կ՝ըսէ, այնքան խնդալին որ արտասուքս կ՝խողգեն — «Պօղ, որդեակս, մենք ալ անդր պիտի գանք»։

Եւ մայրն՝ երեսն ինձի դարձնելով՝ որպէս զի իր արտասուալի աչքը տեսնեմ՝, և անոր երկնային ակնարկը դիտեմ՝, մեղմիկ կ՝հառաչէ — այնքան մեղմիկ որ հրեշտակ մը կարող է ըսել — «Այո, սիրելի, անդր պիտի գնանք»։

Արդէն գիշերն հասաւ, և կաղնիներուն ներքև իմ օրս լմընցաւ։ Սակայն ծիրանի վայլ մը դեռ ևս կ՝տատանէր հորիզոնի վրայ, թէև աստղերն ելեր էին։

Առուակին երեսն խիտ մշուշ մը տարածուած է։ Ծառին քովէն հրայանս առի, և ապա Գարլօն կոչեցի սուլելով՝ որպէս թէ Դրէյն լինէր, և կամուրջէն անցնելով՝ կնձնիներու ներքև գտնուող իմ սնակիս Ճամբան բռնեցի։

Այն իրիկուն զնայելի երազներ տեսայ — վասն զի տեսայ որ իմ երազս իրական էր։

ՎԵՐՋ

887

2013